

ԷՋՄԻԱԾԻՆ



1962

ՌՆԺԲ
ԺԹՏԱՐԻ

Հոկտեմբեր - Նոյեմբեր

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՒՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Ժ - ԺԱ

1962



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնգրեսը Ազգային-եկեղեցական ժողովի գումարման և Սրբալույս Մեռների օրհնության մասին (ներդիր)	
ՍՍՈՄ Միեմիստրների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի որոշումների հեռագիրը Ամենայն Հայոց Հայրապետին՝ Ազգային-եկեղեցական ժողովի բացման առթիվ	3
Հայկական ՍՍՌ Միեմիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի որոշումների հեռագիրը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ Ազգային-եկեղեցական ժողովի բացման առթիվ	4
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ հեռագիրը հանուն Ազգային եկեղեցական ժողովի, ՍՍՈՄ Միեմիստրների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ մեծարգո պր. Ա. Պուլիսին	5
Ազգային-եկեղեցական ժողովի հեռագիրը Հայկական Սովետական Առցիալիստական Ռեսպուբլիկայի Միեմիստրների Սովետի նախագահ մեծարգո պր. Ա. Քաչինյանին	6
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Ազգային-եկեղեցական սրբագումար ժողովը և նրա պատմական նշանակությունը	7
Արձանագրություն Ազգային-եկեղեցական ժողովի	11
Եպիսկոպոսական ժողովի գումարում Մայր Աթոռում	24
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ զեկուցումը Ազգային-եկեղեցական ժողովին	28
Գերագույն Հոգևոր Խորհրդի զեկուցումը Հայ Եկեղեցու միասնության ամրապնդման հարցի շուրջ	45
Գերագույն Հոգևոր Խորհրդի զեկուցումը Հայ Եկեղեցու Կանոնագրի կազմության հարցի շուրջ	52
Գերագույն Հոգևոր Խորհրդի զեկուցումը Մայր Աթոռի յոթնամյա գործունեության տեսեսական հաշվետվության շուրջ	56
Խաղաղության բանաձև ընդունված Ազգային-եկեղեցական ժողովի շորհորդ նիստում, 1962 թվականի հոկտեմբերի 5-ին	59
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ հայտարարությունները «Սովետական Հայաստան» ամսագրի համար	61
1962 թվականի Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների ցուցակը	64
Հանդիսություններ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ազգային-եկեղեցական ժողովի գումարման առթիվ	67
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի պատվիրակությունը Մայր Աթոռում	98
Գերաշնորհ Տ. Քարզում եպիսկոպոս Մանուկյան	100
Գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյան	102
Գերաշնորհ Տ. Մաշտոց եպիսկոպոս Քաչիրյան	103
Գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթրույան	104
Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ	105
Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	107



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝
 ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈ, ԷՋՄԻԱԾԻՆ
 «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин“
 Rédaction de la revue „Etchmiadzine“, Etchmiadzine, Arménie, URSS.


Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1962 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

S. S. Վ Ա Զ Գ Ե Ն Ի Ա Ռ Ա Զ Ն Ո Յ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԻԱԾԻՆԻ ՀՕՐԷ ԵՒ ԼՈՅՍ ՓԱՆԱՑ ԸՆԴՆԱ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԱՅԱԿԱՆ


ԱԿԱՂԵՍՏԻՈՒ



*Lavrent
Canada*

С. ПЕТРОВ





**Վ Ա Ջ Գ Է Ն Ծ Ա Ռ Ա Յ Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Բ Ր Ի Ս Տ Ո Ս Ի
Ո Ղ Ո Ր Մ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ Ն Ա Ս Տ Ո Ւ Ծ Ո Յ Ե Ի Կ Ա Մ Օ Բ Ն Ա Ջ Գ Ի Ս
Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ա Պ Ե Տ Ե Ի Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Յ,
Ծ Ա Յ Ր Ա Գ Ո Յ Ն Պ Ա Տ Ր Ի Ա Ր Բ Հ Ա Մ Ա Ջ Գ Ա Կ Ա Ն Ն Ա Խ Ա Մ Ե Ծ Ա Ր
Ա Թ Ո Ւ Ռ Ո Յ Ա Յ Ր Ա Ր Ա Տ Ե Ա Ն Ա Ռ Ա Բ Ե Լ Ա Կ Ա Ն Մ Ա Յ Ր Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Յ
Ս Ր Բ Ո Յ Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի Կ Է Է Ջ Մ Ի Ա Ծ Ն Ի**

ԲՐԻՍՏՈՍԱԻԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՐՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ
ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՅ,
ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ ԹՈՒՐԲԻՈՅ ՀԱՅՈՅ, ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ,
ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ԲԱՀԱՆԱՅԻՅ ԵՒ ՍԱՐԿԱԻԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ
ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՅ ԵՒ
ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱԻԱՏԱՅԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՅ



գնականութեամբն Աստուծոյ Ամենակալին, եօթնամեայ գործունէութեան
շրջան մը բոլորեցինք ահա խաղաղութեամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
կամարներու ներքեւ, մեր սիրեցեալ ժողովուրդի ծոցին մեջ, մեր վերա-
ծնած Մայր Հայրենիքի ապահով ու հարազատ կտուրին տակ:

Անցնող այս եօթը տարիներու ընթացքին, Մենք և Մեր գործակիցները, մեր
ուժերու չափով, աշխատանք տարինք մեր խղճի պարտքը կատարելու համար, ի վե-
րանորոգումն և ի պայծառութիւն աստուածակառօյց Մայր Աթոռիս և ի հոգևոր
մխիթարութիւն մեր ժողովուրդին, Հայաստանի և արտասահմանի թեմերէն ներս:

Այժմ, ժամանակը հասած կը նկատենք Մեր գործունէութեան և տնտեսութեան
համարը տալ Ազգային-եկեղեցական սրբագումար ժողովին՝ մեր Եկեղեցւոյ և մեր
ժողովուրդի ներկայացուցիչներուն առաջ, ու միասնաբար նոր ծրագիր կազմել յա-
ռաջիկայ նոր աշխատանքներու և ապագայ իրագործումներու:

Արդ, այսու հայրապետական Մեր կոնդակաւ, մեծ ուրախութիւն է Մեզի հա-
մար յայտարարել, թէ որոշած ենք Հայաստանեայց Եկեղեցւոյ Ազգային-եկեղեցա-
կան ժողով գումարել յառաջիկայ աշնան, սեպտեմբեր 30—հոկտեմբեր 5, որուն կը
հրաւիրենք մասնակցելու մեր Եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներու ամենապա-
տիւ սրբական աթոռակալները, թեմակալ գերաշնորհ առաջնորդները, Հայաստա-
նեայց Եկեղեցւոյ սրբական եպիսկոպոսները, ինչպէս և թեմերու կողմէ ընտրուած
ատօամաւոր ներկայացուցիչները մեր հաւատացեալ ժողովուրդին:

Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգի հարցերը պիտի ըլլան՝
ա. Զեկուցում եօթնամեայ Մեր գործունեութեան.

բ. Հաշուետուութիւն նիւթական գործունեութեան.

գ. Հայաստանեայց Եկեղեցւոյ Կանոնագրքի մշակման հարց.

դ. Ամրապնդում Հայ Եկեղեցւոյ միասնութեան.

ե. Ընտրութիւն Գերագույն Հոգևոր Խորհուրդի և Վերստուգիչ յանձնաժողովի.

զ. Ս. Էջմիածնի յառաջիկայ շինարարական գործունեութեան ծրագիր:

Ազգային-եկեղեցական ժողովի բացումէն առաջ, Մայր Աթոռի մէջ Մեր նախագահութեամբ տեղի պիտի ունենայ Եպիսկոպոսական խորհրդակցական ժողով. Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգի առնչութեամբ:

Երջանիկ ենք նաև բոլորիդ յայտնի դարձնելու, թէ Ազգային-եկեղեցական ժողովի գումարման առթիւ, Մեր գահակալութեան եօթներորդ տարեդարձին՝ հոկտեմբեր 7-ին, կիրակի օր, Տիրոջ ողորմութեամբ պիտի օրհնենք Սրբալոյս Մեռոն Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ, ըստ կանոնաց և կարգաց մեր Առաքելական Ս. Եկեղեցւոյն:

Աստուածային շնորհաբաշխութեան մեծ օր է Մեռոնօրհնութիւնը և սուրբ է այդ օրը: Մենք ու մեր ամբողջ Եկեղեցին պիտի աղօթենք, որպէսզի Պարգևատուն բարեաց առատապէս բաշխէ Իր կենարար շնորհները Փրկչի Իջման Ս. Սեղանէն՝ ի շինութիւն, ի խաղաղութիւն և յանսասանութիւն մեր Ս. Եկեղեցիին և մեր հաւատացեալ ժողովուրդին:

«Տէր ողորմութեան և Հայր լուսոյ, յորմէ ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալ իջեալ է, շնորհեա մեզ անարժան ծառայիցս քոց՝ պշնորհս քո ի սպասաւորել մեծի և կենարար խորհրդոյս քո» (Մայր Մաշտոց):

Շնորհք և խաղաղութիւն Փրկչին մերոյ Յիսուսի Զրիստոսի եղիցին ընդ ձեզ այժմ և միշտ և յաւիտեանս:

Ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս 1-7-ն յուլիսի

1962 Փրկչական ամի,

և ի տունարիս Հայոց ՌՆԺԲ.

մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

Թիւ 444



**ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝
ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՅՄԱՆ ԱՌԹԻՎ**

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
Վ Ա Զ Գ Ե Ն Ա-ԻՆ**

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհուրդը ողջունում է Ձեզ, պատգամավորներին և հյուրերին՝ Եկեղեցական ժողովի բացման առթիվ:

Ընդունեցեք մեր լավագույն մաղթանքները այն մասին, որ Հայ Եկեղեցին ձեռք բերի նոր հաջողություններ խաղաղության պաշտպանության, ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման, ինչպես նաև ընդհանուր վինաթափման ու մարդկությունը ատոմային պատերազմի սպառնալիքից պերժ պահելու համար մղվող պայքարի գործում:

Վ. Ֆ. ՌՅԱԶԱՆՈՎ

ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր
Կրոնական պաշտամունքների գործերի
խորհրդի նախագահի տեղակալ

Մ Ո Ս Կ Վ Ա

29 սեպտեմբերի 1962 թ.





**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝
ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՅՄԱՆ ԱՌԹԻՎ**

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԸ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
Վ Ա Ջ Գ Ե Ն Ա-ԻՆ**

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհուրդը ողջունում է Ձեզ և հարգարժան պատգամավորներին՝ ու հյուրերին Ազգային-եկեղեցական ժողովի բացման առթիվ, մաղթելով բարձրագույն ժողովի աշխատանքներին հաջողություն, Հայ Եկեղեցուն՝ հայրենասիրական բեղմնավոր գործունեություն և ամբողջ աշխարհում կայուն խաղաղության համար տարվող պայքարի նոր թափ:


Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր
Հայ Եկեղեցու գործերի խորհրդի
նախագահի պաշտոնակատար

Ե Ր Ե Վ Ա Ն

29 սեպտեմբերի 1962 թ.





5

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ
 ՀԱՆՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ,[?] *Հայեկ պանկոստ*
 ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
 ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
 ՄԵԾԱՐԳՈ ՊՐ. Ա. ՊՈԷՋԻՆԻՆ

Մ Ո Ս Կ Վ Ա

Էջմիածնում գումարված Հայ Ազգային-եկեղեցական ժողովը հաջողությամբ ավարտեց իր աշխատանքները:

Ազգային-եկեղեցական ժողովը և Մենք անձամբ մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Ձեր հեռագրական շնորհավորանքների և այն դյուրությունների համար, որոնք ընձեռեց Սովետական կառավարությունը ժողովի գումարման համար:


Հավատարիմ իր դարավոր ավանդություններին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և մենք բոլորս կմնանք միշտ աղոթող աշխարհի բոլոր ժողովուրդների միջև եղբայրության, պետությունների միջև փոխադարձ համագործակցության և երկրագնդի վրա կայուն խաղաղության ամրապնդման համար, որն այնքան հաջողությամբ գլխավորում է Սովետական Միությունը:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷԶՄԻԱԾԻՆ

7 հոկտեմբերի 1962 թ.





**ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ
ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵԾԱՀԱՐԳ ՊՐ. Ա. Բ Ո Չ Ի Ն Ց Ա Ն Ի Ն**

Ե Ր Ե Վ Ա Ն

Սուրբ Էջմիածնում գումարված Հայաստանյայց Եկեղեցու Ազգային-եկեղեցական ժողովը հաջողությամբ ավարտեց իր աշխատանքները:


Ազգային-եկեղեցական սրբագումար ժողովը իր խորին երախտագիտությունն ու շնորհակալությունն է հայտնում Սովետական Հայաստանի բարեխնամ կառավարությանը այն դյուրությունների համար, որոնք ընձեռվեցին Ազգային-եկեղեցական ժողովի գումարման և անցկացման համար:

Հայրենի բարեխնամ կառավարության ջերմ հոգատարությունը դեպի Սուրբ Էջմիածինը անսահման սիրով և խորունկ երախտագիտությամբ է լցնում յուրաքանչյուր պատգամավորի և ամեն մի հայ մարդու սիրտը դեպի մեր վերածնված Մայր Հայրենիքը և նրա հարապատ կառավարությունը:

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

5 հոկտեմբերի 1962 թ.





Ն Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍՐԲԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ



այր Արտուս, սեպտեմբեր ամսը-վա 30-ից մինչև հոկտեմբերի 14-ը, համազգային շուրջ ու խանդավառ մրեռուրում, կատարվեցին սրտառույ տոնախմբություններ, որոնց հիշատակը անմոռանալի կմնա Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և մեր Ազգային-եկեղեցական տարեգրության մեջ:

Սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 5-ը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, նոր Վեհա-րանի շքեղ հանդիսասրահում, գումարվեց Ազգային-եկեղեցական սրբագումար ժողովը, որին մասնակցում էին 141 պատգամավորներ Մայր Հայրենիքից, Սովետական Միությունից, մեր եկեղեցու նվիրապետության բոլոր Արտոներից և հայ գաղութներից:

Ժողովին որպես հյուր ներկա էին մոտ 50 հրավիրյալներ, իսկ այս առթիվ տեղի ունեցած եկեղեցական հանդիսություններին՝ ավելի քան 600 ուխտավորներ ներքին քեմերից և արտասահմանից:

Ազգային-եկեղեցական ժողովը ունեցավ չորս նիստեր, ուր հանգամանորեն քննության առնվեցին Վեհափառ Հայրապետի հուլիս 7 քվակիր № 444 սրբատառ կոնդակում նշված օրակարգի բոլոր հարցերը:

Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը մեծ իրադարձություն էր այս օրերին և խոստումնալից երևույթ, իր կոտ միասնականությամբ և նշմարիտ համազգային ներկայացուցչությամբ, իր ընդունած որոշումներով և բանաձևերով:

Ավելի քան մի քիբարական և սրտառույ է արձանագրել, որ Ազգային-եկեղեցական ժողովի գումարման այս օրերին, բոլոր պատգամավորների համար չկային, և չէին էլ կարող լինել, ավելի բարձր շահեր քան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու շահերը, քան վերածրված մեր Մայր Հայրենիքի և հայ ժողովրդի գերագույն և նվիրական շահերը:

Ազգային-եկեղեցական ժողովի բացառիկ և պատմական նշանակությունը կայանում էր նաև եկեղեցական և ազգային միասնության մեջ, որ նա հանդես բերեց, առանց բացառության, քննվող բոլոր խնդիրներում և ընդունված համապատասխան գործնական որոշումներում, որոնք ըստ ամենայնի արտահայտում էին բոլոր պատգամավորների խնդիրներին, իդձերի միասնությունը, որպեսզի օրակարգի բոլոր հարցերի կապակցությամբ ընդունվեն նոր և լուսամիտ որոշումներ, կոտ համախմբվածությամբ և փոխըմբռնման

մթնոլորտում, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ապագա գործունեության, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հետագա կազմակերպվածության, կենսունակության և պայծառության համար:

Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգի կարևոր հարցերից մեկն էր Վեհափառ Հայրապետի յոթնամյա գործունեության համարատվությունը:

Հոկտեմբերի 1-ին, երկուշաբթի, Ազգային-եկեղեցական ժողովի երկրորդ նիստում, հանդես եկավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը բովանդակալից, ամբողջական զեկուցագրով, ուր ընդգրկվել էին յոթը տարվա հոգևոր, մշակութային, վարչական, կազմակերպչական, շինարարական գործունեության բոլոր բնագավառները, շնորհակալ արդյունքներով և բազմապիսի արդյունավորությամբ:

Հայրապետական յոթնամյա գործունեության հաշվետվությունը ընդունվեց հոտեկայս, սրտագին ծափահարություններով, ջերմ երախտագիտությամբ և շնորհակալությամբ:

Ազգային-եկեղեցական սրբազուսուր ժողովը, իր ատենագրության մեջ, արձանագրում էր իր անվերապահ սերն ու հավատարմությունը մի անգամ ևս դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և դեպի նրա արժանավոր Գահակալը, որն Իր մաքուր և սուրբ ձեռքերի մեջ է պահում Հայ Եկեղեցու գերագույն ղեկավարությունը:

Անցնող յոթը տարիների գործունեությունը ցույց է տվել, որ այսօր, հանձին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ունի իր աստվածարյալ, զոհաբերվող և շինարար հայրապետներից մեկին, որն Իր պայծառ մտքով ու սրբազան հավատով, Իր նվիրումով և լավատեսությամբ, Իր ուսերի վրա է կրում Ամենայն Հայոց Հայրապետության ծանր լուծը, և կրում է Իր պարտքի խորին գիտակցությամբ դեպի Իր ժողովուրդը, Իր Եկեղեցին, դեպի Իր Մայր եկիւրը:

Նույն ոգով և խանդավառ մթնոլորտում ֆենարկվեցին Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգի հարցերը, ինչպիսիք էին Մայր Աթոռի տեսեսական հաշվետվությունը, Հայ

Եկեղեցու կանոնագրի մշակում, ամրապնդում Հայ Եկեղեցու միասնության, Մայր Աթոռի ապագա շինարարության ծրագիր, բնարություն Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի:

Օրակարգի բոլոր հարցերի մասին կարգավեցին բովանդակալից զեկուցագրեր, տեղի ունեցավ մտքերի աշխույժ փոխանակություն բացառիկ նախանձախնդրությամբ, առարկայական մտեցումով, և ընդունվեցին համապատասխան բանաձևեր և որոշումներ՝ շինարար ոգով, ազգային, հայրենասիրական իմաստով, Հայ Եկեղեցու, մեր ժողովրդի և Հայրենիքի գերագույն շահերի բարձր գիտակցությամբ:

Ազգային-եկեղեցական ժողովը, իր ընդունած որոշումներով և բանաձևերով, նվիրագործեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի յոթնամյա եկեղեցաշեն և հայրենանվեր գործունեության *ոգին և նպատակները*:

Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգի կարևոր հարցերից մեկն էր Հայ Եկեղեցու միասնության ամրապնդման հարցը:

Օրակարգի այս հարցի կապակցությամբ, Ազգային-եկեղեցական ժողովը արձանագրեց որդիական իր երախտագիտությունը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ նրա յոթնամյա գործունեության ընթացքի այն ջանքերի և միջոցառումների համար, որոնցով նորին Ս. Օծությունը, մանավանդ հովվապետական Իր այցելություններով, ամրապնդել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միությունը և միաժամանակ բարձր պահել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր հեղինակությունը հաշտ մեր ժողովրդի և քրիստոնեական այլ եկեղեցիների:

Ազգային-եկեղեցական ժողովը, օրակարգի այս հարցի առեւթությամբ, զբաղվեց նաև Անթրիպսի Աթոռի 1956 թվականից ի վեր ծավալած հակահեռուական և կենտրոնախույս արարքների ֆենությունը:

Մայր Աթոռում արգարտեն մտածում էին, որ Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը լավագույն առիթն էր մեր Եկեղեցու ներքին բարոյական միության ամրապնդման, աստվածակառույց Ս. Էջմիածնի հոգեվոր վերին հեղինակության ներքո:

Եղբարյական ոգով առաջնորդված, Մայր Աթոռը պաշտոնական հատուկ հրավեր էր ուղղել Անթրիլիասի Աթոռին, Ազգային-եկեղեցական ժողովից ավելի քան մեկ ամիս առաջ:

Բայց Անթրիլիասը մերժեց Ս. Էջմիածնից եկած եղբարյական հրավերը և բարոյական ֆաշոյությունն իսկ շունեցավ Եկեղեցու և Ազգի նշմարիտ ներկայացուցիչների հետ հանդիպելու:

Ազգային-եկեղեցական ժողովը, սակայն, իր կոչման և պարտականության բարձրության վրա կանգնած, Անթրիլիասի հարցի ֆեննության առթիվ, մի անգամ ևս հանդես բերեց ողջմտություն, լայնախոհություն, և իր ցավը հայտնելով Անթրիլիասի կողմից կատարված տխուր արարքների մասին, ի կարգ հրավիրեց նրան, որ հանուն Հայ Եկեղեցու միության և անբաժանելիության սկզբունքի և հանուն Հայ Եկեղեցու և ժողովրդի գերագույն շահերի, ընդունի և հարգի Մայր Աթոռ Ս. Էջմիածնով գլխավորվող Հայ Եկեղեցու միության դարավոր կանոնը և դադարի ու տրեճություններ անելուց Ս. Էջմիածնի իրավասությանց սահմաններից ներս:

Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորները, միասիրտ և միակամ, բաժանում էին ժողովի պատվո նախագահ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի լավատեսությունը և ինֆեալատահությունը ինչպես Մայր Աթոռի ապագա գործունեության, նույնպես և Հայ Եկեղեցու հետագա պայծառացման մասին, երբ Նորին Ս. Օծությունը, հատենի ժողովո, բուռն ծափերի մեջ, հայտարարում էր, որ՝

«Ապրող ու շնչող, մեր այս արևոտ ու շեն Երկրի սուրբ հողի վրա ամուր կանգնած, հավերժական Ս. Էջմիածնի աստվածապարզ շնորհներով զորացած, մեր հարազատ ժողովուրդի հավատքի և տեսիլքի աղբյուրներեն հագեցած, Մենք պիտի շարունակենք աշխատիլ Մեր բոլոր գործակիցներուն հետ միասիրտ ու միակամ, որպեսզի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին մնա մեկ և անբաժանելի և ապառաժի նման անսասանելի, որպեսզի հայ ժողովուրդը, Քրիստոսի լույսով առաջնորդված, նորեն վերածնի ոգեկան արժեքներու սուրբ ավազանին մեջ, և որպեսզի

մեր աչքի լույս Ս. Էջմիածինը, գերագույն վկան և գրավականը հայ ժողովուրդի հավերժության, անշարժ մնա, շեն ու պայծառ, և շողա լույս փառքի մեջ հավիտյան»:

Ազգային-եկեղեցական ժողովին զուգընթաց, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախագահության տակ, Մայր Աթոռում գումարվեց Եպիսկոպոսական ժողով, որը սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 5-ը ունեցավ չորս նիստեր, մասնակցությամբ 16 արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների:

Եպիսկոպոսական ժողովում զուգահեռաբար ֆեննության առնվեցին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին հուզող և այժմնություն ներկայացնող կարևոր հարցեր:

Ուրախությամբ պետք է արձանագրել այն փաստը, որ Եպիսկոպոսական ժողովի աշխատանքները ևս ընթացան, Վեհափառ Հայրապետի խոսքերով, «հույժ գովելի, շինարար, ջերմ ոգով և հոգևոր գիտակցության բարձր մակարդակի վրա: Համապատասխան որոշումներ տրվեցին իմաստությամբ և լավատեսությամբ և մանավանդ սիրով, իրավ սիրով դեպի մեր Եկեղեցին և մեր սուրբ ավանդությունները»:

Ազգային-եկեղեցական ժողովը, բացի իր զուտ կրոնա-եկեղեցական նշանակությունից, ունեցավ նաև այլ կարևոր նշանակություն:

Գաղթաշխարհի հայրենակարոտ ժողովրդի ներկայացուցիչները, ուխտավորներն ու հյուրերը, հեարավորություն ունեցան համբուրելու Հայրենի Հողը, մտախից ծանոթացան Հայրենիքի նվաճումներին, կրթական հաստատություններին, ուխտագնացություններ կատարեցին դեպի Գեղարդ, Սևան, Օշական, այցելեցին Երևանի տեսարժան վայրերը, քանգարաններն ու Մատենադարանը, ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսը: Ամեն երեկո նրանք ներկա եղան թատերական և երաժշտական ներկայացումների և ստացան հոգևոր, հայրենասիրական լիցք:

Արդարև, պատգամավորներին Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Հայրենի Երկիր էր բերել նշմարիտ եկեղեցասիրության և իրավ հայրենասիրության վառ զգացմունքը:

Դժվար է խմբագրականի այս տողերի մեջ վեր հանել Ազգային-եկեղեցական ժողովի, այդ առթիվ կազմակերպված հանդիսությունների, Մերալույս Մեռոնի օրհնության, եպիսկոպոսական ձեռնադրության պատմական նշանակությունը:

Պետք է այստեղ ամենայն ուրախությամբ և մխիթարությամբ արձանագրել, որ Ազգային-եկեղեցական ժողովը կարևոր մի նոր հանգրվան էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Վեհափառ Հայրապետի յոթնամյա գործունեության և ապագա ծրագրերի իրականացման հանապարհի վրա:

Հանրագումարի բերելով Ազգային-եկեղեցական ժողովի գումարման արդյունքները և ապագա գործունեության ծրագիրը, Վեհափառ Հայրապետը «Սովետական Հայաստան» ամսագրի թղթակցին հայտարարում էր հետևյալը.

«Ազգային-եկեղեցական ժողովը սրտառու խանդավառությամբ եկավ մի անգամ ևս հռչակելու՝

1. Մեր եկեղեցու և ժողովրդի անխորտակելի միասնության սկզբունքը և իրողությունը:

2. Ս. Էջմիածնի հոգևոր իշխանության ամրապնդումը Հայ եկեղեցու և ժողովրդի հոգևոր-ազգային գիտակցության ու կյան-

քի մեջ, որով առավել պիտի ամրապնդվի ազգապահպանման սրբազան գործը Սփյուռքի պայմանների մեջ:

3. Անհրաժեշտությունը և հնարավորությունը շարունակելու Մայր Աթոռիս շինարարական գործունեությունը:


4. Մեր եկեղեցու մասնակցությունը էլ ալելիի կազմակերպվածությամբ աշխարհի խաղաղության պահպանման ի խնդիր»:

Ազգային-եկեղեցական ժողովը փակվեց հոկտեմբերի 5-ին, իր սրտագին շնորհակալությունը հայտնելով հայրենի բաբելոնյան կառավարությանը՝ ժողովի գումարման առթիվ ցուցաբերված դուրսությունների և բարյացակամության համար:

Ազգային-եկեղեցական ժողովը, բացառիկ խանդավառ մթնոլորտում, խոստացավ իր նյութական և բարոյական աջակցությունը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, նրա եկեղեցաշեն և հայրենանվեր ծրագրերի իրականացման համար, ի փառս Հայաստանյայց Առաքելական եկեղեցու և ի պայծառություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Թո՛ղ Տերն անասան պանի Հայաստանյայց Առաքելական եկեղեցին իր Գլուխ Մայր Աթոռ Ս. Էջմիածնով:

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա և զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան»:





ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

(30 սեպտեմբեր—5 հոկտեմբեր 1962 թ.)

Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն. Ի. Ս. Ս.

Ազգային-եկեղեցական ժողովի բացումը տեղի ունեցավ 1962 թվականի սեպտեմբերի 30-ին, կիրակի, հետմիջօրեի ժամը 2.20-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր Վեհարանի հանդիսությունը դաժիճում, նախագահությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Ս. Ս. Վազգեն Ա. Սրբազնագույն Կաթողիկոսի:

Ժողովը բացվեց Վեհափառ Հայրապետի աղոթքով:

Ժողովին ներկա են Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության օրինապահ միաբանության և ժողովրդի պետ ամենապատիվ Ս. Խաղ արքեպիսկոպոս Աջապահյանը և ժողովրդի կողմից ընտրված եկեղեցական և աշխարհական պատգամավորները, Երուսաղեմի և Թուրքիայի հայոց Պատրիարքությանց ներկայացուցիչները, արտասահմանյան թեմերից՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց Արևելյան և Արևմտյան, Հարավային Ամերիկայի, Եվրոպայի, Եգիպտոսի, Ռումինիայի, Բուլղարիայի թեմակալ առաջնորդները, Անգլիայի հայոց Հայրապետական պատվիրակը և ՍՍՌՄ թեմերի՝ Վրաստանի, Ադրբեջանի, Հյուսիսային Կովկասի, Մոսկվայի թեմակալ առաջնորդները, ինչպես նաև Շիրակի, Արարատյան թեմի առաջնորդներն ու թեմերի պատգամավորները: Նորին Ա. Օծուրյուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ողջունեց բոլոր պատգամավորներին և Ազգային-եկեղեցական ժողովի աշխատանքներին լիակատար հաջողություն բարեմաղթելով ասաց.

«Միեկի սրբազան եղբայրներ, հոգեշնորհ վարդապետներ, արժանապատիվ ֆանանաներ, հարգարժան պատգամավորներ և հյուրեր:

Տիրավանդ և հայրապետական ողջունեք բոլորիդ:

Աստուծո ողորմությամբ, համար 444 Մեր կոնդակով հրավիրեցինք Ազգային-եկեղեցական ժողով: Այժմ ուրախ ենք, որ այս պահին հավաքվել ենք անապատեղ, բացումը կատարելու մեր ժողովի:

Հույժ երջանիկ ենք, որ այստեղ ներկա են մեր բոլոր նվիրապետական Աթոռների պաշտոնական ներկայացուցիչները, մեր բոլոր թեմակալ առաջնորդները և ընտրյալ պատգամավորները մեր ներքին և արտասահմանի թեմերի:

Ռուսիա եճք նաև, որ Մեզ հետ են այստեղ Մեր հրավիրած պատվական հյու-
րուր Երևանից, ներքին թեմերից և հայ Սփյուռքից:

Մեզ համար անփոխարինելի երջանկություն է մեր վերածնած Մայր Երկ-
րի հողի վրա, Ս. Էջմիածնի կամարների ներքև, ի մի հավաքված տեսնել այս
պատկանելի ժողովրդ: Պատմական է այս պահը: Թող Աստված օրհնի Ազգային-
եկեղեցական այս ժողովը և իր աշխատանքները:

Հայաստանյայց եկեղեցու Ազգային-եկեղեցական այս ժողովի հրավերը
լինելով կանոնական և գումարումը օրինավոր իր մասնակցողների հանգաման-
քով և քվով, Մենք պաշտոնապես բացված ենք հայտարարում այն և հրավի-
րում ենք, որ ժողովն ընտրի իր դիվանը և անցնի աշխատանքի, համաձայն
ծանուցված օրակարգի»:

*Վեհափառ Հայրապետի հրամանով, Հոգևոր ձեռնարանի վերատեսուչ գե-
րաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը պատգամավորներին է
ներկայացնում ժողովի ատենապետության և քարտուղարության համար առա-
ջարկված թեկնածուների հետևյալ ցանկը.*

Ատենապետներ

Ամենապատիվ Տ. Խաղ արքեպիսկոպոս Աջապահյան

Գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյան

Գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան

Գերաշնորհ Տ. Սիրոն արքեպիսկոպոս Մանուկյան

Տիար Մարտիրոս Սարյան

Տիար Տիգրան Պոյաճյան

Տիար Տաճատ Սրապյան

Տիար Սեդրակ Քարյան

Քարտուղարներ

Հոգեշնորհ Տ. Թորգոմ վարդապետ Մանուկյան

Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Գրիգորյան

Տիար Սուրեն Մանվելյան

Տիար Սուրեն Ավչյան

*Ժողովականները ծափահարություններով իրենց հավանությունն են
հայտնում ներկայացված թեկնածուների օգտին:*

*Ազգային-եկեղեցական ժողովը այնուհետև ընտրում է հետևյալ հանձ-
նախմբերը.*

Մանդատային հանձնախումբ

Հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Տերվիշյան

Հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Պաղտասյան

Տիար Եփրատ Պայրամյան

Տիար Պարզև Ծահրազյան

Բանաձևերի հանձնախումբ

Գերաշնորհ Տ. Բաբգեն եպիսկոպոս Ապատյան

Հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետ Կարպիսյան

Տիար Արթուր Հատիտյան

Տիար Ռուբեն Մեստուճյան

*Այնուհետև Ազգային-եկեղեցական ժողովի առաջին նիստի ատենապետ
ամենապատիվ Տ. Խաղ աբխազապետ Աջապահյանը, ընթացք տալով ժողովի
աշխատանքներին, «Հոգևոր» է արտասանում 1956—1962 թվականների ժամա-
նակամիջոցում վախճանված հետևյալ եպիսկոպոսների համար.*

Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյան

Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայան

Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյան


Տ. Փառեն եպիսկոպոս Մելքոնյան

Տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյան

Տ. Պարզև եպիսկոպոս Վրթանեսյան

Տ. Ծղնիկ եպիսկոպոս Ազնավուրյան

*Ատենապետ սրբազան հոր հրահանգով, քարտուղարության անդամ հոգե-
շնորհ Տ. Թորգոմ վարդապետ Մանուկյանը հրապարակում է ՍՍՌՄ Մի-
նիստրների Սովետին առընթեր կրոնական պաշտամունքների գործերի խոր-*



ԱՋԳԱՅԻՆ ԵՎԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԽՄԲԱՆԿԱՐԸ

հրդի նախագահի տեղակալ Վ. Ֆ. Ռյազոնովի և Հայկական ՍՍՌ Մի-
նիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի
պաշտոնակատար Ս. Հովհաննիսյանի Ամենայն Հայոց Հայրապետին ուղղած
ողջույնի հեռագրերը Ս. էջմիածնում Ազգային-եկեղեցական ժողովի գումար-
ման առթիվ: Հեռագրերը ընթերցվում են և շնորհակալությամբ արձանագրվում:

Այնուհետև ատենապետ սրբազան հոր հրավերով, Վեհափառ Հայրապետի
և Մայր Աթոռ Ս. էջմիածնի հանդեպ իրենց սերն ու հավատարմությունը հայտ-
նելով, ողջույնի խոսքերով հանդես են գալիս ամենապատիվ Ս. Խաչ աբեղայիս-
կոպոս Աջապանյանը՝ հանուն Կիլիկիո Աթոռի և ժողովրդի, գերաշնորհ
Ս. Սևրովբե եպիսկոպոս Մանուկյանը՝ հանուն Երուսաղեմի Աթոռի, ամենա-
պատիվ Ս. Եղիշե պատրիարքի և միաբանության, գերաշնորհ Ս. Տիրան աբե-
ղայիսկոպոս Ներսայանը՝ հանուն Թուրքիայի հայոց Պատրիարքության և ամե-
նապատիվ Ս. Շնորհք պատրիարքի:

Ողջույնի ջերմ խոսքերով հանդես են գալիս նաև թեմակալ առաջնորդներ
գերաշնորհ Ս. Մամբրե աբեղայիսկոպոս Սիրունյանը՝ հանուն Եգիպտոսի հայոց,
գերաշնորհ Ս. Սիոն աբեղայիսկոպոս Մանուկյանը՝ հանուն Ամերիկայի Միաց-
յալ Նահանգների հայոց Արևելյան թեմի, գերաշնորհ Ս. Բարգեն եպիսկոպոս
Ապատյանը՝ հանուն Հարավային Ամերիկայի հայոց, գերաշնորհ Ս. Պսակ
եպիսկոպոս Թումայանը՝ հանուն Անգլիայի հայոց, հոգեշնորհ Ս. Թորգոմ վար-
դապետ Մանուկյանը՝ հանուն Կալիֆոռնիայի հայոց, հոգեշնորհ Ս. Մեսրոպ
վարդապետ Գրիգորյանը՝ հանուն Վիեննայի հայոց: Աշխարհական պատգա-
մավորներից հանդես են գալիս Ռուբեն Մեստունյանը՝ հանուն Ռումինիայի
և Բուլղարիայի հայոց և պր. Սուրեն Ավյանը՝ հանուն Վրաստանի հայոց:

Ատենապետ սրբազանը հայտարարում է, որ պատգամավորները այսօրվա
նիստի վերջում իրենց պատգամավորական վկայագրերը պետք է ներկայաց-
նեն մանդատների ստուգման հանձնախմբին:

Ազգային-եկեղեցական ժողովի առաջին նիստը փակվում է ժամը 4-ին,
հաջորդ օրը, երկուշաբթի, հոկտեմբերի 1-ին, առավոտյան ժամը 12-ին, ժո-
ղովի երկրորդ նիստի վերաբացվելու որոշումով:

Նիստը փակվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով:

Ն Ի Ս Ս

Հոկտեմբերի 1-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 12-ին, նոր Վեհա-
րանի հանդիսությանց դահլիճում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նա-
խագահությամբ գումարվում է Ազգային-եկեղեցական ժողովի երկրորդ նիստը:

Նիստը բացվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով:

Ատենապետում են գերաշնորհ Ս. Տիրան աբեղայիսկոպոս Ներսայանը և
պր. Տիգրան Պոյանյանը:

Քարտուղարության անդամ հոգեշնորհ Թ. Թորգոմ վարդապետ Մանուկյա-
նը ընթերցում է Ազգային-եկեղեցական ժողովի առաջին նիստի ատենագրու-
թյունը, որը վավերացվում է փոքր ճշտամաներով:

Մանդատների ստուգումը ավարտված լինելով, հանձնախմբի նախագահ
հոգեշնորհ Ս. Տիրայր վարդապետ Տերվիշյանը հաղորդում է, որ Ազգային-
եկեղեցական ժողովի հրավերված 162 պատգամավորներից ներկա են 141 հո-
գի, որոնցից 46-ը հոգևորական և 95-ը աշխարհական:

Ատենապետ սրբազանը այնուհետև օրինավոր է հռչակում Ազգային-եկե-
ղեցական ժողովը և հայտարարում, որ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն
է նախագահը Ազգային-եկեղեցական ժողովի: Ժողովն ունի 8 ատենապետ-
ներ, որոնցից 4-ը հոգևորական և 4-ը աշխարհական, և 4 քարտուղարներից
կազմված դիվան:

Առաջարկվում է, որ առժամյա դիվանի անդամները համարվեն մնայուն
դիվանի անդամներ: Ատենապետը քվեարկության է դնում առաջարկը: Ժողովը
միաձայնությամբ ընտրում է մնայուն դիվան նույն անդամներով:

Ժողովը հաստատում է նաև մնայուն հանգամանքը մանդատների ստուգ-
ման և բանաձևերի խմբագրման հանձնախմբերի:

Ապա ատենապետ սրբազանը հայտարարում է, որ Ազգային-եկեղեցական ժողովի 8 ատենապետները զույգ-զույգ վարելու են նիստերը հետևյալ կազմով.

Առաջին նիստին՝ ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյան, Մարտիրոս Սարյան.

Երկրորդ նիստին՝ գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան, Տիգրան Պոյաճյան.

Երրորդ նիստին՝ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան, Սեդրակ Քարյան.

Չորրորդ նիստին՝ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյան, Տաճատ Սրապյան:

Նիստի այս պահին հայտարարվում է ընդմիջում 15 րոպե ժամանակով:

Դադարից հետո ժողովը շարունակում է իր աշխատանքները ատենապետությանը պր. Տիգրան Պոյաճյանի, որը նախ շնորհակալություն է հայտնում իրեն հանդիպ ցույց տրված պատվի համար և ապա, առ ի գիտություն, ընթերցում է Ազգային-եկեղեցական ժողովի հետևյալ օրակարգը.

1. Վեհափառ Հայրապետի յոթնամյա գործունեության զեկույցը.

2. Մայր Աթոռի տնտեսական հաշվետվությունը.

3. Հայ Եկեղեցու Կանոնադրի մշակման հարց.

4. Ամրապնդում Հայ Եկեղեցու միասնության.

5. Ընտրություն Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնա-ժողովի.

6. Ս. Էջմիածնի առաջիկա շինարարական գործունեության ծրագիր:

Ատենապետը հայտնում է Ազգային-եկեղեցական ժողովի Նախագահ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, որ ժողովը պատրաստ է լսելու Նորին Ս. Օծուխյան յոթնամյա գործունեության զեկույցը:

Ժողովականների հոտնկայս ծափահարությունների ավարտից հետո, Վեհափառ Հայրապետը ընթերցում է Իր բովանդակալից և մանրամասն զեկույցագիրը Գերագույն Հոգևոր Խորհրդի կազմի և աշխատանքների, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության, Հոգևոր ճեմարանի կրթական ծրագրի և ուսանողության կյանքի, «Էջմիածին» ամսագրի և հոգևոր գրականության հրատարակության, ներքին թեմերի վերակազմության, արտասահմանյան թեմերի հետ փոխհարաբերությունների մասին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը շարունակում է իր զեկույցը Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոսության ներքին տագնապի, Երուսաղեմի և Թուրքիայի հայոց Պատրիարքությանց, Մայր Տաճարի և վանքերի նորոգությանց, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի աշխատանքների, Մայր Աթոռի բյուջեի, Ս. Էջմիածնի՝ արտասահմանում գտնվող օժանդակ հանձնախմբերի և Մայր Աթոռի նորահաստատ տպարանի մասին:

Ապա Վեհափառ Հայրապետը խոսում է ջուր եկեղեցիների հետ փոխհարաբերության, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին Հայ Եկեղեցու անդամակցության, ապագա շինարարական ծրագրերի, հրատարակչական մի մարմնի կազմության և խաղաղության ամրապնդման համար կատարված աշխատանքների մասին:

Վեհափառ Հայրապետը Իր զեկույցագրում խոսում է նաև ՍՍՌՄ կառավարության բարյացակամ վերաբերմունքի, հայրենի կառավարության ընծայած դյուրությունների և բերած օժանդակության մասին և օրհնում է համայն հայ հավատացյալ ժողովրդին, հայրապետական Իր գնահատանքին արժանացնելով Մայր Աթոռի բարերարներին և նվիրատուներին:

Ժողովականները, երկարատև և բուռն ծափահարություններով, Նորին Ս. Օծուխյան են հայտնում իրենց երախտագիտական և շնորհակալական զգացմունքները կատարված բազմապիսի և բազմաբղուն հոգևոր, վարչական, կրթական, կազմակերպչական և շինարարական աշխատանքների համար:

Հարգելի ատենապետն ասում է. «Հոգեկան անշափ բավականություն ստացանք կարդացված զեկույցագրից: Չե՞ր բոլորի զգացմունքների թարգմանը հանդիսանալով մանրամասն ծրագրված և անգերազանցելի զեկույցագրի համար, հրավիրում եմ Ձեզ հանուն Ազգային-եկեղեցական ժողովի դիվանի,

կրկին անգամ, հոտնկայս, մեր հարգանքն ու հավատարմութիւնը հայտնել վեհափառ Հայրապետին»:

Յոյր պատգամաւորները, հոտնկայս, երկարատև ծափերով իրենց երախտագիտութիւնն են հայտնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

Գերաշնորհ Տ. Մամբե արքեպիսկոպոս Սիրունյանը խոսք անելով, ասում է. «Այս ժողովի սրբազան և նվիրական պարտականութիւնն է արժանի մի տիտղոս տալ մեր սիրելի Վեհափառին, և այդ իրավ տիտղոսը պետք է լինի Վազգեն Ա Շինարար Կաթողիկոս: Միաժամանակ աղոթում եմ, որ մեր Հայրենիքը է՛լ ավելի զորանա և հովանավորի իր զավակներին, ինչպես այդ ասում է հոգեպետ մեր Ս. Էջմիածինը:

Ապա պր. Սեդրակ Քարյանը խոսք անելով ասում է. «Ես խոսում եմ որպէս պատվիրակը Փարիզի հայութեան: Մենք հիացել ենք նոր Վեհարանի այս շինութեամբ կատարված շինարարական աշխատանքներով և Վեհափառ Հայրապետի ամբողջ գործունեութեամբ, որոնք ընդարձակ և կարևոր ձեռնարկութիւններ են: Իսկ Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը մխիթարական երևույթ է, պատմական նշանակութիւն ունեցող:

Այս բոլորի համար մենք պարտական ենք Վեհափառ Հայրապետին:

Նորին Ս. Օծութեան հայտնում եմ իմ անվերապահ հիացմունքը, ակնածանքն ու երախտագիտութիւնը»:

Ազգային-եկեղեցական ժողովի երկրորդ նիստը փակվում է ժամը 4-ին, չորեքշաբթի օր, հոկտեմբերի 3-ին, առավոտյան ժամը 11-ին նորից գումարվելու որոշումով:

Ե Ր Ր Ո Ր Գ Ն Ի Ս Տ

Ազգային-եկեղեցական ժողովի երրորդ նիստը գումարվեց հոկտեմբերի 3-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 11-ին, նոր Վեհարանի հանդիսասրահում, Վեհափառ Հայրապետի նախագահութեան ներքո:

Նիստը բացվեց նորին Ս. Օծութեան աղոթքով:

Ատենապետում են գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը և պր. Սեդրակ Քարյանը:

Պր. Սուրեն Մանվելյանը ընթերցում է երկրորդ նիստի ատենագրութիւնը, որը նույնութեամբ վավերացվում է:

Առաջարկվում է արձանագրութեան մեջ ներմուծել Վեհափառ Հայրապետի զեկուցագրի ենթագլուխների խորագրերը:

Ատենապետ սրբազանը այնուհետև հրավիրում է ժողովականներին՝ արտահայտել իրենց տպավորութիւններն ու խոհերը Վեհափառ Հայրապետի յոթնամյա զեկուցագրի շուրջ:

Պր. Սարգիս Քյուրբեջյանը (Լոնդոն) խոսք անելով, բարեմաղթում է, որ Վեհափառ Հայրապետի գահակալութեան օրոք է՛լ ավելի առաջադիմի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Բանախոսը հայտնում է ժողովին, որ նոր Վեհարանի կահավորման և բարեզարդման համար պր. Երվանդ Հյուսիսյանը (Միլանո), պր. Հարի Բրտ Մովսեսյանը (ԱՄՆ) և տեր և տիկին Սարգիս և Աստղիկ Քյուրբեջյանները (Անգլիա) 10 000-ական, Ապրո Ապրոյան տունը (Լիբանան), պր. Գեորգ Զաքարյալայանը (Լիբանան) 5 000-ական դոլար են նվիրում Մայր Աթոռին:

Հանուն Միլանոյի հայութեան խոսք անելով, պր. Երվանդ Հյուսիսյանը շնորհակալորում է Վեհափառ Հայրապետին՝ նրա յոթնամյա բազմակողմանի գործունեության համար հայտնելով սրտագին շնորհակալութիւններ:

Գերաշնորհ Տ. Պսակ եպիսկոպոս Թումայանը հիացմունքով և գնահատանքով է խոսում Վեհափառ Հայրապետի հովանու ներքո Մայր Աթոռում հասակ առած նոր միաբանների ու Հոգևոր ձեռնարանի ուսանողութեան մասին:

Շնորհակալութեան, երախտագիտութեան և բարեմաղթութեան խոսքեր են ասում գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը՝ հանուն Հոգևոր ձեռնարանի դասախոսական կազմի և ուսանողութեան, հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Նիխայանը՝ հանուն Մայր Աթոռի միաբանութեան, պր. Հաբու-

բյուռ Ակիբյանը (Ավստրալիա)՝ հանուն Մայրագույն Արևելքի և պր. Տանատ Մրապյանը՝ հանուն Լիբանանի հայության, պր. Պարզև Շահբազյանը և պր. Գրիգոր Գյուլյանը՝ հանուն Արարատյան թեմի:

Գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Ապատյանը, հանուն բանաձևերի խմբագրման հանձնաժողովի, կարդում է հետևյալ բանաձևը, առ ի գնահատություն ու երախտագիտություն Վեհափառ Հայրապետի յոթնամյա գործունեության.

«1962 թվականի հոկտեմբերի 1-ին, Մայր Աթոռ Ս. էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովը, իր երկրորդ նիստում, լսելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի յոթնամյա գործունեության զեկուցումը, իր որդիական ջերմ սերն ու հավատարմությունն է հայտնում Մայր Աթոռ Ս. էջմիածնին և նրա Գանակալ Խորեն Ս. Օծուբյան և իր հարգալիք գեանատուրյունը՝ նրա կատարած եկեղեցաշեն և ազգօգուտ աշխատանքների համար:

Ազգային-եկեղեցական ժողովը մասնավորաբար իր որդիական երախտագիտությունն է հայտնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միության, Մայր Աթոռից ներս և դուրս կատարված շինարարական աշխատանքների և աշխարհի խղաղության ի նպաստ տարված ջանքերի համար:

Ազգային-եկեղեցական ժողովը միաձայն և սրտագին հավանություն է հայտնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի յոթնամյա բազմաբեղուն գործունեության:

Ազգային-եկեղեցական ժողովը հույս և վստահություն է հայտնում, որ Վեհափառ Հայրապետի շինարար գործունեությունը կշարունակվի նաև այսուհետև, օգնականությամբ Աստուծա, հավատացյալ ամբողջ հայության սրտաբուխ եվիրատվությունների շնորհիվ, որպեսզի միշտ շեն ու պայծառ մնան Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և Մայր Աթոռ Ս. էջմիածինը»:

Ազգային-եկեղեցական ժողովը միաձայնությամբ և խանդավառ ծափահարությամբ մի անգամ ևս հոտնկայս իր սրտագին երախտագիտությունն է հայտնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ նրա յոթնամյա գործունեության առթիվ:

Այնուհետև Ազգային-եկեղեցական ժողովն անցնում է օրակարգի երկրորդ հարցի քննարկմանը:

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ դոցենտ Արտաշես Տիրացյանը կարդում է 1956—1962 տարիներին Մայր Աթոռի տնտեսական հաշվետվության զեկուցագիրը:

Օրակարգի երկրորդ հարցի մասին Ազգային-եկեղեցական ժողովը գոհունակությամբ և միաձայնությամբ ընդունում է հետևյալ բանաձևը.

«Ազգային-եկեղեցական ժողովը իր գոհունակությունն է արձանագրում, որ վերջին յոթ տարիների ընթացքում, Վեհափառ Հայրապետի անմիջական ֆելդությունը տակ, Մայր Աթոռի և ներքին թեմերի տնտեսա-ֆինանսական գործերի ճշգրիտ կազմակերպումը ավել է իր բարի արդյունքները:

Ազգային-եկեղեցական ժողովը այս առթիվ իր շնորհակալությունն է հայտնում Գերագույն Հոգևոր Խորհրդին և Վերստուգիչ հանձնաժողովին՝ նրանց կատարած խղճամիտ աշխատանքի համար»:

Նիստի այս պահին հայտարարվում է դադար 15 րոպե ժամանակով:

Ընդմիջումից հետո ժողովն անցնում է օրակարգի երրորդ հարցի քննարկմանը:

Ժողովի ատենակազմությունը վարում է պր. Սեդրակ Քարյանը:

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պրոֆ. Առաքել Առաքելյանը կարդում է զեկուցագիր «Հայ Եկեղեցու Կանոնագրքի մշակման հարց»-ի մասին, ուր մանրամասնորեն և հստակ կերպով ցույց էին տրվել 1917 թվականից հետո Մայր Աթոռում կատարված աշխատանքները Հայ Եկեղեցու նոր Կանոնադրության կազմավորման կապակցությամբ:

Պր. Սուրեն Արևշատյանը, հանուն Արարատյան թեմի, կարդում է գնահատագիր արդեն իսկ պատրաստ նախագծի մասին:

Այնուհետև տեղի է ունենում մտքերի փոխանակություն օրակարգի երրորդ հարցի շուրջ:

Գերագույն Հոգևոր Խորհրդի անգամ պրոֆ. Աբարատ Ղարիբյանը առաջարկում է կատարել Հայ Եկեղեցու Կանոնագրքի գիտական հրատարակություն:

Գերաշնորհ Ս. Տիրան արքեպիսկոպոս Ներսայանը դիտել է տալիս, որ Հայ Եկեղեցու նոր Կանոնագրքի մշակման հարցը առաջին անգամ է գալիս Ազգային-եկեղեցական ժողովին, Վեհափառ Հայրապետի համար 444 կոնդակով:

Գերաշնորհ Ս. Խաղ, Ս. Մամբե, Ս. Սիռն արքեպիսկոպոսները, պր. Սարգիս Քյուրբեյանը, ինչպես նաև հոգեշնորհ Ս. Մեսրոպ վարդապետ Գրիգորյանը առաջարկում են վերաքննության ենթարկել նախագիծը:

Պրոֆ. Ա. Առավելյանը, պր. Ե. Քյումպալյանը (Սիրիա) և պր. Ս. Գալենտեյանը (Սիրիա) առաջարկում են նախագծի քննարկում և վավերացում սույն ժողովի ընթացքում:

«Էջմիածին» ամսագրի խմբագիր պր. Արթուր Հատիտյանը առաջարկում է շնորհակալություն հայտնել Վեհափառ Հայրապետին՝ Հայ Եկեղեցու Կանոնագրքի նախագծի մշակման համար ցարդ Նրա կատարած աշխատանքների համար և Կանոնագրքի գիտական հրատարակությունից հետո վերանայել և ամբողջացնել այն:

Նախագահ Վեհափառ Հայրապետը խոսք անելով, ասում է.

«Հայ Եկեղեցին մի Կանոնադրությամբ կամ Մանամանադրությամբ օժտելու անհրաժեշտությունը ակներև է և այդ հարցով զբաղվել են մեր նախորդ երեք հայրապետները և Ազգային-եկեղեցական ժողովները: Մեզ համար մեծ կարևորություն ունեցող հարց է դա, որովհետև 1600 տարիների պատմություն ունենք մեր ետին իբրև Եկեղեցի, և եկեղեցական կանոնների մի մեծ ժառանգություն, որ մեզ համար ներկայացնում է մի նշմարիտ գաճ:

Մեր պատմության, մեր ավանդությունների և կանոնների լույսի տակ, պետք է պատրաստենք մեր նոր Կանոնադրությունը, նկատի ունենալով անշուշտ նաև մեր կյանքի ներկա պայմաններն ու շահերը:

Ահա թե ինչն է մեծ ուշադրությամբ և հետաքննությամբ պետք է մտնենք այս հարցին, առանց անապարելու: Բայց հետևողական կերպով պետք է աշխատենք միացյալ ուժերով և բոլորի գործակցությամբ, որպեսզի մոտ ապագային հասնենք մեր նպատակին և տանք մեր Եկեղեցուն մի նոր Կանոնադրություն»:

Վեհափառ Հայրապետի արտոնությունամբ խոսք է անում ժողովին որպես հյուր ներկա գտնվող պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկը (Քրիլիսի): Նա առաջարկում է, որ Մայր Աթոռը գործակցի Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հետ, որ Վ. Հակոբյանը երկար տարիներից ի վեր աշխատում է Հայ Եկեղեցու Կանոնագրքի գիտական բնագրի պատրաստության վրա:

Կարծիքների փոխանակությունից հետո, Ազգային-եկեղեցական ժողովը օրակարգի երրորդ հարցի մասին միաձայն ընդունում է հետևյալ բանաձևը.

«Ազգային-եկեղեցական ժողովը շնորհակալություն է հայտնում Վեհափառ Հայրապետին՝ Հայ Եկեղեցու Կանոնագրքի մշակման հարցի կապակցությամբ կատարված աշխատանքների համար և խնդրում է Նախնի Ս. Օծուրյան, որ բարենախի կազմել մի հանձնախումբ, որպեսզի ուսումնասիրի Հայ Եկեղեցու հեավանդ բոլոր կանոնները և նրանց հիման վրա պատրաստի Հայ Եկեղեցու Կանոնադրությունը, ներկայացնելու համար հաջորդ Ազգային-եկեղեցական ժողովին»:

Ժողովի երրորդ նիստը փակվում է ժամը 3.15-ին, ուրբաթ, հոկտեմբերի 5-ին, առավոտյան ժամը 11-ին վերստին գումարվելու որոշմամբ:

Չ Ո Ր Ր Ո Ր Դ Ն Ի Ս Ս

Ազգային-եկեղեցական ժողովի չորրորդ նիստը գումարվում է հոկտեմբերի 5-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 11-ին, նոր Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

Նիստը բացվում է Նախնի Ս. Օծուրյան աղոթքով:

Ատենապետում են գերաշնորհ Ս. Մամբե արքեպիսկոպոս Սիրունյանը և պր. Տաճատ Սրապյանը:

Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Գրիգորյանը ընթերցում է երրորդ նիստի ատենագրությունը, որը վավերացվում է փոքր ճշտումներով:
 Ատենապետ սրբազանը հայտարարում է, որ օրակարգի շորորդ հարցն է «Ամրապնդում Հայ Եկեղեցու միասնության»:

Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, Հայ Եկեղեցու միասնության և Անթիլիասի հարցի մասին կարգում է ընդարձակ մի զեկուցագիր:

Զեկուցազրում մանրամասն խոսվում է մանավանդ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կատարած հաշտության ջանքերի մասին՝ ի բարձունս Անթիլիասի տագնապի:

Այնուհետև ատենապետ սրբազանը հրավիրում է ժողովականներին, որ իրենց կարծիքը հայտնեն և առաջարկներ բերեն օրակարգի այս շորորդ հարցի կապակցությամբ:

Գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը խոսում է ընթացիկ տարվա օգոստոս ամսում Փարիզում գումարված Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ժողովի մասին, որին մասնակցել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նշանակած Եկեղեցու պատվիրակությունը, որի կազմումն էին Տ. Սերոբյան, Տ. Կոմիտաս եպիսկոպոսները և Տ. Պարգև վարդապետ Գևորգյանը:

Հայ Եկեղեցու պատվիրակները, Անթիլիասի ներկայացուցիչ հոգեշնորհ Տ. Գարեգին վարդապետ Սարգսյանի հետ միասնաբար, հայտարարել են, թե Հայաստանյայց Եկեղեցին մի է, թե Անթիլիասը ճանաչում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գերագահությունը և Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների իրավասությունն սահմանները:

Սակայն Անթիլիասը փաստորեն չի հարգել իր ներկայացուցչի ստորագրած հայտարարությունը:

Պր. Արտաշես Խաչատրյանը (Անգլիա), պր. Սարգիս Քյուրբեյանը (Անգլիա), պր. Նիքոն Պայրամյանը (Արգենտինա) և պր. Գևորգ Երևանյանը (Լիբանան) առաջարկում են խաղաղ միջոցներով շարունակել միասնականության համար տարված աշխատանքները:

Գերաշնորհ Տ. Գնել եպիսկոպոս Ճերեհյանը հիշեցնում է, որ գոյություն ունեցող տագնապը հին է, այսինքն այն սկսել է 1921 թվականից, որպեսզի Միջուղում ստեղծվի հայ պետություն և հայոց կաթողիկոսություն: Անթիլիասի Աթոռը, ասում է բանախոսը, ձգտում է էջմիածնի Կաթողիկոսության տեղը գրավել արտասահմանում:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը հաշտության ձեռք մեկնելով Անթիլիասի, շատ լավ գործ է կատարել, որպեսզի միասնականությունը ամրապնդվի Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի միջև:

Արժանապատիվ Տ. Սարգիս Բաբանյան Անդրեասյանը (Այրարատյան թեմ, Երևան) իր ելույթում դատապարտում է Անթիլիասի կատարած ոտնձգությունները:

Գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսայանը խոսք անելով նշում է, որ փաստորեն ոչ Կիլիկիա է մնացել, ոչ Կիլիկեցի է մնացել: Երուսաղեմը լուսահողի Տ. Եղիշե Դուրյան պատրիարքի օրով Սահակ կաթողիկոսին է փոխանցում ժամանակավոր կերպով Երուսաղեմի իրավասության պատկանող թե՛ վիճակները և թե՛ ժողովրդին, սրանից 30 տարի առաջ:

Այնուամենայնիվ, ասում է Տիրան սրբազանը, կա ներկա մի իրականություն, սույն ժողովը պետք է նկատի առնի այս կացությունը:

Անթիլիասի ոտնձգությունները, շեշտում է Տ. Տիրան արքեպիսկոպոսը, ո՛չ մի հիմք չունեն և ո՛չ մի արժեք չեն ներկայացնում եկեղեցական և ազգային տեսակետից: Մենք հարկ եղածից ավելի կարևորություն և ուշադրություն չպետք է կենտրոնացնենք Անթիլիասի արարքների վրա: Մենք մեր օրինավոր ճանապարհով ընթանանք և Անթիլիասն է, որ պետք է մտահոգվի իր վիճակով և անդրադառնա իր սխալների վրա և հարգի մեր եկեղեցական կարգն ու կանոնը:

Գերաշնորհ Տ. Շավարշ եպիսկոպոս Գույումճյանն իր ելույթում ասում է, որ Անթիլիասի կապված են քաղաքական մի հոսանքի հետ, որ 1921 թվականից ի վեր գործում է Սփյուռքում:

Այդ հոսանքի ղեկավարության տակ, սադրանքներով ժողով են զուսմարել Անթիլիասում, օժում են կատարել և դուրս են եկել հափշտակությունների, և դեռ ապօրեն էլ են հայտարարել այս սրբազուսար ժողովը:

«Ես,—ասում է Տ. Շավարշ եպիսկոպոսը,—հակառակ եմ այն կարծիքին, թե ժամանակը կրուժի մեր վերքերը և կվերացվի մեր Եկեղեցու մեջ տիրող տագնապը: Համաձայն եմ, որ խիստ կերպով դատապարտվի Անթիլիասը, իսկ մենք միանանք, զորանանք և մեր արդար գործը շարունակենք: Կիլիկյան մեր օրինապահ միաբանությունը պետք է ունենա իր Գարեվանքը և ջանա Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հեղինակությունը բարձր պահել»:

Գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը խոսք անելով, ասում է, թե պետք է մտածել վերքը բուժելու կարելիության վրա:— «Ապավինենք Աստուծո՛ւ և ջանանք իրապես մի դարման գտնել տագնապի լուծման համար: Անցյալում Հայ Եկեղեցու մեջ բաժանման շատ փորձեր կատարվել են, բայց մեր Եկեղեցին մնացել է կանգուն: Այսօր, մոտավորապես հիսուն հազար հայեր, առանձին ճակատ են կազմել, սակայն նրանց դեմ միահամուռ կանգնել է հայ ժողովուրդը Ս. Էջմիածնի կողքին: Պետք է մտածել, թե ինչպե՞ս անենք, որ մոլորված որդիներին վերադարձնենք Հայրենի Տուն: Այսպիսի կացություններ չեն կարող երկար տևել: Մենք կշարունակենք մեր հավատարմությունը դեպի Ս. Էջմիածին և դեպի մեր եկեղեցական կարգն ու ավանդությունները: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին մի է իր նվիրապետական Աթոռներով»:

«Էջմիածին» ամսագրի խմբագիր պր. Արթուր Հատիտյանը իր ելույթում նշում է, որ Անթիլիասի տագնապը ստեղծել է որոշ դառնություն հայ սրտերի մեջ: Բայց հայ ժողովրդի ջախջախիչ մեծամասնությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետ է:

Ճառախոսը առաջարկում է երախտագիտություն և շնորհակալություն հայտնել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ նրա ցարդ կատարած հաշտության ջանքերի համար և խնդրել Նորին Ս. Օծուխյան՝ շարունակել իր աշխատանքները Անթիլիասի տագնապի լուծման նոր ուղիներ որոնելու համար:

Պր. Սուրեն Մանվելյանը (ԱՄՆ) ասում է, որ ծանոթ են բոլորին Անթիլիասի տագնապի բնույթն ու ստեղծված կացությունը: Մեզ մնում է երախտագիտություն հայտնել Վեհափառ Հայրապետին, Հայ Եկեղեցու միասնության ամրապնդման համար թափած ջանքերի համար և խնդրել, որ Նորին Ս. Օծուխյանը շարունակի իր հայրական սերն ու մեծահոգությունը ցույց տալ տագնապի հեղինակներին, մինչև որ մութ ամպերը փարատվեն և հնարավոր լինի իրականացնել եկեղեցական միասնությունը:

Պր. Տիգրան Պոյանյանը (ԱՄՆ) իր խոսքի մեջ շեշտում է նույնպես շարունակել հաշտարար ջանքեր Հայ Եկեղեցու միասնությունը վերականգնելու համար:

Պրոֆ. Ա. Առաքելյանն իր ելույթում նշում է, որ Վեհափառ Հայրապետի հաշտության առաջարկներին պետք է զուգակցել արտասահմանի հայության ուժեղ կազմակերպվածությունը, հակազդելու համար քաղաքական մութ ուժերի սադրանքներին:

Այս պահին նիստի աշխատանքներին տրվում է 15 րոպե ընդմիջում: Գաղարից հետո ժողովը շարունակում է իր աշխատանքները, ատենապետությամբ պր. Տաճատ Մրապյանի:

Հարգելի ատենապետը հրավիրում է բանաձևերի խմբագրման հանձնաժողովի նախագահ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Ապառյանին, որ կարդում է հետևյալ բանաձևը օրակարգի «Ամրապնդում Հայ Եկեղեցու միասնության» հարցի մասին.

«Ազգային-եկեղեցական ժողովը, հոկտեմբերի 5-ին, իր շորրորդ նիստում, լսելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերազույն Հոգևոր Խորհրդի ղեկուցյցը «Ամրապնդում Հայ Եկեղեցու միասնության» հարցի շուրջ, միաձայն որոշեց.

«1. Որդիական երախտագիտություն հայտնել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ նրա յարեամյա գործունեության ընթացքին այն ջանքերի և միջոցառումների համար, որոնցով նախնի Ս. Օծայրյունը ամրապնդել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միությունը, մանավանդ 1956 թվականին՝ կիրանան, Եգիպտոս, Իտալիա, Ֆրանսիա, Անգլիա, 1960 թվականին Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ և 1961 թվականին Քուրդիստանում և Հարավային Ամերիկայում և միաժամանակ բարձր է պահել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հեղինակությունը հաշտ հայ ժողովրդի և հաշտ քրիստոնեական հայր եկեղեցիների:

2. Խնդրել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, որպես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետության Գերագույն Պետի, շարունակել սիրո և միության իր հաղորդներն ու ջանքերը, որպեսզի ավելի ամրապնդվի ի սփյուռս աշխարհի ցրված մեր ժողովրդի միությունը աստվածապարզ Ս. Էջմիածնով:

3. Ազգային-եկեղեցական ժողովը ցավ է հայտնում Անթրիիասի Աթոռի 1956 թվականից սկսյալ կատարած անջատողական արարքների համար և ի կարգ է հրավիրում Անթրիիասի Աթոռին և նրա միաբանությանը, որ հանուն Հայ Եկեղեցու միության և անբաժանելիության սկզբունքի և հանուն Հայ Ազգի գերագույն ջանքերի, ընդունի և հարգի Հայ Եկեղեցու Մայր Աթոռ Ս. Էջմիածնով գլխավորվող եկեղեցական միության դարավոր կանոնը և դադարի ոտնձգություններ անելուց Ս. Էջմիածնի իրավասությանց սահմաններից ներս:

4. Ազգային-եկեղեցական ժողովը կոչ է անում մեր եկեղեցու բոլոր նվիրապետական Աթոռներին, հոգևորականության և ժողովրդին, որ իրենց աղոթքներով ու կենդանի գործով առավել ամրապնդեն Հայաստանյայց Եկեղեցու միասնությունը, վերջ տալու համար Անթրիիասի կողմից ստեղծված անբնական և անջատողական եկեղեցական տագնապին, այս կերպով օժանդակելով Վեհափառ Հայրապետի կատարած սրբազան ջանքերին»:

Բանաձևի ընթերցումից հետո, առաջարկվում է բանաձևի շորս կետերը առանձին-առանձին քննության առնել և վավերացնել:

Մտքերի փոխանակումից հետո, Ազգային-եկեղեցական ժողովը, մեծամասնության ձայնով, ընդունում է ներկայացված բանաձևը:

Բանաձևի օգտին քվեարկում են 124 պատգամավորներ, դեմ՝ 8 հոգի, առարկելով, որ բանաձևի 3-րդ կետի մեջ չկա «դատապարտել» բառը Անթրիիասի արարքների համար:

Բանաձևի քվեարկությունից հետո, նախագահ Վեհափառ Հայրապետը խոսք առնելով, ասում է.

«Մենք մեծ ուշադրությամբ հետևեցինք Անթրիիասին վերաբերվող կարծիքների փոխանակման:

Գոհ ենք ընդունված բանաձևից: Վստան ենք, թե վերապահությամբ մտակցող 8 պատգամավորները իրենց ձայները պիտի միացնեն մեծամասնության ձայներին, որպեսզի բանաձևը ընդունվի միաձայնությամբ:

Կիլիկյան Աթոռից ներս ծայր տված տագնապը անշուշտ որ վնասակար է և 1956 թվականից ի վեր Անթրիիասի կատարած գործերը, ոտնձգությունները կանոնական ծանր սխալներ են:

Այս բոլորը սակայն մեզ չպետք է հուզեն շափազանց կերպով:

Ս. Էջմիածնից և մեր Մայր Հայրենիքից և մեր ժողովրդի պատմական կյանքի ընթացքից դիտված, Անթրիիասի արարքները պարզապես անկարգություններ են Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի կյանքի որոշ մեկ ծայրամասի մեջ կատարված:

Թե՛ իրավական տեսակետից և թե՛ իրականության տեսակետից, Հայաստանյայց Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը զանգվածաբար մի են և միասնական:

Հայաստանյայց Եկեղեցին պատակոված չէ և ոչ էլ որևէ ձևով կամ չափով տկարացած Անթրիիասի ոտնձգությունների հետևանքով:

Ո՛չ Մենք, ո՛չ մեր ժողովուրդը չենք հանաչում ո՛չ մեկ բաժանում և անջատում, նույնիսկ այսպես կոչված բաժանվածները չեն հավատում իրենց բաժանմանը: Հետևաբար, ապահով և խաղաղ կանգնած Ս. Էջմիածնի սուրբ քա-

երերի, մեր եկեղեցու կանոնների և հայ ժողովրդի առողջ և ճշմարիտ զգացմունքների վեմի վրա, անվրդով և լավատես կշարունակենք Մեր գործը, սպասելով, որ Աստված և հայ ժողովրդի ճշմարիտ շահերի գիտակցությունը լուսավորեն ռաբկաբույս անթիլիասականների նախապահը, որպեսզի նրանք կատարանան սրբագրել իրենց սխալները և եղբայրական սիրով ռզագուրվեն Մեզ հետ:

Մենք ոչ ոքի դեմ պայքար չունենք, և միշտ անձանձուրույթ Մեր օրհնությունները պիտի բաշխենք մեր բոլոր եկեղեցիներին և համայն հայ հավատացյալ ժողովրդյան, առանց խտրության»:

Ընդառաջելով Վեհափառ Հայրապետի ցանկության, գերաշնորհ Տ. Գեել եպիսկոպոս ձերեկյանն անում է հետևյալ հայտարարությունը.

«Քանաձևի դեմ քվեարկող Ց պատգամավորներս, Վեհափառ Հայրապետի կրչից հետո, միանում ենք մեծամասնության, որպեսզի միաձայնությամբ ընդունված լինի նաև Հայ եկեղեցու միասնության բանաձևը»:

Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգի հաջորդ հարցն էր «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաջիկա շինարարական գործունեության ծրագիրը»:

Ատենապետում է գերաշնորհ Տ. Մամբե արքեպիսկոպոս Սիրունյանը:

Սրբազան ատենապետի հրավերով, օրակարգի այս հարցի մասին, հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, բանավոր զեկուցմամբ հանդես է գալիս Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի նախագահ ճարտարապետ Միքայել Մազմանյանը:

Ազգային-եկեղեցական ժողովը, օրակարգի սույն հարցի առնչությամբ, միաձայն ընդունում է հետևյալ բանաձևը.

«Ազգային-եկեղեցական ժողովը իր ջերմ ուրախությունն ու խորին գահունակությունն է հայտնում Վեհափառ Հայրապետին, Գերագույն Հոգևոր Խորհրդին և Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովին՝ Ս. Էջմիածնում և նրա սահմաններից դուրս մեր պատմական վանքերի և եկեղեցիների վրա կատարված շինարարական վերանորոգչական աշխատանքների համար և խնդրում է նորին Ս. Օծուրյան՝ շարունակել իր շինարարական աշխատանքները, հայ հավատացյալ ժողովրդի սրտաբուխ եվիրատվություններով»:

Այնուհետև Ազգային-եկեղեցական ժողովը քննության է առնում օրակարգի վերջին հարցը՝ «Ընտրություն Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի»:

Ատենապետ գերաշնորհ Տ. Մամբե արքեպիսկոպոս Սիրունյանը ընթերցում է Վեհափառ Հայրապետի կողմից Ազգային-եկեղեցական ժողովին ներկայացված Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի նոր անդամների թեկնածության ցանկը:

Ազգային-եկեղեցական ժողովը հաստատում է Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի նոր հետևյալ կազմը.

- Գերագույն Հոգևոր Խորհուրդ
 - Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան
 - Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյան
 - Գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյան
 - Գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյան
 - Գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյան
 - Պրոֆ.-դոկտ. Առաքել Առաքելյան
 - Ճարտարապետ Միքայել Մազմանյան
 - Ուսուցիչ և գրող Գրիգոր Բեքմեզյան

- Վերստուգիչ հանձնաժողով
 - Հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայան
 - Հաշվապահ Եփրեմ Ալեքսանյան
 - Ուսուցիչ և գրող Գրիգոր Գյուլյան
 - Բանաձևերի հանձնաժողովի նախագահ գերաշնորհ Տ. Բաբգեն եպիսկոպոս
- Ապառայանը կարդում է խաղաղության ամրապնդման համար մի բանաձև, որն Ազգային-եկեղեցական ժողովի կողմից ընդունվում է միաձայն ժափահարությամբ և արձանագրվում:*

Ատենապետ սրբազանը այնուհետև հրապարակում է Ազգային-եկեղեցական ժողովի նախագահության, դիվանի, բոլոր պատգամավորների անունից Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ Ա. Քոչինյանին ուղղված երախտագիտության և շնորհակալության հեռագիրը, որն ընդունվում է հոտնկայս ծափահարություններով և արձանագրվում:

Քարտուղարության անդամ հոգեշնորհ Տ. Թորգոմ վարդապետ Մանուկյանը ընթերցում է գերաշնորհ Տ. Լորիստոն Լևինգստոն Սքեյֆ եպիսկոպոսի ողջույնի նամակը, որն արձանագրվում է շնորհակալությամբ:

Օրակարգի բոլոր հարցերը սպառվել են:

Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների ծափերի մեջ խոսք է առնում վեհափառ Հայրապետը՝ Իր պատգամն ու օրհնությունը տալու.

«Տիրոջ ողորմությամբ և օգնականությամբ, Ազգային-եկեղեցական ժողովը իր առաջ դրված խնդիրները ֆենարկեց, համապատասխան եզրակացությանց հանգեց, և այս պահին ահա իր աշխատանքները ավարտեց խանդավառ մրևուրում:

Մենք յարված ուշադրությամբ հետևեցինք ժողովի աշխատանքներին, գնատանձով լսեցինք բոլոր խոսք առնողներին և գոհունակությամբ ու հոգեկան մխիթարությամբ դիմավորեցինք տրված որոշումները և փվեարկված բանաձևերը:

Այս պահին, երբ մեր պարտքն է փակել Ազգային-եկեղեցական ժողովը, գնահատանքի և խնդակցության խոսք ենք ուզում ուղղել ժողովը վարող գերաշնորհ և հարգարժան առեկապետներին, ֆարտուղարության և հանձնաժողովներին, որոնք այնքան սիրով և բարի նախանձախնդրությամբ կատարեցին իրենց բաժին ընկած աշխատանքները և մեծապես սատարեցին ժողովի բարեհաջող ընթացքին և ձեռք բերված շինարար առյույններին:

Մեր գնահատանքը և խնդակցությունը նաև ժողովին մասնակցող բոլոր պատգամավորներին՝ նվիրապետական մեր Աթոռների, մեր թեմերի, մեր եկեղեցիների և հավատացյալ ժողովրդի հոգևորական և աշխարհական ներկայացուցիչներին, որոնք այնքան պայծառ գիտակցությամբ և արտացավ զգացմունքներով մոտեցան ժողովի աշխատանքներին և բոլորը իրենց նպաստը բերին, որպեսզի Ազգային-եկեղեցական այս ժողովը դառնա Հայաստանյայց եկեղեցու սիրու և միության պատվանդան, որպեսզի Ազգային-եկեղեցական այս ժողովը դառնա պատմական հանգրվան անցնող յոթը տարիների շինարար գործունեության և ապագա նույնքան շինարար գործունեության մեր նաևապահի վրա:

Քաղցր պարտականություն ենք նկատում նաև Ձեզ հայտնել, թե զուգրնքաց Ազգային-եկեղեցական ժողովի նիստերին, Մեր նախագահությամբ և ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոսի առեկապետությամբ, տեղի ունեցան նիստերը Եպիսկոպոսական ժողովի, որին մասնակցեցին Մայր Աթոռ հավաքված 16 արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ:

Եպիսկոպոսների ժողովն զբաղվեց ֆենարկումով Ազգային-եկեղեցական ժողովի հարցերի, որոնք հուզում են մեզ և այժմեություն են ներկայացնում: Եպիսկոպոսական ժողովի աշխատանքներն ընթացան հույժ գովելի, շինարար, ջերմ ոգով և հոգևոր գիտակցության բարձր մակարդակի վրա: Համապատասխան որոշումներ տրվեցին իմաստությամբ և լավատեսությամբ և մանավանդ սիրով, իրավ սիրով դեպի մեր եկեղեցին և մեր սուրբ ավանդությունները:

Օգտագործելով այս հանդիսավոր պահը, Մենք խորհում ենք նվիրական պարտք կատարած լինել և Ձեր բոլորի ևս արտից խոսած լինել, անդրադառնալով այն եկեղեցական շինարարական մեծ գործին, որին ձեռնարկել է Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը: Ս. Հարության Տանարի նորոգության գործն է դա, որ համազգային նշանակություն ունի մեր բոլորի համար և որ ազգային ու եկեղեցական արժանապատվության հարց է մեր առջև դրված:

Մենք խորհում ենք, թե բոլորդ համաձայն կլինեք Մեզ հետ, եթե Ազգային-եկեղեցական ժողովի անունով ևս կոչ ուղղենք համայն մեր ժողովրդին և մեր բոլոր թեմերին, որպեսզի ամեն տեղ բոլորը սիրով և կարևորությամբ մասնակցեն Երուսաղեմի Ս. Աթոռի կողմից կազմակերպվելիք հանգանակության գործին, և շուտով գոյանա այն գումարը, որ անհրաժեշտ է

Ս. Հարության Տանարի նորագության համար, որ հայոց բաժինն է հանդիսանում:

Մենք ի սրտե մաղթում ենք, որ այս սուրբ գործը լիակատար հաջողությամբ պսակվի:

Սիրելի արքայան եղբայրներ՝ և հարգարժան պատգամավարներ՝:

Ազգային-եկեղեցական այս պատկառելի ժողովին Մեր վերջին խոսքը մի աղոթք է, սրտեանդ, շերմագին մի մաղթանք, որ Տերը անսասան ու շեն պանի Իր իսկ հիմնած Մայր Աթոռը ամենայն հայոց և կյանքի ու աշխատանքի նորանոր ուժեր պարգևի մեզ բոլորիս, որպեսզի սիրով ու նվիրումով շարունակենք մեր շինարարական ծրագրերը կենսագործել այստեղ Ս. Էջմիածնի հովանու ներքև, Հայրենի Հողի վրա, ինչպես նաև հեռավոր ափերի վրա, որ ցիրուցան ապրում են մեր պանդուխտ եկեղեցիները, մեր պանդուխտ ժողովուրդը: Եվ ամեն մեկս մեր տեղից և մեր բոլոր ուժերով առավել զորացնենք Ս. Էջմիածինը, առավել պայծառացնենք Ս. Էջմիածինը, առավել փառավորենք Ս. Էջմիածինը, որպեսզի առավել ամրանան հիմքերը մեր հոգևոր կյանքի, որպեսզի առավել ամրանա սուրբ հավատը մեր զավակների սրտում և որպեսզի առավել ամրանա հայ ժողովրդի եկեղեցական ու ազգային ներքին միությունը, հավետ ամբողջ ու անխռով:

Ազգային-եկեղեցական այս ժողովը փակված հայտարարելով, աշխատանքի նոր ուղի ուզում ենք ցույց տալ ձեզ բոլորիդ, կենդանի ու շինարար աշխատանքի ուղի:

Հավատով և լավատեսությամբ առաջ ընթանանք անայլալի ու ինքնավստահ, զի Աստված ընդ մեզ է: Եվ մեզ հետ է ամբողջ մեր ժողովուրդը, այն ժողովուրդը, որ արդար հպարտությամբ հայ առունն է կրում:

Օրհնությամբ մեզ բոլորիդ Ս. Էջմիածնից:

Օրհնությամբ տարեք ձեզ հետ բոլոր Մեր պանդուխտ զավակներին, ձեր ելույթներին և ձեր եղբայրներին:

Թող Աստված օրհնի մեր եկեղեցին, մեր ժողովրդին և հայրենի սուրբ-գրական երկիրը մեր:

Ամենք:

Խմբովին երգված Տերունական աղոթքով և Նախագահ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով փակվում է Ազգային-եկեղեցական ժողովը 1962 թվականի հոկտեմբերի 5-ին, ուրբաթ, հետմիջօրեի ժամը 4-ին:

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Ն ա խ ա գ ա ն՝

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Վ Ա Ջ Գ Ե Ն Ա

Ա տ ե ն ա պ ի տ ն ե ռ՝

- Խաղ արհեստագործ Աջապանյան
- Մամրե արհեստագործ Սիրունյան
- Տիրան արհեստագործ Ներսայան
- Սիռն արհեստագործ Մանուկյան
- Մարտիրոս Սարյան
- Տիգրան Պոյանյան
- Տանատ Մրապյան
- Սեդրակ Քարյան

Փ ա ռ տ ու ղ ա ռ ն ե ռ՝

- Քուրզում վարդապետ Մանուկյան
- Մեսրոպ վարդապետ Գրիգորյան
- Սուրեն Մանվելյան
- Սուրեն Ավշյան





ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ն Ի Ս Տ

1962 թվականի սեպտեմբերի 29-ին, շաբաթ, առավոտյան ժամը 11.30-ին, Վեհափառ Հայրապետի նախագահության տակ, գումարվում է Վեհարանում հայկոպոսական ժողովի Ա նիստը:

Եպիսկոպոսական ժողովին մասնակցում են.

1. Տ. Խաղ արքեպիսկոպոս Աջապահյան
2. Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյան
3. Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան
4. Տ. Սիրոն արքեպիսկոպոս Մանուկյան
5. Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան
6. Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյան
7. Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյան
8. Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյան
9. Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյան
10. Տ. Շավարշ եպիսկոպոս Գույումճյան
11. Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյան
12. Տ. Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյան
13. Տ. Գնել եպիսկոպոս Ճերեճյան
14. Տ. Բարզեն եպիսկոպոս Ապատյան

Ժողովը բացվում է նախագահ Վեհափառ Հայրապետի աղոթքով:


Նորին Ս. Օծության ողջույնի խոսքերից հետո, արտասանվում է «Հոգևոր» ի հարգանս վերջին յոթը տարիների ընթացքում վախճանված բարձրատիճան հոգևորականների:

Ապա կատարվում է եպիսկոպոսական ժողովի դիվանի ընտրությունը հետևյալ կազմով.

Ատենապետ՝ ամենապատիվ Տ. Խաղ արքեպիսկոպոս Աջապահյան.

Ատենադպիր՝ գերաշնորհ Տ. Բարզեն եպիսկոպոս Ապատյան:

Վեհափառ Հայրապետը հայտնում է հատենի ժողովո, որ Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի սրբազան պատրիարքները, կամօրից անկախ պատճառներով, լպիտի կարողանան ներկա լինել ժողովի, բայց նշանակել են իրենց ներկայացուցիչներին:



ԵՊԻՍԿՈՍՈՍԱԿԱՆ ՎՈՐՈՎԻ ՆԱԽԱՆԻԱԸՆ



Երուսաղեմի հայոց պատրիարքին կներկայացնի գերաշնորհ Տ. Սերովբե Եպիսկոպոս Մանուկյանը, իսկ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանությանը՝ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը:

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի ներկայացուցիչն է գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը:

Մայր Աթոռի կողմից եղած հրավերին Անթիլիասի Կաթողիկոսությունից պատասխան չի ստացվել:

Ապա Եպիսկոպոսական ժողովն զբաղվում է սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 5-ը, Մայր Աթոռ Ս. էջմիածնում գումարվելիք Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգում դրված հետևյալ հարցերով:

- 1. Հայ Եկեղեցու Կանոնագրքի մշակման հարց.
- 2. Ամրապնդում Հայ Եկեղեցու միասնության.
- 3. Ընտրություն Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի նոր անդամների:

Եպիսկոպոսական ժողովը 1-ին և 2-րդ հարցերի կապակցությամբ ընդունում է համապատասխան որոշումներ:

Եպիսկոպոսական ժողովի առաջին նիստը փակվում է հետմիջօրեի ժամը 2.45-ին, հոկտեմբերի 1-ին, երկուշաբթի, երեկոյան ժամը 5-ին նորից գումարվելու համար:

Ե Ր Կ Ր Ո Ր Գ Ն Ի Ս Ս

Հոկտեմբերի 1-ին, երկուշաբթի, երեկոյան ժամը 5-ին, Վեհարանում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ գումարվում է Եպիսկոպոսական ժողովի երկրորդ նիստը:

- Ժողովին ներկա են 15 արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ:
- Ժողովին մասնակցում է նաև նոր ժանամած Անգլիայի հայոց Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Պսակ Եպիսկոպոս Թումայանը:
- Ժողովը բացվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով:
- Կարդացվում և վավերացվում է առաջին նիստի ատենագրությունը:
- Եպիսկոպոսական ժողովի օրակարգի հարցերն էին.

- 1. Գերագույն Հոգևոր Խորհրդի ընտրություն.
- 2. Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին Հայ Եկեղեցու անդամակցության հարց.
- 3. Վատիկանի ժողովին մասնակցության հարց.
- 4. Թեմ շունեցող վարդապետների եպիսկոպոսացման հարց.
- 5. Նվիրապետական մասնավոր Աթոռների զահակալների անվան հիշատակության հարց «Եւս առաւել» աղոթքի ժամանակ:

Եպիսկոպոսական ժողովը օրակարգի բոլոր հարցերի շուրջ ունենում է մտքերի փոխանակություն և հանգում համապատասխան եզրակացությունների:

Գիշերվա ժամը 11-ին փակվում է Եպիսկոպոսական ժողովի երկրորդ նիստը, շորեքշաբթի, հոկտեմբերի 3-ին, երեկոյան ժամը 6-ին նորից գումարվելու առաջադրությամբ:

Ե Ր Ր Ո Ր Գ Ն Ի Ս Ս

Հոկտեմբերի 3-ին, շոբեքշաբթի, երեկոյան ժամը 6-ին, Վեհարանում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախագահության տակ, գումարվում է Եպիսկոպոսական ժողովի երրորդ նիստը, մասնակցությամբ 15 արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների:

- Ժողովը բացվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով:
- Կարդացվում և վավերացվում է երկրորդ նիստի ատենագրությունը:
- Եպիսկոպոսական ժողովը զբաղվում է օրակարգի հետևյալ հարցերի քննությամբ.

1. Հայ Եկեղեցու Կանոնադրության կազմության հանձնաժողովի ընտրութուն.
2. Մաշտոցի կրճատման խնդիր.
3. Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանության հարց.
4. Հայ Եւրակնոցի եվրոպական ձայնագրութեամբ հրատարակության հարց:

Օրակարգի բոլոր հարցերի առթիւ տեղի է ունենում մտքերի աշխույժ փոխանակութուն, հայտնվում են կարծիքներ, արվում են թելադրութիւններ, ընդունվում համապատասխան որոշումներ և կազմվում հանձնաժողովներ:

Հայ Եկեղեցու Կանոնադրության կազմության հանձնաժողովի անդամ են ընտրվում գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը, գերաշնորհ Տ. Եւսեբիոս արքեպիսկոպոս Գուլումճյանը, գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը: Իսկ աշխարհական անդամների նշանակումը թողնվում է Վեհափառ Հայրապետի հայեցողութեան:

Մաշտոցի քննարկման և բարեկարգութեան հանձնախմբում ընտրվում են Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը, Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, Տ. Պսակ եպիսկոպոս Թումայանը և Տ. Գնել եպիսկոպոս Ծերեճյանը:

Գերաշնորհ Տ. Սիրոն արքեպիսկոպոս Մանուկյանը Եպիսկոպոսական ժողովի հաջորդ նիստի համար առաջարկում է օրակարգի մեջ մտցնել հետևյալ հարցերը.

1. Կուսակրոն հովիվների հարց.
2. Կարգաթող վարդապետների քահանայագործութեան հարց.
3. Թեմերում կրոնական խորհուրդներ կազմելու հարց.
4. Մայրազույն վարդապետական աստիճանի տվչութեան հարց.
5. Քահանաներին «մասնավոր վարդապետութեան» աստիճան տալու հարց: Ամենապատիւ Տ. Խաչ արքեպիսկոպոսի առաջարկով Եպիսկոպոսական ժողովի հաջորդ նիստի օրակարգում դրվում է նաև՝
6. Մեծ պահոց ընթացքում Ս. Պսակ օրհնելու արտոնութեան հարցը: Եպիսկոպոսական ժողովի երրորդ նիստը փակվում է գիշերվա ժամը 11-ին, ուրբաթ, հոկտեմբերի 5-ին, երեկոյան ժամը 6-ին վերստին գումարվելու առաջարկով:

Զ Ո Ր Ր Ո Ր Դ Ն Ի Ս Տ

Հոկտեմբերի 5-ին, ուրբաթ, երեկոյան ժամը 6-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր նախագահութեամբ, գումարվում է Եպիսկոպոսական ժողովի չորրորդ նիստը, մասնակցութեամբ 15 արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների:

Ժողովը բացվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով: Կարդացվում և վավերացվում է երրորդ նիստի ատենագրութիւնը: Եպիսկոպոսական ժողովի վերջին նիստում դրվել էին օրակարգի հետևյալ հարցերը.

1. Եկեղեցիների միութեան հարց.
2. Կուսակրոն հովիվների հարց.
3. Կարգաթող վարդապետներին քահանայագործելու արտոնութեան հարց.
4. Թեմերում կրոնական խորհուրդներ կազմելու հարց.
5. Մայրազույն վարդապետական աստիճանի տվչութեան հարց.
6. Քահանաներին մասնավոր վարդապետական գավազանի իշխանութեան տվչութեան հարց.
7. Մեծ պահոց ընթացքում Ս. Պսակ օրհնելու հարց.
8. Մասնավոր պարագաներում ամուսնալուծման և վերամուսնութեան արտոնութեան հարց.
9. Եկեղեցուց դուրս եկեղեցական պաշտոնական սքեմը պահելու հարց.
10. Հանգուցյալ հայրապետների կոնդակների կանոնական մասերի հավաքման և առանձին հատորով հրատարակութեան հարց:

Եպիսկոպոսական ժողովը իր վերջին նիստում հանգամանորեն քննության է առնում օրակարգի բոլոր հարցերը և կարծիքների փոխանակությունից հետո հանգում որոշ եզրակացությունների:


Ժողովի վերջում Վեհափառ Հայրապետը գոհունակության և օրհնության խոսք է ուղղում Եպիսկոպոսական ժողովին:

Գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոսը, հանուն ժողովի, Վեհափառ Հայրապետին հայտնում է երախտագիտություն և բարեմաղթություններ անում:

Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ Մայր Աթոռում գումարված Եպիսկոպոսական ժողովը ավարտում է իր աշխատանքները երեկոյան ժ.մը 9.40-ին, Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Ժողովի փակումից առաջ կարդացվում և վավերացվում է վերջին նիստի առենազրությունը:

Հետագայում Եպիսկոպոսական ժողովի եզրակացություններն ու որոշումները առանձին-առանձին, քննության կառնվեն Վեհափառ Հայրապետի կողմից և հատուկ կոնդակներով կհրապարակվեն ի գիտություն և ի գործադրություն, որպես հայրապետական վճիռներ:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Ա. ՈՂՋՈՒԹՅՆ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Սիրով և օրհնությամբ կողջունենք Ազգային-եկեղեցական սույն ժողովը, որ կգումարվի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կամարներուն տակ, համաձայն մեր Ս. Եկեղեցվո թագավարյան կանոններու և պատմական ավանդություններու, վերածնած Մայր Հայրենիքի ապահով ու խաղաղ պայմաններուն մեջ:

Ողջո՛ւյն և օրհնությո՛ւն ձեզի, սիրեցյալ սրբազան եղբայրներ Մեր, հոգեշնորհ վարդապետներ և արժանապատիվ քահանա հայրեր:

Ողջո՛ւյն և օրհնությո՛ւն ձեզի, հարգարժան պատգամավորներ և հյուրեր, հարազատ վավակներ մեր Մայր Եկեղեցվո և Ս. Էջմիածնի:

Ահա անցան յոթը տարիներ այն օրեն, երբ նախորդ Ազգային-եկեղեցական ժողովը, գումարված 1955 թվականի սեպտեմբեր 30-ին, Մեր անձին վրա կեդրոնացուց իր ջվենները, Մեզ ընտրելով Հայոց Հայրապետ: Մեր հայրապետությունը նվիրագործվեցավ նույն ամսու 2-ին կաթողիկոսական օծումով Մայր Տաճարին մեջ, սուրբ պատարագի մատուցմամբ, ըստ կարգազ և կանոնաց Հայաստանյայց Ս. Եկեղեցվո:

Յոթը տարիներ անցան, նախախնամության բարի ձեռքով զծված ճանապարհով, որուն ընթացքին Մենք, Մեր գործակիցներուն հետ միա-

տեղ, աշխատեցանք կարողալ ու կատարել այդ բարի ձեռքին նշանները: Այդ Մեր ուխտն էր և Մեր խղճի պարտքը: Այժմ ժամանակն է, երբ պարտինք ձեզի՝ համարը տալ Մեր կատարած աշխատանքին, այնքանին, որ հնարավոր եղավ Մեզի տվյալ պայմաններուն մեջ, Մեր տկար ուժերով:

Բ. ՀԱՐԳԱՆՔ ԵՐԶԱՆԿԱԼԻՇԱՍԱԿ ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մեր յոթնամյա գործունեության մասին խոսելն առաջ, պարտք կնկատենք պահ մը կանգ առնել հանգուցյալ Գևորգ Զ երանաշնորհ Կաթողիկոսի հիշատակին առաջ, որուն հաջորդեցինք Մենք:

Գևորգ Զ Հայրապետի անձնավորությունը և գործը մեզ կհրավիրեն այս պահուս խոնարհիլ Անոր հիշատակին առաջ երախտագիտությամբ, վասնզի Իրմով բացվեցավ նոր շրջան մը Հայ Եկեղեցվո պատմության մեջ, շրջան մը վերակազմակերպման և Հայ Եկեղեցվո ներքին միասնության ամրարպնդման: Հիրավի, երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսին կպարտինք՝

ա. Արտասահմանի հայ հավատացյալ ժողովուրդի մասնակցությունը Հայրենական Մեծ պատերազմին՝ «Մասունցի Դավիթ» տանկային շարասյունով:

բ. 1946—1948 թվականներուն հայրենադարձի հովանավորումը և ոգեշնչումը, երբ մոտ 100 000 հայեր վերադարձան վերածնած Մայր Հայրենիք:

գ. հնականոն հարաբերություններու ստեղծումը և մշակումը Հայ Եկեղեցվո և Հայրենի պետական իշխանության միջև, փոխադարձ վստահության և հարգանքի պայմաններու մեջ:

դ. Ամրապնդումը Հայ Եկեղեցվո միասնության և բրիտանական սիրով գործակցությունը մեր նվիրապետական Աթոռներուն միջև, որուն մեծապես նպաստեց մանավանդ Մեծի Տանն Կիլիկիո երջանկահիշատակ Հայրապետ Գարեգին Ա Կաթողիկոսը, ձեզ բոլորիդ ծանոթ իր իմաստությամբ և պատմական ըլլալու սահմանված պայծառ հայրենասիրությամբ: Այս տեսակետն հանգուցյալ երկու մեծ հայրապետները լուսավոր էջ մը ևս բացին մեր Եկեղեցվո պատմության մեջ, ուր իրենց անունները արձանագրված պիտի մնան փառքով:

ե. Վերաբացումը Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանին:

զ. Վերահրատարակումը Մայր Աթոռի պաշտոնաթերթի՝ «Էջմիածին» անվան տակ:

է. հնականոն և շինարար հարաբերություններու մշակում արտասահմանի Հայ Եկեղեցվո թեմերու և համայնքներու հետ:

Երկու մեծ ծրագիրներ ևս ուներ հանգուցյալ և սիրեցյալ մեր Հայրապետը՝ տեսնել վերանորոգված Մայր Տաճարը և հովվապետական այցելություն մը տալ Սփյուռքի իր զավակներուն: Սակայն ծերունապարզ Հայրապետը այդ օրերը չտեսած, իր աչքերը փակեց 1954-ի մայիս 9-ին: Հանգիստ և խաղաղություն իր հոգիին: Օրհնություն իր հիշատակին:

Գ. ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

1955 թվականի Ազգային-Եկեղեցական ժողովը, կաթողիկոսական ընտրությունն հետո, իր Դ նիստին մեջ ընտրած էր նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը հետևյալ կազմով.

Հոգևորականներ՝ 1. Ս. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան, 2. Ս. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան, 3. Ս. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյան, 4. Ս. Եպնիկ եպիսկոպոս Ալավուրյան.

Աշխարհականներ՝ 1. պրոֆ.-դոկտ. Արարատ Ղարիբյան, 2. պրոֆ.-դոկտ. Առաքել Առաքելյան, 3. դոցենտ Արտաշես Տիրացյան, 4. ուսուցիչ Արամ Աղաջանյան:

Որպես Գերագույն Հոգևոր Խորհուրդի պատվակալ անդամներ ընտրված էին մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյան և նախկին Գերագույն Հոգևոր Խորհուրդի անդամ երկրաբան Ստեփան Կամսարական: Երկուքն ալ մեյի հետ

չեն այլևս: Ստեփան Կամսարական իր հոգին ավանդեց ընտրությունն քիչ օրեր հետո, իսկ մեր սիրելի Վարպետը՝ Ավետիք Իսահակյան, երկու տարի շարունակ մեր նիստերուն մասնակցելե հետո, 1957-ին հրաժեշտ տվավ մեր աշխարհին և գնաց դեպի անմահություն:

Գերաշնորհ Ս. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան Էջմիածնեն շատ հեռավոր թեմեր պաշտոնավարելու հետևանքով, բնական է, չկարողացավ մասնակցիլ Գերագույն Հոգևոր Խորհուրդի նիստերուն և աշխատանքներուն, որով իր իսկ գրավոր խնդրանքին ընդառաջելով, հարմար նկատեցինք իր տեղ Գերագույն Հոգևոր Խորհուրդի իբրև անդամ հրավիրել Մայր Աթոռն ներս գործող, մեր Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ Ս. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, որ 1960 թվականն սկսյալ կանոնավոր կերպով մասնակցած է Գերագույն Հոգևոր Խորհուրդի գործունեության:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը կանոնավոր կերպով նիստեր գումարած է այս յոթը տարիներու ընթացքին, հեթական կերպով լուծելով Մեր կողմե իր առաջ դրված հարցերը: Գերագույն Հոգևոր Խորհուրդի հարգարժան անդամները եղած են Մեր մտերիմ խորհրդականները և հարապատ աշխատակիցները, Մեր գործունեության ամբողջ տևողության ընթացին:

Գերագույն Հոգևոր Խորհուրդն ներս միշտ տիրած է ներդաշնակ ու համերաշխ ոգի, Հայ Եկեղեցվո և ժողովուրդի գերագույն շահերու բարձր գիտակցությամբ: Գերագույն Հոգևոր Խորհուրդի ատենապետն է գերաշնորհ Ս. Սահակ արքեպիսկոպոս, որ միաժամանակ լուսարարապետն է Մայր Տաճարի: Գերաշնորհ սրբապանը, հակառակ իր հառաջացած տարիքին, կաշխատի առանց հոգնելու, վայելելով ամենուս սերը:

Այս հանդիսավոր առիթով, երբ Գերագույն Հոգևոր Խորհուրդի գործունեության շրջանը իր լրումին կհասնի, Մենք խղճի պարտք կզգանք Մեր շնորհակալությունը հայտնելու թե՛ հոգևորական և թե՛ աշխարհական մեծահարգ անդամներուն, իրենց հավատարիմ և անձնվեր գործունեության համար, մնալով աղոթող իրենց արևշատության և քաջառողջության համար: Վստահ ենք, թե այս պատկառելի ժողովը ևս նույն սիրով և երախտագիտությամբ պիտի գնահատեն Գերագույն Հոգևոր Խորհուրդի գործունեությունը:

Մեր և Գերագույն Հոգևոր Խորհուրդի անմիջական վերահսկողության ներքև գործած է Մայր Աթոռիս դիվանատունը, որուն միջոցով կապահովվին Ս. Էջմիածնի հարաբերությունները ներքին և արտաքին թեմերուն, ինչպես և մեր հայրենի պետական իշխանություններու հետ: Մեր գահակալության առաջին իսկ օրերեն վերակազմակերպեցինք դիվանատունը և հաս-

տատեցինք որոշ կարգ նամակագրության դրության և արտաքին հարաբերություններու պահպանման: Այժմ Մայր Աթոռիս դիվանատունը կգործե ճշգրտությամբ և անթերի: Դիվանատան մեջ կաշխատին Հայկ Առաքելյան իբրև դիվանապետ, որ մասնագետ է նաև ռուսերեն լեզվի, Նուպար Միքայելյան՝ որպես քաջածանոթ անգլիերեն և ֆրանսերեն լեզուներու և մեր երիտասարդ միաբաններեն Արսեն արեղա Բերբերյան: Դիվանապետ Հայկ Առաքելյան մեր լավագույն և հավատարիմ աշխատողներեն մին է իր երկու օգնականներուն հետ միասին, որոնք նույնպես արժանի են մեր գնահատանքին:

Դ. ՄԱՅՐ ԱԹՐՈՒԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անցնելով յոթնամյա Մեր գործունեության մասին զեկուցման, նախ կկամենանք խոսիլ Մայր Աթոռիս միաբանության մասին:

Մեր ընտրութենեն անմիջապես հետո, առաջին հերթին Մեր ուշադրությունը կեդրոնացուցինք մեր միաբանության և անոր վերակազմակերպման գործին վրա: Կազմեցինք առժամյա ներքին կանոնադրություն մը՝ հիմնված վանական կանոններու վրա և զայն գործադրության դրինք:

Մեր միաբանությունը բաղկացած էր հառաջացած տարիքով ծերունավարդ հոգևորականներե, որոնց ուսերուն վրա դժվար էր ծանր պարտականություններ դնել, և ափ մը նոր ձեռնադրված արեղաներե, աշխատանքի մեջ տակալին անփորձ և երկչոտ: Մեր պարտքը նկատեցինք հետևողական կերպով անծամբ վերադիլ երիտասարդ միաբաններու հոգևոր դաստիարակության, քարոզախոսության և վարչա-կազմակերպչական պատրաստության ուղղությամբ: Երկու-երեք տարի շարունակ աշխատեցանք մեր երիտասարդներուն ներշնչել հոգևոր կոչումի և ակազային առաքելության զգացումը և Ս. Էջմիածնի փառքին համար պարելու և գործելու գաղափարական գեղեցկությունը: Նույն ոգիով կշարունակենք աշխատիլ նաև այսօր, վերջին տարիներու ընթացքին ձեռնադրվող վարդապետներուն և արեղաներուն վրա կեդրոնացնելով Մեր հայացքը: Մեր աշխատանքը, Մեր կարծիքով, բավական արդյունք տվավ և հույս ունինք, թե մեր երիտասարդ միաբանները Մեր հույսերը պիտի արդարացնեն: Եվ ուրախությամբ պետք է հաստատենք, թե անոնցմե շատերը արդեն պատասխանատու աշխատանքի մեջ են, վայելելով Մեր և հավատացյալ ժողովուրդի գնահատանքը: Այսօր մեր ներքին թեմերը ղեկավարող առաջնորդները նոր սերունդի հոգևորականներու շարքերեն են:

Այստեղ ցավով պետք է արձանագրենք նաև հուսախաբության պարագա մը երիտասարդ երեք նախկին վարդապետներու նկատմամբ, որոնցմե երկուքը 1959-ին և երրորդը 1961-ին թողուցին իրենց կարգը և հեռացան վանքեն, դրժելով Հայ Եկեղեցիին և Ս. Էջմիածնին ծառայելու իրենց ուխտը:

Մայր Աթոռիս միաբանությունը այս պահուս բաղկացած է 4 եպիսկոպոսներե, 12 վարդապետներե, 2 արեղաներե և 4 սարկավագներե: Մայր Աթոռեն ներս կաշխատին նաև 3 քահանա հայրեր:

Ե. ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆ

Ինչպես ծանոթ է ձեզի, Ս. Էջմիածնի Հոգեվոր ճեմարանը վերաբացված էր 1945-ին, հանգուցյալ Տ. Տ. Գևորգ Զ Սրբալնագույն Կաթողիկոսի ջանքերով: Մեր գործը եղավ շարունակել սկսված աշխատանքը, որոշ բարեփոխումներ մտցնելով ճեմարանի ղեկավարման, ուսուցչական կազմի և ներքին հոգևոր կարգապահության տեսակետներե: Այսպես, Մենք հարմար և անհրաժեշտ նկատեցինք՝

ա. ճեմարանի տեսչությունը հանձնել բարձրաստիճան հոգևորականի մը:

բ. Բարձրացնել ուսուցչական կազմի որակը:

գ. Աշակերտությունը վարժեցնել հոգևոր-քարոչական կյանքի մը կանոններուն, պարտադիր դարձնելով բոլորի համար կանոնավոր մասնակցությունը Մայր Տաճարի բոլոր եկեղեցական արարողությանց, ամեն առավոտ և ամեն երեկո:

դ. Որոշ փոփոխություններ մտցնել նաև ուսումնական ծրագրին մեջ, առավել պատշաճեցնելով այն կրոնական դպրանոցի մը պահանջներուն:

1955—1956 տարեշրջանին իբրև տեսուչ իր պաշտոնը շարունակեց հանգուցյալ Մարտիրոս Տեր-Ստեփանյան, որ բարեխիղճ կերպով կկատարեր իր պաշտոնը, սակայն 1957-ին, իբրև մեր ճեմարանի վերատեսուչ, Երուսաղեմեն հրավիրեցինք գերաշնորհ Տ. Հայկապուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, սիրված և փորձված հոգևորական մը, որ իր ձեռքին մեջ առնելով մեր ուսանողներու դաստիարակության գործը, լավագույն կերպով կենսագործեց Մեր առաջադրանքները, որոնց մասին խոսեցանք քիչ վերև:

Վերջին յոթը տարիներուն ընթացքին, միջին հաշվով ունեցանք ամեն տարի 30—50 ուսանողներ բաշխված վեց դասարաններու վրա, որոնցմե երեքը դասարանական և երեքը լսարանական: Այս ժամանակաշրջանին Հոգևոր ճեմարանը տվավ 22 շրջանավարտներ, որոնցմե 18-ը ընդունեցան հոգևոր կոչում (կուսակրոն և ամուսնացյալ քահանաներ և սարկավագներ), իսկ մնացյալները ընտրեցին այլ ասպարեզներ աշխարհական կյանքին մեջ:

Մեր Հոգևոր ճեմարանին մեջ դասավանդվող առարկաները կարելի է բաժնել հետևյալ խումբերուն.

ա. կրոնա-եկեղեցագիտական առարկաներ (աստվածաբանություն, Ս. Գրոց ուսումնասիրություն և մեկնություն, քրիստոնեական վարդապետություն, ծիսագիտություն, քարոզախոսություն, տոմարագիտություն, հայրաբանություն):

բ. Մատենագրություն (Հայ Եկեղեցվո հին մատենագրություն, հայ գրականության պատմություն, ընդհանուր գրականության պատմություն):

գ. Պատմական առարկաներ (Հայ Եկեղեցվո պատմություն, Ընդհանուր Եկեղեցվո պատմություն, Հայ ժողովուրդի պատմություն):

դ. Լեզուներ (հայերեն աշխարհաբար և գրաբար, ռուսերեն, անգլիերեն և ֆրանսերեն):

ե. Փիլիսոփայական առարկաներ (հոգեբանություն և տրամաբանություն):

զ. Երաժշտություն (շարականագիտություն, հայկական հին ծայնագրություն, եվրոպական ծայնագրություն):

է. Մարմնակրթանք և հաշվապահություն:

Մեր ճեմարանի ծրագրին համաձայն, ուսանողներ կընդունվին թե՛ Հայաստանեն և թե՛ արտասահմանեն: Անցնող տարվան շրջանին ուսանողներուն թիվը եղավ 30, բաշխված հինգ դասարաններու վրա (Բ լսարանի ուսանողներ չունեցանք):

Ուսուցչական կազմը բաղկացած է հոգևորականներ և աշխարհական մասնագետ դասախոսներ, որոնք կհրավիրվին Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Հոգևոր ճեմարանի դաստիարակչական և վարչական աշխատանքներուն մեջ վերատեսուչ սրբազանը իբրև իրեն անմիջական օգնականներ ունեցած է անցյալ տարի Մեսրոպ վարդապետը և Տ. Հովհաննես քահանան, որոնք աշխատած են անձնվիրությամբ և գնահատելի արդյունքներով:

Բացի դասացուցակով նախատեսված դասընթացքներեն, Հոգևոր ճեմարանի ուսանողությունը պարբերաբար լսած է դասախոսությունները պանական գիտնականներու և գրականագետներու, որոնք հատկապես հրավիրված են Երևանեն այս նպատակով, ամբողջացնելու համար մեր ուսանողներու և միաբաններու ընդհանուր կարգացումը:

Տարվան ընթացքին, Հոգևոր ճեմարանի հարկին տակ, պարբերաբար տեղի կունենան նաև գրական-երաժշտական երեկույթներ, կազմակերպված մեր ուսանողներու կողմե և դաստիարակչական-գեղարվեստական ժապավեններու ցուցադրություն: Մեր ուսանողները ունին իրենց երգչախումբը և նվագախումբը:

Ուսանողները տարին քանի մը անգամ կկատարեն կրթասպասություններ ղեպի Հայաստանի պատմական վանքերը և տեսարժան վայրերը: Անցյալ տարի առաջին անգամ ըլլալով Հոգևոր

ճեմարանի ուսանողները, առաջնորդությամբ անձամբ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի, բարձրացան Արագածի կատարը:

Ուսանողները հավաքաբար կտարվին հաճախ Երևան՝ Սունդուկյանի անվան թատրոն կամ Սպենդիարյանի անվան օպերա, կամ Ֆիլիարմնիայի սիմֆոնիկ համերգներուն: Մայր Աթոռիս Հոգևոր ճեմարանն ունի իր հատուկ բուժարանը և բավական ճոխ գրադարան մը, ավելի քան 15 000 գրքերե բաղկացած:

Ահա ընդհանուր գծերով պատկերը Մայր Աթոռիս ճեմարանի կյանքին ու գործունեության, որուն զուխը կզտնվի իբրև վերատեսուչ, կազմակերպիչ և դաստիարակ Մեր սիրելի եղբայրը Տ. Հայկազուն արքեպիսկոպոս, որ կվայելե մեր բոլորիս և անձամբ Մեր համակրանքը և անկեղծ գնահատանքը:

Զ. «Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն» ԱՄՍԱԳԻՐ

Մեր գահակալության առաջին իսկ օրեն, Մեր մտածումը եղած է և է այսօր ալ՝ Հայ Եկեղեցվո պորացման և կազմակերպման աշխատանքներուն մեջ կարևոր և պատասխանատու դեր մը հատկացնել ընդհանրապես հայ կրոնական մասովին, և ի մասնավորի Մայր Աթոռիս պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրին:

Մեր ամսագրի խմբագրության առաջ Մենք խնդիր դրած ենք հոգևոր սնունդ և ազգային ճշմարիտ գիտակցություն տալ հայ ժողովուրդին, պատկերել Մայր Աթոռի և միաբանության ու Հոգևոր ճեմարանի կյանքը իր բոլոր երեսներով, լայն կերպով արծազանքել ներքին թեմերու և Սփյուռքի ազգային-եկեղեցական կյանքին և միաժամանակ իր հջերը լայն կերպով բանալ մեր Եկեղեցվո պատմության, եկեղեցական մատենագրության, աստվածաբանության և եկեղեցական արվեստի հետ աղերս ունեցող հողավածներու և ուսումնասիրություններու:

Մայր Աթոռի պաշտոնաթերթը, ճեմարանի դասախոս Արթուր Հատիտյանի խմբագրությամբ, 1956 թվականեն մինչև այսօր, աշխատած է ընթանալ Մեր գծած ճանապարհով և կխորհիք. թե արդյունքները հույժ գոհացուցիչ են:

Մեր իղձն է, որ Մայր Աթոռի պաշտոնաթերթը հետզհետե առավել չափով դառնա հայ աստվածաբանական մտքի վարձացման, եկեղեցագիտության և ավետարանական բարոյախոսության հանդեսը:

Այս հարցը Մենք ամենայն կարևորությամբ կհանձնենք ժողովիդ ուշադրության, հայրաբար հրավիրելով մեր հոգևորականությունը և մտավորականությունը, որ լուրջ հողավածներով, ուսումնասիրություններով իրենց մասնակցությունը բերեն մեր ամսագրին:

Գոհունակությամբ այստեղ կրնանք հայտարարել, որ Մեր գահակալության անցնող յոթ տարիներու ընթացքին, մեր ամսագրին իրենց օգտակար մասնակցությունը բերին թե՛ Մայր Հայրենիքեն և թե՛ Սփյուռքեն ականավոր մտավորականներ և հոգևորականներ:

Մեր գահակալության օրերուն ավելցավ նաև ամսագրի տպաքանակը: Եթե 1951 թվականին ամսագիրը լույս կընծայվեր 2 000 տպաքանակով, ապա 1958 թվականեն ի վեր այն կհրատարակվի 3 500 տպաքանակով: Ամսագրի այս տպաքանակը հավասար չափով կբաժնվի մեր ներքին և արտաքին թեմերուն մեջ: Մեր փափագն է ա՛լ ավելի բարձրացնել մեր ամսագրի տպաքանակը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը հրատարակեց Մեր 1956-ի ուղևորության նվիրված հատորը, ապա 1958-ին՝ Մեր հիսնամյա հոբելյանի առթիվ լույս տեսած հատորը «Վազգեն Ա Հայրապետ Հայոց» անվան տակ, իսկ շուտով կհրատարակվին 1960-ի Մեր ուղևորության գիրքը և «Էջմիածին» այլոքը:

Այստեղ արդար պիտի ըլլա Մեր գնահատանքի ջերմ խոսքը ուղղել հարգելի խմբագրին՝ Արթուն Հատիտյանին, իր անխնջ ու նվիրյալ աշխատանքին համար, որով Մայր Աթոռիս պաշտոնաթերթը կարողացած է հասնիլ բոլորիդ ծանոթ մակարդակին: Իբրև ժրջան և փորձառու աշխատակից խմբագրության մեջ, Արթուն Հատիտյան իր կողքին ունի եղիշե Վարդերսյանը:

Է. ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐ ԵՎ ՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր Եկեղեցվո ներքին թեմերը կհանդիսանան Հայաստանի և Սովետական Միության այլ Հանրապետություններու մեջ կազմակերպված թեմերը և եկեղեցիները:

Մեր գահակալության առաջին ամիսներուն իսկ Մեր ուշադրությունը կեդրոնացուցինք այս թեմերու վերակազմակերպման գործին և մեկերկու տարիներու ընթացքին, շնորհիվ տարված հետևողական աշխատանքին, հաջողեցանք առավել՝ բնականոն և կազմակերպված կյանք ստեղծել բոլոր թեմական այդ կեդրոններուն մեջ: Մեր ներքին բոլոր թեմերը այժմ ունին իրենց թեմակալ առաջնորդները և թեմական խորհուրդները, ընտրված հավատացյալ ժողովուրդի քվեներով, բաղկացած բարեխիղճ և ազնիվ ազգայիններե: Բոլոր եկեղեցիներուն մեջ և մանավանդ մայրաքաղաքներու մեջ, անխափան տեղի կունենան ամենօրյա ժամերգություններ առավոտյան և երեկոյան, իսկ կիրակի օրերը, սուրբ պատարագի ընթացքին, առաջնորդները կամ ձեռնհաս քահանաներ ժողովուրդը կմխթարեն Բանին կենաց քարոզությամբ:

Թեմական կեդրոնները լավապես կազմակերպված են նաև վարչա-տնտեսական տեսակետով, որով կբացատրվի ֆինանսական եկամուտներու աճը վերջին յոթ տարիներու ընթացքին: Մեր բոլոր թեմերը ունին հաշվապահություն և քարտուղարություն, առաջնորդներու և թեմական խորհուրդներու վերին հսկողության և ղեկավարության ներքև:

Ահա մեր ներքին թեմերը իրենց առաջնորդներով.

ա. Արարատյան հայրապետական թեմ, կեդրոն ունենալով քաղաքամայր Երևանը: Առաջնորդական փոխանորդ՝ Տ. Վահան վարդապետ Տերյան:

բ. Շիրակի թեմ, կեդրոն ունենալով Լենինականը: Առաջնորդ՝ Տ. Մաշտոց վարդապետ Թաջիրյան:

գ. Վրաստանի թեմ, կեդրոն ունենալով մայրաքաղաք Թբիլիսին: Առաջնորդ՝ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյան:

դ. Ադրբեջանի և Թուրքեստանի թեմ, կեդրոն ունենալով Բաքու մայրաքաղաքը: Առաջնորդ՝ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյան:

ե. Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի թեմ, կեդրոն ունենալով Ռոստով քաղաքը: Առաջնորդ՝ Տ. Խորեն վարդապետ Էլչուշյան:

զ. Հովվություն Մոսկվայի: Հոգևոր հովիվ՝ Տ. Պարզև վարդապետ Գևորգյան:

Հայաստանի մեջ ունինք նաև երեք վանական կազմակերպություններ: Առաջինը կհանդիսանա Ս. Գեղարդի վանքը, վանահայրությամբ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանի, երկրորդը՝ Դալարագյալի Ս. Խաչ վանքը, վանահայրությամբ Տ. Պողոս աբեղա Տեր-Նշանյանի, իսկ երրորդը՝ Ս. Խոր Վիրապի վանքը, որու վանահայրն է Տ. Գրիգոր քահանա Չաֆտյան:

Ը. ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԱԹՈՒՆԵՐ ԵՎ ԹԵՄԵՐ

Հայաստանյայց Եկեղեցին Դ դարեն սկսյալ պատմականորեն կազմակերպված ու պարզացած սուրբ հաստատություն մըն է, խարսխված Ս. Թաղեսու և Ս. Բարթողիմեոս առաքյալներու քարոզությանց վեմին և Ս. Գրիգոր Լուսավորչի իջման տեսիլքին վրա, որ այսօր իր բոլոր նվիրապետական Աթոռներով և աշխարհացրիվ եպիսկոպոսական Աթոռներով ու եկեղեցիներով, կկազմե հոգևոր ամբողջություն մը՝ մեկ և անբաժանելի, որ պատմական առաքելությունն ունի հայ ժողովուրդի սրտին մեջ կենդանի պահելու Զրիստոսի Ս. Ավետարանի լույսը և մեր Եկեղեցվո ու Ազգի միասնության ոգին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության օրհնության և հոգևոր հեղինակության ներքև կազմակերպված ու գործող նվիրապետական Աթոռներն են այսօր.

ա. Կաթողիկոսություն Մեծի Տանն Կիլիկիո, կեդրոն ունենալով Անթիլիասի Աթոռը, որուն իրավասությանց սահմանները կտարածվին Լիբանանի, Սուրիո և Կիպրոսի հայ եկեղեցիներու և հավատացյալ ժողովուրդի վրա:

բ. Երուսաղեմի հայոց Պատրիարքությունը, որուն իրավասության ենթակա են Հորդանանի և Իսրայելի հայ եկեղեցիները և ժողովուրդը: Օրվան պատրիարք՝ Ս. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյան:

գ. Կոստանդնուպոլսո հայոց Պատրիարքությունը, որուն իշխանության ներքև կգտնվին Թուրքիո հայ եկեղեցիներն ու հավատացյալները: Օրվան պատրիարք՝ Ս. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր իշխանության սահմաններուն մեջ կգտնվին ու կգործեն հետևյալ թեմերը և հովվությունները.

ա. Ադրպատականի թեմ, կեդրոնը՝ Թավրիզ: Առաջնորդական տեղապահ՝ Ս. Գարապետ ավագ քահանա Մանուկյան:

բ. Թեհրանի թեմ, կեդրոնը՝ Թեհրան: Հոգևոր հովիվ և թեմական գործակալ՝ Ս. Հովհաննես ավագ քահանա Հաճյան:

գ. Սպահանի թեմ, կեդրոնը՝ Նոր-Ջուղա: Կրոնական խորհուրդ, նախագահությամբ Ս. Ներսես ավագ քահանա Դավթյանի:

դ. Եգիպտոսի թեմ, կեդրոնը՝ Կահիրե: Թեմակալ առաջնորդ՝ Ս. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյան, որուն կենթարկվին նաև Սուդանի և Եթովպիո հայ եկեղեցիները:

ե. Իրաքի թեմ, կեդրոնը՝ Բաղդադ: Այժմ կղեկավարվի թեմական խորհուրդի կողմե:

զ. Արևմտյան Եվրոպայի թեմ, կեդրոնը՝ Փարիզ: Հայրապետական պատվիրակ և թեմակալ առաջնորդ՝ Ս. Սերովբե եպիսկոպոս Մանուկյան:

է. Հունաստանի թեմ, կեդրոնը՝ Աթենք: Առաջնորդական փոխանորդ՝ Ս. Մեսրոպ ավագ քահանա Տեր-Հակոբյան:

ը. Ամերիկայի Միացյալ Նահանգներու Արևելյան թեմ, կեդրոնը՝ Նյու-Յորք: Թեմակալ առաջնորդ՝ Ս. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան, որուն կենթարկվին նաև Կանադայի հայ եկեղեցիները:

թ. Ամերիկայի Միացյալ Նահանգներու Կալիֆոռնիո թեմ, կեդրոնը՝ Լոս-Անժելոս: Թեմակալ առաջնորդ՝ Ս. Թորգոմ ծայրագույն վարդապետ Մանուկյան:

ժ. Հարավային Ամերիկայի թեմեր՝ Արժանտին, Բրազիլիա, Ուրուգվայ, Չիլի և Վենեսուելա, կեդրոնը՝ Բուենոս-Այրես: Հայրապետական պատվիրակ և առաջնորդ՝ Ս. Բարգեն եպիսկոպոս Ապատյան:

ժա. Անգլիո Հայրապետական պատվիրակություն, կեդրոնը՝ Լոնդոն: Հայրապետական

պատվիրակ և հոգևոր հովիվ՝ Ս. Պսակ եպիսկոպոս Թումայան:

ժբ. Մանչեստրի հոգևոր հովվություն: Հոգևոր հովիվ՝ Ս. Աշոտ քահանա Տեր-Հարությունյան:

ժգ. Վիեննայի հոգևոր հովվություն: Հոգևոր հովիվ՝ Ս. Մեսրոպ վարդապետ Գրիգորյան:

ժդ. Ռումանիո թեմ, կեդրոնը՝ Բուխարեստ: Թեմակալ առաջնորդ՝ Ս. Տիրայր վարդապետ Մարտիկյան:

ժե. Բուլղարիո թեմ, կեդրոնը՝ Սոֆիա: Թեմակալ առաջնորդ՝ Ս. Տիրայր վարդապետ Մարտիկյան:

ժզ. Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի թեմ, կեդրոններ՝ Կալկաթա և Սիդնեյ: Առաջնորդական փոխանորդ՝ Ս. Արամայիս քահանա Միրվայան:

ժէ. Միլանոյի հովվություն: Հոգևոր հովիվ՝ Ս. Իսահակ վարդապետ Ղապարյան:

Մեր գործունեության ջրջանին աշխատեցանք առավել բնականոն և սերտ հարաբերություններ մշակել մեր նվիրապետական Աթոռներու և թեմական կեդրոններու հետ, համրապնդումն և ի շինություն Մեր հավատացյալ պանդուխտ վաճակներուն:

Թ. ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐՈՒՆ

Մեր գահակալության հաջորդող առաջին իսկ ամիսներուն, Մենք զգացինք և գիտակցեցանք, թե Մեր Եկեղեցին, հատկապես Մայր Աթոռը, նոր ժամանակաշրջանի մը սեմին կգտնվի, և թե ստեղծված նոր պայմաններու մեջ նոր հնարավորություններ և հեռանկարներ կբացվին Մեր առջև: Հետևաբար, Մենք Մեր պարտքը նկատեցինք հնարավոր չափով օգտագործել ստեղծված ներքին և արտաքին նպաստավոր պայմանները հոգուտ և հառապել կազմակերպում մեր Եկեղեցվո և Ս. Էջմիածնի, հօգուտ և համրապնդում ի Սփյուռս աշխարհի ցրված մեր ժողովուրդի միության և հոգևոր մխիթարության: Այսպես է, որ ծնունդ առին և ի գործ ողվեցան Մեր հովվապետական այցելությանց ծրագիրները, և որով Մենք անսահման ուրախություն ունեցանք լույս և հույս և օրհնություն բաշխելու Մեր պանդուխտ վաճակներուն, Նեղոսի և Ոսփորի ափերեն մինչև Ատլանտյանի և Խաղաղականի ափերը:

Միայն Աստված գիտե և միայն ներկաները զգացին, թե ինչպես դիմավորեց հայ հավատացյալ ժողովուրդը Ամենայն Հայոց Հայրապետը, որ կուզար քրիստոսատես Ս. Էջմիածնեն և վերածնած Մայր Հայրենիքեն: Մեր Ազգի զավակները, բոլորն անխտիր, աննախընթաց միասնությամբ և փառաֆեղ ձևերով, անգամ մը ևս եկան վկայելու, թե մեկ է Հայ Եկեղեցին և անբաժանելի, ինչպես ինքը հայ ժողովուրդը,

և թե բոլոր հայերը հարապատ ու համատարիմ պավակներն են հայ հավատքի աստվածակառույց կեդրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, հիմնաքարը և մայրը բոլոր հայ եկեղեցիներու և նվիրապետական Աթոռներու: Հայ հավատացյալ ժողովուրդը ամեն տեղ, փոթորկվող սուրբ պահուստներու մեջ հոգեպես վերածնած, ծունկի եկավ և խոնարհեցավ Ս. Էջմիածնի աստվածային պորոթյան առջև, և կենարար օրհնություն ստացավ: Ի տես այս հրաշալի պատկերին մանավանդ, կարելի է հասկնալ և ըմբռնել ճշմարտությունը ամերիկացի բարձրաստիճան հոգևորականի մը, որ Հարվարդի համալսարանի կամարներուն տակ Մեջ ողջունելով, ըսավ. «Երանի՛ Ձեզի, որ Էջմիածին մը ունիք»: Փառք և պատի՛վ հայ հավատացյալ ժողովուրդին, որ գիտե կենդանի պահել ու պահպանել՝ շեն ու պայծառ՝ Ամենայն Հայոց հավերժական Ս. Էջմիածինը:

Մեր հովվապետական առաջին այցելությունը տեղի ունեցավ 1956 թվականին, 1 փետրվարին մինչև 20 մայիս: Այցելեցինք հետևյալ հայ գաղութներ, ուր հոժ թվով հայեր կապրին իրենց եկեղեցիներով, կրթական, մշակութային և ազգային հաստատություններով. Բեյրութ, Անթիլիաս, Կահիրե, Աղեքսանդրիա, Միլան, Վենետիկ, Փարիզ, Մարսիլիա, Լոնդոն և Մանչեստր:

1957-ին, ապրիլ 26-են մինչև 30, այցելեցինք Շիրակի թեմը՝ Լենինական և Հառիճա ու Մարմաշեն վանքերը:

1957-ին, մայիս 17-են մինչև 26, այցելություն տվինք Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի թեմին՝ Ռոստով, Թոփուսի, Չալտր և Մեծ-Սալա:

Նույն տարին, հուլիս 5-են մինչև 10, այցելեցինք Վրաստանի հայոց թեմի կեդրոնը՝ Թբիլիսի, իսկ սեպտեմբեր 20-են մինչև 29 այցելեցինք Ադրբեջանի թեմը՝ Բաքու, Կիրովաբադ, Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտ և Գանձասարի «ատմական վանքը»:

1957-ի դեկտեմբեր 8-ին այցելություն տվինք Երևանի մեր հայրապետական թեմի եկեղեցիներուն:

1960-ը հանդիսացավ պատմական թվական մը Հայ Եկեղեցվո կյանքին մեջ՝ Մեր հովվապետական այցելությամբ դեպի Նոր Աշխարհը, դեպի երկու Ամերիկաները: Այս այցելությունը տևեց ավելի քան չորս ամիս՝ մայիս 20-են մինչև հոկտեմբեր 3: Այս ճանապարհորդության ընթացքին այցելեցինք Ամերիկայի Միացյալ Նահանգները, Կանադա, Արժանտին, Բրազիլիա, Ուրուգվայ, Պորտուգալիա և Փարիզ:

Հաջորդ տարին, 1961 հուլիս 4-են մինչև 20, ճանապարհորդեցինք դեպի Թուրքիա, Գարեգին սրբազան պատրիարքի թաղման տխուր առիթով և այցելեցինք Ստամբուլի հայ եկեղեցիները, մխիթարելով հավատացյալ Մեր պավակները: Այցելեցինք նաև Թուրքիո մայրաքաղաքը Ան-

գարա, ուր հանդիպեցանք տեղվույն հայ համայնքի անդամներուն: Վերադարձի ճամբուն վրա, այցելեցինք Վիեննայի հայ համայնքը և Մխիթարյան վանքը:

Այս տարի, փետրվարին, այցելեցինք կրկին անգամ Վրաստանի մեր թեմը և մայիսին՝ Ադրբեջանի թեմը, այցելություններ, որոնց մանրամասն նկարագրությունները լույս տեսած են ժամանակին մեր պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրին մեջ:

Ժ. ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Մեր գործունեության կարևոր երեսներն մին կնկատենք եպիսկոպոսական խորհրդակցական ժողովներու գումարումները, որոնք տեղի ունեցան 1956-ի մարտ 5—8-ին Կահիրեի մեջ և 1958-ին Էջմիածնի մեջ, Մեր զահակալության երրորդ տարեդարձին առթիվ:

1956-ի Կահիրեի Եպիսկոպոսական ժողովին քննության առնվեցան հետևյալ հարցերը.

ա. Կաթողիկոսի զեկուցում Մայր Աթոռի դրության և ծրագիրներու մասին.

բ. Հայաստանյայց Եկեղեցվո Սահմանադրության հարց.

գ. Հայաստանյայց Եկեղեցվո Կանոնագրքի կազմության հարց.

դ. Ս. Գրքի աշխարհաբար թարգմանության հարց, Ս. Գրքի հայերեն առաջին տպագրության 300-ամյակի առթիվ, որ կրանա 1966-ին:

ե. Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի առավել կազմակերպման խնդիր.

զ. Արտասահմանեն հոգևորականներ Էջմիածին հրավիրելու խնդիր.

է. Մայր Աթոռի կողքին հոգևոր կաճառ մը ստեղծելու հարց.

ը. Ս. Էջմիածնի և նվիրապետական մեր մյուս Աթոռներու փոխհարաբերության և գործակցության ծրագիր մը պատրաստելու հարց.

թ. Հայաստանյայց Եկեղեցվո բարեկարգության խնդիր.

ժ. Զրիստոնեական այլ եկեղեցիներու հետ հարաբերություն մշակելու խնդիր.

ժա. Կիլիկիո կաթողիկոսի ընտրության հարց:

Ս. Էջմիածնի մեջ գումարված 1958-ի Եպիսկոպոսական ժողովը սեղանի վրա ունեցավ հետևյալ հարցերը.

ա. Երեք տարվան Մեր գործունեության մասին եղած զեկուցում.

բ. Ազգային-եկեղեցական Սահմանադրության նախագծի քննարկում.

գ. Ազգային-եկեղեցական ժողովի գումարման խնդիր.

դ. Կիլիկյան Աթոռի տազնապ.

ե. Երուսաղեմի հայոց Պատրիարքական Աթոռի կացություն.

վ. Հայ և Անգլիկան Եկեղեցիներու հարաբերության խնդիր.

է. Սրբազման կանոններու ուսումնասիրություն և հաստատում.

ը. Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանություն և տպագրության հնդիր.

թ. Հայ եկեղեցական երաժշտության հրատարակության խնդիր.

ժ. Մաշտոցի վերանայում (պակ, մկրտություն, թաղում):

Թե՛ Կահիրեի և թե՛ Ս Էջմածնի մեջ գումարված եպիսկոպոսական ժողովները ըննարկեցին օրակարգի վրա գտնվող հարցերը, ընդունելով համապատասխան որոշումներ, որոնցմե ոմանք ցարդ կենսագործված են և ուրիշներ կմնան տակավին իրագործելի ապագային և կամ վերաքննելի:

ԺԱ. ՏԱԳՆԱԳ ԿԻԼԻԿՅԱՆ ԱԹՈՌԵՆ ՆԵՐՍ

Սույն Ազգային-եկեղեցական ժողովը կոչված է պաշտոնապես արձանագրելու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռեն ներս ծայր տված տազնապը, այդ Աթոռին միաբանության ու ժողովուրդի երկվ եղկումը, ինչպես նաև Անթիլիասի ոսնձգություններու փորձերը Մայր Աթոռիս թեմերեն ներս: Մենք պարտինք վերաբերմունք ճշտել այդ տազնապի հետևանքով ստեղծված կացության նկատմամբ:

Մայր Աթոռը և Մենք, որ պատասխանատու ենք Աստուծո, մեր ժողովուրդի և մեր պատմության առաջ, չէինք կրնար և չենք կրնար հաշտվիլ նման կացության մը հետ: Ահա թե ինչո՞ւ չեղյալ համարեցինք Անթիլիասի անկարգ գործերը և անոր ոսնձգությունները, նկատելով պանոք եկեղեցաբանդ փորձեր, և համառ կերպով աշխատեցանք պաշտպանել Ս. Էջմիածնի դարավոր իրավունքները և հեղինակությունը, առաջնորդված Եկեղեցվո և Ազգի գերագույն շահերու գիտակցությամբ: Նույն համառ հետևողականությամբ աշխատեցանք նաև ճանապարհներ փնտռել, վերականգնելու համար մեր Եկեղեցվո միասնությունը և ներօհն խաղաղությունը: Այս մտադրությամբ է, որ բազմաթիվ փորձեր կատարվեցան ուղղակի և անուղղակի կերպով՝ Անթիլիասը կարգի հրավիրելու համար, փորձեր, որոնք հանդիպեցան քար լռության:

Նույն մտադրությամբ է, որ գրի առինք Մեր 1960 թվականի ապրիլ 25-ի կոնդակը, որով հաշտության ձեռք երկարեցինք Անթիլիասին և Ջարեհ Մեր եղբորը: Այս ոգիով է, որ նույն տարին, հունիսին, Նյու-Յորքեն երեք ազգայիններ Անթիլիաս գացին, առաջ սակայն բարի լուր մը բերելու իրենց վերադարձին:

Այնուամենայնիվ Մենք կմնանք լավատես դեպի ապագան: Մենք վստահ ենք, թե ի վերջո

ողջմտությունը, գերագույն շահերու գիտակցությունը և մեր ժողովուրդի արդար կամքը պիտի հաղթահարեն բոլոր դժվարությունները և պիտի վերականգնվի մինչ 1956-ի գոյավիճակը Մայր Աթոռիս և Անթիլիասի Կիլիկյան Աթոռի փոխհարաբերությանց միջև:

Մայր Աթոռը որևէ պայման չի դներ և ոչ ալ որևէ պահանջք ունի Անթիլիասի նկատմամբ: Մեր փափագը և Մեր հորդորն է պարզապես՝ օրինական և բնականոն գոյավիճակի վերականգնումը և անոր ամրապնդումը, որ կար մինչ 1956, փոխադարձ սիրո և վստահության պայմաններու մեջ: Կուզենք հավատալ և հուսալ, թե Անթիլիասի Մեր եղբայրները ևս ի վերջո պիտի առաջնորդվին ու գործեն այս ոգիով:

ԺԲ. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է ձեպի, թե մեր ընտրութենեն անմիջապես վերջ, 1955-ի Ազգային-եկեղեցական ժողովի վերջին նիստին ներկայացուցինք շինարարական աշխատանքներու ծրագիր մը ընդհանուր գծերով, և Մեր անդրանիկ կոնդակին մեջ, Մեր նվիրական պարտականություններեն մին համարեցինք վերանորոգումը մեր հայրենի սրբավայրերուն՝ վանքեր և եկեղեցիներ, որոնք մեր հոգևոր կյանքի սյուները կհանդիսանան ու հռչակված տաճարները աղոթքի և ուխտի, ու նաև վմայլելի հուշարձանները հայ ճարտարապետական հանճարի:

Երջանիկ ենք ձեպի հայտնելու, թե անցնող յոթը տարիներու ընթացքին, առանց ընդհատումի, ի գործ դրինք շինարարական Մեր ծրագիրները և գրեթե ամբողջությամբ կենսագործեցինք վանոնք:

Ահա համառոտ պատկերը կատարված այդ շինարարական աշխատանքներուն.

ա. Մայր Տաճար.

1. Մարմարապատում Տաճարի ամբողջ հատակի.
2. Կառուցում մարմարյա Ավագ Ս. Սեղանի և Իջման Ս. Սեղանի.
3. Վերակառուցում Տաճարի հարավային փլած գմբեթի.
4. Չնավորում Ավագ Սեղանի տակ հայտնաբերված հեթանոսական կրակարանի.
5. Վերանորոգումներ հիմքերու և արտաքին պատերու վրա:
6. Կառուցում դասի մարմարյա բազիլիքներու.
7. Մայր Տաճարի շրջափակի սալապատում տուֆ քարով.
8. Մայր Տաճարի շրջափակի ճանապարհներու ասֆալտապատում.
9. Մայր Տաճարի շուրջ ստորերկրյա ջրանցքներու (դրենաժի սիստեմի) վերականգնում:
- 10 Լուսավորություն Մայր Տաճարի շուրջը:

(Այս աշխատանքները կատարված են բարերար Գ. Կյուլպենկյանի կտակի հատկացումներով) :

բ. Ս. Էջմիածնի վանքն ենթա.

1. Վանքի շուրջ կառուցում մոտ 1 000 մետր երկարությամբ և 5 մետր բարձրությամբ պարըսպի՝ սրբատաշ տուֆ քարով.

2. Ամբողջական և հիմնական վերանորոգում նոր Վեհարանի ջենքի.

3. Ամբողջական վերանորոգում տպարանի ջենքի և կառուցում երկրորդ հարկի.

4. Վերանորոգում Խրիմյան ջենքի.

5. Կառուցում ժամացույցով աշտարակի մը, վանքի պարսպի հյուսիսային կողմը.

6. Կառուցում նոր մեծ դարբասի, վանքի արևելյան կողմը, իբրև գլխավոր մուտք.

7. Վերանորոգում Տրդատա դռան.

8. Կառուցում կեդրոնական ջեռուցման կաթսայտան.

9. Կեդրոնական ջեռուցման անցկացում Հոգևոր ճեմարանի, Երեմյան և տպարանի ջենքերու, ինչպես նաև նոր Վեհարանի մեջ.

10. Վանքի հողամասի ջրամատակարարման և կոյուղիի անցկացում.

11. Կառուցում ելեկտրական ենթակայանի.

12. Մասնակի վերանորոգումներ ճեմարանի և Երեմյան ջենքերու մեջ.

13. Ծառապատում և կանաչապարզում վանքի շրջափակի:

գ. Ս. Հռիփսիմեի տաճար (Է դ.).

1. Հիմնական վերանորոգում տաճարի և կառուցում նոր սեղանի, բարեկարգում շրջապատի և տնկում խաղողի այգիի մը, տաճարի արևմտյան հողամասին վրա.

2. Պարսպապատում տաճարի շրջափակի և կառուցում նոր դարբասի, հյուսիսային պարսպի մեջ.

3. Կառուցում հուշարձան-աղբյուրի մը և նորոգում բնակելի ջենքի.

դ. Հիմնական վերանորոգում Ս. Շողակաթ տաճարի (ԺԷ դ.) և պարսպապատում շրջափակի.

ե. Հիմնական նորոգում Օշականի Ս. Մերոպ եկեղեցվո, բարեկարգում Մեծ վարդապետի դամբարանի և կառուցում նոր սեղանի, պարըսպապատում և կանաչապարզում շրջափակի.

զ. Հիմնական վերանորոգում Բջնիի Ս. Աստվածածին պատմական եկեղեցվո.

է. Հիմնական վերանորոգում Ս. Գայանե եկեղեցվո (Է դ.) և պարսպապատում շրջափակի.

ը. Վերանորոգում Ս. Խոր Վիրապի վանքի (աշխատանքները տակավին չեն ավարտած).

թ. Հիմնական վերանորոգում Սիսիանի Ս. Աստվածածին եկեղեցվո և վերականգնում փլած գմբեթի (Է դ.).

ժ. Վերանորոգման որոշ աշխատանքներ Ս. Գեղարդի վանքի մեջ (ԺԲ դ.).

ժա. Վերանորոգում Դարալագյապի (Եղեգնաձորի) Ս. Խաչ վանքի.

ժբ. Մասնակի վերանորոգումներ Երևանի Ս. Մարգիս, Ս. Հովհաննես և Ս. Ջորավոր եկեղեցիներուն վրա, ինչպես նաև Լենինականի Ս. Աստվածածին (Յոթ-վերք) տաճարին մեջ.

ժգ. Պարսպապատում միաբանական պատմական հին գերեզմանատան.

ժդ. Վերանորոգում Կամո (Նոր-Բայազետ) քաղաքի եկեղեցվո.

ժե. Մասնակի վերանորոգումներ կատարված են նաև Թբիլիսիի, Ռոստովի և Բաքվի եկեղեցիներուն մեջ:

Մայր Աթոռի շինարարական ծրագիրներուն բարվոք կենսագործման մեծապես օգտակար եղած է Մեզի մասնագետ ճարտարապետներու հանձնաժողովը, որ վեց տարիներ է վեր աշխատակցած է Մեզի հետ իբրև խորհրդատու մարմին, պարբերաբար այցելելով Ս. Էջմիածին, քննարկելու համար շինարարական ծրագիրները և նահագծերը և հետևելու անոնց կատարման:

Մայր Աթոռիս կողքին կազմված այդ հանձնաժողովը կբաղկանա հետևյալ անձերեն. 1. ճարտարապետ Միքայել Մազմանյան, 2. պրոֆ. Կարո Ղաֆադարյան, 3. ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյան, 4. ճարտարապետ Վարազդատ Հարությունյան, 5. ճարտարապետ Կոնստանտին Հովհաննիսյան, 6. ճարտարապետ Բաղդիկ Արզումանյան, 7. ճարտարապետ Արծրունի Գալիկյան:

Մայր Աթոռիս ճարտարապետներու հանձնաժողովի աշխատանքներուն գործոն կերպով ու խանդավառ եռանդով մասնակցած է նաև փարիզաբնակ հայտնի ճարտարապետ Երվանդ Ութունճյան, որ պարբերաբար այցելած է Ս. Էջմիածին, որպես ներկայացուցիչը Գ. Կյուլպենկյան հիմնարկության, և մեծապես օգտակար եղած է մեր շինարարական ծրագիրներու կենսագործման:

Այս հարգելի մասնագետները իրենց գիտությամբ, իրենց բարձր ճաշակով և հայկական ճարտարապետության հարավատ զգացումով, թանկագին ծառայություն մատուցած են Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և միշտ սիրով ու անշահախնդրորեն ընդառաջած են Մեր բոլոր հրավերներուն:

Մեր հայրենի այս պատվական մասնագետները արժանի են մեր ամբողջ եկեղեցվո և Ազգի գնահատանքին և երախտագիտության:

ԺԳ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Կարևոր խնդիրներ են մին, որ Մեր առաջ կրթվեր յոթը տարի առաջ, ապահովումն ու ամրապնդումն էր Մայր Աթոռիս և մեր ներքին եկեղեցական կազմակերպությանց, տնտեսական-ֆինանսական տեսակետով:

Մեր տնտեսական կացությունը հեռու էր միսթարական ըլլալէ մինչ 1955 թվականը: Այս շրջանին, Մայր Աթոռի բյուրջեն կհասներ մինչև 1 000 000—1 300 000 ռուբլիի (հին դրամով) և տարին կփակվեր հաճախ 40—50% բացով: Նվազ էին նաև արտասահմանն նպաստները:

Վերակազմակերպելով մեր ներքին տնտեսաֆինանսական կառուցվածքը և գործելակերպը, ու նաև շնորհիվ մեր թեմակալ առաջնորդներու և Մայր Աթոռիս հաշվապահության բարեխիղճ և աշալուրջ աշխատանքին, Մայր Աթոռիս և ներքին թեմերու եկամուտները տարվե-տարի աճեցան և նույնիսկ կրկնապատկվեցան: 1956—1962 տարիներուն Մայր Աթոռիս տարեկան բյուրջեն միջին հաշվով բարձրացած է 3 500 000 ռուբլիի (հին դրամով), որուն մոտ 2 200 000 ռուբլին գոյացած է ներքին թեմերու եկամուտներեն, իսկ մնացածը՝ արտասահմանի մեր թեմերու և հավատացյալներու նվերներեն, որոնց մեջ կմտնեն նաև Հոգևոր Ճեմարանի մեջ սան պահող 15 բարերարներու վճարումները՝ տարեկան 500-ական դոլար:

Մայր Աթոռիս ընթացիկ բյուրջեին մեջ չի մտնէր շինարարական գործունեության ֆինանսավորումը:

Շինարարական աշխատանքները, որոնց պատկերը ներկայացուցինք թիչ առաջ, ամբողջապես կկատարվին արտասահմանն ստացված հատկացումներով և բացառիկ նվիրատվություններով բարեպաշտ ազգայիններու կողմէ: Այսպես, 1956-են մինչև 1962 արտասահմանն ստացված և իրացված այդ նվերները կհասնին 2 500 000 ռուբլիի (նոր դրամով):

Մայր Աթոռիս վարչա-տնտեսական գործունեության ղեկավարներն են գլխավոր հաշվապահ Գառնիկ Զեհյայան և տնտեսական բաժնի վարիչ Անդրանիկ Ութուջյան, որոնք ձեռնհասությամբ, բարեխղճությամբ ու եռանդով կաշխատին Մեր ծրագիրներու գործադրության ճանապարհին:

Շինարարական գործի ղեկավարն է Մայր Աթոռիս գլխավոր ճարտարապետ Արծրունի Գալիկյան, որ Մեզ մոտ հինգ տարիներու իր գործունեությամբ արժանի է մեր բոլորիս գնահատանքին՝ իբրև հմուտ մասնագետ և իբրև անձնվեր աշխատող: Մեր անկեղծ գնահատանքը նաև իր տեղակալին՝ ինժեներ Ծիլվան Խաչատրյանին՝ իր աշխատանքի բացառիկ կորովին ու նվիրումին համար:

Մայր Աթոռիս տնտեսաֆինանսական և շինարարական աշխատանքներու ֆինանսական գործարքները կանոնավոր կերպով քննության և ստուգման կենթարկվին Գերագույն Հոգևոր Խորհուրդին առընթեր գործող Վերստուգիչ հանձնաժողովին կողմէ, որ բացառիկ բարեխղճությամբ և նախանձախնդրությամբ կկատարեն իր պարտքը, մեծապես նպաստելով, որ Մայր

Աթոռիս տնտեսաֆինանսական գործունեությունը ընթանա բնականոն և կարգապահ պայմաններու մեջ: Մեր վերստուգիչ հանձնաժողովին անդամներն են Տ. Մաշտոց վարդապետ Թաշիրյան, Ե. Ալեքսանյան և Գ. Բեքմեչյան:

Այստեղ խղճի պարտք կզգանք ձեզի հայտարարելու, թե ընդհանրապես Մայր Աթոռն ներս աշխարհական աշխատողները՝ բաժնի վարիչներ, գրասենյակի պաշտոնյաներ, մեքենաներու վարորդներ, վարպետ-արհեստավորներ, ճաշարանի աշխատողներ, պահակներ և բանվորներ օրինակելի կարգապահությամբ և չոհաբերության ոգիով կաշխատին: Մենք կզգանք, թե բոլորը անխտիր, մինչև ամենահամեստ բանվորը և հավաքարար քույրը, ոգևորված են Մայր Աթոռի վերաշինության աշխատանքով, կնկատեն այդ սուրբ գործ և հպարտ են որ այստեղ կաշխատին, այս աստվածակառույց հաստատության կամարներուն ներքև: Մեր հայրապետական գնահատանքը և օրհնությունը բոլորին անխտիր:

ԺԴ. ՀԱՏԿԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵՆ

Ինչպես տեսանք, Մայր Աթոռիս թե՛ ընթացիկ բյուրջեի մեկ կարևոր մասը և թե՛ մեծ շինարարական աշխատանքներու նյութական միջոցները ամբողջությամբ կապահովվին Սփյուռքի մեր հավատացյալ ժողովուրդի լուծմաներով և նվիրատվություններով:

Այստեղ, առաջին տեղը պետք է տանք անշուշտ Գալուստ Կյուլպենկյան հաստատության, որ ամենայն բարի նախանձախնդրությամբ կգործադրե հանգուցյալ մեծ բարերարի 400 000 դոլարի հատուկ կտակը՝ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի ամբողջական վերանորոգման համար:

Մեր ընտրութենեն հետո և Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության իրավական-օրինական ձևը վերջնականապես հաստատվելէ վերջ, Մենք բանակցություններու մեջ մտանք հիմնարկության ղեկավար և հիմնադիր մարմնի հետ, որ 1957-ին Ս. Էջմիածին ուղարկեց իր ներկայացուցիչները՝ Սըր Սիդնի Զեյն և ճարտարապետ Եղվարդ Ութուճյան, որպեսզի տեղվույն վրա անոնք քննեն ու ճշտեն Մայր Տաճարի վերանորոգության և անոր ֆինանսավորման պայմանները: Մեծահարգ ներկայացուցիչները այս աշխատանքը կատարեցին հույժ գնահատելի, շինարար ու ասնիվ ոգիով մը:

Այսպիսով սկսավ Մայր Տաճարի վերանորոգման ծրագրի գործադրությունը հանգուցյալ բարերար Գալուստ Կյուլպենկյանի կտակի նախատեսությանց համաձայն: Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը սկսավ իր դրամական հատկացումները կատարել մաս առ մաս. համաձայն կատարվող աշխատանքներու ընթացքին: Մայր Աթոռս ցարդ ստացած է 270 000 դոլար: Այս

հանդիսավոր առիթով, Մենք երախտագետ սըրտով կօրհնենք հիշատակը մեծ բարերար Գալուստ Կյուլպենկյանի, աղոթելով անոր հոգվույն խաղաղության համար, և նույն երախտագետ սրտով Մեր ջերմ գնահատանքի ու գոհունակության խոսքը կողղենք Կյուլպենկյան հիմնարկության ղեկավարներուն՝ մեծահարգ նախագահ ղոկտ. Ժոզե դե Ալբերեդո Պերդիգաոյին, տիար Գևորգ Եսայանին և տիար Ռոբերտ Կյուլպենկյանին, որոնք բացառիկ ուշադրությամբ և աստվածահաճո նախանձախնդրությամբ կգործադրեն մեծ բարերարի կտակը:

Վերջին յոթը տարիներու ընթացքին Մայր Աթոռիս կարևոր նվիրատուները հանդիսացան հետևյալ թեմերը և հավատացյալ ազգայինները.

1. Ֆրանսահայ ժողովուրդի նվերներով կվերանորոգվի Ս. Գայանեի պատմական եկեղեցին.
2. Ս. Խոր Վիրապի վերանորոգումը ապահովված է Կալիֆոռնիո թեմի մեր հավատացյալներու նվիրատվություններով.
3. Լոնդոնի հայ գաղութի լուսմաներով վերանորոգվեցավ Բջնիի պատմական եկեղեցին.
4. Տիար Երվանդ Հյուսիսյան և տիար Օսնիկ Մանուկյան, Միլանոյն, բարերարներն են Ս. Հռիփսիմեի ամբողջական վերանորոգման: Տիար Ե. Հյուսիսյան կարևոր գումար մը ևս նվիրած է վերջերս նոր Վեհարանի կահավորմին օգտին:
5. Տեր և տիկին Սուրեն և Շաքե Գալենտերյաններ, Հալեպեն, բարերարներն են Ս. Շողակաթի վերանորոգության.
6. Հայկ և Թորգոմ Ղապարոսյան եղբայրներու նվիրատվությամբ, Միլանոյն, կատարված է Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցվո ամբողջական վերանորոգությունը.
7. Ջորավար Սարգիս Ջարդարյան, Միացյալ Նահանգներեն, նվիրատուն է Ս. Գեղարդի վանքի վերանորոգության.
8. Եղվարդ Մարտիկյան, Միացյալ Նահանգներեն, նվիրատուն է Հաղարծին վանքի վերանորոգության.
9. Անգլիայեն հանգուցյալ Մարթո Պաքրճյան և Ներսես Կյուլպենկյան կարևոր նվիրատվություններ կատարեցին հոգուտ մեր շինարարական ձեռնարկներուն.
10. Սարգիս Զյուրքճյան, Լոնդոնեն, Գեղարդի մեղվաբուծարանը հիմնեց.
11. Նույնպես, հոգուտ Մայր Աթոռիս շինարարական ձեռնարկներու, կարևոր գումարներ տրամադրած են հետևյալ բարեպաշտ ազգայինները.

- ա. Պետրոս և Հմայակ Սարաֆյան, Ամերիկայի Միացյալ Նահանգներեն.
- բ. Տեր և տիկին Կարապետյաններ, Ամերիկայի Միացյալ Նահանգներեն.
- գ. Հարի Բըրթ Մովսեսյան, Ամերիկայի Միացյալ Նահանգներեն.
- դ. Հարություն Թադոսյան, Ամերիկայի Միացյալ Նահանգներեն.

- ե. Ապրո Ապրոյան, Բեյրութեն.
- զ. Տիկին Արփիկ Գանթարճյան, Հալեպեն.
- է. Հակոբ Թովալյան, Փարիզեն.
- ը. Սարաֆյան եղբայրներ, Բուենոս-Այրեսեն, և ուրիշներ.

թ. Շուրջ 15 ազգայիններ գնապան երկրներ տարեկան 500-ական դոլար կվճարեն, իբրև Հոգևոր Ճեմարանի մեջ սան պահող բարերարներ:

1960-ին, Մեր Ամերիկա այցելության առթիվ, բազմաթիվ հավատացյալներ նվիրատվություններ կատարեցին հոգուտ Ս. Էջմիածնի, որով գոյացավ 160 000 դոլարի գումար մը, իբրև անձեռնմխելի հիմնադրամ, որուն տարեկան եկամուտները պիտի հատկացվին Մայր Աթոռիս կարիքներուն: Գումարը կկոչվի «Ս. Էջմիածնի հիմնադրամ» և կպահվի Նյու-Յորքի դրամատան մեջ, առաջնորդարանին առընթեր կազմված և Մեր կողմե նշանակված հանձնաժողովի մը պատասխանատվության ներքև:

Սույն հիմնադրամի գումարը գոյացած է լուսմաներովը Ամերիկայի Միացյալ Նահանգներու երկու թեմերու, Արժանտինի, Բրազիլիո և Մոնտեվիդեոյի հավատացյալներու:

Մեր առաջադրանքն է, որ ժամանակի ընթացքին այլ նվիրատվություններով, կտակներով ու հատկացումներով «Ս. Էջմիածնի հիմնադրամ»-ը աճի և Մայր Աթոռիս համար դառնա եկամտի ապահով ու մնայուն աղբյուր:

Այս հանդիսավոր առիթով, հոգեկան մեծ մխիթարություն է Մեզի համար Մեր ջերմ գոհունակությունը և շնորհակալությունը հայտնել Մայր Աթոռիս բոլոր բարերարներուն և նվիրատուներուն և աղոթել անոնց ամենուս արևաշառուկայան և երջանկության համար:

Ջերմ գոհունակության և շնորհակալության խոսք ունինք նաև ուղղյալ Ս. Էջմիածնի օժանդակ հանձնաժողովներու անդամ պատվական և հավատավոր ազգայիններուն, որոնք սրտառուչ անձնվիրությամբ և ազնվությամբ կաշխատին՝ ի շինություն և ի բարգավաճում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Ս. Էջմիածնի օժանդակ հանձնաժողովները, որոնք այս պահուս կգործեն, հետևյալներն են.

- ա. Աբգարյան հիմնադրամի և Ս. Էջմիածնի հանձնաժողովները, Լոնդոն.

- բ. Էջմիածնի տպարանի հանձնաժողովը, Նյու-Յորք.

- գ. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովը, Նյու-Յորք.

- դ. Էջմիածնի օժանդակ հանձնաժողովը, Բեյրութ.

- ե. Էջմիածնի հանձնաժողովը, Միլանո.

- զ. Էջմիածնի օժանդակ հանձնաժողովը, Նյու-Յորք, առաջնորդարանին առընթեր.

- է. Էջմիածնի օժանդակ հանձնաժողովը, Փարիզ, առաջնորդարանին առընթեր:

ԺԵ. ՏՊԱՐԱՆ

Մայր Աթոռի տպարանը այսօր իրագործված իրագրի մըն է արդեն, որ ձեր աչքերով կտեսնեք: Ամերիկահայ Մեր հավատացյալ զավակներու սրտաբուխ նվերն է ան Ա. Էջմիածնին և մեր ժողովուրդին:

Այս նպատակով կազմված հանձնաժողովը, Այու-Յորքի մեր առաջնորդարանին առընթեր, գլխավորությամբ տիար Երվանդ Աղաճանյանի, ամբողջական հաջողությամբ կատարեց իր պարտքը: 1957—1958 տարիներուն էր, որ տիար Երվանդ Աղաճանյան կազմակերպեց Ս. Էջմիածնի տպարանի հանգանակության արշավը, անձնապես իր ուսերուն վրա առնելով ամբողջ գործը, բացառիկ ձեռնհասությամբ, եռանդով ու անձնվիրությամբ: Համաժողովրդական խանդավառ մթնոլորտի մեջ, արագ կերպով հանգանակեցավ 156 000 դոլար, ինչ որ շատ ավելին էր ակնկալվածն: Պր. Երվանդ Աղաճանյան նույն բարեխղճությամբ ու նախանձախնդրությամբ կազմեցավ նաև տպարանի մեքենաներու պատվերի գործով, որ սրակվեցավ նույնպես հաջողությամբ: Այժմ մեր տպարանը օժտված է լավագույն մեքենաներով, մեծ մասամբ Արևելյան Գերմանիայեն՝ Լայպցիգեն: Մոտ օրեր կսպասենք գունատիպ մեքենաները և փնկոգրաֆի կազմածներու մնացած մասը: Մայր Աթոռի տպարանի տպագրական կարողությունը կհասնի տարեկան 700 տպագրական մամուլի, այսինքն մոտավորապես 70 անուն փոքր միջին ծավալի:

Մեր տպարանը գործի անցած է արդեն: Ինչպես ծանոթ է մեր ժողովուրդին և ձեզի բոլորիդ, Ս. Էջմիածնի տպարանի նպատակը պիտի ըլլա.

ա. Տպագրել Մայր Աթոռի պաշտոնաթերթը «Էջմիածին» ամսագիրը և օրացույցը.

բ. Տպագրել կրոնական գրականություն.

գ. Տպագրել հայոց պատմության, հայ բանասիրության և ընդհանրապես հայագիտության վերաբերյալ գրականություն.

դ. Տպագրել հայ հին և նոր արվեստին նվիրված գրքեր, ալբոմներ.

ե. Տպագրել Մայր Աթոռի ներքին կարիքներու համար բրոշյուրներ, Հոգևոր Ճեմարանի դասագրքեր, գրասենյակային տպագրական գործեր և այլն:

Մեր տպարանը, որպեսզի լավագույնս ծառայե այս կրոնական և ազգային-մշակութային նպատակին, և որպեսզի նյութապես ալ բեռ մը չհանդիսանա Մայր Աթոռի ուսերուն վրա, բարվոք համարեցինք դիմել Հայաստանի Գիտություններու ակադեմիային և համաձայնություն մը կնքել, ըստ որուն տպարանի օգտագործումը կկատարվի այնպիսի դրությամբ, որ Մայր Աթոռի բոլոր տպագրական գործերը այնտեղ տրա-

վելով, առանց որևէ վճարումի, տպարանի մյուս հայագիտական գործերու հրատարակությանց ֆինանսավորումը կատարվի Ակադեմիայի կողմն: Այսպիսով մեր սեփական տպարանին մեջ պիտի հրատարակենք մեր բոլոր տպագրական գործերը անվճար կերպով և տպարանի ֆինանսական պատասխանատվությունը պիտի ըլլա Գիտություններու ակադեմիայի վրա:

Եթե նկատի ունենանք, թե մեր Երկրին մեջ գրականությունը շատ աժան կվաճառվի և թե առհասարակ տպագրական գործերը աժան կվճարվին ըստ գոյություն ունեցող պետական նորմաներու, կխորհինք, թե Գիտություններու ակադեմիայի հետ կնքած Մեր համաձայնությունը տնտեսական տեսակետով նպաստավոր է Մեզի: Այս կերպով տպարանի հավանական բացը պիտի փակվի Գիտություններու ակադեմիայի կողմն:

Սույն պատկառելի ժողովի առաջ Մենք, հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, անգամ մը ևս Մեր շնորհակալությունը կհայտնենք ամերիկահայ նվիրատու Մեր զավակներուն և կօրհնենք պանոնք բոլորը:

ԺԶ. ԶՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Զույր եկեղեցիներու հետ Մենք շարունակեցինք պահպանել լավագույն քրիստոնեական եղբայրական սիրո կապեր, Հայ Եկեղեցվո և մեր նախորդ հայրապետներու ոգիով:

Հանրածանոթ է Հայաստանյայց Եկեղեցվո լայնախոհությունը և հարգանքը ըլլող եկեղեցիներու նկատմամբ: Մենք կփափագինք ընթանալ այս աստվածահաճո ուղիով, եկեղեցիներու միջև միությունը և գործակցությունը տեսնելով ի Զրիստոս սիրո մեջ:

Մենք կզավանինք քրիստոնյա եկեղեցիներու միությունը՝ Ա. Ավետարանը ընդունելով իբրև հաստատուն վեմ և Զրիստոնեական Ընդհանուր Եկեղեցին՝ իբրև կենդանի մարմին, որուն գլուխը կգտնվի Ինքը, մեր Տերը և Փրկիչը Հիսուս: Բոլոր քրիստոնեական եկեղեցիները նույն մարմնույն անդամներն են:

Զրիստոնեությունը, իբրև աստվածային պատգամ և նախախնամության գործ, անշուշտ մեկ է և տիեզերական, սակայն այդ աստվածային տնօրինության իրագործումը երկրի վրա, զգեցած է և կզգենու արտաքին տարբեր տարապներ, համաձայն ժողովուրդներու հոգեկան դիմագծության և Աստուծո խոսքը ընկալելու և ապրելու կերպին, և համաձայն պատմական պարագաներուն և ավանդություններուն, ոոոնց մեջ ծնունդ են առած ու վարզացած եկեղեցիները:

Մեր Եկեղեցվո ծագման, կազմավորման և վարզացման պատմության և ավանդություններու, ինչպես և մեր ժողովուրդին հատուկ կրոնական ապրումներու կերպերուն մեջ, Մենք

կգտնենք մեր Ազգային Եկեղեցվո ջրիստոնեության հարապատությունը և վավերականությունը:

Հետևաբար, եկեղեցիներու միություն ըսելով, Մենք միշտ պիտի հասկնանք սոռո հարաբերություններու մշակում և եղբայրական գործակցություն եկեղեցիներու միջև, ամեն մեկը պահելով իր դավանական մտածելակերպը, իր ավանդությունները և ծեսերը և իր ինքնագլուխ, անկախ ղեկավարությունը:

Այս ոգիով ահա, Մենք ջանք հնայեցինք առավել զորացնելու համար մեր եղբայրական կապերը թույր եկեղեցիներու հետ:

Առաջին հերթին պետք է գոհունակությամբ նշենք սերտ ու ջերմագին եղբայրությունը մեր Եկեղեցվո և Ռուս Պրովուսլավ Եկեղեցվո միջև, որ մանավանդ վերջին տասնամյակներուն հետսկստե կորացավ ու ամրապնդվեցավ, հանուն աշխարհի խաղաղության և ժողովուրդներու բարեկամության մեր միատեղ աղոթքի և միատեղ աշխատանքի ճանապարհին վրա:

Ուրախությամբ կարծանագրենք պատմական այցելությունը Էջմիածին՝ Ռուս Եկեղեցվո ծերունապարոզ Գահակալ Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքին, սիրեցյալ Եղբորը Մեր ի Զրիստոս, 1960 հոկտեմբեր 27-ին: Միածնաէջ այս սուրբ կամարներուն ներքև, Մենք ողջունեցինք Ալեքսի Սրբազան Պատրիարքը և անգամ մը ևս միասիրտ աղոթեցինք վասն հաստատության մեր Եկեղեցիներու և վասն խաղաղության համայն աշխարհի:

Մեր հերթին Մենք ևս, այս վերջին յոթը տարիներու ընթացքին, քանի մը անգամ հյուրը եղանք, Մոսկվա կամ Զագորսկ, Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքին, միշտ գտնելով եղբայրական ամենասիրելի վերաբերմունք:

Նույնը պետք է հաստատենք նաև մեր դրացի Վրացական Օրթոդոքս Եկեղեցվո և իր Պետին՝ Նորին Սրբություն Եփրեմ Բ Կաթողիկոսի նկատմամբ: Վրացի և հայ ժողովուրդները ավելի քան 2 000 տարիներու բարի դրացիության և եղբայրական գործակցության անցյալ մը ունին պատմականորեն նվիրագործված, որ կարտահայտվի նաև մեր օրերուն, մեր երկու թույր Եկեղեցիներու փոխադարձ սիրով և գործակցությամբ:

Ծանոթ են բոլորիդ մեր Եկեղեցվո պատմական կապերը Հույն Օրթոդոքս Եկեղեցվո հետ: Արևելքի եկեղեցիներու կազմավորման ու պարզացման պատմության մեջ, կեդրոնական տեղ կզբաղվեն մեր թույր Եկեղեցիներու փոխհարաբերությունները և հաճախ գործակցությունը: Մեր օրերուն, երբ այլևս չքացած են եկեղեցիներու միջև անցյալի որոշ թուր հասկացողությունները և փոխադարձ անհանդուրժող ոգին, Հայ Եկեղեցին և Հունաց պատմական մեծ Եկեղեցին կողք-կողքի կգտնվին ամեն տեղ, պիրար

կողջունեն ճշմարիտ ջրիստոնեական սիրով ամեն առթիվ և միասին կաղոթեն ու կգործեն Աստուծո փառքին համար:

Մենք երջանիկ ենք այս ժողովին ուրախությամբ հայտնելու ավետիսը Մեր հանդիպումին՝ Հունաց Տիեպերական Պատրիարք Նորին Սրբություն Աթենագորաս Մեր Եղբոր հետ, անցյալ տարի, 1961-ին, Ստամբուլի մեջ: Պատմական ըլլալու կոչված այդ հանդիպումը անգամ մը ևս նվիրագործեց մեր երկու արևելյան թույր Եկեղեցիներու ոգեկան միությունը ի Զրիստոս սիրով: Իսկ այս տարի, մայիս 25-ին, Մենք սիրով ողջունեցինք այստեղ, Ս. Էջմիածնի կամարներուն տակ, գերաշնորհ Էմիլիանոս Տիմիազիս եպիսկոպոսը, որ կուզար Մեզի բերելու ողջույնը Նորին Սրբություն Աթենագորաս Պատրիարքին:

Սիրով պետք է արձանագրենք նաև Մեր ներկայացուցչի մասնակցությունը իբրև դիտորդ և հյուր Պան-Օրթոդոքս համագումարին, որ տեղի ունեցավ 1961-ին Հռոդոսի մեջ, իբրև պատասխան Հունաց Տիեպերական Սրբազան Պատրիարքի հրավերին: Հռոդոսի ժողովին Մեր ներկայացուցչին էր գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը:

Նույն ուրախությամբ կուզենք այստեղ արձանագրել Մեր եղբայրական սիրալիր կապերը Ռումեն և Բուլղար Օրթոդոքս եկեղեցիներուն հետ, որոնք հեռավոր անցյալեն կուզան և կխոսին հայ; ռումեն և բուլղար ժողովուրդներու միջև դարերե ի վեր ստեղծված բարեկամության մասին, այն օրերեն, երբ հայ ժողովուրդի հալածված կավակները կանգվածաբար ապաստան և ջրիստոնեական բարի վերաբերմունք գտան Ռումեն և Բուլղար հյուրընկալ երկիրներուն մեջ:

Մեր և Ռումեն ու Բուլղար Օրթոդոքս եկեղեցիներու միջև սիրո հարաբերություններու մեկ փայլուն ու պատմական ապացույցը հանդիսացավ Ռումեն Եկեղեցվո Պատրիարք Նորին Ամենապատվություն Հուստինիանի և Բուլղար Եկեղեցվո Պատրիարք Նորին Ամենապատվություն Կիրիլի այցելությունը Ս. Էջմիածին, 1958 մայիս 29-ին:

Բացառիկ գոհունակությամբ կուզենք այստեղ խոսիլ նաև մեր Եկեղեցվո սիրալիր ու բարեկամական հարաբերություններու մասին Անգլիկան Եկեղեցիին հետ, հարաբերություններ, որոնք վերջին տասնամյակներուն հետսկստե սերտացան և հիմքերը դրին ապագա առավել մերձեցման ու գործակցության, Տիրոջ այգիին մեջ:

Մեր Եկեղեցին և մեր հավատացյալ ժողովուրդը հոգեկան մխիթարությամբ կհաստատեն մեր երկու Եկեղեցիներու եղբայրական հարաբերություններու մշակումը, որոնք սկսան քանի մը տասնամյակ տարիներ առաջ, Մայր Աթոռիս և մանավանդ Երուսաղեմի Հայոց Պատրիարքության հովանիին ներքև:

Անգլիկան և Հայ Եկեղեցիներու հարաբերությանց պատմության ճանապարհին վրա կխորհինք, թե կարևոր հանգրվան մը հանդիսացավ Մեր այցելությունը Լոնդոն, Լամբեթ Պալատ, 1956 ապրիլին, ուր չորս օր հյուրը եղանք Անգլիկան Եկեղեցվո Հովվապետ Նորին Գերաշնորհությունն դոկտ. Ջեոֆֆրի Ֆիշեր արքեպիսկոպոսին: Այդ հանդիպումն Մենք Մայր Աթոռ վերադարձանք շատ քաղցր և գոտեպնդիչ հիշատակներով:

Մեր Եկեղեցին և Մենք անձամբ նույն սիրո կապերը կպահպանենք նաև Ամերիկայի Միացյալ Նահանգաց Եպիսկոպոսական Եկեղեցիին և մյուս թուր եկեղեցիներու հետ: Ամերիկա Մեր այցելության առթիվ, մեծ մխիթարություն եղավ Մեզի համար սեփական աչքերով տեսնել և ապրիլ այն քրիստոնեական սերը, որով տոգորված են այդ եկեղեցիներու ներկայացուցիչները Հայ Եկեղեցիին և Ս. Էջմիածնին նկատմամբ:

Անցյալ տարի դեկտեմբերին, Մենք հաճույքով ողջունեցինք Մայր Աթոռ այցելությունը Քնեսոքերիի արքեպիսկոպոս գերաշնորհ Մայքլ Ռեմպիի ներկայացուցիչ Հայր Ջոն Սատերթուեյտի, և այս տարի սեպտեմբերին, այցելությունը Ամերիկյան Եկեղեցիներու ներկայացուցիչներու, որոնց գլուխը կգտնվին Մեր սիրեցյալ եղբայրը գերաշնորհ Լորիստոն Լեյնգստոն Սքեյֆ և Միացյալ Նահանգներու Եկեղեցիներու Ազգային Խորհուրդի նախագահ դոկտ. Միլլեր:

Մեզի համար հույժ ուրախալի է նաև խոսիլ ձեպի Մեր սիրալիր հարաբերություններու մասին Մխիթարյան և հայ ավետարանական մեր եղբայրներուն հետ, որոնք բազմիցս վկայությունը բերած են իրենց հարգանքի և գուրգուրանքի՝ մեր Մայր Եկեղեցվո և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդեպ:

Մենք միշտ քաղցր հուզվումով պիտի հիշենք մեր այցելությունները Ս. Ղապար 1956-ին և Վիեննայի Մխիթարյան վանքին 1961-ին: Թող Աստված օրհնե ավետարանական սիրո պտղավորումը միջեկեղեցական կյանքի անդաստանին մեջ: Թող Աստված լուսավորե եկեղեցիներու միության և գործակցության սուրբ ճանապարհը:

ԺԷ. ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐԻՆԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը կրոնական կազմակերպություն մըն է, որուն նպատակն է մերձեցում և աշխատակցություն հառաջ բերել աշխարհի քրիստոնյա եկեղեցիներու միջև, որոնք կզավանին «Գրիստոս իբրև Աստված և Փրկիչ, ըստ Ս. Գրոց, և կաշխատին միասին իրագործել իրենց հասարակաց կոչումը ի փառս Աստուծո Հոր և Որդվո և Հոգվույն Սրբո»:

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը կամ էքումենիկ շարժումը նոր երևույթ մըն է, որ կհատկանշե մեր պատմական ժամանակաշրջանի կարևոր մեկ երեսը: Մենք կհավատանք, թե այս շարժումով հառաջ եկած կազմակերպությունը ճշմարիտ կերպով կհամապատասխանե Հայ Եկեղեցվո՝ քրիստոնեական եկեղեցիներու միջև միության և եղբայրության ըմբռումին:

Մեր Եկեղեցին և մեր նախորդ հայրապետները ի սկզբանե համակրանքով և հույսով հետևած են էքումենիկ այս շարժման, և իրենց ներկայացուցիչներով ներկա եղած են հաճախ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի համագումարներուն դիտորդի կամ հյուրի հանգամանքով:

Այսպես, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, հանուն Հայ Եկեղեցվո, իր դիտորդ ներկայացուցիչները ուղարկած է Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Լոպանի (1927), Էդինբուրգի (1937), Ամստերդամի (1948), Լոնդոնի (1952), Էվենստոնի (1954) և Նոր Դելիի (1961) ժողովներուն:

Ահա թե ինչո՞ւ Մեր սիրտը հրճվեցավ, երբ 1959-ին Ս. Էջմիածին եկավ Մեզ տեսնելու և ողջունելու Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի պատվիրակությունը, գլխավորությամբ իր ընդհանուր քարտուղար Հայր դոկտ. Վիսեր դ' Նուֆտի: Առաջին անգամն էր, որ Հայոց Հայրապետը ուղղակի հարաբերության մեջ կմտներ էքումենիկ շարժման պատվական ղեկավարներուն հետ: Եվ այդ հանդիպումը պտղառատ եղավ:

Մենք հարմար ու անհրաժեշտ գտանք առավել մերձենալ այս շարունմին և մասնակցիլ նույնիսկ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի գործունեության, իբրև անդամ եկեղեցի այդ կազմակերպության:

Այս տարի ապրիլ 26-ին Մենք, հանուն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո, պաշտոնապես դիմում ուղարկեցինք Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին ժընև, մեր Եկեղեցվո փափագը հայտնելով անդամ ըլլալու Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին: Մեր դիմումին կցեցինք նաև հուշագիր մը մեր Եկեղեցվո, անոր նվիրապետության և այժմու կացության մասին:

Ուրախ ենք հայտնելու, թե Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Կեդրոնական հանձնաժողովը, գումարված Փարիզ այս տարի, իր օգոստոս 11-ի նիստին մեջ միաձայնությամբ ընդունած է Մեր դիմումը և որոշ ձևակերպությանց լրացումն վերջ, վեց ամիս հետո, Հայ Եկեղեցին պիտի նկատվի անդամ-եկեղեցի Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի կազմակերպության:

Փարիզի այս ժողովին մեջ մեր Եկեղեցին ներկայացված էր Մեր կողմե նշանակված պատվի-

րակները՝ գերանշորի Տ. Մերովբե եպիսկոպոս Մանուկյան, գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյան և հոգեշնորհ Տ. Պարզ վարդապետ Գևորգյան:

Մեր պատվիրակներու վեկուցումեն տեղեկացանք, թե Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի անդամագրության համար, Փարիզի վերոհիշյալ ժողովին կողմէ նկատի առնված է նաև Անթիլիասի Կիլիկյան Աթոռի դիմումը և ընդունված, իբրև առանձին եկեղեցվո դիմում, հետ ստորագրության գրավոր հայտարարության մը, որով Մայր Աթոռիս և Անթիլիասի ներկայացուցիչները կհաստատեն, թե մեկ է Հայաստանյայց Եկեղեցին, թե Ս. Էջմիածնի հոգևոր հեղինակության ներքև կգտնվի ամբողջ Հայ Եկեղեցին իր բոլոր նվիրապետական Աթոռներով, և թե Ս. Էջմիածին և Կիլիկյան Աթոռները ունին իրենց իրավասությանց սահմանները:

Ենթադրելի և սպասելի է, որ նման հայտարարութենէն հետո, Անթիլիասի Աթոռը չներկայանա և ընդունվի իբրև առանձին անդամ-եկեղեցի Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի կազմակերպության մեջ, այլ իր ներկայացուցիչը հանդիսանա անդամը՝ մեկ և անբաժանելի Հայ Եկեղեցվո պատվիրակության, օրհնությանմբը Հայ Եկեղեցվո Ընդհանրական Հայրապետության: Այս կըլլա բնական և օրինական լուծումը սույն խնդրույն:

Վստահ ենք, թե Ազգային-Եկեղեցական ժողովը գոհունակությամբ պիտի արձանագրե Հայաստանյայց Եկեղեցվո անդամագրման պարագան Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի կազմակերպության մեջ, նկատելով այդ աստվածաբաժնո գործ և համապատասխան մեր Եկեղեցվո ընդհանուր շահերուն:

Այս հանդիսավոր առաջին առիթով քրիստոնեական հավատքի վեմ, երկհապարամյա կեդրոն Ս. Էջմիածնէն Մեր ողջույնը կուղարկենք Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին և անոր կեդրոնական վարչության, հանուն Հայաստանյայց Սուրբ և Առաքելական Եկեղեցիին և անոր հայ հավատացյալ ժողովուրդին:

ԺԸ. ԵՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

Ազգային-եկեղեցական ժողովին կկամենայինք ներկայացնել ծրագիրը շինարարական հետագա մեր գործունեության, իր ընդհանուր գծերուն մեջ: Ահա Մեր ծրագիրը.

ա. Ամբողջապես ավարտել Մայր Տաճարի վերանորոգումը ըստ Կյուլպենկյան հիմնարկության հետ կնքված մեր պայմանագրի.

բ. Ամբողջապես ավարտել Ս. Գայանեի, Ս. Գեղարդի և Ս. Խոր Վիրապի վանքերու վերանորոգումը և բարեկարգումը.

գ. Վերանորոգում Ս. Էջմիածնի շրջափակի մեջ գտնվող շենքերու, ինչպիսիք են հին Վե-

հարանը, Երեմյան շենքը, ուր կբնակին մեր միաբանները, Սինոդի շենքը և Ղապարապատի շենքերը.

դ. Կահավորում նոր Վեհարանի.

ե. Վերանորոգում Հաղարծնի վանքի և բնակելի շենքի մը կառուցումը այնտեղ.

զ. Հայրապետական ամառանոցի մը կառուցումը Բյուրականի մեջ.

է. Վերանորոգում Ապարանի (Ե դար) և Մրգավանի եկեղեցիներու.

ը. Նկարապարոզում Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցվո.

թ. Բարեկարգում և կանաչապատում նոր Վեհարանի շրջափակին.

ժ. Կառուցում կոյուղիի, Ս. Էջմիածնի հողամասն մինչև քաղաքի կեդրոնական մաքրման կայանը:

ԺԹ. ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Սրբագումար այս ժողովի ուշադրության կկամենայինք հանձնել նաև Մեր նոր մեկ ծրագիրը, որ սերտորեն կկապվի Մայր Աթոռիս նորաստեղծ տպարանի ապագա գործունեության հետ: Ծրագրած ենք մոտ ապագային հիմնել հրատարակչական մարմին մը, որուն նպատակը ըլլա Մայր Աթոռիս տպարանին մեջ տպել ու հրատարակել հայագիտական և հայ հին մատենագիտության վերաբերյալ գրականություն, գործեր՝ Հայաստանի և Սփյուռքի հայ և օտար հեղինակներու:

Ուրախությամբ պետք է հայտնենք այս առթիվ, որ այս ծրագրի կենսագործման համար ունինք խոստումը տարեկան 20 000 դոլարի հատկացումի:

Ի. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մեր լոթնամյա գործունեության սահմանն ենք, Մենք կարևոր տեղ հատկացուցինք խաղաղության դատին, աշխարհի խաղաղության պահպանման ու ամրապնդման գործին: Ծիշտ է, թե Մեր ուժերը համեստ, շատ համեստ են վճռական դեր մը կատարելու համար այս գետնի վրա, սակայն այնուամենայնիվ Մենք երբեք չտկարացանք կատարելու աշխատանք մը, զոր կնկատենք գերպանցապես համապատասխան մեր Ս. Եկեղեցիի, մեր ժողովուրդի և մեր վերածնած Մայր Հայրենիքի կենսական շահերուն:

Ջրիստոնեությունը էապես սիրո և խաղաղության առաքելություն մըն է մարդկային աշխարհի մեջ: Ջրիստոսի Ավետարանը սիրո և խաղաղության աստվածային ավետում մըն է: Ինքը Ջրիստոս Իշխան է խաղաղության և Արեգակ արդարության:

Ինչ կա հետևաբար ավելի հարապատ Զրիստոսի Եկեղեցիին համար, քրիստոնյա հավատացյալներուն համար, քան աշխարհի խաղաղության դատի պաշտպանությունը և ամրապնդումը բարեկամության ազգերու և պետություններու միջև:

Զաջ գիտենք, թե շատ բարդ հարցեր կապված են խաղաղության պահպանման սուրբ գործին հետ, քաջ գիտենք, թե բազում և այլպան վեճեր ու հակամարտություններ կսպառնան թումբեր բարձրացնել ժողովուրդներու խաղաղ գոյակցության ճանապարհին վրա, քաջ գիտենք նաև, թե հետզհետե վարհուրելի չափերու կհասնի պատերազմական պատրաստությանց մրցությունը՝ ատոմական ահռելի վեճերու կատարելագործումով:

Իրերու այս կացության մեջ, արդյոք քրիստոնեական է, մարդկային է ձեռնածալ նստիլ ու անտարբեր «անկողմնակալության» հանցավոր փիլիսոփայությամբ մը, մանավանդ երբ քաջ գիտենք, թե ապագա պատերազմ մը կրնա վերջ դնել մեր ամբողջ ժողովուրդի կյանքին, մեր ժողովուրդի, որ ահավոր ողբերգություններն հետո, վերջապես մեկտեղված է կիսով չափ գոնե, իր պատմական Հայրենիքի մեկ մասին վրա, և կապրի այսօր ապահով ու խաղաղ, և վերածնած անցյալի ավերակներեն, կսլանա դեպի իր նոր, ոսկի ապագան:

Արդ, Մենք ինչպե՞ս հաշտվինք ապագա պատերազմի մը հեռանկարին հետ, մենք ինչպե՞ս անտարբեր մնանք մահասփյուռ վեճերու պատրաստությանց իրողության առջև, մենք ինչպե՞ս չմիանանք խաղաղության ուժերուն:

Այո, Մենք մեր Եկեղեցիով ու ժողովուրդով կանք ու կմնանք պաշտպան աշխարհի խաղաղության դատին, որովհետև քրիստոնյաներ ենք և հայեր ենք:

Անցնող յոթը տարիներու ընթացքին հաճախ առիթը ունեցանք Մեր ձայնը լսելի դարձնելու կանապան ժողովներու և համագումարներու՝ Երևան, Մոսկվա և Պրագա, ի խնդիր խաղաղության, ի խնդիր պինաթափման, ի խնդիր ժողովուրդներու բարեկամության:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն Մեր քարոզներով, կոչերով և կոնդակներով, խաղաղության և սիրո պատգամը բաշխեցինք Մեր հավատացյալներուն և աշխարհին:

Մեր սրտին մոտ է մանավանդ Պրագայի քրիստոնեական եկեղեցիներու խաղաղության շարժումը: Այդ ոգիով գոտեպնդված ենք նաև Մենք և մեր Ս. Եկեղեցին: Եվ վստահ ենք, թե նույն այդ խաղաղության ոգիով պիտի ներշնչվի նաև այս ժողովը:

Մենք գոտեպնդված ենք և մխիթարված, որ խաղաղության աշխատանքին մեջ ներգրավված են հետզհետե աշխարհի բոլոր եկեղեցիները և ժողովուրդները, իրենց լայն կանգվածներով, և

կհավատանք, թե հեռու չէ այն օրը, երբ վերջնականապես ապահովված պիտի տեսնենք աշխարհի ժողովուրդներու խաղաղ գոյակցությունը և պատերազմական վեճերու իսպառ վերացումը:

Այդ օրը, մարդկության կյանքի հորիզոնին վրա, մեծագույն հաղթության կամարը պիտի բարձրանա դեպի երկինք, իբրև կատարումն աստվածային պատգամին՝ «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Մենք կհավատանք մարդու բարոյական հանճարի հաղթության, Մենք կհավատանք, թե կաշինները այլևս պիտի չկրնան սպաննել իրենց եղբայրները:

Եվ ի՞նչ մխիթարություն, ի՞նչ մխիթարություն մանավանդ քեզի համար, հայ ժողովուրդ:

Մենք վստահ ենք, թե այս համազգային եկեղեցական ժողովը, այս քրիստոնեական և ազգային գիտակցութենեն առաջնորդված, իր խոսքը գլխի արձանագրե այստեղ, հանուն խաղաղության, հանուն ժողովուրդներու եղբայրության, ուղղված հայ ժողովուրդին և համայն քրիստոնյա աշխարհին:

**Ի Ա. ՄԵՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅՐԵՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆՑ
ՀԵՏ**

Մեր զեկուցումը իր ավարտին հասնելե առաջ, խղճի պարտք մը ևս ունինք:

Այս հանդիսավոր պահուն, արդար կզտենք ձեր առաջ ամենայն անկեղծությամբ և երախտագիտությամբ Մեր շնորհակալությունը հայտնել մեր հայրենի հարապատ պետության, ինչպես նաև Սովետական Միության կառավարության և անոնց բարձր պաշտոնատարներուն, իրենց հույժ բարյացակամ և լայնախոհ վերաբերմունքին համար դեպի մեր Եկեղեցին և դեպի Ս. Էջմիածինը:

Ակներև է, որ եթե չվայելեինք այդ բարյացակամ վերաբերմունքը, անշուշտ չէինք կարող իրագործել այն ծրագիրները և ձեռնարկները, որոնք հիշատակվեցան Մեր այս զեկուցագրին մեջ:

Մեր գործունեության այս յոթը տարիներու ընթացքին, Մենք ամեն առիթներով հստակ կերպով հաստատած ենք Սովետական Միության կառավարության և Սովետական Հայաստանի կառավարության իմաստուն քաղաքականությունը կրոնական գործերու և մեր Եկեղեցիով նկատմամբ, և Մենք վստահ ենք, թե այսուհետև ևս Մեր Եկեղեցին և Ս. Էջմիածինը պիտի վայելեն նույն վերաբերմունքը և պիտի շարունակվին պահպանվիլ նույն իրավական և գործնական արդար փոխհարաբերությունները Պետության և Եկեղեցիի միջև:

Մեզի կմնա արդթել և մաղթել, որ Տերը անսասան պահե մեր Մայր Հայրենիքը խաղաղ ա-

առաջընթացի մեջ, և արևշատություն պարզևե մեր Հայրենի պետության ղեկավարներուն և լիակատար հաջողություն իրենց հայրենաշեն ու ժողովրդանվեր աշխատանքներուն:

Մենք կհավատանք նաև, թե Սփյուռքի մեր եկեղեցիները և հավատացյալ ժողովուրդը մխիթարված են այս իրողությամբ և Մեր աղոթքներուն կմիացնեն նաև իրենց սրտագին մաղթանքները՝ մեր վերածնած ու ծաղկած Մայր Երկրի՝ ամենայն հայոց հավիտենական Մայր Հայաստանի անսասանության, խաղաղության և բարության համար:

* * *

Սիրելի՛ սրբական եղբայրներ, հարգարժան պատգամավորներ և հյուրեր.

Ահա իր ընդհանուր գծերուն մեջ պատկերը Մեր յոթնամյա գործունեության: Եթե այս յոթը տարիներու աշխատանքի ընթացքին որոշ հաջողություններ արձանագրեցինք և կենսագործեցինք Մեր շինարարական ծրագիրները, այդ կպարտինք ամեն բանե առաջ այն ներշնչումներուն, որոնք Մեր հոգվույն մեջ իջան Լուսավորչի կանթեղի լույս բարձունքներեն և հավերժական Ս. Էջմիածնի հապարամյա սուրբ քարերու ընդերքներեն: Այդ սուրբ ներշնչումները աճեցուցին Մեր հավատքը, պորացուցին Մեր կամքը և լուսավորեցին Մեր ճամբան: Մեր տկար անձին միջոցավ գործեց այն ահեղ պոռությունը, որ ի Հորե իջավ Հայաստան աշխարհ, որպես պատասխան հայ ժողովուրդի մեծ սպասումին և սուրբ տեսիլքներուն:

Մեր գործունեության շինարարական արդյունքները կպարտինք նաև մեր Երկրին մեջ ստեղծված նպաստավոր պայմաններուն և մեր հավատավոր ժողովուրդի ոգեկան ու բարոյական ուժերուն, ինչպես և Մեր հարպատ զավակներու առատածեռն նվիրատվություններուն:

Այսօր կփակենք յոթը տարիներու գործունեության շրջան մը, Մեր ուժերու չափով Մեր պարտքը կատարած ըլլալու գիտակցությամբ, և կթևակոխենք աշխատանքի նոր շրջան մը՝ առավել լավատեսությամբ ու ինքնավստահությամբ քան յոթը տարիներ առաջ:

Ապրող ու շնչող, մեր այս արևոտ ու շեն Երկրի սուրբ հողի վրա ամուր կանգնած, հավերժական Ս. Էջմիածնի աստվածապարզ շնորհներով պորացած, մեր հարպատ ժողովուրդի հավատքի ու տեսիլքի աղբյուրներեն հագեցած, Մենք պիտի շարունակենք աշխատիլ Մեր բոլոր գործակիցներուն հետ միասիրտ ու միակամ, որպեսպի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին մնա մեկ և անբաժանելի և ապառաժի նման անսասանելի, որպեսպի հայ ժողովուրդը, քրիստոսի լույսով առաջնորդված, նորեն վերածնի ոգեկան արժեքներու սուրբ ավազանին մեջ, և որպեսպի Մեր աչքի լույս Ս. Էջմիածինը, գերագույն վկան և գրավականը հայ ժողովուրդի հավերժության, անշարժ մնա, շեն ու պայծառ, և միշտ շողա լույս փառքի մեջ, այժմ և հավիտյան:


Չկան հայ եկեղեցիներ, չկան հայ ժողովուրդներ, չկան հայ հայրենիքներ:

Կա մեկ հայ ժողովուրդ և մեկ Հայրենիք: Կա մեկ Հայ Եկեղեցի, կա մեկ Հայոց Ընդհանրական Հայրապետություն, կա մեկ Ս. Էջմիածին՝ Վեմը մեր լույս հավատքին և Գլուխը մեր Եկեղեցիին:

Թող Աստված օրհնե և անշարժ պահե Իր իսկ հիմնած Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Թող Աստված օրհնե և անբաժան պահե պահպանե մեր Ս. Եկեղեցին իր բոլոր նվիրապետական Աթոռներով:

Թող Աստված օրհնե և անփորձ ու անվտանգ պահե, խաղաղ ու բարգավաճ՝ Մայր Երկիրը մեր՝ նոր կյանքի կոչված, և սիրեցյալ ժողովուրդը մեր, որ իր չարքաշ զավակներու արդար վաստակով և հանձարի լույսով կկերտե իր պայծառ ապագան:





**ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՁ**

(Կարդացված 1962 թվականի Ազգային-եկեղեցական ժողովի Դ նիստում, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանի կողմից)

Նորին Ս. Օծուխյուն Տ. Տ. ՎԱԶԳԻՆ Ա Սրբազնագույն Կաթողիկոս Ամենայն Հայոց, գերաշնորհ և հոգեշնորհ հարթ, արժանապատիվ քահանա հայրեր և հարգարժան պատգամավորներ Ազգային-եկեղեցական սրբազումար ժողովի:

Վեհափառ Հայրապետի բարեհաճ արտոնությամբ և Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշմամբ, պարտականությունն ունենք, պատկանելի Ազգային-եկեղեցական այս ժողովի առաջ, զեկուցելու օրակարգի կարևոր հարցերից մեկի մասին, որ է՝ «Ամրապնդում Հայ Եկեղեցու միասնության»:

Մայր Աթոռում հրավիրված Ազգային-եկեղեցական ժողովը բացառիկ, պատմական մի իրադարձություն է հանդիսանում, թե՛ իր ներկայացուցչական հանգամանքով, և թե՛ օրակարգի վրա դրված կարևոր հարցերով, որոնք սերտ կապ ունեն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հետագա կազմակերպության և առաքելության և Վեհափառ Հայրապետի ապագա գործունեության հետ:

Ահա թե ինչո՞ւ արդար է մեր հաստատու և երախտագիտությամբ ընդունվեց Ազգային-եկեղեցական ժողով գումարելու հրավերը:

Այսօր, բովանդակ հայ ժողովուրդը իր նայվածքը սևեռել է դեպի Ս. էջմիածին, հայ

հոգու այս պայծառ վկայարանը, և դեպի Հայրենի աշխարհ՝ Մայր Հայաստան, զի «Մտոն արմատով է ծառ, և տունն հիմամբ է տուն»:

Այսօր ավելի քան երբևէ, կենսունակ է ու պայծառ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. էջմիածնի զխավորությամբ և Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի երջանիկ հովվապետությամբ:

Հայ Եկեղեցու պատմության երկու կարևոր լծակներն են հանդիսացել եկեղեցական միասնականությունը և ազգային միությունը:

Ս. էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետությունը, մեր նվիրապետական Աթոռները և մեր եկեղեցական թեմերը կազմել են մի անքակտելի միություն՝ մեկ Եկեղեցի, մեկ դավանությամբ և մեկ նվիրապետությամբ:

Այս տեսակետից, Ս. էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության փոխհարաբերությունը մեր նվիրապետական Աթոռների և թեմերի հետ, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կենտրոնական հարցերից մեկն է եղել միշտ, որովհետև այդ փոխհարաբերությամբ ընդորոշվել է միշտ Ազգային-եկեղեցական միասնությունը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատմական առաքելություններից մեկն է եղել նաև հայ ժողովրդի միասնության դրսեվորումը Ս. Գրիգոր Լուսավորչի օրերից. «Եւ սիւնն հրեղէն՝ Կաթուղիէ Եկեղեցի է, որ ժողովէ զամենայն ժողովուրդս ի մի միաբանութիւն սուրբ հաւատոյ ի ներքոյ թևոցն իւրոց» (Ազաթանգեղոս)։

Հայ ժողովրդի ազգային-եկեղեցական միասնությունը կոփվում և ամրապնդվում է հետագա դարերում, Թարգմանչաց մշակութային շարժումով, Վարդանանց պատերազմով, որպես սրբազան կանոն հայ կյանքի ներդաշնակության։

Անցյալի մեծագործ եկեղեցականներ, իրենց իրավ այլ արժանիքների կողքին, եղել են նաև Հայ Եկեղեցու և Հայ ժողովրդի միության շատագույններն ու պաշտպանները. «Մի է հայրն մեր, Ս. Գրիգոր Լուսավորիչն, մի և միակրօն Ազգն Հայոց», — գրում է Հովհան Երզնկացին։

Ս. Գրիգոր Լուսավորչի Աջի զորությունն է, որ Ամենայն Հայոց Հայրապետության Աթոռի հետ միացնում է, կապում մեր նվիրապետական Աթոռները, կազմելով հոգևոր մի Ազգ, «մի և միակրօն և անբաժանելի»։

Նույն ոգով ներշնչված, աշխատել են մեր նվիրապետական մյուս Աթոռները և առաջնորդել են իրենց խնամքին և իրավասության հանձնված հայ ժողովրդի զավակներին։

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսները, Շնորհալու և ապա Աշապահյանների օրերից մինչև լուսահոգի Սահակ Խաչաթյան, Բարզեն Կյուլեսերյան, Գարեգին Հովսեփյանց կաթողիկոսները և մինչև Աշապահյանների վերջին շառավիղը՝ ամենապատիվ Տ. Խաղ արքեպիսկոպոսը, միասնականության և միության նույն ոգին ունեցել են իրենց բովանդակ գործունեության որպես ուղեցույց և անշեղ կանոն։

Նույն ոգին իշխել է Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռների մեծագործ հայրապետների գործունեության մեջ, ինչպիսիք էին Հովհաննես Զմյուռնացին, Ծալի Կեսարացին, Հարություն Վեհապետյանը, Եղիշե Գուրջյանը, Թորգոմ Գուշակյանը և նրանց հաջորդող պատրիարքները Երուսաղեմի Առաքելական Աթոռի վրա, և Գևորգ Կոստանդնուպոլսեցի, Խրիմյան, Իզմիրլյան, Օրմանյան և վերջին շրջանում Գարեգին Խաչատրյան պատրիարքները Կոստանդնուպոլսի Աթոռի վրա։

Մեր Եկեղեցու ողջ պատմության մեջ չկա ոչ մի մեծ, պայծառ հոգևորական, որ շատագույն, պաշտպանը եղած չլինի եկեղեցական միության և ազգային միասնության՝ Ս. Էջմիածնի գլխավորությամբ։ Ահա այս է այն

փրկարար ուղին, որը մեզ ցույց են տալիս մեր լուսարնակ նախնիք։

«Զիա՛րդ համահարք և միոյ մօր որդիք, երկպառակք լինիցին և ոչ միաբան», — գրում է ոսկեգրիչ Եղիշեն։

Եթե եղել են այնպիսիներ, որոնք փորձել են քակտել «զուլիստ հաւատոցն մերոց» և շեղվել են այդ ճանապարհից, նրանց հիշատակը կտրել է, թաղվել ժամանակի թանձր փոշիների տակ։

Մեր ուժը, մեր ապագան միության մեջ է։ Գոհունակությամբ պետք է հայտարարել Ազգային-եկեղեցական ժողովին այս բարձր բեմից, որ մեր օրերին էլ այդ ոգին տիրական է մեր Եկեղեցու ժոցում և հայ ժողովրդի հոգում։

Մեր նվիրապետական Աթոռները, մեր թեմակալ առաջնորդները, եպիսկոպոսական Աթոռները Ամերիկայում, Եգիպտոսում, Եվրոպայում և ամեն տեղ, մեր նվիրված հոգևորականները՝ վարդապետ, քահանա, սարկավագ, իրենց ավետարանական սուրբ աշխատանքի կողքին, միաժամանակ առաքյալներն ու քարոզիչներն են եղել հայ ժողովրդի միասնության։ Հայ հոգևորականությունը, Ավետարանի սիրո, եղբայրության և խաղաղության ոգով ջերմացած, սեր և միաբանություն է քարոզում և փառքը հյուսում աստվածակառույց Ս. Էջմիածնի, որ է «Տուն աղօթից խնդրածոց ամենայն հաւատացիւոց» և «Աթոռ Քահանայապետութեան», ուր մեր Փրկիչ և Տիրոջ շունչը իջավ, լուսեղեն տեսիլքով, և հիմք դրեց մեկ և անբաժանելի Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու։

Փորձել բաժան-բաժան անել Հայ Եկեղեցին, հեռանալ Ս. Էջմիածնից, դավել հայ հավատացյալ ժողովրդի միասնության, նշահակում է՝ ուրանալ այն հոգևոր և ազգային առաքելությունը, որն աստվածային նախախնամությամբ տրված է հայ ժողովրդին և կազմում է Հայ Եկեղեցու իսկության, զորության և կենսունակության աղբյուրը։

Հայ հավատացյալ ժողովրդի կրոնական և ազգային գիտակցության համար, Ս. Էջմիածինը և Ամենայն Հայոց Հայրապետը հանդիսացել են միասնության մի խորհուրդ։ Ս. Էջմիածինը հայ ժողովրդի Սրբություն Սրբոցն է, նրա նվիրական իղձերի և զգացմունքների կենտրոնը։

Հայ ժողովուրդը սիրել է ի սիրում է Ա. Էջմիածինը իր հոգու բովանդակ ջերմությամբ, և հավատում է Ս. Էջմիածնի Կաթողիկեի ահեղ զորությանը։

Գուցե մեր պատմության մեջ քիչ անգամներ մեր ժողովուրդը այսքան միասնական է եղել, ինչպես մեր օրերին, ամուր կանգնած իր հավատի և ավանդությունների պատվան-

դանի վրա, բարձր ու հպարտ բռնած իր ձեռքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պանծալի դրոշմը, պատրաստ կուրծք տալու ամեն տեսակի դժվարություններին:

Սփուվել ենք աշխարհով մեկ, բայց միացած ենք Ս. Էջմիածնի խորհրդով և աստվածային օրհնություններով:

Հայ ժողովուրդը այսօր իր լայն զանգվածներով, այս մխիթարական պատկերն է ներկայացնում: Ապացույց այն ցնծագին ոգևորությունը, որով դիմավորվեց Ամենայն Հայոց Հայրապետը 1956 թվականին կատարած իր առաջին ուղևորության ժամանակ կրթանանում, Եգիպտոսում, Իտալիայում, Ֆրանսիայում և Անգլիայում, 1960 թվականին Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում, և 1961 թվականին Թուրքիայում: Մի գուցե Հայ Եկեղեցու պատմության մեջ երբեք այսպիսի զանգվածային և համազգային սեր, նվիրում, պաշտամունք չի ցուցաբերվել դեպի Ս. Էջմիածինը քան մեր օրերին, դեպի Մայր Աթոռը և նրա արժանընտիր Հայրապետը:

Ահա թե ինչո՞ւ սրտի անհուն բերկրանքով մը, թե մեկ է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, միասնական է մեր ժողովուրդը, և հավետ ճշմարիտ մանավանդ մեր օրերի համար հայրենասեր պատմիչ Առաքել Գավրիթեցու հաստատումը՝ «Ե մերայ Աջոյն և էջմիածնի ամենայն Ազգն Հայոց կայեալ կան»: Հայ ժողովրդի համար չկա սրանից ավելի մեծ ճշմարտություն:

Ահավասիկ ինքը, սրբազումար այս ժողովը, պայծառ վկայությունն է Հայ Եկեղեցու և ժողովրդի կենդանի միասնության: Այստեղ ներկա են Գանգեսի ափերից մինչև հեռավոր Ամերիկաները, հյուսիսի թե հարավի շերմարևի տակ ապրող հայություն ներկայացուցիչները: Ներկա են այստեղ Հայ Եկեղեցու բոլոր նվիրապետական Աթոռները և բոլոր թեմերը, որոնք ներկայացնում են մեր ողջ ժողովուրդը՝ Հայաստանի և Սփյուռքի:

Այս ժողովը համակված է սիրո և համերաշխության ոգով: Այս միության մղիչ ուժը և՛ եկեղեցական է և՛ հայրենասիրական:

Այս բոլոր հաստատումներից հետո, մեզ համար ցավ է, որ Հայ Եկեղեցու ժողովը, Անթիլիասի Աթոռից ներս, վեոջին տարիներին դրսևորվում են հակականոնական և կենտրոնախույս ձգտումներ:

1956 թվականի փետրվար ամսին, արտասահման կատարած իր առաջին հովվապետական ուղևորության ժամանակ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա-ի շերմ ցանկությունն էր՝ մասնակցել Անթիլիասում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի ընտրության և օժման հանդիսություններին այն համոզմամբ, որ իր բարձր ներկայու-

թյամբ այդ ընտրությունը կարող է կատարվել ընդհանուր համերաշխության և խաղաղության պայմաններում:

1956 թվականի փետրվարի 12-ին Ամենայն Հայոց Հայրապետը Անթիլիաս է մեկնում շինարար ծրագրով և այն երջանիկ հույսով, որ Մայր Աթոռը ունեցել է իր Գահակալը, «Անթիլիասն ալ պե՛տք է ունենա և կուեննա իր Գահակալը»:

Վեհափառ Հայրապետի ծանոթ էր Անթիլիասում Կաթողիկոսական ընտրության շուրջ ստեղծված անառողջ կացությունը: Նա քաջատեղյակ էր, որ ընտրապայքարը սուր բնույթ է ստացել և ներքին խոր տարակարծություններ գոյություն ունեն Կիլիկյան միաբանության և ժողովրդի մեջ:

Նորին Ս. Օծությունը, որպես Գերագույն Պետ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, խորապես կշռադատելով ստեղծված կացությունը, մտածում էր գտնել մի դարման:

Փետրվարի 13-ին, Վեհափառ Հայրապետը Անթիլիասում հրավիրում է Եպիսկոպոսական խորհրդակցական ժողով: Եպիսկոպոսները միահամուռ խնդրում են Վեհափառ Հայրապետին՝ աշխատել մի քանի օրով հետաձգել տալ պատգամավորական ժողովի գումարումը և հայրապետական իր հեղինակությունը փորձել կողմերը հաշտեցնել և ընտրությունը կատարել ազգային-եկեղեցական սիրո և միության ոգով, համերաշխ մթնոլորտում:

Փետրվարի 14-ին Վեհափառ Հայրապետը խրատական մի կոչով դիմում է պատգամավորական ժողովին.

«Մեր խորհուրդն է, հորդոհն ու առաջարկը, որ այսօր գումարվելիք ժողովը հետաձգվի մեկ շաբաթով և բացվի հառաջիկա երկուշաբթի: Կփափագինք ձեզի և ուրիշներու հետ մեկտեղ, որոնք սրտցավորեն կ'մտենան հարցին, պաղարյուն կերպով, հանդարտորեն և միմիայն Եկեղեցվո շահերեն առաջնորդված, առանց որևէ կողմնակի նկատումի, փորձել համերաշխության գետին մը, հասկացողության եզր մը գտնել, որպեսզի այս բնորոշյունը կատարվի խաղաղության, միության և սիրո մթնոլորտի մը մեջ»:

Վեհափառ Հայրապետի սույն առաջարկը թեև չի հարգվում, սակայն այնուամենայնիվ Նորին Ս. Օծությունը միշտ լավատես, շարունակում է իր հաշտարար աշխատանքները, կողմերի միջև ստեղծելու համար համերաշխության և գործակցության մի մթնոլորտ:

Փետրվարի 19-ին, կիրակի օր, Անթիլիասի Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետը ներկա է լինում սուրբ պատարագին և հրաժեշտի քարոզում անդրադառնալով կաթողիկոսական ընտրության հարցին, ասում է.

«Մենք եկանք այստեղ այս հավատով, Մենք եկանք այստեղ, որպեսզի մեր սիրո միությամբ ավելի փառավոր կերպով բնորվի և օծվի Անթիլիասի նորընտիր գահակալը: Մենք եկանք այստեղ, որպեսզի ավելի զարացնենք այս Աթոռը: Ինչքան զորավոր ըլլա Տանն Կիրիլիա Աթոռը, այնքան զորավոր կըլլա Միածնէտէ Ս. Աթոռը և որքան զորավոր մնա, անի, ծաղկի Ս. էջմիածինը, այնքան ավելի կգորանան մյուս Աթոռները: Մենք իմաստուն պետք է ըլլանք լավապես հասկընալու այս խոսքերուն նշմարիտ իմաստը:

Ս. էջմիածինը Անթիլիասի և Անթիլիասը էջմիածնի համար պետք է մտածեն, իրարու ննցով դառնան և զիրար փառավորեն»:

Վազգեն Հայրապետի բոլոր ճիգերը և հորդորները արձագանգ չեն գտնում մի քանի հոգևորականների և ժողովականների կողմից, որոնք պատգամավորական ժողովում մեծամասնութիւն կազմելով, հետևողականորեն ձգտում են քանդել համաձայնութիւն կամուրջները:

Ճարահատ, փետրվարի 20-ին Վեհափառ Հայրապետը մեկնում է Եգիպտոս, շարունակելու իր հովվապետական այցելութիւնը, տեսնելով, որ Անթիլիասի կաթողիկոսական ընտրութիւն խաղաղ և համերաշխ պայմաններ ստեղծելու բոլոր միջոցները սպառվել են:

Փետրվարի 20-ին, Վեհափառ Հայրապետի մեկնումից հետո, Անթիլիասի Վեհարանում միակողմանի ընտրութիւն է կատարվում Հալեպի առաջնորդ գերաշնորհ Տ. Զարեհ եպիսկոպոսի վրա:

Նույն օրն իսկ այս միակողմանի ընտրութիւն դեմ բուռն կերպով բողոքում են Սիրիայի և Լիբանանի մյուս պատգամավորները, Անթիլիասի միաբանութիւն մեծամասնութիւնը և ժողովուրդը:

1956 թվականի մարտի 5-ին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահութիւն տակ գումարված Կահիրեի Եպիսկոպոսական ժողովը իր երկրորդ նիստում, քննութիւն առնելով փետրվար 20-ի ընտրութիւն հարցը, միաձայն այն գտնում է «թերի և անընդունելի»:

Մարտի 7-ին, Եպիսկոպոսական ժողովը իր հինգերորդ նիստում Անթիլիասի ներկայացնում է մի Համաձայնագիր և Ովստագիր, փետրվար 20-ի ընտրութիւնն օրինական և ընդունելի դարձնելու համար:

Մարտի 10-ին Անթիլիասը մերժում է Եպիսկոպոսական ժողովի Համաձայնագիրը, առանց ներկայացնելու որևէ այլ առաջարկ ի խնդրի համերաշխութիւն և համաձայնութիւն:

1956 թվականի մայիսի 19-ին, երեք ու կես ամսվա ուղևորութիւնից հետո, Մայր

Աթոռ էր վերադառնում Վեհափառ Հայրապետը, խանդավառ և լավատես:

Այնուհետև էլ նորին Ս. Օծութիւնը շարունակում է մտահոգութիւնը հետևել Անթիլիասի տագնապին և դրանից բխող իրադարձութիւնների ընթացքին:

Անթիլիասում ներքին հակամարտութիւնները հետզհետե սրվում են և նորանոր բարդութիւններ են առաջ գալիս, խորացնելով երկփեղկումն ու պառակտումը Կիրիլիան միաբանութիւն և ժողովրդի ծոցում: Հետզհետե պարզ ու հստակ երևում է միակողմանի ընտրութիւն մեծ սխալը:

Վեհափառ Հայրապետը, հունիս 9 թվակիր հեռագրով, ուղղված տեղապահ Տ. Խորեն եպիսկոպոսին, Ս. էջմիածին է հրավիրում կողմերի ներկայացուցիչներին՝ հաշտութիւն և խաղաղութիւն համար:

Անթիլիասը նորից մերժում է Ս. էջմիածնից երկարած հաշտաբար, բարի ձեռքը:

Վեհափառ Հայրապետը հունիսի 22-ին մի երկրորդ հեռագիր ևս է հղում տեղապահին հորդորելով, որ շմերժվի «եղբայրական սիրո նրավերը, որ կուգա Հայաստանայց Եկեղեցվա Մայր Աթոռ Ս. էջմիածնէն»: Այս անգամ Անթիլիասը պատասխան իսկ չտվեց:

Շուտով Մայր Աթոռիս հայտնի դարձավ, թե Անթիլիասը կամենում է մի կերպ պաշտօնվել Զարեհ եպիսկոպոսի կաթողիկոսական օծումը, նույնիսկ ոտնահարելով եկեղեցական կարգ ու կանոնը և ավանդութիւնը: Օգոստոսի 30-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրաբար գաւրացնում էր Տ. Խորեն, Տ. Զարեհ և Տ. Ղևոնդ եպիսկոպոսներին՝ հեռու մնալ հակականոնական նոր արարքներ գործելուց և կոչ էր անում սրտից բխած անկեղծ հորդորներով՝ հետաձգել սեպտեմբեր 2-ի արարողութիւնը և խոստանում էր հայրապետական իր բարձր հեղինակութիւնն ի գործ դնել նոր ու գործնական առաջարկով, որպեսզի Կիրիլիոս կաթողիկոսի օծումը կատարվի կանոնական և համազգային համերաշխութիւն պայմաններում:

Հակառակ այս զգուշացումին և հայրապետական հորդորին, 1956 թվականի սեպտեմբերի 2-ին, Անթիլիասի Մայր Տաճարում, Տ. Զարեհ եպիսկոպոսի վրա կատարվեց հակականոնական մի արարողութիւն, մասնակցութիւնը միայն երկու հայ եպիսկոպոսների և հակոբիկյան առորի մի եպիսկոպոսի: Բնականաբար նման մի արարողութիւն հեռու էր կանոնական արժեք ունենալուց և աննախընթաց էր իր տեսակի և ձևի մեջ՝ մեր Եկեղեցու պատմութիւն. մեջ: 1956 թվականի սեպտեմբերի 2-ին, Անթիլիասում կատարված արարողութիւնը կարելի չէր Կաթողիկոսական օծում համարել, մասնավոր

որ այդ պահին կիրիկյան Աթոռից ներս կային հինգ եպիսկոպոսներ և Հայ Եկեղեցու ժոցում՝ մոտ երեսուն եպիսկոպոսներ:

Վեհափառ Հայրապետը, գերաշնորհ Տ. Խաղարքեպիսկոպոսին ուղղած իր սեպտեմբերի 8 թվակիր հեռագրով, արտահայտում էր իր խորունկ վիշտը և վրդովմունքը, դատապարտում էր եղածը որպես ոչ օրինավոր ձեռնադրություն և օծում և շեշտում էր, որ հայ ժողովուրդը և Հայաստանյայց Եկեղեցին երբեք չեն կարող նման արարողությունն ընդունելի գտնել, Հայ Եկեղեցու դարավոր օրենքների և ավանդությանց պայծառ լույսի տակ:

Սեպտեմբեր 2-ի արարքը դատապարտում էին նաև մեր նվիրապետական մյուս Աթոռները, եպիսկոպոսների դասը, ազգային-եկեղեցական մարմինները, մամուլը, որպես ոտնահարում եկեղեցական օրինաց և բմբոստացում Հայ Եկեղեցու բարձրագույն հեղինակության դեմ:

Միմիայն Հայ Եկեղեցու լրուսթյամբ, մեր նվիրապետական Աթոռների համաձայնությամբ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հեղինակությամբ կազմված մի բանաձևի հիման վրա կարևոր կիրիներ Զարեհ սրբազանի կաթողիկոսական օծման օրինականացումը:

Վեհափառ Հայրապետը, թեև սրտաբեկ բայց ոչ հուսահատ, 1957 թվականի փետրվար և ապրիլ ամիսներին, իր օրհնության հետ, պաշտոն էր հանձնում Կոստանդնուպոլսի պատրիարք Տ. Գարեգին արքեպիսկոպոսին և Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանին՝ որոնելու հաշտության նոր ուղիներ:

Այսպես չէին մտածում սակայն Անթիլիասում: Վեհափառ Հայրապետը հունիսի 13-ին նորից առաջարկում էր Գարեգին պատրիարքին՝ շուտահաստիքի և շարունակել հաշտության փորձերը:

Մինչ այդ, սեպտեմբերի 2-ից հետո, Անթիլիաս իր ձեռքերն էր երկարում դեպի հայ ժողովրդի նվիրական իրավունքները և Մայր Աթոռի պատմականորեն նվիրագործված իրավասությանց սահմանները:

1957 թվականի հոկտեմբերին, Մայր Աթոռում վրդովմունքով իմացվեց ԱՄՆ-ում Ամենայն Հայոց Հայրապետության ենթակա թեմերում եկեղեցական կանոնական իրավասությանց սահմաններից ներս Անթիլիասի ոտնձգությունների փորձի մասին:

Անթիլիասի Աթոռակալ Տ. Զարեհ եպիսկոպոսը, իր հոկտեմբեր 12 թվակիր գրությամբ, ուղղված Ամերիկահայ բաժանյալ Ազգային Կենտրոնական վարչության, առաջին հափշտակության փորձն էր կատարում:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, հոկտեմբերի 22-ին, Անթիլիասի Աթոռակալին ուղղած իր հեռագրի մեջ, իր վիշտն ու վրդովմունքն էր հայտնում «այս ոտնձգության և պատմականորեն ստեղծված կանոններու և իրավասությանց սահմաններու խախտման համար» և հայրաբար հորդորում էր «հետս կոչել այդ որոշումը, ի սեր Աստուծո և Ազգին»:

«Զայն բարբառոյ լանապատի» մնացին մի անգամ ևս այս հորդորները և կոչերը:

Այս մտածումների լույսի տակ, և ուշադիր բնեկով 1956 թվականի փետրվարյան օրերից մինչև 1957 թվականի դեկտեմբերը Անթիլիասի կողմից առնված հակաէջմիածնական քայլերի և որոշումների տակ թաքնված վտանգը, Վեհափառ Հայրապետը, պարտքի և պարտականության խոր գիտակցությամբ և առաջնորդված միայն ու միայն Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի գերագույն շահերից, իր 20 դեկտեմբեր 1957 թվակիր սրբատառ կոնդակով, Եկեղեցու և Ազգի առաջ «Աթոռոյ» դատապարտեց Տ. Զարեհ եպիսկոպոսին և նրա զործակիցներին, որոնք իրենց հակականոնական արարքներով էջմիածնապատկան թեմերի մեջ կատարած ոտնձգություններով պառակտում առաջացրին Հայ Եկեղեցու և ժողովրդի ժոցում:

Անթիլիասը, փոխանակ անդրադառնալու այս ծանր արարքին, ընդհակառակը, սկսեց նոր ոտնձգությունների իր արշավը:

1958 թվականի ապրիլի 23-ի գրությամբ, Անթիլիասը փորձում էր գրավել Թեհրանի թեմը, 1958 թվականի սեպտեմբերին՝ Փավլիգի թեմը, հոկտեմբերի 28 թվակիր գրությամբ՝ Նոր-Ջուղայի ու Սպահանի տերունի թեմը և նոյեմբերի 6-ին՝ հունահայ թեմը, հակառակ հայ հավատացյալ ժողովրդի և հոգևորականության կամքի:

Շատ հատկանշական և արձանագրելի, որ ոչ մի տեղ հայ եկեղեցիների բուն գրավումը, էջմիածնից բաժանումը և արհեստականորեն Անթիլիասին միացումը չի եղել հայ հավատացյալ ժողովրդի գիտության և հավանության, և համապատասխան որոշման տակ չի ստորագրել ոչ մի հայ հոգևորական:

1958 թվականի ապրիլի 24-ին, Վեհափառ Հայրապետը հեռագրով հորդորում էր Թեհրանի թեմական խորհրդին, որ Մայր Աթոռ չի կարող համաձայնվել նման անօրինական որոշման հետ, և ոչ մի պատգամավորական ժողով իրավասություն չունի հայ եկեղեցիների և ժողովրդի հոգևոր կապերը խզելու Ս. Էջմիածնից:

Սեպտեմբեր 1 թվակիր նամակով, Մայր Աթոռը, հակականոնական և շեղյալ համարելով Ատրպատականի թեմական խորհրդի

ւրշումը, գրում էր, որ Իրանի հայրապետական երեք տերունի թեմերն էլ, այդ թվում նաև Ատրպատականի թեմը իր եկեղեցիներով և հավատացյալ ժողովրդով, եղել են, կան և կմնան Մայր Աթոռի հոգևոր իշխանության ներքո, և կանոնական-իրավական տեսակետից ոչ մի մարմին իրավունք չունի հայ եկեղեցիներն ու հավատացյալները բաժանել նրանց դարավոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնից:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, Սպահանի հայոց թեմական խորհրդին գրած իր դեկտեմբեր 27 թվակիր նամակով, մի անգամ ևս քննության առնելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թեմերը հափշտակելու առթիվ Անթիլիասի ցուցմունքներով առաջ քաշված անհիմն ու ապօրինի որոշումները, գրում էր, որ «Պատգամավորական ժողովը չի արտահայտում Սպահանի թեմի հայ բարեպաշտ և հավատացյալ ժողովրդի կամքը: Այդ ժողովուրդը դարեր շարունակ կապված է եղել Ս. Էջմիածնի հետ, և ոչ ոք իրավունք չունի մեր ժողովրդի սրտից պոկելու դեպի Ս. Էջմիածնի տածած հավատի ու անսահման սերը»:

Ի պատիվ հայ հավատացյալ ժողովրդի, պիտի գոհունակություն մտաբերենք, որ Հայ Եկեղեցու միասնությունը քակտել փորձողներին չի հաջողվել հասնել մեծ արդյունքների, որովհետև հայ ժողովուրդը հոգևոր սիրում է իր Եկեղեցին և նրա դարավոր կենտրոն Ս. Էջմիածնը, մեր ժողովրդի կյանքի ոսկի խարիսխը, «Վէմն հաստատութեան, անշարժություն և սիւնն հրեղէն» (Ազաթանգեղոս):

Այս բոլորից հետո, միշտ հաշտություն որոնող ու լավատես, Ազգիս Վեհափառ Հայրապետը, 1960 թվականի ապրիլի 25-ին, իր սրբատառ կոնդակով, սիրո ողջույնով և հայրապետական օրհնության մուրհակի դիմում էր Անթիլիասի ներկա աթոռակալին, Անթիլիասի միաբանության և ամբողջ Հայ Եկեղեցիին, քաղցր հորդորով, համբարաշխության և միության բարի հրավերով:

Ապրիլ 25-ի կոնդակը Անթիլիասին ուղղված սիրո և միության նոր կոչ ու հրավեր էր: Վեհափառ Հայրապետը գրում էր.

«Կառաչարկենք, որ այս տարվան ընթացքին, հարմար թվականի մը, տեղի ունենա ժողով մը, Մայր Աթոռի պատվիրակներու և Կիլիկյան Աթոռի երկու կողմերու ներկայացուցիչներու միջև, հույժ փափագելի գտնելով նաև, որ մենք ևս անձնական հանդիպում մը ունենանք Տանն Կիլիկիո Սրբազան Աթոռակալին հետ, համապետումն մեր սիրո միության և ի շինութունն մեր Ս. Եկեղեցվոյ»:

Մինչ ապրիլ 25-ի կոնդակը գոհունակությամբ և լավատեսությամբ ընդունվեց բոլորի կողմից որպես ծանոթ տազնապի լուծման լավագույն միջոց, ճիշտ ժամանակին տրված, Անթիլիասը կրկին լուռ մնաց:

1960 թվականի հունիսին, երբ Վեհափառ Հայրապետը գտնվում էր Ամերիկայում, ապրիլ 25-ի կոնդակի հաշտության և սիրո ոգով տոգորված, զորավար Սարգիս Զարդարյանը, տխարք Տատուր Տատուրյանը և Հայկ Գալուստյանը, ինքնաբերաբար և առանց պաշտոնական հանգամանքների, որպես ազնիվ և սրտացավ հայորդիներ, հաշտության ձեռք երկարած Անթիլիաս գնացին և վերադարձան ձեռնունայն:

1962 թվականին, մայիսի 30-ին, Վեհափառ Հայրապետը սիրով ընդունում է և կարդում Հ. Բ. Ը. Միության Կենտրոնական Վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանի գրույթունը, որով հարգելի նախագահը անձնական նախաձեռնություն է հանդես բերում Անթիլիասի տազնապի լուծման համար, առաջարկելով իր ծառայությունը և խնդրելով, որ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը հանդիպում ունենա Անթիլիասի աթոռակալի հետ:

Պարոն Ալեքս Մանուկյանը իր նամակով գրում է, որ Անթիլիասի ամենապատիվ աթոռակալը պատրաստ է հանդիպելու նորին Ս. Օծուխյան և թե ինք թանձնապես անկեղծ փափագ ունի երկու Աթոռներու միջև գոյություն ունեցող անհամաձայնությունը վերջացած տեսնելու:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, հակառակ իր շատ հիմնավոր վերապահումների և մտավախությունների, առանց վարանման, ընդունեց պր. Ալեքս Մանուկյանի առաջարկը և հունիս 30-ին հեռագրեց նրան այսպես.

«Հանուն Եկեղեցու և Ազգի գերագույն շահերի, ընդառաջելով Ձեր մայիս 30 թվակիր նամակին, Մեր համաձայնությունն ենք հայտնում հանդիպում ունենալու Անթիլիասի Աթոռակալ Զարեհ Մեր Եղբոր հետ, հուլիսի 25—31-ին, ժրնև քաղաքում»:

Սակայն պր. Ալեքս Մանուկյանի հուլիս 11 թվակիր հեռագիրը եկավ նոր հուսախաբություն պատճառելու, վասնզի Անթիլիասի աթոռակալը իր միտքը փոխել էր:

Վեհափառ Հայրապետը հաշտության համար երեք պայմաններ չի դրել: Մայր Աթոռը սպասում է, որ Անթիլիասի Աթոռը հարգի Հայ Եկեղեցու Ս. Էջմիածնով գլխավորվող միության դարավոր կանոնը, հարգի Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների պատմական իրավասությանց սահմանների կանոնը, և եղբայրորեն ընդունի միաբանության շարքերից բռնությամբ արտաքսված հոգևորականներին:

նկատի առնելով, որ Ս. էջմիածնում Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը և Սրբալույս Մեռոնի օրհնությունը լավագույն առիթներ են մերձեցման և մեր Եկեղեցու ներքին միության ամրապնդման, մեր խաղաղասեր վեհափառ Հայրապետի հրամանով, Գերագույն Հոգևոր Խորհուրդը պաշտոնական հրավեր ուղղեց Անթիլիասի Կաթողիկոսական Աթոռին, մասնակցելու այս սրբագումար ժողովին և մեռոնօրհնության արարողության:

Սլ սակայն, փոխանակ Անթիլիասից եղբայրական սիրո խոսք լսելու, աթոռակալ Տ. Զարեհ սրբազանը, իր իսկ ստորագրությամբ, իր Աթոռի պաշտոնաթերթ «Հասկ»-ում, օգոստոս 12 թվակիր իր «Խոսք»-ն էր հրապարակում ուղղյալ հայ ժողովրդին, որով փորձում էր ապօրեն համարել Հայաստանյայց Եկեղեցու սույն Ազգային-եկեղեցական ժողովը:

Ահա ուրիշ մի նոր բարդություն ևս մեր Եկեղեցու ճանապարհի վրա, անշուշտ միտումնավոր կերպով ստեղծված, որի նպատակն է առավել սրել Մայր Աթոռի և Անթիլիասի հարաբերությունները: Տե՛ր Աստված, ինչո՞ւ համար:

Թեև պարզապես պետք է անլուրջ համարել Տ. Զարեհ սրբազանի այս «Խոսք»-ը և անվրդով առաջ անցնել, սակայն պարտինք այստեղ արձանագրել այս փաստաթուղթը ևս, որպիս Անթիլիասի և նրա աթոռակալի կողմից մի նոր ոչ-բարեկամական վերաբերմունք դեպի Ամենայն Հայոց Ս. էջմիածինը: Ակներև է, որ իրապես Տ. Զարեհ սրբազան մեր եղբայրը չէ այդ «Խոսք»-ի ո՛չ հեղինակը և ո՛չ էլ խմբագրողը:

Պատկառելի ժողովիդ բոլոր անդամների և բովանդակ հայ ժողովրդի խոհերի և ցանկությունների արտահայտիչն ու թարգմանը լինելով, մենք այս բարձր ամբիոնից, հանուն վեհափառ Հայրապետի և Գերագույն Հոգևոր Խորհրդի, ամենայն անկեղծությամբ պետք է հայտարարենք, որ սիրո և միության այսքան հորդորներից և հաշտության ջանքերից հետո, պետք է նոր ուղիներ որոնել՝ առաջն առնելու համար եկեղեցական այս տաճնապի, Հայ Եկեղեցու ժոցում վերահաստատելով ներքին խաղաղություն և շինարար աշխատանք:

Այսօր մեր նվիրապետական Աթոռները միացնող հարցերը և սկզբունքները ավելի հրատապ են, կենսական ու առաջնահերթ, քան մեզ բաժանել փորձող երկրորդական խնդիրները:

Մեր բոլորի բարի ցանկությունն է, որ Անթիլիասի տաճնապը լուծվի պատվավոր կերպով, գործնական միջոցների առաջարկությամբ:

Ժամանակն է, որ մի կողմ թողնենք մեր ժողովրդի հոգևոր, ազգային միությունը քանդել փորձող վնասաբեր ձգտումները և սիրո ամրապինդ կապերով վերահաստատենք Հայ Եկեղեցու միասնականությունը:

Ամենայն Հայոց Հայրապետությունը մեր նվիրապետական մյուս Աթոռների հանդեպ ունեցել է միշտ քրիստոնեական լայնախոհ ոգի, պարտքի և պարտականությունների փոխադարձ ըմբռնումով:

Միասնականություն անվան տակ միապետությունը խորթ է եղել ընդհանրապես ամենայն Հայոց հայրապետներին, ըստ Առաքելական պատվերի՝ «Մի՛ իբրև տիրելով վիճակացն, այլ օրինակ լինել հօտին» (Ա Պետր. Գ 3):

Մայր Աթոռի և մեր նվիրապետական մյուս Աթոռների, թեմերի միջև հոգևոր հաղորդակցություն, անկեղծ և շինարար համագործակցություն. ահա՛ օրվա հրամայականը, հօգուտ Հայ Եկեղեցու և ի շահ մեր ժողովրդի:

Ո՛չ մեկ պայքար ո՛չ ոքի դեմ: Ա՛յդ է պահանջում մեզանից մեր ժողովուրդը: «Ահա օր վրկուրեան» (Բ Կորնթ. Զ 2):

«Թող իմաստությունը լույսը և ավետարանական սերն ու խաղաղությունը իջնեն մեր բոլորիս վրա և առջևդրեն մեզ», — պատգամում է Ազգիս սիրելի Հայրապետը իր 25 ապրիլ 1960 թվականի սրբատառ կոնդակում, — «որպեսզի ձեռք-ձեռքի աված, խաղաղությամբ ընենք մեր Աղոթքի տունին մեջ և լծվինք ազգաշեն գործի»:

Կսենք և կենսագործենք հայրապետական այս պատգամը:

Ահա այն ամենը, ինչ որ կցանկանար ասել Գերագույն Հոգևոր Խորհուրդը Ազգային-եկեղեցական ժողովին, համրապնդումն Հայ Եկեղեցու միասնություն:

Այժմ խոսքը սրբագումար այս ժողովինն է:





**ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՋ**

(Կարգացված 1962 թվականի Ազգային-եկեղեցական ժողովի Բ նիստում, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պրոֆ.-դոկտ. Ա. Առաքելյանի կողմից)

Մայր Աթոռ Ս. էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգում դրված կարևոր հարցերից մեկն է «Հայ Եկեղեցու Կանոնագրքի կազմության» խնդիրը: Վեհափառ Հայրապետի բարեհաճ արտոնություններ և Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումով, այդ օրակարգի մասին զեկուցելու պատիվը ինձ է վիճակված:

1917 թվականին Պոլոժենիայի դադարումից հետո, երջանկահիշատակ Գևորգ Ե կաթողիկոսը ապրիլի 7-ին, № 678 հայրապետական կոնդակով վերահաստատում էր ընտրական թեմական պատգամավորական ժողովների և թեմական խորհուրդների, վերականգնում եկեղեցական բոլոր պաշտոնյաների ժողովրդական ընտրական սկզբունքը, կանանց ևս շնորհելով այդ մարդու հավասար ընտրական իրավունք:

1923 թվականի հուլիսին Մայր Աթոռում Ամենայն Հայոց Հայրապետի նախագահության տակ հաստատվում էր «Հայաստանյայց Եկեղեցու բարեկարգության կենտրոնական հանձնաժողով», որը մշակելու էր և արտասահման ուղարկելու հարցարանի ձևով բարեկարգության վերաբերյալ խնդիրները, ինչպիսիք էին, օրինակ, Ժամագրքի, Մաշտոցի, Տոնացույցի կրճատում և բարեփոխում, ինչպես նաև Հայ Եկեղեցու ընդհանուր Սահմանադրության մշակում:

Հանձնաժողովը կատարել է իր պարտականությունը:

1932 թվականին Մայր Աթոռում գումարված Ազգային-եկեղեցական ժողովը պարտականություն էր դնում նորընտիր Գերագույն Հոգևոր Խորհրդի վրա՝ զբաղվել Հայ Եկեղեցու բարեկարգության հարցով և նախագիծ կազմելով ուղարկել մեր բոլոր թեմերին ի քննություն:

1937 թվականին, օգոստոս 1-ի սրբատառ կոնդակով երջանկահիշատակ Խորեն Ա կաթողիկոսը մեր նվիրապետական Աթոռներին և թեմերին էր ուղարկում Գերագույն Հոգևոր Խորհրդի կազմած հետաքրքիր և բովանդակալից զեկուցագիրը, ուր խոսվում էր նաև Եկեղեցական Սահմանադրություն կազմելու անհրաժեշտության վրա:

Գերագույն Հոգևոր Խորհրդի զեկուցագիրը Հայ Եկեղեցու բարեկարգության մասին տրվում էր Երուսաղեմի հայոց Պատրիարքության պաշտոնաթերթ «Սիոն» ամսագրի 1937 թվականի հոկտեմբերի համարում:

Երուսաղեմի պատրիարք լուսահոգի ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը «Սիոն» ամսագրի հաջորդական մի քանի համարներում իր գրած բովանդակալից խմբագրականների մեջ անդրադառնում էր Գերագույն Հոգևոր Խորհրդի առաջ քաշած հարցերին:

Մինչև 1945 թվականը Եկեղեցական Սահմանադրություն կազմելու խնդրով զբաղվել է աև հայ մամուլը:

Եկեղեցական Սահմանադրության մի նաադիծ առաջին անգամ ներկայացված է 1945 թվականին Ս. Էջմիածնում գումարված Ազային-եկեղեցական ժողովին:

Համազգային սրբազումար ժողովը իր երորդ նիստում հունիսի 19-ին քննության է ստնում այդ հարցը:

Ժողովում կարդացվում է նախագահության առենապետության կողմից նախօրոք սըրբաված Հայ Եկեղեցական Սահմանադրության նախագիծը, որից հետո ժողովը միաայն ընդունում է նորընտիր Հայրապետ Տ. Տ. Էտրոզ Զ Կաթողիկոսի հետևյալ առաջարկը.

«Նկատի ունենալով, որ Սահմանադրության մեջ արծարծված միասնականության աղափարը, ինչպես նաև Կիլիկիո Կաթողիոսական Աթոռի և Պատրիարքական զույգ Աթոռների փոխհարաբերությունները ենթարկված են հոգևորականների նախապատրասական ժողովի քննության և որոշ համաձայություն է գոյացած, այլև նկատի ունենալով, որ միասնականության գաղափարը նոր է անդես բերված և Աթոռների փոխհարաբերությունները դարձած են իրավականի, որ աա դժվարին գործ է, ինչպես նաև նկատի ստնելով, որ ներկա նախագիծը վերջնական նույթ չունի, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ղեկավարով պիտի առաջարկվի խմբագրված Սահմանադրության գործադրությունը ժամանակավորապես և գործնական բովից անցելի հետո, հաջորդ Ազգային-եկեղեցական ժողովի կողմից վերջնականապես պիտի սմբագրվի և հաստատվի, ուստի կառաջարկվի ներկա նախագիծն ընդունել անփոփոխ»:

Ազգային-եկեղեցական ժողովը միաժամանակ պարտականություն է դնում նորչնորի Գերագույն Հոգևոր հորհրդի վրա՝ վեուաճակել ներկայացված նախագիծը և մեր նվիրապետական Աթոռների, թեմերի թելադրություններն ու դիտողությունները լսելուց հետո, ամբողջական ու վերջնական ձևով ներկայացնել հաջորդ Ազգային-եկեղեցական ժողովին:

Երջանկահիշատակ Գեորգ Զ Կաթողիկոսը և Գերագույն Հոգևոր հորհրդը դժբախտաբար են կարողանում զբաղվել Եկեղեցական Սահմանադրության նախագծի վերջնական կազմության խնդրով:

1955 թվականին, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա նորընտիր Հայրապետի նախագահությամբ Ս. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովը, հոկտեմբերի 5-ին, իր երրորդ նիստում զբաղվում է նորից Սահմանադրության հարցով:

Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ հոգեշնորհ Տ. Սերովբե ծայրագույն վարդապետ Մանուկյանը ժողովում զեկուցում է Սահմանադրության վերամշակման արդյունքների մասին:

Զեկուցման մեջ նշվում է, որ Ազգային-եկեղեցական ժողովի գումարումից առաջ, Մայր Աթոռում կազմվել էր հինգ եպիսկոպոսներից բաղկացած մի հանձնաժողով, Սահմանադրության հարցով զբաղվելու և ժողովում զեկուցելու համար:

Եպիսկոպոսական հանձնաժողովը ուսումնասիրում է ներկայացված Սահմանադրության նախագիծը, կատարում է գաղափարների և կարծիքների փոխանակություն և միաձայն հետևյալ եզրակացություն է արձանագրում.

«Սահմանադրության ծրագիրը թեև լուրջ կերպով ուսումնասիրված է, սակայն այն չի գոհացնում արտասահմանյան թեմերի պահանջներն ու պայմանները. դրա համար առաջարկվում է, որ այն հանձնվի նոր կազմվելիք Գերագույն Հոգևոր հորհրդին, որպեսզի վերջինս ալելի լայն կերպով ուսումնասիրելուց հետո, բերի Ազգային-եկեղեցական ժողովին ի վավերացում»:

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա նորընտիր Հայրապետը, իր ընտրությունից հետո, անձամբ զբաղվեց Եկեղեցական Սահմանադրության նախագծի վերամշակման հարցով և այդ մասին անդրադարձավ Կահիրեի Եպիսկոպոսական ժողովում:

Կահիրեի Եպիսկոպոսական ժողովը, տրամաբանական և օրինավոր գտնելով Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի թելադրությունը, միաձայնությամբ որոշեց կազմել Եկեղեցական Սահմանադրության մեջ զբաղվող բարձրատիճան հոգևորականների մի հատուկ մարմին, որն իր եզրակացությունը պետք է ներկայացնեի Գերագույն Հոգևոր հորհրդին, որպեսզի վերջինս էլ այն «վերանկատառության ենթարկելի հետո հղե թեմերը, անոնցմե այլ նկատողություններ ստանալե ետք՝ տա մեր Սահմանադրության նախագծին իր վերջնական ձևը»:

Կազմված հանձնախմբի մեջ մտնում էին, Երուսաղեմի Պատրիարքական տեղապահ Տ. Եղիշե արքեպիսկոպոսի նախագահությամբ, Տ. Տիրան արքեպիսկոպոսը, Տ. Նորայր և Տ. Դերենեիկ եպիսկոպոսները: Հանձնախումբը իրեն հանձնարարված աշխատանքը չկարողացավ կատարել: Տ. Նորայր և Տ. Դերենեիկ սրբազանները, սակայն, առանձինառանձին կազմել էին մի նախագիծ և այն ուղարկել Մայր Աթոռ Ս. Էջմիածին 1957 թվականին:

Կազմվող Եկեղեցական Սահմանադրության կապակցությամբ Կահիրեի Եպիսկոպոսական ժողովում որոշվեց.

1. Նոր կազմվող Եկեղեցական Սահմանադրության մեջ նկատի առնել Եպիսկոպոսական ժողովի գոյությունը, համաձայն 1955 թվականի Ազգային-եկեղեցական ժողովի որոշման:

2. Եկեղեցական Սահմանադրությունը պետք է ունենա հատուկ կարգավորություն, որտեղ որոշ կերպով ճշտորոշված լինեն Գերագույն Հոգևոր Խորհրդի, Եպիսկոպոսական ժողովի, Ազգային-եկեղեցական ժողովի իրավասությունները և ստեղծվեն օրինական, առարկայական պայմաններ, առաջին առնելու համար այնպիսի անպատեհությունների, որոնք հաճախ սպառնում են եղծել, խաթարել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու իսկական դիմագիծը և ազգային-եկեղեցական միասնությունը:

3. Եկեղեցական Սահմանադրության մեջ պետք է ընդգրկվի իր ամբողջության մեջ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, իր բոլոր նվիրապետական Աթոռներով, և ճշտորոշվեն նվիրապետական Աթոռների իրավասության և փոխհարաբերության սահմանները:

Վեհափառ Հայրապետը, հիմք ունենալով այս աղբյուրները և միաժամանակ նկատի առնելով 1945, 1955 թվականների և Տ. Նորայր ու Տ. Դերենիկ եպիսկոպոսների նախագծերը, ինչպես և ժամանակի ոգին ու պահանջները, Գերագույն Հոգևոր Խորհրդի հետ կազմել է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Սահմանադրության նախագիծը, որ վերաքննվելով 1958 թվականի հոկտեմբերին Ս. Էջմիածնում գումարված Եպիսկոպոսական ժողովի կողմից, ստացավ իր այժմյան ձևը:

Սահմանադրության նախագիծը բաղկանում է 11 գլուխներից և 135 հոդվածներից:

Մշակված Սահմանադրության նախագծի մեջ մտնում են հետևյալ գլուխները.

- 1. Հիմնական սկզբունքներ, § § 1—14.
- 2. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետությունը, § § 15—17.
- 3. Ազգային-եկեղեցական ժողով, § § 18—46.
- 4. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, § § 47—55.
- 5. Գերագույն Հոգևոր Խորհուրդ, § § 56—65.
- 6. Եպիսկոպոսական ժողով, § § 66—70.
- 7. Մայր Աթոռի միաբանություն, § § 71—75.
- 8. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետության մասնավոր Աթոռները.
 - ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն, § § 76—87.

բ. Սուրբ Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն, § § 88—96.

գ. Թուրքիայի Հայոց Պատրիարքություն, § § 97—103.

դ. Թեմական առաջնորդություններ, եպիսկոպոսական Աթոռներ, § § 104—118.

ե. Հոգևոր հովիտություններ, § § 119—120.

զ. Վանորայք, § § 121—123.

9. Եկեղեցիների եկամուտներ, § § 124—126.

10. Ընտրական իրավունք և ընդհանուր տրամադրություններ, § § 127—133.

11. Սահմանադրության վերանայում, § § 134—135:

Սահմանադրության նախագիծը, իր ընդհանուր գծերի մեջ, Եկեղեցական Սահմանադրության օրենքները գծող մի կանոնադրություն է, որն ընդգրկում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետական ամբողջ մարմինը և որտեղ ժողովրդավարական սկզբունքների վրա, և միաժամանակ մեր դարավոր Եկեղեցու հոգևոր ավանդների, կանոնների լույսի տակ և ազգային ոգու պահպանմամբ, ճշտորոշված են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետական Աթոռների իրավասությունը սահմանները, յուրաքանչյուրի որոշ տեղը, դիրքը, հեղինակությունը, պարտականությունների շրջանակը:

«Էջմիածին» ամսագրի 1958 թվականի դեկտեմբերի համարում, Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ, հրատարակվեց Մայր Աթոռում կազմված Եկեղեցական Սահմանադրության նախագիծը, համաժողովրդական լայն քննարկման ենթարկվելու համար:

Եկեղեցական Սահմանադրության նախագծի քննարկումը Մայր Աթոռում տեղի ունեցավ Վեհափառ Հայրապետի օրհնությունը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի հրավերով, 1959 թվականի ապրիլ ամսի 11—13 օրերին: Մայր Աթոռում գումարվեց Հայաստանի և Սովետական Միության ներքին թեմերի եկեղեցական և աշխարհական ներկայացուցիչների խորհրդակցական համագումարը:

Շաբաթ, ապրիլի 11-ին, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր ճեմարանի գրադարանի մեծ ընթերցասրահում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, բացվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Սահմանադրության նախագծի քննարկման համար Մայր Աթոռում հրավիրված ներքին թեմերի ներկայացուցիչների խորհրդակցական համագումարը:

Համագումարի առաջին նիստը բացվեց Վեհափառ Հայրապետի արտասանած Տերունական աղոթքով:

վեհափառ Հայրապետը, իր ողջունի սրտա-
ին խոսքն ուղղելով պատգամավորներին,
ասաց.

«Մենք հարմար եկատեցինք Ազգային-ե-
կեղեցական ժողովեն առաջ, հրավիրել Մայր
Էրոտի մեջ խորհրդակցական բնույթի այս
լավափույթը, միասին ֆենեյու և մեր խոսքը
սեյու Սահմանադրության ետխագծի մասին,
ը, ինչպես գիտեք, 4—5 ամիսներ առաջ
ոպված է «էջմիածին» ամսագրի դեկտեմբե-
րի համարին մեջ և կենթարկվի ժողովրդա-
կան ֆենարկման:

Հարգելի՛ ներկայացուցիչներ. այս ժողովը
ունի մեկ օրակարգ միայն, այն է Սահմանա-
դրության ետխագծի ֆենարկումը: Հայ Եկե-
ղեցին վաղուց չէ ունեցած իր ներքին Կանո-
նադրությունը կազմակերպչական իմաստով,
որով դեկավարվեին մեր Եկեղեցիի բոլոր Ա-
բողները, բոլոր քեմերը: Մեր Եկեղեցիի վե-
րաշինության այս օրերուն, շատ կարևոր դիր
ունի կատարելիք Եկեղեցական Սահմանա-
դրությունը, եթե հաջողիք 1960 թվականի
աշնան Ազգային-եկեղեցական սրբագումար
ժողովի գումարումով հաստատել զայն և
գործադրության դնել: Անով պիտի ամրա-
պնդենք մեր ներքին միությունը»:

Այնուհետև Եկեղեցական Սահմանադրու-
թյան նախագիծը քննարկող ներքին թեմերի
ներկայացուցիչների խորհրդակցական հա-
մագումարը, որին մասնակցում էին 45 պատ-
գամավորներ, շորս հաջորդական նիստերի
մեջ գլուխ առ գլուխ և հողված առ հողված
քննարկում է նախագիծը, մի շարք նոր առա-
ջարկություններ և դիտողություններ անելով:
Ապրիլի 13-ին, իր շորրորդ և վերջին նիս-
տում, համագումարը միաձայն ընդունում է
հետևյալ բանաձև-որոշումը.

«Վեհափառ Հայրապետի բարեհաճ արտո-
նությամբ և Մայր Աթոռ Ս. էջմիածնի Գերա-
զույն Հոգևոր Խորհրդի հրավերով, 1959 թվա-
կանի ապրիլի 11—13 օրերին, Մայր Աթոռում
գումարված ներքին թեմերի ներկայացուցչա-
կան համագումարը, իր հաջորդական շորս

նիստերի մեջ, հանգամանորեն քննության ա-
ռավ Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից
պատրաստված և ժողովին ներկայացված
Սահմանադրության նախագիծը, որը բաղկա-
նում է 11 գլուխներից և 135 հողվածներից:

Այս առթիվ ներքին թեմերի ներկայացուց-
չական համագումարը միաձայն որոշում է.

1. Իր որդիական սերն ու հավատարմու-
թյունը, շնորհակալությունն ու երախտագի-
տությունը հայտնել նորին Ս. Օծություն Տ. Տ.
Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝
Սահմանադրության նախագծի պատրաստու-
թյան և ժողովրդական քննարկման ենթար-
կելու համար:

2. Հավանություն տալ ներկայացված Սահ-
մանադրության նախագծին:

3. Խնդրել նորին Ս. Օծության՝ նկատի առ-
նել ներքին թեմերի ներկայացուցիչների հա-
մագումարի առաջարկություններն ու հավե-
րումները և հրահանգել Գերագույն Հոգևոր
Խորհրդին՝ համապատասխան լրացումներ
մտցնել նախագծի վերջնական խմբագրու-
թյան մեջ»:


Արտասահմանի մամուլում ևս հրատարակ-
վում է նախագիծը, նույնիսկ թարգմանվելով
օտար լեզուների:

Նույն օրերին արտասահմանի հայ թեմե-
րում ևս կատարվում էր Սահմանադրության
քննարկումը:

Մայր Աթոռում պահվում են Սփյուռքի թե-
մերի կողմից Սահմանադրության նախագծի
վերաբերյալ նոր առաջարկներ, թեկադրու-
թյուններ ու դիտողություններ, որոնք պետք է
նկատի առնվեն Սահմանադրության նախա-
գծի վերջնական խմբագրության մեջ:

Ահա այն ամենը ինչ կարելի էր ասել Եկե-
ղեցական Սահմանադրության կամ Կանոնա-
բքի նախագծի կազմության մասին:

Մնում է, որ Ազգային-եկեղեցական ժողո-
վը իր խոսքն ասի կատարված աշխատանք-
ների մասին և իր վերաբերմունքը ճշտի Եկե-
ղեցական Սահմանադրության նախագծի մա-
սին:





**ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ
ՄԱՅՐ ԱԹՈՒՒ ՅՈԹՆԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ**

(Կարգացված 1962 թվականի Ազգային-եկեղեցական ժողովի Դ նիստում,
Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ դոցենտ Ա. Տիրացյանի կողմից)

Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգի հարցերից մեկն է Մայր Աթոռի տնտեսաֆինանսական յոթնամյա գործունեության հաշվետվությունը:

Վեհափառ Հայրապետի բարեհաճ արտոնությունները և Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումով, այդ օրակարգի մասին Ազգային-եկեղեցական պատկանելի այս ժողովի առաջ զեկուցելու պարտականությունը ինձ է վիճակված:

Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին իսկ օրից, Նորին Ս. Օծուխյան անմիջական հսկողության տակ և թելադրություններով վերականգնակերպվեցին, ինչպես Մայր Աթոռի, նույնպես և ներքին թեմերի տնտեսաֆինանսական բաժինները:

Մայր Աթոռի և ներքին թեմերի տնտեսաֆինանսական գործերի ճշգրիտ և պլանաչափ կազմակերպումը տվեց իր լավ արդյունքները:

Վեհափառ Հայրապետի օրով զգալի շափով աճեցին Մայր Աթոռի և ներքին թեմերի եկեղեցական եկամուտները: Բավական է հիշել մի քանի թվեր միայն: Այսպես, 1954 թվականին Մայր Աթոռի բրուտո եկամուտները կազմում են՝

	Ռուբլի
Նոր դրամանիշերի վերածած	113,600
1955 թվականին	125,000
մինչդեռ 1956 թվականին	180,900
իսկ 1958 թվականին	313,000
որով-7 տարիների միջինը կազմել է տարեկան	220,000

Ազգային-եկեղեցական ժողովին ներկայացվող Մայր Աթոռի սույն յոթնամյա հաշվետվությունը ընդգրկում է 1956—1962 ժամանակաշրջանը:

Վեհափառ Հայրապետի հրամանով, 1955 թվականից սահմանված կարգի համաձայն, յուրաքանչյուր տարվա սկզբին կազմվում է նախահաշիվ ինչպես եկամուտների, նույնպես և ծախսերի գծով, որը հանդիսանում է ուղեցույց և որով ղեկավարվում է Մայր Աթոռի ֆինանսական բաժինը տարվա ընթացքում: Յուրաքանչյուր տարվա վերջին կազմվում է փաստորեն իրացված եկամուտների և փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը: Ներկա հաշվետվությունը հանդիսանում է այդ տարեկան հաշվետվությունների ամփոփումը: 1962 թվականի համար ընդունվել են նախահաշիվի տվյալները որպես սպասվող կատարողական:

Ազգային-եկեղեցական ժողովից ներկայացվող Մայր Աթոռի սույն յոթնամյա հաշվետվությունը բաժանվում է երկու մասի՝ 1. եկամուտներ և 2. ծախսեր:

1. Եկամուտներ.— Մայր Աթոռը հաշվետու ժամանակաշրջանում ունեցել է՝

	Ռուբլի
Եկամուտներ ընդամենը	3,903,800
այդ թվում՝	
ա. Սովորական (ընթացիկ) եկամուտներ	1,531,400
բ. Արտակարգ (բացառիկ) եկամուտներ	62,300
գ. Արտասահմանից եկամուտներ 2,310,100	

Սովորական եկամուտները կազմված են.
 1. Մումավաճառութիւնից և եկեղեցական
 Կիսակատարութիւններից ստացված գու-
 արներից:

2. Գանձանակներից և կամավոր նվերնե-
 րից:

3. Լույս ընծայվող գրականութիւն վաճառ-
 քից:

Սովորական եկամուտները յոթնամյա ժա-
 մանակաշրջանում կազմել են՝

	Ռուբլի
Մայր Տաճարից և Հայաստան- յան թեմերից	1,180,800
Սովետական Միութիւն մյուս թեմերից	228,000
Գրականութիւն վաճառքից և այլ մուտքերից	122,600
Արտասահմանյան թեմերի եկամուտները՝ 2,310,100 ռուբլի, կազմված են հիմնականում արտասահմանից ստացված ապրանքների ի- րացումից, որոշ քանակութիւնք ստացված շինանյութերի (թիթեղ, ներկեր, սալիկներ և այլն) և Հոգևոր ճեմարանի համար ստացված զգեստների և գրենական պիտույքների ար- ժեքից:	

2. Մախսեր. — Մայր Աթոռը հաշվետու յոթ-
նամյա ժամանակաշրջանում ունեցել է՝

Մախսեր, ընդամենը	3,663,800
որը բաժանվում է երկու հիմնա- կան մասերի՝	

1. Ընթացիկ (սովորական)
 ծախսեր

2. Եինարարական-վերանո-
 րոգման ծախսեր

Ընթացիկ ծախսերը բաժան-
 վում են չորս գումարների.

1. Մայր Աթոռի ծախսեր

2. Հոգևոր ճեմարանի ծախսեր

3. Հրատարակութիւնների հա-
 մար կատարված ծախսեր

4. Այլ ծախսեր (օժանդակ
 տնտեսութիւն պահպանման, զա-
 նազան կորուստների, նախորդ
 տարիների հաշվին վճարված և
 այլն)

Մայր Աթոռի ծախսեր. — Հաշվետու յոթ-
 նամյա ժամանակաշրջանում Մայր Աթոռի
 ծախսերը եղել են.

	Ռուբլի
ա. Աշխատավարձ	726,200
(Մայր Աթոռում աշխատում են (չհաշված Հոգևոր ճեմարանը և «Էջմիածին» ամսագրի խմբագրութիւնը) միաբաններ՝ 12 հոգի, գրասենյակային պաշտոնյաներ՝ 10 հոգի, բանվորներ, պահակներ, ծառայողներ՝ 30 հո- գի, ավտովարորդներ 10 հոգի, արհեստանոց-	

ների աշխատողներ (դերձակներ, դարբիններ,
 ատաղձագործներ, արծաթագործ), Մայր Տա-
 ճարի երգեցիկ խումբ՝ 32 հոգի):

բ. Փոխադրութիւն (բենզին,
 յուղ, ավտոմասեր, նորոգութիւն-
 ներ և փոխադրումներ)

գ. Վառելիք, լուսավորութիւն,
 ջուր, ապահովագրութիւն և այլն

դ. Վարչական-դիվանական,
 փոստ-հեռագրական ծախսեր,
 նպաստներ, օժանդակութիւններ

ե. Ընթացիկ նորոգութիւններ և
 բարեկարգման աշխատանքներ

զ. Արտասահմանյան հյուրերի
 ընդունելութիւն, հուշանվերներ,
 շքանշաններ և այլ բացառիկ ծախ-
 սեր

է. Միաբանութիւն սնունդ և
 հանդերձանք (15—20 հոգի)

ը. Մայր Տաճարի ներքին ծախ-
 սեր (խունկ, ձեթ, մում, ավել, օ-
 ճառ և այլն)

թ. Ընդունելութիւններ և հյու-
 բարկութիւններ Մայր Աթոռում

ժ. Գուլքի ձեռք բերում (հիմնա-
 կանում նոր վեհարանի համար
 գորգեր, ջահեր և այլն)

ժա. Այլ ծախսեր

Ընդամենը՝ 1 760,600

Հոգևոր ճեմարանի ծախսեր.

ա. Աշխատավարձ դասախոսա-
 կան կազմի (12 աշխարհական ու-
 սուցիչներ)

բ. Աշխատավարձ ծառայողների
 Ապահովագրութիւն տոկոսներ

գ. Սնունդ 30 հոգու

դ. Հանդերձանք 30 հոգու

ե. Մշակութային-կենցաղային
 ծախսեր

զ. Գրենական պիտույքներ, գրքեր

է. Վառելիք, լվացք և այլն

ը. Այլ մանր ծախսեր (առօրյա)

թ. Ընթացիկ նորոգութիւններ

ժ. Նոր գուլքի ձեռքբերում

ժա. Գրադարան

Ընդամենը՝ 406,200

Հրատարակչութիւն

ա. «Էջմիածին» ամսագիր

բ. Օրացույց

գ. Այլ հրատարակութիւններ

Ընդամենը՝ 231,600

Շինարարական աշխատանքներ.

Մինչև 1956 թվականը, բացառությամբ Մայր Տաճարի 1955 թվականի պետության կողմից կատարված վերանորոգման, Մայր Աթոռում հիմնական վերանորոգման աշխատանքներ չեն կատարվել:

Վեհափառ Վազգեն Ա Կաթողիկոսի բուհակալությունից հետո, նրա ձեռնարկումների շնորհիվ, արտասահմանից ստացվեցին միջոցներ, որոնցով հնարավոր եղավ մեծ ծավալով շինարարական վերանորոգման աշխատանքներ կատարել: Հաշվետու յոթնամյա ժամանակաշրջանում շինարարական վերանորոգման աշխատանքների վրա կատարված ծախսերը կազմել են 1,217,800 ուրվի:

այդ թվում ըստ տարիների՝

	Ռուբլի
1956 թվին	5,500
1957 թվին	128,900
1958 թվին	133,800
1959 թվին	193,100
1960 թվին	247,700
1961 թվին	222,900
1962 թվին	285,900

Ընդամենը՝ 1,217,800

Ըստ վերոհիշյալ տվյալների, 7 տարում Մայր Աթոռի ընդհանուր եկամուտները կազմել են 3,903,800 ուրվի, իսկ ընդհանուր ծախսերը՝ 3,663,800 ուրվի, որով առ 1-ը հունվարի 1963 թվականի Մայր Աթոռը ունենալու է շօգտագործված միջոցներ՝ 240,000 ուրվի, որից կանխիկ դրամ դրամարկղում՝ 100,000 ուրվի և ապրանքներ ու շինանյութեր պահեստներում՝ 140,000 ուրվի:

Սրանք են, սեղմ գծերով, Մայր Աթոռի յոթնամյա ֆինանսական գործունեության տվյալները:

Մայր Աթոռի ֆինանսական գործունեության արդյունավետությունը արդյունքն է առաջին հերթին Վեհափառ Հայրապետի գա-

հակալությունից հետո նորին Ս. Օծուխյան կողմից մտցված կարգ ու կանոնի և հաստատված հետողական հսկողության և ծախսերի նկատմամբ խնայողության ուժեղացում: Այսպիսով Մայր Աթոռի յուրաքանչյուր կուպեկը ճշտորեն ծառայում է իր սուրբ նպատակին:


Տնտեսա-ֆինանսական գործերի բարվոք ընթացքը արդյունքն է նաև Մայր Աթոռի տնտեսական և հաշվապահության բաժինների վարիչների բարեխիղճ ու ազնիվ աշխատանքի, ինչպես նաև Վերստուգիչ հանձնաժողովի աշխուրջ հսկողության:


Վերստուգիչ հանձնաժողովը, որի կազմի մեջ են հոգեշնորհ Տ. Մաշտոց վարդապետ Թաշիրյանը, պր. Եփրեմ Ալեքսանյանը և պր. Գրիգոր Բեքմեզյանը, մշտական հսկողություն է սահմանել Մայր Աթոռի ֆինանսական գործերի վրա, պարբերաբար ստուգելով Մայր Աթոռի հաշիվները, անելով կարևոր դիտողություններ և թելադրանքներ՝ թույլ տրված սխալների և խախտումների ուղղման և վերացման համար:

Արձանագրման արժանի է, որ Վերստուգիչ հանձնաժողովի երկարատև և անմիջական ջանքերի շնորհիվ ցուցակագրվեց Մայր Աթոռի ամբողջ գույքը:

Գերագույն Հոգևոր և Նորհուրդը պարտք է համարում շնորհակալություն հայտնել Վերստուգիչ հանձնաժողովի անդամներին՝ նրանց կողմից կատարված օգտակար աշխատանքների համար:

Հույս ունենք, որ Ազգային-եկեղեցական ժողովը մի պահ կանդրադառնա Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական գործունեության և իր խոսքը կասի անցնող յոթ տարիների ընթացքում, այդ տեսակետից ձեռք բերված արդյունքների մասին, և նոր ու գործնական առաջարկներով և շինարար ծրագրով նոր ճանապարհ բաց կանի դեպի ապագա առավել բարգավաճում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:





ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԶԵՎ
ԸՆԴՈՒՆՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏՈՒՄ, 1962 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ

Հոկտեմբեր ամսի սկզբին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարված Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ազգային-Եկեղեցական ժողովը երախտագիտությամբ է արձանագրում Նորին Ս. Օծուխյուն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի խաղաղության դատին ի պաշտպանություն ծավալած գործունեությունը, այն գնահատելով որպես Ամենայն Հայոց Հայրապետի յոթնամյա ազգաշեն և շինարար աշխատանքների կարևորագույն նվաճումներից մեկը:

Արդարև, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և բովանդակ հայ ժողովրդի համար չկա ավելի կենսական, այժմեական և առաջնահերթ հարց, քան խաղաղության պահպանումը և ամրապնդումը թե՛ վերածնված Մայր Հայրենիքում և թե՛ ամբողջ աշխարհում:

Հայ ժողովուրդը, որն անցյալում այնքան ահավոր շափերով տառապել է կյանքի և ինչքի անապահովության պայմաններում ու հաճախ ոտքի կոխան է եղել ու նահատակվել պատերազմների ընթացքում, առավել քան որևէ այլ ժողովուրդ կարիքն ունի խաղաղության ու ապահով կյանքի:

Ահա թե ինչո՞ւ այսօր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և հայ ժողովուրդը իրենց ամենաջերմ աղոթքն են վերառափում, որպեսզի երկրի վրա տիրի մեայուն խաղաղություն և ազգերի միջև՝ բարեկամություն:

Այսօր, երբ մարդկության երկնակամարի վրա կախվել է աշխարհակործան պատերազմի վտանգը և համայն մարդկությունը գտնվում է երբեք չտեսնելիք անապահով սարսափների առաջ, հանուն մեր սուրբ հավատի, հանուն Քրիստոսի Ս. Ավետարանի, հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հանուն մեր ժողովրդի գերագույն շահերի, Ս. Էջմիածնի կամարների տակ գումարված Ազգային-Եկեղեցական ժողովը հստակորեն իր իդձն է հայտնում, որ մեծ պետությունները օրենքից դուրս հռչակեն պատերազմը, իբրև մեծագույն ոնիր Աստուծո և մարդկության դեմ:

Ահա թե ինչո՞ւ մենք անհրաժեշտ ենք նկատում, որ վերջ տրվեն սպառազինություններին ու միջազգային հարաբերություններում իբրև գերագույն կանոն ընդունվեն խաղաղ գոյակցության սկզբունքները:

Մարդկությունը կարող է և պետք է ապրի առանց պատերազմի:

Ամեն գնով միանգամ ընդմիջտ պետք է դուրս վանել պատերազմի ուրվականը մարդկային կյանքի սահմաններից և փակել նոր պատերազմի հանապարհները և մարդկությանը փրկել շեմամիջուկային պատերազմի բնաջրնջումից:

Աշխարհի և մարդկանց հոգիներին պետք է հանապազօրյա արևի, օդի նման խաղաղություն բաշխել:

Աստուծո բարիքներով հարուստ այս ներդաշնակ և գեղեցիկ աշխարհում, մարդիկ և ազգերը պետք է սովորեն հանաչել միմյանց, սիրել միմյանց և օգնել միմյանց:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին միշտ կաղոթի երկրի վրա կայուն խաղաղության հաղթանակի համար, այժմ և հավիտյան:

Քո՛ղ չ՛հանան պատերազմի մահաբեր ամպերը և մարդկության վրա միշտ անամպ մեծ խաղաղության երկնակամարը:

Քո՛ղ ամենաբարի Աստուծո օրհնությունը լինի երկրագնդի խաղաղասեր բոլոր ժողովուրդների վրա:

Քո՛ղ խաղաղության, սիրո և համերաշխության, արդարության և ազատության վեհ գաղափարները հաղթանակեն ամբողջ աշխարհում:


Ս. Էջմիածնում գումարված Ազգային-Եկեղեցական ժողովը ուժ և անսպառ եռանդ է բարեմաղթում իր սիրելի և խաղաղասեր Հայրապետին, որպեսզի Նա այսումեակ ևս բարձր հեշեցնի խաղաղության սրբագան ձայնը Ս. Էջմիածնի բարձունքներից:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և հայ հավատացյալ ժողովուրդը միշտ սիրով կլսեն իրենց Հայրապետի խաղաղության ի եղաստ բարձրացրած աստվածանանո ձայնը և կգնան այդ ձայնի հետևից:

Հայաստանյայց Եկեղեցու սույն համազգային ժողովը, այս հանդիսավոր առիթով, մի անգամ ևս խոստովանում է խաղաղության իր ուխտը և կոչ է անում Բրիտանյա բոլոր բույր եկեղեցիներին և համայն Բրիտանեության՝ միացյալ աղոթքներով ու միասնական ջանքերով ամրացնելու խաղաղ ու անվտանգ միջազգային կյանքի հիմքերը ամբողջ աշխարհում:

Ժողովս կոչ է անում նաև բոլոր պետություններին, ի մասնավորի մեծ պետություններին, որպեսզի ամուր փակեն նոր պատերազմի հանապարհները և կենսագործեն ամեն գնով համայն մարդկության գերագույն իդր՝ աշխարհի խաղաղությունը, այժմ և միշտ:





**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԱՄՍԱԳՐԻ ՀԱՄԱՐ**

Սուրբ Էջմիածնում գումարված վերջին Ազգային-եկեղեցական ժողովը մի հանգրվան հանդիսացավ Մայր Աթոռի գործունեության ճանապարհի վրա, որ արձանագրեց անցնող յոթ տարիների ընթացքում կատարված աշխատանքները և ձեռք բերված արդյունքները: Ժողովը քննարկեց նաև ու վավերացրեց առաջիկա Մեր գործունեության ծրագիրը:

Վերջին յոթ տարիների ընթացքին Մայր Աթոռը կազմակերպված ու հետևողական աշխատանք ծավալեց նպատակ ունենալով՝

Ա. Առավել զորացնել ու պայծառացնել Ս. Էջմիածինը բոլոր իր հարակից հաստատություններով:

Բ. Վերաշինել ու բարեկարգել հայրենի պատմական վանքեր ու եկեղեցիներ, որոնք փառքն են հանդիսանում հայ ճարտարապետական հանճարի:

Գ. Առավել ամրապնդել Հայ Եկեղեցու ներքին միությունը Ս. Էջմիածնի հոգևոր հեղինակության ներքև և ավելի ամրացնել հոգևոր բարոյական կապերը Մայր Աթոռի և Սփյուռքի հայ հավատացյալ ժողովրդի միջև:

Դ. Ավելի հզորացնել Ս. Էջմիածնի պատմական առաքելությունը ի սփյուռս աշխարհի ցրված հայ ժողովրդի ազգային-եկեղեցական միասնության պահպանման ճանապարհի վրա, որ առաջին պայմանն ու մեծագույն գրավականն է մեր պանդուխտ ժողովրդի կենդանի պահպանման օտար երկիրների տակ:

Ե. Հայ Եկեղեցու և Ս. Էջմիածնի մասնակցությունը ի խնդիր աշխարհի խաղաղության դատի հաղթանակի:

Ազգային-եկեղեցական ժողովը եկավ հանդիսավոր կերպով հաստատելու և նվիրագործելու Մեր գործունեության այս ուղղությունը և ոգին:

Ազգային-եկեղեցական ժողովը, ինչպես և Եպիսկոպոսական ժողովը առանձին կարևորությամբ վերազվեցին Հայ Եկեղեցու Կանոնադրության կազմության հարցով և բրոշեցին այն առավել կատարյալ մշակման ենթարկել, մեր Եկեղեցու բազմադարյան կանոնների առավել խոր ուսումնասիրությանց լույսի ներքև: Ժողովը միաձայն որոշումով և ցավով արձանագրեց նաև Անթիլիասի Կիլիկյան Աթոռից ներս 1956 թվականից սկսյալ տեղի ունեցած տխուր դեպքերը և հակօրինական գործերը, որոնք անջատումներ և խռովություններ ստեղծեցին Սփյուռքում մի քանի համայնքների մեջ, հակառակ հայ ժողովրդի կամքին և հակառակ Եկեղեցու և Ազգի շահերին: Այսպես կոչված «բաժանումները» և «բաժանյալները» եկեղեցական տեսակետից գոյության իմաստից զուրկ կացություններ են, որոնք որևէ աղերս չունեն հայ ժո-

ղովրդի ճշմարիտ ապրումների և հիմնական ու տևական շահերի հետ: Ազգային-եկեղեցական ժողովը, այնուամենայնիվ, եղբայրական սիրով ու համերաշխության ոգով տոգորված, հրավեր կարողաց Անթիլիասի Աթոռին՝ հետ դառնալ իր անհույս ճանապարհից և սրբագրել իր կատարած հակակամոնական գործերը, որպեսզի այսպիսով վերստին ստեղծվեն այն բնականոն ու սիրալիր հարաբերությունները, որ կային մինչ 1956 թվականը՝ Մայր Աթոռիս և Անթիլիասի միջև:

Ս. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովը իր առաջ դրված բոլոր հարցերը քննարկեց բացառիկ խանդավառ մթնոլորտում և այնքան բացառիկ նախանձախնդությամբ: Ժողովին մասնակցող մոտ 150 հոգևորական ու աշխարհական պատգամավորները ոչ մի հարցի նկատմամբ ձևական մոտեցում չցուցաբերեցին, այլ խոր շահագրգռվածություն և առարկայական, քննական ու շինարար ոգի, եկեղեցական ու ազգային-հայրենասիրական իմաստով: Օրակարգի հարցերի և ներկայացված վեկուցումների շուրջ խոսք առին մի քանի տասնյակ պատգամավորներ ներքին և արտասահմանյան թեմերից, որոնք խնդիրներին մոտեցան բարեխղճությամբ, ձեռնհասությամբ և մեր եկեղեցու և ժողովրդի գերագույն շահերի բարձր գիտակցությամբ:

Ազգային-եկեղեցական ժողովը, առանց վարանումի կարելի է ասել, թե լրիվ ներկայացուցչական էր: Մասնակցեցին Հայ Եկեղեցու նվիրապետության բոլոր Աթոռները և բոլոր թեմերը: Հուլիս և գոտեպնդիչ էր Ս. Էջմիածնի կամարների տակ հավաքված տեսնել հոգևոր առաջնորդները և հայ ժողովրդի ներկայացուցիչները աշխարհի բոլոր ծագերից:

Մեր կողքին, Մեզ հետ էին Մեծի Տանն Կիլիկիո օրինապահ Աթոռի ներկայացուցիչը, ինչպես նաև պաշտոնապես լիազորված ներկայացուցիչները Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի սրբազան պատրիարքների, որոնք անձամբ չէին կարողացել Ս. Էջմիածին գալ, հակառակ իրենց ջերմ ցանկության: Միայն Անթիլիասի Աթոռն էր, որ չէր պատասխանած իրեն եղած հրավերին:

Մեր կողքին ու Մեզ հետ էին նաև մեր ներքին թեմերի և արտասահմանի թեմերի բոլոր հոգևոր առաջնորդները անխտիր և համապատասխան թեմերի ու համայնքների աշխարհական ընտրյալ պատգամավորները՝ Ավստրալիայից մինչև Միջին Արևելք, Եվրոպայից մինչև Հյուսիսային և Հարավային Ամերիկաները: Արտասահմանից եկած պատգամավորների ընդհանուր թիվն էր 63, որոնցից 24-ը հոգևորականներ, 39-ը աշխարհականներ:

Ազգային-եկեղեցական ժողովի և մեռնօրհնության առթիվ արտասահմանից Հայրենիք էին փութացել նաև Մայր Աթոռի կողմից հրավիրված 28 հյուրերն ու շուրջ 200 ուխտավորներ, հատկապես Միջին Արևելքից և Ամերիկայի Միացյալ Նահանգներից, ինչպես նաև 18 մտավորական հյուրեր և ավելի քան 500 ուխտավորներ ներքին թեմերից:

Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների և հյուրերի շարքերում կային արտասահմանից 5 գրողներ, 7 արվեստագետներ, հասարակական գործիչներ և 9 հրապարակագիրներ, 2 գիտնականներ և 3 հոգի այլ ասպարեզներից: Ներքին թեմերից մասնակցեցին 26 հոգևորականներ, 57 աշխարհական պատգամավորներ և 15 հյուրեր: Աշխարհական պատգամավորների և հյուրերի մեջ կային 6 գրողներ, 10 արվեստագետներ, 10 գիտական աշխատողներ, 12 հասարակական գործիչներ և հրապարակագիրներ, մնացած 34-ը այլ ասպարեզներում աշխատողներ:

Ազգային-եկեղեցական ժողովի գումարման առթիվ Մայր Աթոռը լայն ծրագիր ի գործ դրեց, կազմակերպված կերպով, որով մեր պատգամավորները և հյուրերը 15—20 օրերի ընթացքում այցելեցին մեր մի շարք պատմական վանքերը և հուշարձանները, Երևանի թանգարանները և Մատենադարանը, գիտական և կրթական հաստատությունները, Հայաստանի գյուղատնտեսական ցուցահանդեսը, մի քանի գործարաններ և հողագործական տնտեսություններ: Մասնավոր ուխտագնացություն կազմակերպվեց դեպի Օշական:

Երեկոները գրեթե ամեն օր նրանք ներկա եղան թատերական կամ երաժշտական ներկայացումների՝ Պետական օպերայի, Հայֆիլհարմոնիայի կամ Սունդուկյանի անվան թատրոնի դահլիճներում:

Կարևորությամբ պետք է ընդգծենք նաև այն, որ մեր պատգամավորներից և հյուրերից շատ-շատերը անձնական շփումներ և հանդիպումներ ունեցան Հայաստանի գիտնականների և արվեստագետների հետ: Մենք թանկ ենք գնահատում այս

պարագան և ուրախությամբ հաստատում, թե Ս. Էջմիածնի հանդիսությունները նոր առիթ ընծայեցին, որպեսզի Մայր Երկրի և արտասահմանի մտավորականության միջև էլ ավելի խորանան ու մտերմական դառնան եղբայրական կապերը:

Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցող պատգամավորներն ու հյուրերը վերադարձան հրաշալի տպավորություններով: Ովքեր առաջին անգամն է որ այցելում էին Ս. Էջմիածին և Հայաստան (մոտ կեսը), ուրախության արտասուքով գովքն էին հյուսում վերածնված մեր Հայրենիքի, խոստովանելով, թե իրենց սպասածից շատ ու շատ ավելին գտան Հայաստանում և Ս. Էջմիածնում: Իսկ ովքեր եղել էին մեկ մոտ անցյալում, նույն հոգեկան մխիթարությամբ հաստատում էին Մայր Հայրենիքի նորանոր նվաճումները և վերջին տարիների շինարարությունները Մայր Աթոռում:

Պատգամավորներն ու հյուրերը Մեր պանդուխտ ժողովրդի այն զավակներից էին, որոնք անսահման կարոտով իրենց արևոտ Մայր Երկիրը տեսնում էին ծաղկած ու կենսունակ, խաղաղ ու ապահով և անսահման սիրով էին ողջագուրվում իրենց հարապատ եղբայրների և քույրերի հետ, հայաստանցիների հետ, որոնք իրենց բավկի ու հոգու ուժերով կերտում են ամենայն հայոց ոսկի ապագան:

Իհարկէ, մեր պատգամավորների և հյուրերի հանդիպումներից ամենահույսալիցը և ամենահանդիսավորը եղավ Մինիստրների Սովետի պալատում, երբ Սովետական Հայաստանի մեծարգո Վարչապետ Անտոն Քոչինյանը բարեհաճեց ընդունել նրանց քաղցր ժպիտով և բարեկամական ջերմ խոսքերով: Այդ պահերին մեր հոգևորական և աշխարհական պատգամավորների սրտերը լեցված էին անհուն երախտագիտությամբ դեպի մեր հայրենի կառավարությունը և հպարտ էին, որ զավակներն են վերածնված հայ ժողովրդի և Մայր Հայաստանի:

Ահա թե ինչո՞ւ Ազգային-եկեղեցական ժողովը կարևոր հանգրվան հանդիսացավ Հայ Եկեղեցու և ի մասնավորի Ս. Էջմիածնի գործունեության ճանապարհի վրա ու միաժամանակ մեկնակետ դեպի ապագա աշխատանքներ: Ազգային-եկեղեցական ժողովը սրտառուջ խանդավառությամբ մի անգամ ևս եկավ հռչակելու՝

Ա. Մեր եկեղեցու և ժողովրդի անխորտակելի միասնության սկզբունքը և իրողությունը:

Բ. Ս. Էջմիածնի հոգևոր իշխանությամբ, ամրապնդումը արտասահմանի հայ Եկեղեցու և ժողովրդի հոգևոր-ազգային գիտակցության ու կյանքին, որով առավել պիտի ամրապնդվի պահպանման սրբազան գործը Սփյուռքի պայմանների մեջ:

Գ. Անհրաժեշտությունը և հնարավորությունը շարունակելու Մայր Աթոռի շինարարական գործունեությունը:

Դ. Մեր Եկեղեցու մասնակցությունը էլ ավելի կազմակերպվածությամբ՝ աշխարհի խաղաղության պահպանման ի խնդիր:

Ահա ուրեմն Մեր գործունեության հեռանկարները: Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցող հոգևորականները մեր թեմերի և համայնքների հեղինակավոր առաջնորդներն են, իսկ աշխարհական պատգամավորները՝ մեծավ մասամբ ճանաչված ղեկավար անձնավորություններ մեր ժողովրդի ազգային կյանքում: Նրանց աշխատանքը վերջ չգտավ Ազգային-եկեղեցական ժողովին նրանց մասնակցությամբ, այլ ընդհակառակը, այդ ժողովը իր որոշումներով, իր գծած նոր ծրագիրներով և որդեգրած ոգով, բոլորի համար հանդիսանալու է նոր իրագործումների սկզբնավորությունը մեր Եկեղեցու ապագա գործունեության ճանապարհի վրա: Ահա թե ինչո՞ւ վերջին Ազգային-եկեղեցական ժողովից հետո Մենք առավել լավատես ենք և առավել պայծառ ենք տեսնում Մեր առաջ ուրվագծվող ապագայի հեռանկարները:

Մեկ Հայ Եկեղեցի, մեկ հայ ժողովուրդ, մեկ Հայ Հայրենիք՝ հավետ անբաժան, հավետ անսասան ու անխորտակելի, ահա՛ գերագույն հրամայականը, որ Մեր ողջ գործունեության մղիչ ու ոգեշնչող ուժը կհանդիսանա, որի արտահայտիչը եղավ ինքը, Ս. Էջմիածնում գումարված Հայաստանյայց Եկեղեցու Ազգային-եկեղեցական ժողովը հանդիսավոր ու փառավոր կերպով:





1962 ԹՎԱԿԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻՑ

- Ա. ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ
Տեր-Հովհաննիսյան Սահակ
արքեպիսկոպոս
Արրահամյան Հայկազուն արքեպիսկոպոս
(նաև ներկայացուցիչ Երուսաղեմի
միաբանության)
Տեր-Սահակյան Վարդան եպիսկոպոս
Աղաջանյան Արամ
Առաքելյան Առաքել
Ղարիբյան Արարատ
Տիրացյան Արտաշես
- Բ. ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
Նղիայան Գրիգոր վարդապետ
Մատենյան Հարություն վարդապետ
Մարուքյան Հովհաննես քահանա
- Գ. ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԵՄ
Տերյան Վահան վարդապետ
Անդրեասյան Սարգիս քահանա
Շիրինյան Կոմիտաս քահանա
Քյոսեյան Հովսեփ քահանա
Աղասյան Զավեն
Անթոսյան Սամվել
Ավագյան Բագրատ
Արևշատյան Սուրեն
Գյուլյան Գրիգոր
Գուլուբաշյան Խաչիկ
Թոփուզյան Հովհաննես
Իսահակյան Նիկողայոս
Կոթիկյան Արամ
Ղրղյան Մանուկ

- Նիկողոսյան Լյուդվիկ
Շահբազյան Պարզե
Պետրոսյան Ավագ
Պողոսյան Պողոս
Սարյան Մարտիրոս
Ստեփանյան Հարություն
- Դ. ԵՒՐԱԿԻ ԹԵՄ
Թաշիրյան Մաշտոց վարդապետ
Աղաջանյան Ղևոնդ քահանա
Ղարագյոզյան Վազգեն քահանա
Քելամյան Հակոբ քահանա
Ադիլյան Գրիգոր
Ալեքսանյան Հովսեփ
Բեքմեզյան Գրիգոր
Գործակալյան Հովհաննես
Էքմեքյան Նուպար
Հախումյան Տիգրան
Հատիտյան Արթուր
Մինասյան Մինաս
- Ե. ՎՐԱՍՏԱՆԻ ԹԵՄ
Տեր-Ստեփանյան Կոմիտաս եպիսկոպոս
Դանիելյան Հովհաննես քահանա
Թադեոսյան Վարդան քահանա
Սամվելյան Միքայել ավագ քահանա
Առաքելյան Հայկ
Ավչյան Սուրեն
Դիլաքյան Խնդիր
Իսախանյան Սամվել
Հեքեքյան Խաչիկ
Մազմանյան Միքայել
Մատթեոսյան Մուշեղ
Քոչար Երվանդ

Ա Գ Ի Բ Ե Ջ Ա Ն Ի Թ Ե Մ

Սանթուրյան Հուսիկ վարդապետ
 Բեյլերյան Նշան քահանա
 Ահարոնյան Գրիգոր
 Բարսեղյան Սուրեն
 Իսրայելյան Ռաֆայել
 Հակոբյան Վաղարշակ
 Ղահրամանյան Անդրանիկ
 Միրզոյան Աբգար
 Տեր-Կարապետյան Նորայր
 Տեր-Պետրոսյան Արշակ

**Ն Ա Խ Ի Ջ Ե Վ Ա Ն Ի Ե Վ Հ Յ Ո Ի Ս Ի Ս Ա Յ Ի Ն
 Կ Ո Վ Կ Ա Ս Ի Թ Ե Մ**

Էլուզյան Խորեն վարդապետ
 Ալեքսանյան Եփրեմ
 Անանյան Գաբրիել
 Դանգաս Հայկ
 Խաթիսյան Ներսես
 Կակոսյան Գևորգ
 Մեղնիկյան Գրիգոր
 Սարգսյան Մուշեղ
 Մելքոնյան Սարգիս
 Սողոմոնյան Կյուրեղ
 Քեհայան Գառնիկ

Մ Ո Ս Կ Վ Ա Յ Ի Հ Ո Վ Վ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Գևորգյան Պարզե վարդապետ
 Ասատրյան Զաքարիա
 Բախրյան Գրիգոր

Ա Ր Տ Ա Ս Ա Հ Մ Ա Ն Յ Ա Ն Թ Ե Մ Ե Ր Ի Յ

Կ Ի Լ Ի Կ Ի Ա Յ Ի Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Ա. Լ Ի Բ Ա Ն Ա Ն
 Աջապահյան Խաղարթեպիսկոպոս
 Ճերեճյան Գնեղ եպիսկոպոս
 Կարպիսյան Գևորգ վարդապետ
 Նազգաշյան Գյուտ վարդապետ
 Երևանյան Գևորգ
 Զաթալպաշյան Գևորգ
 Սրապյան Տաճատ

Բ. Ս Ի Բ Ի Ա

Գույումճյան Շավարշ եպիսկոպոս
 Գալենտերյան Սուրեն
 Թյումպալյան Երվանդ
 Կիրակոսյան Հակոբճան
 Համալյան Հակոբ

Գ. Կ Ի Պ Ի Ո Ս

Նշանյան Նշան

Ե Ր Ո Ի Ս Ա Ղ Ե Մ Ի Պ Ա Տ Ի Ա Բ Բ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Գ. Հ Ո Ր Գ Ա Ն Ա Ն
 Ութուճյան Եղվարդ

Ե. Ի Ս Բ Ա Յ Ե Լ
 Պաղտասյան Հուսիկ վարդապետ

Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ն Ո Ի Պ Ո Ղ Ս Ի Պ Ա Տ Ի Ա Բ Բ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Զ. Թ Ո Ի Բ Բ Ի Ա
 Ներսոյան Տիրան արքեպիսկոպոս

Է. Ա Մ Ե-Ի Հ Ա Յ Ո Յ Ա Բ Ե Վ Ե Լ Յ Ա Ն Թ Ե Մ
 Մանուկյան Սիոն արքեպիսկոպոս
 Կրճիկյան Մյուսոն ծայրագույն
 վարդապետ

Սիմոնյան Եղիշե ծայրագույն վարդապետ
 Առաքելյան Լևոն քահանա
 Ավագյան Արա
 Զոթիկյան Ֆրանք
 Մանվելյան Սուրեն
 Շահինյան Նշան-Մարք
 Պոյաճյան Տիրգրան

Ը. Ա Մ Ե-Ի Հ Ա Յ Ո Յ Կ Ա Լ Ի Յ Ո Ո Ի Ն Ի Ա Յ Ի Թ Ե Մ
 Մանուկյան Թորգոմ վարդապետ
 Տերվիշյան Տիրայր վարդապետ
 Քյուրքճյան Զան

Թ. Հ Ա Բ Ա Վ Ա Յ Ի Ն Ա Մ Ե Բ Ի Կ Ա Յ Ի Թ Ե Մ

Ա. Արգենտինա
 Ապատյան Բարզեն եպիսկոպոս
 Բարակյան Վարդան
 Պայրամյան Եփրատ
 Սարաֆյան Պողոս
 Տիրգրանյան Հակոբ

Բ. Բրապիլիա
 Տիշշեքենյան Հովսեփ

Գ. Ուրուգվայ
 Դավիթյան-Շիմշիրյան Գարեգին

Ժ. Ե Գ Ի Պ Տ Ո Ս Ի Թ Ե Մ
 Սիրունյան Մամբրե արքեպիսկոպոս
 (նաև ներկայացուցիչ Սուդանի և Եթով-
 պիայի)

ԺԱ. Ս Ո Ի Գ Ա Ն Ի Թ Ե Մ
 Իզմիրյան Սարգիս

ԺԲ. Ա Բ Ե Վ Մ Տ Յ Ա Ն Ե Վ Բ Ո Պ Ա

Ա. Ֆրանսիա
 Մանուկյան Սերովբե եպիսկոպոս
 Մինասյան Թովմաս ավագ քահանա
 Ավագյան Վարագ քահանա
 Պոյաճյան Օննիկ
 Փամպուքճյան Պարեդ

Փոխտյան Կարապետ
Քարյան Սեդրակ

բ. Ավստրիա

Գրիգորյան Մեսրոպ վարդապետ
Կարապետյան Սարգիս

գ. Զվիցերիա

Հակոբյան Կարապետ

դ. Բելգիա

Մխիթարյան Արթակ

ե. Իտալիա

Ղազարյան Իսահակ վարդապետ
Հյուսիսյան Երվանդ
Մանուկյան Օննիկ

ժգ. Ա Ն Գ Լ Ի Ա

Թումայան Պսակ եպիսկոպոս
Խաչատուրյան Արտաշես
Քյուրքեճյան Սարգիս

ժԳ. Ի Ո Ւ Մ Ի Ե Ի Ա

Մարտիկյան Տիրայր վարդապետ
Կարժարյան Տիգրան

ժԵ. Բ Ո Ւ Լ Ղ Ա Ր Ի Ա

Մեստուճյան Ռուբեն
Պալյան Հակոբ

ժԶ. Մ Ա Յ Ր Ա Գ Ո Ւ Յ Ն Ա Ր Ե Վ Ե Լ Ք

ա. Ավստրալիա

Ակինյան Հարություն

բ. Հնդկաստան

Մարգարյան Մարգար

ժԷ. Հ Ո Ւ Ե Ա Ս Տ Ա Ե Ի Թ Ե Մ

Գարայան Ստեփան

ժԸ. Ի Պ Ի Մ Կ Ո Պ Ո Ս Ե Ե Ր

Տեր-Հակոբյան Զգոն եպիսկոպոս
Ղազարյան Ասողիկ եպիսկոպոս

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՀՐԱՎԻՐՎԵԼ ԷՆԵ
ՉԵՏԵՎՅԱԼ ԱԶԳԱՅԻՆՆԵՐԸ

Պրոֆ.-դոկտ. Լ. Մ. Մելիքսեթ-Քեկ
(Թբիլիսի)

Պրոֆ. Բարգեն Առաքելյան (Երևան)

Քերսաբե Գրիգորյան, Արտասահմանի

հետ մշակութային կապի Հայկական

ընկերության նախագահ (Երևան)

Մանվել Բարյոյան, Հայ Եկեղեցու գոր-

ծերի խորհրդի անդամ (Երևան)

Հովհաննես Ենիկոյուպով, գրող (Թբի-

լիսի)
Համո Հարությունյան, Հոգևոր ճեմարա-

նի դասախոս (Երևան)

Սարգիս Կոնսուլյան, վերապատվելի

(Երևան)
Մաշտոց ավագ քահանա Ոսկերիչյան

(Զահլե, Լիբանան)

Աշոտ Պատմագրյան, կոմպոզիտոր

(Թեհրան)

Մարգար Ղարաբեկյան (Դև), գրող

(Թեհրան)

Արսեն Ֆերահյան (Թեհրան)

Հակոբ Բարխուդարյան (Թեհրան)

Տեր և տիկին Կոստան Զարյան (ԱՄՆ)

Շահան Նաթալի, գրող և հասարակական

գործիչ (ԱՄՆ)

Տիկին Վոլա Խաչատուրյան, արվեստա-

գետ (ԱՄՆ)

Տիկին Ալիս Սուքիասյան (ԱՄՆ)

Հարի Բրետ Մովսեսյան (ԱՄՆ)

Տիկին Աստղիկ Քյուրքեճյան (Անգլիա)

Տիկին Մարի Մանուկյան (Իտալիա)

Օրինորդ Լիլիան Շալվարճյան (Իտալիա)

Հայկ Ղազարոսյան (Իտալիա)

Թորգոմ Ղազարոսյան (Իտալիա)

Տիկին Մարի Իզմիրլյան (Սուդան)

Տիկին Նոյեմի Պոլաճյան (Ֆրանսիա)

Տիկին Հռիփսիմե Դավիթյան (Ուրուգվայ)

Օրինորդ Քեաթրիս Ավագյան (Ռումինիա)

Հրանտ Ավագյան, նկարիչ (Ռումինիա)

Խաչիկ Գամատյան, նկարիչ, իր կնոջ

հետ (Ռումինիա)

Տիկին Շաքե Գալենտերյան (Սիրիա)

Տիրան Ակինյան, մանկավարժ (Սիրիա)

Անդրանիկ Մառուկյան, «Նաիրի» շա-

բաթաթերթի խմբագիր (Բելյուսթ)

Գերսամ Ահարոնյան, «Զարթունք» օրա-

թերթի խմբագիր (Բելյուսթ)

Օննիկ Ճամպուլյան, «Արարատ» թերթի

արտոնատեր (Բելյուսթ)

Կարապետ Ալթունյան (Լիբանան)

Տիկին Արուսյակ Ալթունյան (Լիբանան)

Լևոն Նորաշխարհյան (Լիբանան)





ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՌԹԻՎ

ԺԱՄԱՆՈՒՄ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ
ՀՅՈՒՐԵՐԻ

1962 թվականի սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 17-ը պատմական և հիշարժան օրեր հանդիսացան մեր օրերի ազգային-եկեղեցական տարեգրության մեջ և մի խանդավառ հանգրվան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Վեհափառ Հայրապետի եկեղեցաշեն, հայրենանվեր յոթնամյա գործունեության ճանապարհի վրա:

Մայր Աթոռում Ազգային-եկեղեցական ժողովի գումարում, Մայր Տաճարում Սրբալույս Մեռոնի օրհնություն և եպիսկոպոսական ձեռնադրություն և այլ հանդիսություններ անջնջելի կերպով դրոշմված կմնան շատերի սրտերում և հիշողության մեջ:

Այս ուրախ առիթով Մայր Հայրենիք և Ս. Էջմիածին էին ժամանել Սփյուռքից և ներքին թեմերից Աղզի և Եկեղեցու կողմից բնութամբ հոգևորական և աշխարհական պատգամավորներ՝ մասնակցելու Ազգային-եկեղեցական ժողովի աշխատանքներին և հանդիսություններին:

Սեպտեմբերի 26—30-ը Մայր Աթոռ են ժամանում 141 պատգամավորներ և 45 հյուրեր Մայր Հայրենիքից, Սովետական Միությունից, ինչպես նաև հեռավոր ու մերձավոր հայ գաղութներից՝ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Արգենտինայից,

Բրազիլիայից, Ֆրանսիայից, Անգլիայից, Բելգիայից, Զվիցերիայից, Ավստրիայից, Իտալիայից, Ռումինիայից, Բուլղարիայից, Եգիպտոսից, Սուդանից, Իսրայելից, Լիբանանից, Սիրիայից, Իրաքից, Իրանից, Հնդկաստանից և Ավստրալիայից:

Պատգամավորներն ու հյուրերը կտրել անցել են հազարավոր կիլոմետր ծովեր, օվկիանոսներ՝ գալ հասնելու Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Հայրենի սրբազան հողը, համբուրելու Ս. Էջմիածնի հազարամյա մեռոնարույր քարերն ու սրբությունները, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Ս. Աջը և ողջագործվելու Հայրենիքում ապրող իրենց սիրելիների, հարազատների հետ:

Ժամանած պատգամավորների թվում են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետական Աթոռների ներկայացուցիչներ, առաջնորդներ, ազգային-եկեղեցական իշխանությունների պատգամավորներ:

Ազգային-եկեղեցական ժողովի և Սրբալույս Մեռոնի օրհնության բարերաստիկ առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուխտի էին եկել նաև հատկապես Միջին Արևելքից և ԱՄՆ-ից շուրջ 200, իսկ ներքին թեմերից՝ ավելի քան 500 ուխտավորներ:

Սեպտեմբերի 26—30-ին, Երևանի օդանավակայանում, բոլոր պատգամավորները, ուխտավորներն ու հյուրերը ջերմորեն ընդունվում են հանդիսությանց կազմակերպիչ

կենտրոնական հանձնաժողովի նախագահ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի և հյուրընկալ հոգեշնորհ Տ. Վահան, Տ. Տիրայր, Տ. Ներսես, Տ. Մեսրոպ վարդապետների կողմից և առաջնորդվում հյուրանոց:

Այնուհետև պատգամավորներն ու հյուրերը առանձին խմբերով ուխտի են գնում Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Ավտոմեքենաները կանգ են առնում մայրավանքի արևելյան նորակերտ մեծ դարբասի մուտքի առաջ և պատգամավորները, հյուրընկալ վարդապետների առաջնորդությամբ, հետիոտն, երկյուղածորեն, զանգերի ուրախ ղողանջների տակ, առաջնորդվում են Մայր Տաճար, Իջման Ս. Սեղանի առաջ աղոթելու և իրենց ուխտը կատարելու:

Վեհարանում պատգամավորներին և հյուրերին բարեհաճում է ընդունել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, ողջունում է նրանց բարի գալուստը Մայր Հայրենիք և օրհնում բոլորին:

Պատգամավորները, Վեհափառ Հայրապետի օրհնությունը ստանալուց հետո, այցելում են Մայր Տաճարի եկեղեցական արվեստի պահարանը, նոր Վեհարան, Հոգևոր Ծեմարան, Մայր Աթոռի տպարան, Զվարթնոց, Ս. Հռիփսիմեի, Ս. Շողակաթի և Ս. Գայանեի վանքերը:

Երեկոյան ժամը 7.30-ին, բոլոր պատգամավորներն ու հյուրերը Երևանում, Այ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում ներկա են լինում Տ. Զուխաշյանի «Արշակ Բ» օպերայի ներկայացմանը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Սեպտեմբերի 29-ին, շաբաթ, «Տօն Ս. Գեորգյա զօրավարին»:

Առավոտյան ժամը 12-ին, Վեհարանում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, գումարվում է Եպիսկոպոսական ժողովի առաջին նիստը, մասնակցությամբ 15 արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների:

Ժողովն իր աշխատանքները շարունակում է մինչև ժամը 3, քննության առնելով Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգում զբոլած հարցերը, որոնք հրապարակվել էին Վեհափառ Հայրապետի հուլիս 7 թվակիր սրբատառ կոնդակով:

Ժամը 5-ին, Մայր Տաճարում, Վեհափառ Հայրապետը նախագահում է կիրակամտի ժամերգությանը:

Արարողության ներկա են բոլոր պատգամավորները, ուխտավորներն ու հյուրերը:

Զանգերի ղողանջի տակ, եկեղեցական թափորը Վեհափառ Հայրապետին առաջնորդում է Մայր Տաճար:

Արարողության վերջում, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հոգեհանգիստ երջանկահիշատակ Տ. Գևորգ Զ հանգուցյալ Կաթողիկոսի շիրմի վրա:

ՀԱՆԻԽՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈՋ ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԵԻ ՏԱՃԱՐՈՒՄ

Սեպտեմբերի 30-ին, կիրակի, «Տօն Վարապաի Ս. Խաչի»:

Այսօր ուխտի օր է:

Վանքի շրջակայքը, տաճարն ու այգիները լցվել են ուխտավորական խուռներում բազմություններով:

Աշնանային հիասքանչ օր է:

Օղբ հագեցած է ծաղիկների և անուշահամ մրգերի քաղցր բուրմունքով:

Առավոտյան ժամը 10-ին, Ս. Հռիփսիմեի տաճարում, հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս ներսույանը:

Պատգամավորներն ու հյուրերը, ուխտավորներն ու աղոթավորները լցրել են հայ ճարտարապետության աննման կոթող Ս. Հռիփսիմեի տաճարը:

Կոմիտասյան քառաձայն պատարագի երգեցողությունը կատարում է Մայր Տաճարի երգեցիկ խումբը, վեհ ու դաշնավոր:

Ամեն կողմ աղոթք, խունկ ու վեհություններ ժամը 12-ին ժամանում է Վեհափառ Հայրապետը և եկեղեցական թափորով առաջնորդվում տաճար:

Սուրբ պատարագի հոգեզմայլ երգեցողությունը շարունակվում է մինչև «Որ օրհնես զայնոսիկ» աղոթքը:

Քարոզի պահն է:

Պատարագիչ սրբազանը քարոզում է Ս. Հռիփսիմյան կույսերի նահատակության և Վարագա Ս. Խաչի տոնի հոգևոր, պատմական և ազգային նշանակության մասին:

Այնուհետև քարոզիչ սրբազանը խոսում է Ս. Հռիփսիմե տաճարի նորոգության բարերարներ պր. Երվանդ Հյուսիսյանի և պր. Օննիկ Մանուկյանի նվիրատվությունների մասին:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է Հոգեհանգիստ Երվանդ Հյուսիսյանի և Օննիկ Մանուկյանի ծնողների հիշատակին: Հոգեհանգստյան պահին հիշվում են նաև Գևորգ և Պարկեշտուհի Ծենտերեճյանների և նազարեթ ու նարդուհի Քյուրքեճյանների հոգիները:





Մուրր Հոփսիսի տաճարում պատարագի ժամին

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 30-ին, կիրակի, հավարտ մուրր պատարագի, ժամը 2-ին, Ս. Էջմիածնի մայրավանքի արևելյան նորակերտ մայր դարբասի առաջ, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությանը, կազմվում է պատգամավորների հաղիսավոր շքերթ, որը ժողովրդական խանդավառ արտահայտությունների և ծափողջունների մեջ, դիմում է դեպի նոր Վեհարանի հանդիսությանը շքեղ դահլիճը, ուր կայանալու են Ազգային-եկեղեցական ժողովի նիստերը:

Մայր Տաճարի դանգերը հնչում են ավետավոր ու ցնծագին:

Ամեն կողմ ուրախություն ու տոնական բարձր տրամադրություն է տիրում:

Պատգամավորների թափորը, Մայր Տաճարի առաջով, Տրդատի դռնով ուղղվում է դեպի նոր Վեհարան, ուր մուտք է գործում հանդիսավորությանը:

Նոր Վեհարանի գեղեցիկ Գահասրահում կատարվում է Վեհարանի նոր շենքի օրհնության կարգը, մասնակցությամբ հոգևորական ողջ դասի և ի ներկայության բոլոր պատգամավորների:

Կարդացվում է Սաղմոս, ուր ասվում է. «Եթէ ոչ Տէր շինէ զտուն, ի նանիր վաստակին շինողք նորա»:

Երգվում է «Թագաւոր փառաց հոգիդ կենդանարար» շարականը, ընթերցվում է Ավետարան:

Այնուհետև գերաշնորհ Տ. Մամբե արքեպիսկոպոս Սիրունյանը կարդում է Տնօրհների աղոթքը՝ «Արդ, աղաչեմ զքեզ, Տէր, հաստատուն և անսասան պահեա զՀայրապետանոցս զայս, հանդերձ ամենայն բնակելովքն...»:

Եկեղեցականների դասը ներդաշնակորեն երգում է «Ամէն, ալէլուիա»:

Վեհափառ Հայրապետն օրհնում է. «Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամյալ պահեսցի Հայրապետանոցս. այս նշանաւ...»:

Նոր Վեհարանի շենքի օրհնությունից հետո, Վեհափառ Հայրապետը խոսք առնելով, ասում է.

«Ողորմությամբ Աստուծո այստեղ եմք ահա, Վեհարանի նոր շենքում, և աղոթում եմք, որպեսզի հաստատ ու միշտ կանգուն մնա այս շինությունը, որն այս օրից սկսած կծառայի որպես Հայրապետանոց, ի վայելումն մեր Ս. եկեղեցու և հայ ժողովրդյան:

Ուրախ ենք, որ Ազգային-եկեղեցական ժողովի գումարման առթիվ, Մեզ վիճակվեց բանալ ղռները մեր նոր Վեհաճարանի և օրհնել այն Ջեր բոլորի ներկայությամբ:

Այս շենքը, ինչպես ծանօթ է բոլորիդ, կառուցվել է երջանկահիշատակ Գևորգ Ե Կաթողիկոսի ժամանակ, 1912—1914 թվականներին, իր ժամանակին հայտնի նարտարայետ Ջահրայանի կողմից: Բարեբառ նվիրատուն եղել է Մանթաշյանը:

Շենքի շինությունը դեռևս լրիվ չավարտված և Գևորգ Հայրապետը իր նոր Վեհաճարանը շինարարված, բռնկվում է առաջին համաշխարհային պատերազմը, երբ Գևորգ Ե Կաթողիկոսը ժամանակավորապես այն հանձնում է զինվորական իշխանություններին, որպեսզի ծառայի իբրև հիվանդանոց: Այդ կացությունը շարունակվում է նաև հետագա տարիներին, շենքն օգտագործելով իբրև հիվանդանոց, որբանոց կամ գորանոց:

Անցնող 40 տարիների ընթացքում այս տունը օգտավետ ծառայություններ է մատուցում մեր ժողովրդին և Հայրենիքին, հաճախ պատմական օրեր ապրելով: Այս հանդիսավոր առթիվ, Մենք ուզում ենք հիշել միայն երկու այսպիսի պատմական պահեր: Առաջին համաշխարհային պատերազմի շրջանին է, որ այս շենքի պատշգամբից, Քաջև Անդրանիկ գորավարը խոսել է իր կտրիճներին այն օրերին, երբ մեր ժողովուրդը կենաց և մահու պայքար էր մղում ողբերգական ծանր պայմաններում: Եվ տարիներ հետո, երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանին, այս նույն շենքի նույն պատշգամբից խոսել է իր զինվորներին մեր ժողովրդի նոր օրերի հերոս, ֆաջմարտիկ և հաղթական գորավարը՝ մարշալ Հովհաննես Բաղրամյանը:

Եվ այսպես ահա, 40 տարիների պատմություն բոլորելուց հետո, այս շենքն իր ղռները բացեց իր բուն տիրոջը, բարձր հրամանովը Սովետական Միության կառավարության, իբրև արդյունք 1956 թվականին Մեր կատարած խնդրանքի:

Մեր շեքը շնորհակալությունը մեր բարեխնամ պետության այս բարի կարգադրության համար:

Վերջին չորս տարիների ընթացքում, շենքը հիմնովին վերանորոգվեց Մեր անմիջական հսկողության ներքև և ստացավ այս շինը նեխքը: Մայր Աթոռի նարտարայետական հանձնաժողովը հետևեց վերաշինության բոլոր աշխատանքներին և օգտակար եղավ իբրև ցուցմունքներով և խորհուրդներով: Շինարարական աշխատանքներն ուղղակի ղեկավարեց նարտարայետ Արծրունի Գալիկյանը, իրեն օգնական ունենալով նարտարայետ

Միլվան Խաչատրյանին: Այստեղ տեսական կերպով աշխատեցին մի քանի տասնյակ ուրախյալ վարպետ արհեստավորներ և բանվորներ, ամեն մեկն իր կարելին անելով բարեխրդնությամբ: Մեր գոհունակությունը և գնահատանքը բոլորին:

Փառ՛ք Տիրոջը, որ Մեր կենդանի աչքերով տեսնում ենք այս իրողությունը: Մեր սրտի ուրախությունը և ոգևորությունը բազմապատկում են մտքի և հոգու ուժերը, առավել եռանդով ու լավատեսությամբ գրանվում ենք և անհամբեր սպասում, որ անաշխի պատերազմ, այս նոր Վեհաճարանում, մեր սեղանների առջև նստած, խոկանք, մտածենք և հղանանք ու գործադրության դնենք նոր ծրագրեր, կազմակերպենք նոր աշխատանքներ Ս. Էջմիածնի փառքի համար, մեր ժողովրդի փառքի համար:

Այս նվիրական պահին, Մեր տան մեջ, Մենք մի անգամ և վերաճողությամբ ենք Մեր ուխտը՝ նվիրվելու և ծառայելու մեր Ս. Եկեղեցուն, մեր Ազգին ու մեր վերածնված Մայր Հայրենիքին:

Թող Աստված անշարժ պահի ու պահպանի այս շենքը, և թող հաջողությամբ պսակի մեր սուրբ գործը: Ամենք:

Վեհաճարանի շենքի օրհնության ավարտին, թնդում է ծափերի ուրախ աղմուկը և ամեն կողմից լսվում են սրտագին բարեմաղթություններ:

— Շնորհավոր լինի, Վեհափառ Տե՛ր:

Այնուհետև պատգամավորները Ազգային-եկեղեցական ժողովի նիստերի դահլիճում գրավում են իրենց տեղերը, ըստ թեմերի:

Երկու ռոպպ անց, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, շրջապատված արքեպիսկոպոսներով, հանդիսավորապես մուտք է գործում ժողովի նիստերի դահլիճը և ընդունվում սրտագին, բուռն ծափահարություններով:

Ժպիտ կա բոլորի դեմքին՝ և արև աչքերի մեջ:

Վեհափառ Հայրապետը, խորապես հուզված և ուրախ տրամադրության մեջ, գրավում է Ազգային-եկեղեցական ժողովի Պատվո՛ւ Նախագահի աթոռը, իր շուրջն ունենալով ամենապատիվ Տ. Խաղ, գերաշնորհ Տ: Մամբրե՛, Տ. Տիրան և Տ. Սիոն սրբազան արքեպիսկոպոսներին:

Հանդիսավոր իրադրության մեջ և խանդավառ մթնոլորտում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի աղոթքով, բացվում է Ազգային-եկեղեցական ժողովի առաջին նիստը սեպտեմբերի 30-ին, հետմիջօրի ժամը 2.30-ին:

Ժողովին մասնակցում են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետա-



Ազգային-եկեղեցական ժողովի դիվանը

կան Աթոռների ներկայացուցիչները, թեմակալ առաջնորդներ, Ազգի և Եկեղեցու ներկայացուցիչներ, ընդամենը 141 հոգի ձայնի իրավունքով, ինչպես նաև 45 հյուրեր՝ որպես դիտորդ:

Վեհափառ Հայրապետը Ազգային-եկեղեցական ժողովի բացումը ողջունում է գեղեցիկ ճառով:

Այնուհետև, Նորին Ս. Օծուխյան բարձր նախագահության ներքո, ընտրվում են Ազգային-եկեղեցական ժողովի գործադիր մարմինները՝ 8 ատենապետներ, որոնցից 4-ը՝ արքեպիսկոպոսներ և 4-ը՝ աշխարհականներ, որոնք երկու առ երկու վարելու են ժողովը, քառասուրբություն 4 հոգի, մանդատային հանձնաժողով 4 հոգի, բանաձևերի խմբագրական հանձնաժողով 4 հոգի:

Դիվանի ընտրությունից հետո, Ազգային-եկեղեցական ժողովը շարունակում է իր աշխատանքները, ատենապետությամբ գերաշնորհ Ս. Խաղարիսյանը Աջապահյանի և ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանի:

Ամենապատիվ Ս. Խաղարիսյանը «Հոգևոց» է արտասանում 1955 թվականից հետո վախճանված բարձրաստիճան հոգևորականների հիշատակին:

Ատենապետ սրբազան հոր հրահանգով, հոգեշնորհ Ս. Թորգոմ վարդապետ Մանուկյանը հրապարակում է ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահի տեղակալ Վ. Ֆ. Ռյազանովի և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի պաշտոնակատար Ս. Հովհաննիսյանի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ուղղած ողջույնի հեռագիրը Ս. Էջմիածնում Ազգային-եկեղեցական ժողովի գումարման առթիվ, որոնք ընթերցվում են և արձանագրվում ջերմ ծափահարությունների տակ:

Այնուհետև, ատենապետ սրբազան հոր հրավերով, Ազգային-եկեղեցական ժողովի բացման առթիվ պատգամավորներից ոմանք հանդես են գալիս ողջույնի խոսքերով, այդ թվում ամենապատիվ Ս. Խաղարիսյանը Աջապահյանը հանուն Կիլիկյան Աթոռի օրինապահ միաբանության և ժողովրդի, գերաշնորհ Ս. Սերովբե Եպիսկոպոս Մանուկյանը հանուն Երուսաղեմի ամենապատիվ պատրիարք Ս. Նղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի և Սրբոց Հակոբյանց միաբանության, գերաշնորհ Ս. Տիրան արքեպիսկոպոս

Ներսիսյանը հանուն Քուրթիայի հայոց ամենապատիվ պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոս Կալուստյանի, եկեղեցական մարմինների և ժողովրդի, գերաշնորհ Տ. Մամբե արքեպիսկոպոս Սիրունյանը հանուն Եգիպտոսի հայոց թեմի, գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը հանուն ԱՄՆ-ի հայոց Արևելյան թեմի, գերաշնորհ Տ. Բարգեբե արքեպիսկոպոս Ապատյանը հանուն Հարավային Ամերիկայի հայոց պատվիրակության, գերաշնորհ Տ. Պսակ Եպիսկոպոս Քումայանը հանուն Անգլիայի հայոց Հայրապետական պատվիրակության, հոգեշնորհ Տ. Քորգով վարդապետ Մանուկյանը հանուն Կալիֆոռնիայի հայոց թեմի, հոգեշնորհ Տ. Սեբուպ վարդապետ Գրիգորյանը հանուն Վիեննայի հայոց հովվության, պր. Ռուբեն Սեսունյանը հանուն Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի և պր. Սուրեն Ավլյանը հանուն ներքին թեմերի:

Ազգային-եկեղեցական ժողովի առաջին նիստը փակվում է ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետի աղոթքով:

Ժամը 5-ին, պատգամավորներն ու հյուրերը վերադառնում են Երևան:

Երեկոյան ժամը 7.30-ին, պատգամավորներն ու հյուրերը ներկա են լինում Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի շենքում Գ. Դեմիրճյանի «Վարդանանք» ներկայացման, Գ. Սունդուկյանի անվան պետական թատրոնի արտիստների կատարմամբ:

Հովեմբերի 1-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 11-ին, գումարվում է Ազգային-եկեղեցական ժողովի երկրորդ նիստը, նոր Վեհարանի հանդիսասրահում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ և ատենապետությամբ գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս ներսիսյանի և պր. Տիգրան Պոյանյանի:

Նիստը բացվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով:

Այնուհետև քարտուղարության անդամ հոգեշնորհ Տ. Քորգով վարդապետ Մանուկյանը կարդում է Ազգային-եկեղեցական ժողովի առաջին նիստի արձանագրությունը, որն ընդունվում է փոքր ճշտումներով:

Մանդատային հանձնաժողովի նախագահ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Տեղաբնակչանը ղեկավարում է, որ Ազգային-եկեղեցական ժողովի հրավիրված 162 պատգամավորներից ժողովին ներկա են 141 հոգի, որոնցից 46-ը հոգևորականներ են և 95-ը աշխարհական:

Հայաստանի և միութենական ներքին թեմերից հրավիրված 82 պատգամավորներից Ազգային-եկեղեցական ժողովին ներկա են

78 հոգի, որոնցից 22-ը հոգևորական և 56-ը աշխարհական, այդ թվում՝

- ա. Մայր Աթոռ Ս. Էջմիածնից (Գերագույն Հոգևոր Խորհուրդ և միաբանության ներկայացուցիչներ) 10 հոգի
- բ. Արարատյան թեմից 20 »
- գ. Շիրակի թեմից 12 »
- դ. Վրաստանի թեմից 12 »
- ե. Ադրբեջանի թեմից 10 »
- զ. Հյուսիսային Կովկասի թեմից 11 »
- է. Մոսկվայի հայոց հովվությունից 3 »

Ազգային-եկեղեցական ժողովի հրավիրված Սփյուռքի հայության 77 պատգամավորներից ներկա են 63-ը՝ 24 հոգևորական և 39 աշխարհական, ըստ հետևյալ ցանկի.

- ա. Կիլիկիայի Կաթողիկոսություն
 - 1. Կիբանան 7 հոգի
 - 2. Սիրիա 5 »
 - 3. Կիպրոս 1 »
- բ. Երուսաղեմի հայոց Պատրիարխություն
 - 1. Հորդանան 1 հոգի
 - 2. Իսրայիլ 1 »
- գ. Կոստանդնուպոլսի Պատրիարխություն
 - Պատրիարքարան 1 հոգի
- դ. ԱՄՆ-ի հայոց Արևելյան թեմ
 - Առաջնորդարան 9 հոգի
- ե. Կալիֆոռնիայի թեմ
 - Առաջնորդարան 3 հոգի

Մանդատային հանձնաժողովի ղեկուցարի ընթերցումից հետո տրվում է 10 րոպե դադար:

Այնուհետև Ազգային-եկեղեցական ժողովը վերսկսում է իր աշխատանքները:

Առեմնապետ պր. Տիգրան Պոյանյանը հրապարակում է Ազգային-եկեղեցական ժողովի հետևյալ օրակարգը.

1. Զեկուցում Վեհափառ Հայրապետի յոթնամյա գործունեության.
2. Հաշվետվություն Մայր Աթոռի նյութական գործունեության.
3. Հայ Եկեղեցու Կանոնագրքի մշակման հարց.
4. Ամրապնդում Հայ Եկեղեցու միասնության.
5. Ընտրություն Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի.
6. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաջիկա շինարարական գործունեության ծրագիր:

Ապա ատենապետը, ընդհանուր խանդավառությամբ և սրտագին ծափողջույնների մեջ, հայտնում է, որ Ազգային-եկեղեցական պատկառելի այս ժողովը պատրաստ է որդիաբար և հարգալիր ունկնդրելու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ղեկուցագիրը նրա յոթնամյա գործունեության մասին:

Վեհափառ Հայրապետը սիրով և օրհնությանը ողջունում է Ազգային-եկեղեցական սույն ժողովը, «որ կզմայրվի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կամարներում տակ, համաձայն Մեր Ս. Եկեղեցվա բազմադարյան կանոններու և պատմական ավանդություններու, վերածեա՞ծ Մայր Հայրենիքի ապահով ու խաղաղ պայմաններուն մեջ»:

Այնուհետև նորին Ս. Օծուխյունը Ազգային-եկեղեցական ժողովին է ներկայացնում Իր յոթնամյա հոգևոր, վարչական, կազմակերպչական, մշակութային, շինարարական գործունեության ընդհանուր բայց ամբողջական պատկերը:

Իր ղեկուցագրում Վեհափառ Հայրապետը գլուխ առ գլուխ խոսում է Գերագույն Հոգևոր Խորհրդի, Մայր Աթոռի միաբանության, Հոգևոր Ճեմարանի, «էջմիածին» ամսագրի, ներքին թեմերի և վանական կազմակերպությունների, արտասահմանյան նվիրակետական Աթոռների և թեմերի, Սփյուռքի և ներքին թեմերի հայ եկեղեցիներին տրված հովվապետական այցելություններին, եպիսկոպոսական ժողովների, Կրկիկյան Աթոռի մեջ 1956 թվականից սկսած եկեղեցական տաճնապի և Մայր Աթոռի հաշտարար աշխատանքների մասին:

Վեհափառ Հայրապետը Իր ղեկուցագրի հաջորդ էջերում խոսում է Մայր Աթոռի շրջափակում և նրանից դուրս տարված շինարարական, վերանորոգչական մեծ աշխատանքների մասին, որոնք կատարվել են արտասահմանից ստացված նվիրատվություններով և հավատացյալ հայ ժողովրդի լուսնաներով:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը խոսում է Մայր Աթոռի նորաբաց տպարանի և Իր հետագա շինարարական ծրագրերի մասին:

Հայրապետական գործունեության յոթնամյա ղեկուցագրում խոսվում է նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և քրիստոնեական բոլոր եկեղեցիների փոխհարաբերությանց, հոգևոր պետերի փոխայցելությանց, Հայաստանյայց Եկեղեցու՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին անդամակցության մասին, հանուն աշխարհի խաղաղության կատարված աշխատանքի, ինչպես նաև Եկեղեցու պետության փոխհարաբերությանց մասին:

Վեհափառ Հայրապետի ղեկուցագիրը լավում է երախտագիտությանը և խորունկ հետաքրքրությանը:

Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների խանդավառ և սրտագին ծափերի մեջ Վեհափառ Հայրապետը յոթնամյա գործունեության Իր ղեկույցը վերջացնում է հետևյալ խոսքերով.

«Այսօր կփակենք յորը տարիներու գործունեության շրջան մը, Մեր ուժերու շափով Մեր պարտքը կատարած ըլլալու գիտակցությամբ, և կրեակոխենք աշխատանքի նոր շրջան մը՝ առավել լավատեսությամբ և ինքնավստահությամբ քան յորը տարիներ առաջ:

Ապրող ու շնչող, մեր այս արևոտ ու շեն Երկրի սուրբ հողի վրա ամուր կանգնած, հավերժական Ս. Էջմիածնի աստվածապարզ Զնորհներով գորացած, մեր հարազատ ժողովուրդի հավատքի ու տեսիլքի աղբյուրներեն հագեցած, Մենք պիտի շարունակենք աշխատիլ Մեր բոլոր գործակիցներուն հետ միասիրտ ու միական, որպեսզի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին մեա մեկ և անբաժանելի և ապառաժի նման անասանելի, որպեսզի հայ ժողովուրդը, Քրիստոսի լույսով առաջնորդված, նորեն վերածնի ոգեկան արժեքներու սուրբ ավագանին մեջ, և որպեսզի Մեր աչքի լույս Ս. Էջմիածինը, գերագույն վկան և գրավականը հայ ժողովուրդի հավերժության, անշարժ մեա, շեն ու պայծառ և միշտ շողա լույս փառքի մեջ, այժմ և հավիտյան»:

Ատենապետ պր. Տիգրան Պոյանյանը, թարգմանը հանդիսանալով ներկա բոլոր պատգամավորների երախտագիտական սրբտաբուխ զգացմունքների դեպի Ամենայն Հայոց նորին Ս. Օծուխյուն Վեհափառ Հայրապետը, ասում է.

«Հոգեկան այնքան բավարարություն ստացանք Վեհափառ Հայրապետի ղեկուցագրեն, որ նորին Ս. Օծուխյան այս ընդարձակ, մանրամասն և անգերազանցելի ղեկույցին համար, հանուն դիվանին, կհրավիրեմ ժողովը անգամ մը ևս հոտնկայս իր որդիական հարգանքը և երախտագիտությունը հայտնելու Վեհափառին»:

Բոլոր պատգամավորները, հոտնկայս, երկարատև ծափերով իրենց գոհունակությունն ու երախտագիտությունն են հայտնում Վեհափառ Հայրապետին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի ղեկուցագրի շուրջ արտահայտվում են գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը և Փարիզի պատգամավոր պր. Սեդրակ Քարյանը:

Ազգային-եկեղեցական ժողովը, Վեհափառ Հայրապետի ղեկուցագրի խորին տպավորության տակ, որոշում է նորին Ս. Օծուխյան ղեկուցագրի շուրջ մտքերի փոխանակությունը հետաձգել հաջորդ նիստին, շորեջշաբթի օրը:

Ազգային-եկեղեցական ժողովի Բ նիստը փակվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով, հետմիջօրեի ժամը 4.30-ին:

Երեկոյան ժամը 6-ին բոլոր պատգամավորներն ու հյուրերը մեծ ոգևորութեամբ ներգա են լինում Սրեանի ստադիոնում «Լուսկե աշուն» հանդիսութեան:

Հոկտեմբերի 2-ին, երեքշաբթի, առավոտյան ժամը 10-ին, պատգամավորները, հրավիրակ վարդապետների առաջնորդութեամբ, այցելում են Գառնիի ավերակները, ամրոցը, հեթանոսական տաճարն ու եկեղեցին:

Գառնիում պեղումներ կատարող հայտնի պատմաբան պրոֆ. Բ. Առաքելյանը բացատրութիւններ է տալիս Գառնիի պատմութեան, ճարտարապետական կառուցների և կատարված պեղումների արդյունքների մասին: Պրոֆեսորի բացատրութիւնները լրսւում են հօտաբերութեամբ և գոհունակութեամբ:

Եյունահետև պատգամավորները այցելում են Ս. Գեղարդի վանքը:

Վանքի մեծ դարբասի առաջ, վանահայր հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը սիրով ընդունում է հյուրերին և առաջնորդում եկեղեցի:

Պատգամավորները, իրենց ուխտը կատարելուց հետո, երկյուղածութեամբ և հիացմունքով դիտում են Գեղարդի եկեղեցական ճարտարապետութեան կոթողները, օրհնութիւն և երախտագիտութիւն մրմնջելով մեր լուսաբնակ նախնիքների հավատի ամրութեան և կառուցողական տաղանդի մասին:

Ժամը 3-ին ուխտավորներն ու պատգամավորները վերադառնում են Երևան, անմոռանալի տպավորութիւններով:

Երեկոյան ժամը 8.30-ին, Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում, պատգամավորները և հյուրերը ներկա են լինում Երգի և պարի վաստակավոր անսամբլի համերգին:

**ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ
ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հոկտեմբերի 3-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 11-ին, նոր Վեհարանի հանդիսարահոս, զումարվում է Ազգային-եկեղեցական ժողովի երրորդ նիստը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ և գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի ու պր. Սեդրակ Քարյանի ատենապետութեամբ:

Ժողովը բացվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով: Քարտուղարութեան անդամ պր. Սարեն Մանվելյանը ընթերցում է Ազգային-եկեղեցական ժողովի երկրորդ նիստի

արձանագրութիւնը, որը վավերացվում է քոթը ճշտումներով:

Այնուհետև ատենապետ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոսը հրավիրում է ժողովականներին արտահայտվելու Վեհափառ Հայրապետի յոթնամյա գործունեութեան զեկուցագրի շուրջ:

Սկսվում է մտքերի աշխույժ փոխանակութիւն: Վեհափառ Հայրապետի յոթնամյա գործունեութեան տարբեր բնագավառների մասին ջերմորեն և երախտագին զգացմունքներով հաջորդաբար արտահայտվում են պր. Սարգիս Քյարճեյանը (Լոստոն), պր. Երվանդ Հյուսիսյանը (Միլանո), գերաշնորհ Տ. Պապեկ Եպիսկոպոս Խումայանը (Լոստոն), հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Նիկայանը (Մայր Աթոռ), պր. Հարություն Ալիկյանը (Ավստրալիա), գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը (Մայր Աթոռ), պր. Պարգև Եանրազյանը (Երևան), պր. Տանտ Սրապյանը (Բեյրութ), պր. Գրիգոր Գյուլյանը (Երևան):

Բանաձևերի խմբագրական հանձնաժողովի նախագահ գերաշնորհ Տ. Բարգև Եպիսկոպոս Ապատյանը, հանուն Ազգային-եկեղեցական ժողովի, ընթերցում է Վեհափառ Հայրապետի յոթնամյա գործունեութեան մասին երախտագիտական և շնորհակալութեան բանաձևը, որն ընդունվում է միաձայն, երկարատև և սրտագին ծափերով:

Ազգային-եկեղեցական ժողովի սույն երրորդ նիստում քննութեան է առնվում օրակարգի երկրորդ հարցը՝ «Հաշվետվութիւն Մայր Աթոռի տնտեսական գործունեութեան»:

Օրակարգի սույն հարցին նվիրված զեկուցով հանդես է գալիս Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ ղոցեմ Ա. Տիրացյանը:

Ազգային-եկեղեցական ժողովը, լսելուց հետո Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից ներկայացված Մայր Աթոռի յոթնամյա ֆինանսական գործունեութեան զեկուցը, միաձայն իր գոհունակութիւնն է արձանագրում, որ վերջին յոթը տարիների ընթացքում, Վեհափառ Հայրապետի անմիջական հսկողութեան տակ և Սրբաբնի և ներքին թեմերի տնտեսա-ֆինանսական գործերի ճշգրիտ կազմակերպումը տվել է իր բարի արդյունքները:

15 րոպե ընդմիջումից հետո, ժողովը շարունակում է իր աշխատանքները, ատենապետութեամբ պր. Սեդրակ Քարյանի:

Օրակարգի երրորդ նյութն էր «Հայ եկեղեցու Կանոնագրքի մշակման հարց»-ը:

Օրակարգի սույն հարցի շուրջ բովանդակալից զեկուցագրով հանդես է գալիս Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պրոֆ.-ղոպ, Առաքել Առաքելյանը:

Օրակարգի այս երրորդ հարցի շուրջը կատարվում է մտքերի փոխանակություն, որին մասնակցում են գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսիսյանը, գերաշնորհ Տ. Սիսեան արքեպիսկոպոս Արամյանը, գերաշնորհ Տ. Սիսեան արքեպիսկոպոս Մանուկյանը, հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Գրիգորյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ՝ պրոֆ.-դոկտ. Ա. Կարիբյանը, պրոֆ.-դոկտ. Ա. Առաքելյանը, իրավաբան Սարգիս Արևշատյանը (Երևան), «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը, պատգամավորներ պր. Սուրեն Գալեաներյանը, պր. Երվանդ Թյումպալյանը (Հայկեպ) և պր. Սարգիս Քյուրբեյանը (Կոնդոն):

Վեհափառ Հայրապետը խոսք առնելով վիճաբանության վերջում, ամփոփում և համադրում է հայտնված կարծիքները և շեշտում կարևորությունը Հայ Եկեղեցու Կանոնագրքի գիտական հրատարակության:

Այնուհետև Ազգային-եկեղեցական ժողովը միաձայն ընդունում է հատուկ բանաձևերով «Հայ Եկեղեցու Կանոնագրքի մշակման հարց» օրակարգի մասին:

Ազգային-եկեղեցական ժողովի երրորդ նիստը փակվում է հետմիջօրեի ժամը 3.15-ին:

Երեկոյան ժամը 7.30-ին, Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորները և Մայր Աթոռի բոլոր հյուրերը, Ալ. Սպենդիարյանի անվան կենտրոնի շքանշանակիր օպերայի և բալետի պետական թատրոնում ներկա են լինում Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայի ներկայացման:

Հոկտեմբերի 4-ին, հինգշաբթի, պատգամավորները ավտոմեքենաներով զբոսապտույտ են կատարում դեպի Սևան:

Չորս մեծ մարդատար շքեղ ավտոմեքենաներ առավոտյան ժամը 10-ին հյուրերին տանում են դեպի Սևան:

Հաճելի է ուղևորությունը: Աշնան պայծառ արևը ոսկեզարդել է հայրենի դաշտերն ու սարալանջերը: Ավտոմեքենաները սուրում են ասֆալտապատ զեղեցիկ ճանապարհներով: Ամեն կողմ փարթամ կանաչ և աշխատանքի երգ ու ծիծաղ:

Բարձր է նաև ուղևորների տրամադրությունը: Ոմանք երգում են, ուրիշներ խանդավառ զրուցում, հայրենի երկնքի տակ, հայրենի քաղցրություններով արբշիռ: Ոմանք անդադար շրխկացնում են լուսանկարչական և կինոնկարահանման գործիքները:

Եվ ահա վերջապես կապույտ, երազալի՜ն Սևանը սրբազան, հայրենի սեզ լեռների գրկում, իր հստակ ջրերի հայելին փռած... և հեռուն, Սևանի վանքը իր անուշ կաթողիկեով...

Ավտոմեքենաները կանգ են առնում Սևանի հանգստյան տան մեծ դարբասների առաջ: Պատգամավորները, առանձին խմբերի բաժանված, զբոսնում են, ոմանք լճի ափին կամ լճի մեջ նավակներով, ուրիշներ ավազի վրա: Ոմանք էլ բարձրանում են դեպի վանքը, մի ծունր աղոթք մրմնջելու և մոմ վառելու, մինչ ուրիշներ աշխույժով և ջերմությամբ զրուցում են հանգստացողների հետ:

Այնուհետև պատգամավորները այցելում են Սևանի ստորերկրյա հիդրոէլեկտրակայանը:

Ճանապարհին խումբը թեքվում է դեպի Հրազդան սրբուն ամառասոցային քաղաքը:

Ժամը 5-ին պատգամավորները վերադառնում են Երևան, հոգեկան մեծ բավակալություններ:

Երեկոյան ժամը 8-ին, ՍՍՄՄ տաղանդավոր երգչուհի Գոհար Գասպարյանի համերգն է Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում:

Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորները ներկա են լինում համերգին և ջերմորեն ծափահարում տաղանդավոր երգչուհու «Ծիծեռնակ»-ը, «Հայաստան»-ը, «Կոռնկ»-ը, «Կիլիկիա»-ն:

Հոկտեմբերի 5-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 11-ին, նոր վեհարանի հանդիսասրահում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախագահությամբ և գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի և պր. Տաճատ Մրապյանի ատենապետությամբ, գումարվում է Ազգային-եկեղեցական ժողովի շորրորդ և վերջին նիստը:

Նիստը բացվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով: Քարտուղարության անդամ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Գրիգորյանը ընթերցում է Ազգային-եկեղեցական ժողովի երրորդ նիստի արձանագրությունը, որը վավերացվում է փոքր ճշտումներով և ուղղումներով:

Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգի հաջորդ խնդիրն էր «Ամրապնդում Հայ Եկեղեցու միասնություն»:

Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից, օրակարգի այս կարևոր հարցի շուրջը ընդարձակ և բովանդակալից զեկույցով հանդես է գալիս Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը:

Չեկուցող սրբազանը կանգ է առնում 1956 թվականից հետո Անթիլիասի Աթոռից ներս դրսևորվող հակականոնական և կենտրոնախույս ձգտումների և Մայր Աթոռի ու Վեհափառ Հայրապետի կատարած հաշտարար ջանքերի վրա:

Սրբազանը շեշտում է, որ Ս. Էջմիածնում Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը լավագույն առիթն էր մերձեցման և մեր Եկեղեցու սերբյուս մրուխյան ամրապնդման: Այս ոգով առաջնորդված, Գերագույն Ղոզևոր Խորհուրդը պաշտոնական հրապարակող Անթիլիասի Կաթողիկոսական Աթոռին՝ մասնակցելու սույս սրբագումար ժողովին և Սրբալույս Մեռոնի օրհնության:

Բայց Անթիլիասը այս անգամ էլ մերժեց Ս. Էջմիածնի սրբալույս հրավերը:

Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը իր զեկույցի վերջում, հանուն Գերագույն Ղոզևոր Խորհրդի, Ազգային-եկեղեցական ժողովրս առաջարկում է սիրո և մրուխյան այսբան հորդորներից և հաշտության ջաքսուրից հետո, սոր ուղըներ որոնել՝ առաջքս առնելու համար եկեղեցական այս տագսպի, Հայ Եկեղեցու ծոցում վերահաստատուլով սերբյուս խաղաղություն և շինարար աշխատանք:

Այնուհետև սկսվում է «Ամրապնդում Հայ Եկեղեցու միասնության» օրակարգի հարցի շուրջ մտքերի աշխույժ փոխանակություն, օգտակար և շինարար առաջարկներով, որոնց մասնակցում են Տ. Սիռն, Տ. Տիրան արժեպիսկոպոսները, Տ. Եպարշ, Տ. Կենել, Տ. Պսակ, Տ. Կոմիտաս եպիսկոպոսները, պատգամավորներ պր. Արաշես Խաչատրյանը և պր. Սարգիս Քյուրճյանը (Լոնդոն), պր. Երվանդ Հյուսիսյանը (Միլանո), պր. Կեռզ Երեանյանը (Կիրանան), պր. Երվանդ Թյումպայար և պր. Սուրեն Կալենտերյանը (Սիրիա), պր. Եփրեմ Պայրամյանը (Արգենտինա), պր. Սուրեն Մանվելյանը և պր. Տիգրան Պոյանյանը (ԱՄՆ), պրոֆ. Արաքա Ղարիբյանը և պրոֆ. Առաքել Առաքելյանը (Գերագույն Ղոզևոր Խորհուրդ), «էջմիածին» ամսագրի խմբագիր պր. Ա. Հատիտյանը, արժանապատիվ Տ. Սարգիս Բանանա Անդրեասյանը (Երևան):

15 րոպե դադարից հետո, Ազգային-եկեղեցական ժողովը շարունակում է իր աշխատանքները:

Բանաձևերի խմբագրական հանձնաժողովի նախագահ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Ապատյանը ընթերցում է օրակարգի «Ամրապնդում Հայ Եկեղեցու միասնության» հարցի շուրջ բանաձևը, որն ընդունվում է Ազգային-եկեղեցական ժողովի կողմից միաձայն և սրտագին ծափերով:

Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգի հաջորդ խնդիրն էր «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաջիկա շինարարական գործունեության ծրագիրը»:

Օրակարգի այս հարցի շուրջ բանավոր զեկուցմամբ հանդես է գալիս հանուն Գերա-

զույն Ղոզևոր Խորհրդի, Մայր Աթոռին առնելիք ճարտարապետական հանձնաժողովի նախագահ ճարտարապետ Միքայել Մազմանյանը:

Զեկուցողը հանգամանորեն ներկայացնում է Ազգային-եկեղեցական ժողովին Մայր Աթոռի հետագա շինարարական գործունեության ծրագիրը, ինչպիսիք են ավարտումը Մայր Տաճարի, Երեմիայի, Սինոդի և Ղազարապատի շենքերի, Ս. Գայաննի, Ս. Գեղարդի, Խոր Վիրապի վանքերի վերանորոգման աշխատանքների, վերանորոգում Հաղարծնի վանքի և բնակելի շենքի կառուցում:

Ճարտարապետ Մազմանյանը առանձին ոգևորությամբ է խոսում Բյուրականում հայրապետական ամառանոցի կառուցման, Ապարանի Ե դարի եկեղեցու վերանորոգության, Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցու նկարագրման և այլ եկեղեցիների վերանորոգման աշխատանքների մասին:

Ազգային-եկեղեցական ժողովը օրակարգի այս հարցի առնչությամբ միաձայն և ջերմ ծափահարությամբ ընդունում է խմբագրական հանձնաժողովի նախագահի բերած բանաձևը:

Ազգային-եկեղեցական ժողովի վերջին օրակարգն էր «Ընտրություն Գերագույն Ղոզևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի»:

Ատենապետ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը ընթերցում է վեհափառ Հայրապետի կողմից Ազգային-եկեղեցական ժողովին ներկայացված Գերագույն Ղոզևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի նոր անդամների թեկնածության ցանկը, որն ընդունվում է ծափահարություններով և գիտություն:

Այնուհետև ատենապետ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի հրավերով, հանուն Ազգային-եկեղեցական ժողովի, բանաձևերի խմբագրական հանձնաժողովի նախագահ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Ապատյանը ընթերցում է Խաղաղության բանաձևը, որն ընդունվում է ցնծագին ծափահարություններով:

Ատենապետ սրբազանը պալ հրապարակում է Ազգային-եկեղեցական ժողովի նախագահության, դիվանի և բոլոր պատգամավորների անունից Հայկական ՍՍՏ Միներստրների Սովետի նախագահ Ա. Քոչինյանին ուղղված երախտագիտության հեռագիրը, որն ընդունվում է հոտնկայս, ցնծագին ծափահարություններով:

Օրակարգի բոլոր հարցերը սպառվել են:

Պատգամավորների ցնծագին ծափերի մեջ խոսք է առնում վեհափառ Հայրապետը և Իր պատգամն ու օրհնությունն է տալիս Ազգային-եկեղեցական ժողովին:



ԿԵՀԱՓԱՍ ՀԱՅՐԱԳԵՏԸ ԼՈՒՍԱՎՈՐԻՔԻ ԱԶՈՎ ՕՐՀՆՈՒՄ Է ՆՈՐ ՄԵՆՈՆԸ



համրովին երգված Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով Ազգային-եկեղեցական ժողովն ավարտում է իր աշխատանքները 1962 թվականի հոկտեմբերի 5-ին, ուրբաթ, հետմիջօրեի ժամը 4-ին:

Ազգային-եկեղեցական ժողովի ավարտից հետո, նոր Վեհարանի գլխավոր մուտքի դիմաց, պատգամավորները լուսանկարվում են: Երեկոյան ժամը 8-ին, Հայկական ՄՍՌ Գիտությունների ակադեմիայի դահլիճում, տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Զեյթունի պատմամեթոդական հարյուրամյակին, որին ներկա են լինում Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորներն ու Մայր Աթոռի հյուրերը:

Հոկտեմբերի 6-ին, շաբաթ, առավոտյան ժամը 11—2, պատգամավորները մեծ գոհունակությամբ այցելում են Հայաստանի ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսը և ապա, ժամը 4—5, Երևանում, նկարիչ Կալենիցի ստեղծագործությունների ցուցահանդեսը:

Երեկոյան ժամը 7.30-ին, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում, պատգամավորները ներկա են լինում Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի ներկայացման:

**ՍՐբԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ**

Ազգային-եկեղեցական ժողովի գումարման առթիվ տեղի ունեցած հանդիսությունների փառապանակն է կազմում հոկտեմբերի 7-ին, կիրակի, Մայր Տաճարում կատարված Սրբալույս Մեռոնի օրհնությունը:

Կիրակի, աշնանային պայծառ առավոտ է: Ուխտավորների հոծ բազմությունը վաղուց լցրել է մայրավանքի բակն ու շրջակայքը, մինչ ավտոմեքենաները ուխտավորական նորանոր խմբեր են բերում Երևանից և Հայաստանի շրջաններից:

Ուխտավորներ եկել են նաև հարևան եղբայրական հանրապետություններից՝ Թբիլիսիից, Բաքվից, Ռոստովից, Հյուսիսային Կովկասից և Մոսկվայից:

Սրբալույս Մեռոնի օրհնության ազգային-եկեղեցական մեծ հանդիսության մասնակցելու համար, Սփյուռքի հայկական զանազան կայքերից Հայրենիք են եկել բազմաթիվ ուխտավորներ, կտրելով հազարավոր կիլոմետր ճանապարհ:

Սրբալույս Մեռոնի օրհնությունը հայ հավատացյալ ժողովրդի սրտի ամենամոտ ազգային-եկեղեցական հանդիսությունն է, որին նա միշտ ներկա է եղել հոգեկան ուրախության վառ զգացմունքներով:

Եվ եկել է այսօր ևս հայ ուխտավորը Ս. էջմիածին, Մայր Հայրենիք, աշխարհի բոլոր ծագերից, իրեն հետ բերելով բյուր կարոտներ, համբույր, երազ ու սեր, տարագիր հայ մարդու հայրենասիրական տենչերով ու երազով բարախող սրտերից:

Ս. էջմիածինը բերել է բոլորին իր սիրասուն գիրկը մայրական, իր մեռոնաբույր օրհնությունն ու աղոթքը բաշխելու բոլորին:

Մայր Հայրենիքը իր պատմական հուշարձաններով և ներկա պայծառ կյանքով, որպես մազնիսական ուժ, բերել, մեկտեղել է բոլորին Հայրենի Հողի վրա:

Ժամը առավոտյան 10-ն է:

Մայր Տաճարի զանգերը նորից հնչում են տոնական ու զվարթ:

Ալեկոծվում է վանքի բակում սպասող ուխտավորների բազմությունը:

Նոր Վեհարանի մուտքից մինչև Մայր Տաճարի կենտրոնական ավազ դուռը բազմությունը կանգնել է երկշարք, սպասելով հանդիսավոր եկեղեցական թափորի շքերթին:

Նոր Վեհարանում զգեստավորվում է Վեհափառ Հայրապետը: Տոնականորեն և պատշաճ ձևով զգեստավորվում են նաև 12 արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ, որոնք մասնակցելու են Սրբալույս Մեռոնի օրհնության:

Եկեղեցական մեծահանդես թափորը սկիզբ է առնում նոր Վեհարանի մեծ շքամուտքից և ձգվում դեպի Մայր Տաճար:

Առաջից ընթանում են կարմրազգեստ, ջլապինդ երկու շաթիրները, արծաթազուխ գավազաններով: Նրանց հետևում են ջահակիրները, ապա Հոգևոր ձեմարանի ուսանողները, Մայր Աթոռի սարկավազները, քահանա հայրերն ու վարդապետները շուրջառազգեստ: Թափորի կենտրոնում, երկու վարդապետներ տանում են խաչվառն ու գավազանը:

Անուհետև զգեստավորված 12 արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների շքախումբն է գալիս, այդ թվում ամենապատիվ Ս. Խաչարքեպիսկոպոս Աջապահյան, Ս. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյան, Ս. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան, Ս. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյան, Ս. Սերովբե եպիսկոպոս Մանուկյան, Ս. Շավարշ եպիսկոպոս Գուլամճյան, Ս. Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյան, Ս. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյան, Ս. Պսակ եպիսկոպոս Թումաշյան, Ս. Գնել եպիսկոպոս Զեբեճյան, Ս. Բարզան եպիսկոպոս Ապատյան, Ս. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյան:

Եպիսկոպոսները իրենց ձեռքներին վերցրել են օրվա խորհուրդը նշող սրբություններ, մասունքներ, արծաթապատ Ս. Ավետարաններ, Սրբալույս Մեռոնի անոթ (բալասանով և անուշաբույր ծաղիկների հյութով լի), հին մե-



Եկեղեցական թափորը նոր Վեճրանից ուղղվում է Մարտ Ծածար

ռոնով լի մի մեռնադավնի, Ս. Կենաց փայտը, աստվածամուխ Ս. Գեղարդը, Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը, Ս. Արիստակես Հայրապետի Աջը, Ս. Հակոբ Մծբնա Հայրապետի Աջը, Ս. Քաղեոս առաքյալի Աջը, Ս. Թովմաս առաքյալի Աջը և ուրիշ մասունքներ:

Երկու սարկավազներ կրում են Ս. Մեռնի կաթսայի ոսկեթել երիզներով ձյունապիտակ շղարչը: Նրանց հետևում են Արքայույթ

Մեռնի օրհնության երկու կնքահայրերը՝ պր. Հարի Մովսեսյան (ԱՄՆ) և պր. Սարգիս Քյուրքճյան (Անգլիա)՝ գեղեցիկ, ոսկեթել շապիկներ հագած:

Քափորի վերջում, ամպհովանու տակ, գալիս է Վեհափառ Հայրապետը պատարագի լրիվ զգեստավորման մեջ, հայրապետական գավազանն ու խաչը ձեռքին, օրհնություն և երանություն սփռելով իր ճանապարհի վրա:

վեհափառ Հայրապետի առջևից տարվում է հայրապետական ոսկեթել քոլը: Խնկարկող վարդապետների զույգ բուրվառներից ծավալվում է անուշ կնդրուկի բուրմունքը:

Բազմությունը, հոգեպես վերացած, խաշակնքում է և աղոթքներ մրմնջում:

«Հրաշափառ Աստուած» շարականի վեհ հնչյունների տակ, Տրդատյան դռան միջով, եկեղեցական թափորի շքերթը մուտք է գործում Մայր Տաճար, որը զարդարվել է տոնականորեն: Թնդում է «Ուրախ լին» շարականը, որը բերկրանքի, խնդության հույզերով է համակում բոլորի սրտերը: Արդարև, այսօր շատ ուրախ է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, «մայր որդույժ բերկրեալ»:

Ամեն կողմ լույս, խոնկ ու աղոթք...:

Երկու դասերում տեղ են գրավել պատգամավորները, ուխտավորներն ու հյուրերը:

Մայր Տաճարում ներկա են Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Արքեպիսկոպոս Ալեքսիի ներկայացուցիչ Բիմեն միտրոպոլիտը, Ալեքսանդր եպիսկոպոսը և Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Արքեպիսկոպոս Եփրեմ Բ-ի ներկայացուցիչ Իլիա վարդապետը:

Ներկա են նաև ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական-պաշտամունքների գործերի խորհրդի ներկայացուցիչ Սուլվյուովը և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Ավագ Ս. Սեդանի առաջ վեհափառ Հայրապետը կատարում է լվացման կարգը և ապա, հանդիսակից 12 սրբազանների ուղեկցությամբ, բարձրանում է Ս. Սեդան, որի ձախ կողմում դրվել է 40 օր առաջ Արքայույս Մեռոնի արծաթյա մեծ կաթսան, ծածկված սպիտակ շղարշով:

Սկսվում է հայրապետական մեծաշուք պատարագը:

Մայր Աթոռի երգեցիկ խումբը, Խորեն Հակոբյանի շնորհալի ղեկավարությամբ, կատարում է Կոմիտասյան պատարագի քառաձայն երգեցողութունը:

Սուրբ պատարագը նույն վեհությամբ շարունակվում է մինչև «Ողջոյն տուր միմեանց»-ը:

Պատարագիչ վեհափառ Հայրապետը բազմում է «յաթոռ և երկոտասան եպիսկոպոսունք կալով շրջապատ առաջի, ունելով ի ձեռս իրեանց զսուրբ նշանն կենաց, և զԱջ Սրբոյ Լուսաւորչին և ղնշխարս սրբոց և մեռոնաշիչ մի լցեալ հին Մեռոնաւ»:

Սկսվում է Արքայույս Մեռոնի օրհնությունը:

«Յայնժամ եպիսկոպոսապետն կատարէ զխորհրդածութիւն Սրբոյ Մեռոնին»:

Եպիսկոպոսները Ս. Գրքից ընթերցում են համապատասխան հատվածներ Սուրբ Յուզի պատրաստության հոգևոր, մաքրագարող նշանակության և նրա գործածության մասին:

Վեհափառ Հայրապետը ընթերցում է մեռոնօրհներթի մեծ աղոթքները, «զաղօթս խընկարկութեան»:

«Արդ, զօրութեամբ ամենասուրբ Հոգւոյդ եղիցի իւզս այս՝ իւղ ցնծութեան, զգեստ լուսաւոր, օծումն թագաւորութեան, սրբութիւն հոգւոց և մարմնոց, շնորհք հոգևորական, պահապան կենաց, կնիք արդարութեան, զէն հաւատոյ, նահատակ յաղթող ընդդէմ ամենայն գործոց բանսարկուին. ոգւոց փրկութիւն, ցնծութիւն սրտից, ուրախութիւն յաւիտենական, զի որ ոք օծցի ի սմանէ՝ վերստին ծննդեան իւղովս, երկիրւած լիցի յԱստուծոյ և աներկիւղ ի հակառակորդէն»:

Եպիսկոպոսական դասը միաբերան ու ներդաշնակ երգում է «Որ յառաջագոյն յօրէնս» մեռոնօրհնության շարականը և «Մեղեդի Մեռոնի՝ «Հայր ամենակալ» և Շնորհալու գրած «Քաղցր ձայնիւ քարոզ»-ը՝ «Նոր օրհնութիւն»:

Այնուհետև վեհափառ Հայրապետը կարդում է մեռոնօրհնության երկրորդ և երրորդ մեծ աղոթքները:

Ապա «լինի բացումն դրան նիւթոյ Մեռոնի», այսինքն լուսարարապետ սրբազանը բացում է Մեռոնի կաթսայի կափարիչը, մինչ դպիրները եղանակում են ոգևորությամբ «Բացեր, Տէր, այսօր զգանձդ երկնային» շարականը:

Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես կաթսայի մեջ է լցնում «զնիւթ ծաղկանցն և ապա զպալասանն և զկնի զհին Մեռոնն ասելով շարական «Առաքելոյ աղանդոյ»:

Հին Մեռոնի ոսկի շիթերը թափվում են նոր Մեռոնի մեջ, մինչ ցնծագին հնչում են զանգերն ամենայն, «զի լիցի դղրդումն»:

Վեհափառ Հայրապետը Կենաց փայտով, Ս. Գեղարդով և Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջով տյառնագրում է և խառնում նոր Մեռոնը, երգելով.

«Օրհնեսցի և սրբեսցի Մեռոնս այս նշանաւ...»:

Նոր մեռոնը տյառնագրվում է նաև մյուս մասունքներով և սրբություններով և ապա նորից ծածկվում է կափարիչով և «եօթն շղարշով»:

Վեհափառ Հայրապետը կարդում է վերջին աղոթքը:

«Արդ՝ այժմ և մեք պատրաստելով զսաորպէս կաթն՝ մատուցանեմք, զի ամենեքեան որ ի սմանէ առնուցուն՝ արժանի լիցին»:



Տեսարան թափորից

ընդունել զհաստատուն կերակուր, զճշմարիտն, զերկնայինն՝ ի շնորհաց Միածնի քո Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի...»:

«Քրիստոս Աստուած մեր՝ պարզեիչ աստուածային օծութեան, սրբեա՛ զմեզ առ ի քէն սրբութեամբն և արա՛ զմեզ հաղորդս պարզեաց Հոգւոյդ քո Սրբոյ, որպէս զի կատարեսցի կարգս այս Սրբոյ Մեռոնիս, Տէր մեր և Աստուած մեր յաւիտեանս...»: «Եւ այժմ ծագեա՛ ի սիրտս մեր զպարզև բարութեան Հոգւոյդ Սրբոյ, և հաղորդակիցս երևցո՛ զմեզ պարզեաց քոց սրբոց, վասնզի Դու իսկ ես Մեռոն ամբիծ, և մաքուր, և անաղտ, որ հանապազ բուրես յանձինս սրբոց քոց...»:

Հանդիսութեան մասնակից եպիսկոպոսներից մեկը ընթերցում է Մարկոսի Ավետարանից մի էջ՝ «Եւ շրջէր Տէրն մեր Յիսուս Քրիստոս»:

Մարկավագը բարձրաձայն քարոզում է. «Սուրբ խաչիւս և Սուրբ Մեռոնաւս աղաչեսցուք զՏէր»:

Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվում է Սրբալույս մեռոնի օրհնութեան սրտառուչ հանդիսությունը:

Այժմ քարոզի պահն է: Վեհափառ Հայրապետը խոսում է իր ներշնչված, հոգեկից քա-

րոզներից մեկը, օրվա հոգեզմայլ հանդիսությունների և օրհնությունների տպավորության տակ.

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Ամէն»:

«Եւ ասաց Աստուած, եղիցի լոյս. և եղև լոյս» (Մենդ. Ա 3):

Միեւի՛ բարեպաշտ ժողովուրդ.

Աստուած շունչով գրված Ս. Գրքին մեջ կկարդանք, թե Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը: Բայց երկիրը ամայի էր, անպատրաստ և խավարը կտիւրեր բոլոր անդունդներուն վրա: Եվ լավեցավ Աստուած արաշագործ ձայնը. «Եղիցի լոյս», լոյս թող ըլլա, «և եղև լոյս», լոյս եղավ: Եվ երբ լոյս եղավ, աշխարհ գույն և ձև ստացավ, խավարը փառատեցավ, ամայությունները լցվեցան կյանքով և երկիրը պատրաստ եղավ ըստ Աստուծո կամքին և հրամանին: Քառսը վերածվեցավ ներդաշնակություն և աշխարհ կոչվեցավ նոր, լուսավոր կյանքի մը:

Միեւի՛ ժողովուրդ, այս նշմարությունը կվերաբերի, ըստ Ս. Գրոց, նյւթական տիեզերքի ստեղծումին: Բայց այս նշմարությունը կվերաբերի մանավանդ մյուս տիեզերքին, մյուս աշխարհին, որ մաքուր աշ-



Եկեղեցական թափորն ուղղվում է Մայր Տաճարից դեպի նոր Վեհարան

խարհն է, մարդուն տիեզերքը, մարդկային կյանքի աշխարհը:

Մարդկային կյանքն ալ, ինչպես նյութական տիեզերքը, ամայի էր և անպատրաստ ու խավար կտիւրեք բոլոր սրտերեն ներս, և մարդկությունը երկար, շատ երկար ճանապարհն ֆալեց, ֆարձարում ու փշոտ ճամբաներով, մինչև որ հասավ իմացական, հոգևոր, բարոյական այն բարձունքին, երբ կարողացավ ընդունիլ աստվածային նախախնամությամբ ուղարկված Աստուծո Որդին, մեր Տերը Հիսուս Քրիստոս և Փրկիչը ազգի մարդկան, որ եղավ նոր «Նդիցի լոյս» մը:

Մարդկային հոգեկան աշխարհին համար, մեր Փրկիչը իր Ավետարանով, իր սիրո և խաղաղության ու արդարության Ավետարանով, համայն մարդկության համար եղավ այն լույսը, որ հոգիներեն ներս խավարը փարատեց, ամայությունները կյանքով լեցուց և ծաղկեցուց և ինչ որ անպատրաստ էր և անկատար, դարձավ կատարյալ և գեղեցիկ և ներդաշնակ. ձև և գույն ստացավ նաև մարդու կյանքը, ոգեկան իմաստավորումով մը լուսավորված:

Այսպես կհասկնանք մենք գՀիսուս Քրիստոս, լույսը աշխարհի, լույսը հոգևոր, բարոյական իմաստով:

Մեր ժողովուրդը, առաքելական դարեն սկսյալ, իր հոգին, իր սիրտը բացավ այս լույսին առջև. բայց մանավանդ Դ դարու սկզբնավորության օրերուն, այստեղ, որ կանգնած ենք մենք այսօր, Աստված անգամ մը ևս «Նդիցի լոյս» քսավ Հայաստան աշխարհի համար, մեր ժողովուրդի համար, Ս. Դրիգոր Լուսավորչի պատմական տեսիլով, երբ ինքը Փրկիչը Հիսուս Քրիստոս լուսեղեն կերպարանով եկավ, իջավ Աբարատյան դաշտ և լուսավորեց գՀայաստան աշխարհ: Հայ ժողովուրդը վերստին ծնավ և շարունակեց ապրիլ նոր կյանք մը: Այդ կյանքը եղավ փառավոր իր բոլոր ձևերուն մեջ՝ ստեղծագործ, շինարար և բարի, ազնիվ ու վեհ գաղափարներ իրականացնող՝ հայոց կյանքի պատմության մեջ:

Իսկ եթե հանախ նահատակվեցավ հայ ժողովուրդը և տառապեցավ, դեպի լույս իր այս նանապարհի ընթացքին, այդ բոլոր տառապանքները, շարչարանքները և նահատակությունները անոր հոգին առավել գեղեցկացուցին, առավել պայծառացուցին, և այսօր, այդ բոլորը միասին՝ երկու հազար տարվա հոգևոր և բարոյական հարստություն մը, անկորելելի գանձ մը կհանդիսանան մեզի համար; և մենք, սրբազան ուխտը ունենալ պանելու անա-

դարտ և անայլայլ ու անասան այս հավատ-
 քը և այս հավատքեն բխող և մեզի եկող
 աստվածային լույսը: Այդ լույսի պահպանը
 և շեմամարանը մեր Ս. Եկեղեցին է, Հայաս-
 տանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, իր
 գլուխը ունենալով աստվածակառույց Մայր
 Աթոռ Ս. Էջմիածինը: Եվ մենք այդ լույսը մեր
 հոգիներու մեջ կպանենք, կպահպանենք ա-
 մեն մեկս, մեր Բրիտանիական կյանքով,
 մեր աղոթքներով, մեր մասնակցությամբ Ե-
 կեղեցվա կյանքին և մանավանդ մերձենալով
 մեր Ս. Եկեղեցվա սուրբ խորհուրդներուն: Մեր
 Եկեղեցվա սուրբ խորհուրդները այն աղբյուր-
 ներն են, հավետ կենդանի, ուրկե կրթիւն
 աստվածային լույսի ճառագայթները և կյու-
 սավորեն մեր մարմինը և մեր հոգին ու մեր
 միտքը, և մենք կդառնանք ավելի կառայալ,
 հոգեպես ավելի ներդաշնակ, միշտ պատ-
 րաստ բարի, առաքիլի և շինարար գործերու:

Սուրբ խորհուրդներու կատարման ընթաց-
 քին Սրբալույս Մեռուր կհանդիսանա այն
 աղբյուրներեն մեկը, ուրկե կրթի մեզի հա-
 մար այդ ոգեկան լույսը: Ազոր համար է, որ
 մեր ժողովուրդը այս սրբացած յուրը կկոչի
 Սրբալույս Մեռուր:

Լույսի գաղափարը մեզմե երբեք չի բաժնը-
 վիր և մենք կսիրենք այդ լույսը, որպեսզի
 ավելի մարդ դառնանք, ավելի վեր բարձրա-
 նանք հոռի և մարմնի մակարդակեն և իրա-
 կանացենք մեր կյանքին մեջ այն, ինչ որ
 նշմարտապես մարդկային է:

Միւրեւի՛ հավատացյալներ, Տիրոջ ողորմու-
 քյամբ, մեր սրբազան եղբայրներու և ձեզի
 հետ միասին աղոթելով, մեր խնդրվածքները
 բարձրացուցինք այս սուրբ և անմահ Տաճարի
 կամարներեն դեպի երկինք, որպեսզի աստ-
 վածային շնորհները, աստվածային գորու-
 քյունը և լույսը իջնեն այս Մեռուրին մեջ և
 այն դառնա Աստուծո ձեռքով օրհնված, Ս.
 Գրիգոր Լուսավորչի Աջով օրհնված Սրբալույս
 Մեռուր, որով պիտի դրոշմվին մեր ժողովուր-
 դի բոլոր նորածին գավակները և պիտի դառ-
 նան Բրիտանիաներ, պիտի դառնան հայ
 Բրիտանիաներ:

Ի սփյուռս աշխարհի ցրված մեր ժողո-
 վուրդը այսօր մեր Ս. Եկեղեցիով կա և կմնա
 մեկ և անբաժան և այս Ս. Մեռուրը լույսի այն
 աղբյուրն է և այն լուսնոյն կապը, որով
 կմիավորվի հոգեպես հայ հավատացյալ ժո-
 ղովուրդը: Վաղը մյուս օր, երբ արտասան-
 սանեն եկած մեր սրբազան եղբայրները վե-
 րադառնան իրենց երկիրները, մինչև Ափրի-
 կե, մինչև Ավստրալիա, մինչև Միջերկրակա-
 նի, Ատլանտյանի և Խաղաղակաճի նեոավոր
 ավերը, անոնք բոլոր հատուկ ամաններու
 մեջ իրենց հետ պիտի տանին նոր եփված
 այս Սրբալույս Մեռուրն:

Մեծ մասը այստեղ պիտի մնա, և անկ
 միշտ պիտի բաժնվի աշխարհի բոլոր կողմե-
 րը ուր հայեր կան, ուր հայ եկեղեցիներ կան
 որով այս Ս. Տաճարեն լույսը պիտի տարածվի
 անոնց ալ վրա, և Սրբալույս Մեռուրով լու-
 սավորված հայ ժողովուրդը ալ ավելի պիտի
 մնա գորավոր և անսասան իր հավատքին մե-
 իրեն Բրիտանիայ և իրեն հայ ժողովուրդի
 իրեն մեր վերածնած Մայր Հայրենիքի հա-
 վատարիմ գավակ:

Միւրեւի՛ ժողովուրդ, բայց Մենք կմտաբե-
 ու կրթանք, որ սիրո և խաղաղության աստ-
 վածային շնորհները, Ս. Ավետարանի լույսը
 տարածվին ոչ միայն մեր ժողովուրդի, այլ
 ամբողջ աշխարհի վրա: Մենք միշտ աղոթու-
 կմանք, որ ամբողջ աշխարհի մեջ խաղաղու-
 քյուն ըլլա, ազատություն ըլլա, արդարու-
 քյուն ըլլա, այսինքն լույս ըլլա, որպեսզի մեր
 կյանքը, այս աշխարհի ժողովուրդներու
 կյանքը, շնն ամայի և անպատրաստ և խա-
 վարի մեջ: Թող հետնան կյանքի սամաններ-
 րեն ամեն ամայություն, ամեն անկատարու-
 քյուն, ամեն տեսակի խավար: Կյանքը ըլլա
 թող խաղաղ, ազատ և բարգավաճ: Թող մար-
 դիկ ապրին, անին ու ծաղկին երբայրբար և
 ողջունեն երկնքի արևի ճառագայթներու հետ-
 միասին միևնույն Աստվածը, որ իրենց հոգի-
 ներուն ալ կբաշխե կենարար և ստեղծարար
 լույս:

Թող Աստված օրհնե, պահե և պահպանե
 մեր հարազատ, սիրելի ժողովուրդը, հայ ժո-
 ղովուրդը, միշտ անփորձ, անվտանգ պահ-
 պան մեր Ազգը այժմ և միշտ: Թող Աստված
 Իր օրհնությունը շնորհե և բաշխե առատա-
 պես անցյալի մեջ մարտիրոսացած բայց թե
 այսօր վերածնած, շնն և պայծառ և երջանիկ
 մեր Հայրենիքին, ուր հայ ժողովուրդի գա-
 վակները, ի մի համախմբված, իրենց բա-
 գավենեով, իրենց աշխատավոր ձեռքերով և
 իրենց մտքի հանճարով ոչ միայն կվերադա-
 նեն, այլ նաև բարձունք բարձունք կտանին
 այս փոքրիկ բայց գմայլելի Հայոց երկիրը:

Ձեզի ալ, սիրելի՛ ժողովուրդ, որ հավա-
 ված եք այստեղ Հայաստանեն և Սփյուռքեն,
 թող Աստված Իր օրհնությունը պարգևե,
 անփորձ և անվտանգ պահե-պահպանե ձեզ և
 միշտ առաջնորդե ձեզ ամենեդ Իր գորու-
 քյամբ:

Փա՛ռք Հայաստանյայց Առաքելական Ս. Ե-
 կեղեցիին և աստվածապարզ Մայր Աթոռ Ս.
 Էջմիածնին, այժմ և հավիտյան: Ամեն»:

Այնուհետև շարունակվում է սուրբ պատա-
 րագը «Ողորդն»-ից:

Բրիտանիական ոչ մի եկեղեցու կյանքում
 Սուրբ Յուդի կամ Մեռուրի օրհնությունը, որ-
 պես խորհրդավոր սրբություն, այնքան մեծ
 արժեք, հոգևոր նշանակություն, ընդհանրա-

յած ժողովրդայնություն չի ունեցել որքան
չայ Եկեղեցու մեջ, հայ հավատացյալ ժո-
ղովրդի կյանքում:

Այդ իսկ պատճառով ի հնուց անտի Հայ
Եկեղեցու մեջ Սրբալույս Մեռոնի օրհնություն-
ը վերապահված է հայրապետական բարձ-
րագույն իշխանության:

Ըստ Եկեղեցու կանոնի, «պարտ է արքայն՝
Սուրբ Մեռոնն, այն է զիւղն անուշահոտու-
թեան հայրապետին օրհնել» (Օձնեցի):

Ահա թե ինչու՞ մեր Եկեղեցին բացառիկ
չքով ու հանդիսություն մը է կատարում Մեռո-
նի օրհնությունը:

Առաջին Մեռոնը օրհնել է Ս. Գրիգոր Լու-
սավորչը ըստ Ագաթանգեղոսի. «Իւղն օծու-
թեան զոր արկանէր Գրիգոր ի վերայ մարդ-
կան, շրջան առեալ ի մէջ գետոյն՝ շուրջ
զմարդկամբն խաղայր... և քրիստոսեան
դրոշմաւ առ հասարակ ընծայեցուցանէր զա-
մենեսեան լինել ամենեցուն Հոգւովն Սրբով»:

Լուսավորչի օրհրից մինչև այսօր, հայ հա-
վատացյալ ժողովուրդը, մեծագույն հավա-
տով ու երկյուղածությամբ, ներկա է եղել
Սրբալույս Մեռոնի օրհնության և Մեռոնի
կաթսայի առաջ ծնրադիր հաղորդակցել է իր
սրբազան նախնիքների հավատի և ավանդու-
թյունների հետ:

Սրբալույս Մեռոնը եղել է մեր կրոնական
զգացմունքների, ազգային գիտակցության և
հայ ժողովրդի հոգևոր միասնականության
խորհրդանշանը, ոգեկոր շաղախը, որով Հայ
Եկեղեցու զավակները դրոշմվում են և շող-
կապվում միմյանց հետ, դառնալով մի հոգե-
վոր ամբողջություն:

Սրբալույս Մեռոնի շնորհիվ է դարձյալ, որ
ի Սփյուռս աշխարհի ցրված հայությունը
կապվում է իր Սրբություն Սրբոց, հայ հոգու
վկայարան, ամենայն հայոց Մայր Աթոռ Ս.
Էջմիածնի հետ:

Սրբալույս Մեռոնի կաթսան հայ ժողովրդի
սիրտն է, ուր հայ հավատն ու հոգին օրհնվում
են և իբրև մասունք բաշխվում բոլոր ժամա-
նակների հայության:

Այդ զգացմունքներով և խոհերով, ուխտա-
վոր բազմությունը երկյուղածորեն համբու-
րում է Սրբալույս Մեռոնի կաթսան, հաղոր-
դակցելով իր պապերի անմահ հոգիների և
լույս հավատի հետ:

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՅՈՒԹԵՐՈՒԿ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՆԳԻՍՈՒԹՅՈՒՆԸ
ՆՈՐ ՎԵՀԱՐԱՆԻ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ**

Հոկտեմբերի 7, կիրակի:
Այսօր է նաև Վեհափառ Հայրապետի գա-
հակալության 7-րդ տարեդարձը:

Սրբալույս Մեռոնի օրհնության նվիրված
հանդիսություններից հետո, առանձին տեղ է

հատկացված Վեհափառ Հայրապետի գահա-
կալության 7-րդ տարեդարձին նվիրված տո-
նակատարությունը:

Այս տարի ևս Ազգային-եկեղեցական ժո-
ղովի գումարումը, Սրբալույս Մեռոնի օրհ-
նությունը և Ամենայն Հայոց Վեհափառ Հայ-
րապետի գահակալության 7-րդ տարեդարձը,
եռակի այս տոնախմբությունները, ճշմար-
տապես վերածվել են դեպի Ս. Էջմիածինը և
Հայրենիքը հայ հավատացյալ ժողովրդի ու-
նեցած սիրո, հարգանքի և երախտագիտու-
թյան մի վառ ապացույցի:

Մեռոնօրհնությունից հետո, հավարտ սուրբ
պատարագի, Վեհափառ Հայրապետը եկեղե-
ցական թափորով և հանդիսությամբ առաջ-
նորդվում է նոր Վեհարանի Գահասրահը, ժո-
ղովրդական խանդավառ արտահայտությու-
նների և սրտագին բարեմաղթությունների ներ-
քո:

Վեկեղեցական մեծահանդես թափորը, «Որ
զխորհուրդ» և «Որ գշնորհս» շարականները
երգելով, հասնում է Վեհարանի շքամուտքը և
բարձրանալով երկրորդ հարկը, կանգ է առ-
նում նոր Վեհարանի Գահասրահում, ուր տե-
ղի են ունենալու այսուհետև պաշտոնական
ընդունելությունները:

Վեհափառ Հայրապետը բազմում է իր Գա-
հի վրա, շրջապատված արքեպիսկոպոսունե-
րով, եպիսկոպոսներով, վարդապետներով,
հոգևորական ամբողջ դասով:

Պատգամավորները, հյուրերը, ուխտավոր-
ներն ու պաշտոնական անձինք տեղ են գրա-
վում հանդիսությանց շքեղ դահլիճում:

Հանուն Մայր Աթոռի միաբանության և
Գերագույն Հոգևոր Խորհրդի, առաջինը Վեհա-
փառ Հայրապետի գահակալության 7-րդ տա-
րեդարձը շնորհավորում է Մայր Տաճարի լու-
սարարապետ և Գերագույն Հոգևոր Խորհրդի
ատենապետ գերաշնորհ Տ. Սահակ աբեղյան-
կոպու Տեր-Հովհաննիսյանը ջերմ բարեմաղ-
թություններով և երախտագիտությամբ, որ-
դիական անկեղծ զգացմունքներով:

Տ. Սահակ արքեպիսկոպոսը Վեհափառ
Հայրապետի գահակալության 7-րդ տարե-
դարձի բարեբաստիկ առիթով, աջահամրույ-
րով նորին Ս. Օծություն նվիրում է Գերագույն
Հոգևոր Խորհրդի թանկարժեք նվերը՝ հայրա-
պետական զավաղան ձուլլ ոսկի զվխով, ըն-
տիր գործ Երևանի անվանի հայ ոսկերիչ վար-
պետների:

ՊՐ. ՍԱՐԳԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին
առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի
նախագահ պր. Սարգիս Գասպարյանը, այս
հանդիսավոր առիթով, խանդավառ ծափերի

մեջ ողջունելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, ասում է.

«Վեհափառ Տե՛ր.

Թույլ տվեք Հայ Եկեղեցու գործերի խորհրդի կողմից, ինչպես նաև Սովետական Միության Մինիստրների Սովետին առընթեր կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի կողմից, ողջունել Ձեզ այս հանդիսավոր առիթով, որը համընկնում է Ազգային-եկեղեցական ժողովի աշխատանքների ավարտման, Ձեր գահակալության 7-րդ տարեգարծի և Ս. Մեհոնի օրհնության հետ:

Նախ թույլ տվեք մեր շնորհավորությունը հայտնել այն առթիվ, որ Ազգային-եկեղեցական ժողովը, որ Հայ Եկեղեցու կյանքում խոշորագույն իրադարձությունն է, հաջողությամբ ավարտեց իր աշխատանքները:

Յոթ տարիներ են անցել այն օրից, երբ Ս. Էջմիածնի Գահն եք բարձրացել Դուք: Ես շատ ուրախ եմ նշելու, որ պաշտոնական հանգամանքներով ես իմ գործունեության մեջ կարողացել եմ բաժանել այդ ժամանակի մի զգալի մասը, և այսօր մենք գոհունակությամբ կարող ենք նշել, որ այդ տարիները եղան արգասավոր գործունեության, ազգավեր, հայրենասիրական գործունեության տարիներ:

Ես կցանկանայի նշել առաջին հերթին այն, որ այդ յոթ տարիների ընթացքում Դուք զբլխավորեցիք Հայ Եկեղեցու գործունեությունը հայ ժողովրդի պատմական հուշարձանների վերականգնման ու պահպանման ասպարեզում, այն հուշարձանների, որոնք հայտնի են ամբողջ աշխարհին և որոնք մեծագույն ներմուծում են համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ: Այս շնքը, որ Դուք վերակառուցեցիք, այս Վեհարանը, դրա մեծագույն ապացույցներից մեկն է: Ես կուզենայի ընդգծել նաև այն կապերը, որ հաստատվեցին այս տարիների ընթացքում Սփյուռքի և Մայր Հայրենիքի միջև, էջմիածինը հանդիսանալով Հայաստանի և Սփյուռքի մերձեցման ու զոդման ամենամեծ ազդակներից մեկը:

Գոհունակության զգացումով մենք նշում ենք, որ այս Ազգային-եկեղեցական ժողովը, կարելի է ասել, ամենաներկայացուցչականն է նախորդ ժողովների համեմատությամբ: Ուրախ ենք, որ աշխարհի գրեթե բոլոր երկրներից, այստեղ ժամանել են աշխարհիկ և հոգևոր պատգամավորներ՝ մասնակցելու համար Ազգային-եկեղեցական ժողովին:

Վերջապես ես կցանկանայի նշել, որ այս տարիների ընթացքում, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը, Հայ Եկեղեցին և նրա Ղեկավարը տվեցին ապացույցը այն բանի, որ

Հայ Եկեղեցին և հավատացյալները կանգնա են խաղաղության պաշտպանության դիրքերում: Չափազանց զնահատելի էր, այդ իմաստով, այն, որ Դուք, իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս, մասնակցեցիք միջազգային շահահամաժողովների և Ձեր հեղինակավոր խոսքը բերեցիք ի պաշտպանություն խաղաղության: Դա մեծագույն ներմուծումն է արդ այն մեծ ճակատամարտի մեջ, որով պահպանվելու է խաղաղությունը ամբողջ աշխարհում: Ծակատամարտ բառը գուցե զինվորական իմաստ ունի ձևով, բայց այդ ձևակատամարտն է, որ մղվում է, որպեսզի աշխարհում երբեք պատերազմ չլինի:

Մի առանձին գոհունակությամբ ես ուզում եմ նշել Ձեր արտասահմանյան ուղևորությունները, որոնք տեղի ունեցան աշխարհի մի քանի երկրներ, և հայտնի է, թե ինչպիսի մեծ հաջողությամբ պսակվեցին նրանք ամենուրեք:

Ես կցանկանայի ընդգծել այն կարևոր հանգամանքը, որ այս բոլորի զոդողը, այս բոլորի ղեկավարողը եղել էք Դուք, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, և այդ իմաստով մենք գոհունակությամբ նշում ենք, որ Դուք շարունակել եք և շարունակում եք հայ հայրենասեր կաթողիկոսների թանկագին ավանդությունները:

Ձեր ազգանվեր հայրենասիրական գործունեությամբ, Ձեր ժրջան աշխատանքով, Ձեր նվիրվածությամբ, Դուք ապացուցեցիք, որ Դուք, որպես քաղաքացի և Ամենայն Հայոց Կաթողիկոս, խորապես հասկանում եք հայ ժողովրդի գերագույն շահերը և կանգնած եք այդ շահերի պաշտպանության դիրքերում:

Ազգային-եկեղեցական ժողովի հոգևոր և աշխարհական ներկայացուցիչները ժամանել են էջմիածին, նրանք ժամանել են Սովետական մեր Հայրենիքը, Սովետական Հայաստան:

Հյուրերի մեջ մենք տեսնում ենք այնպիսի մարդկանց, որոնք վերջին տարիների ընթացքում արդեն մի քանի անգամ եղել են Հայաստանում, կան այնպիսիները, որոնք Հայաստանը թողել են, կամ Հայաստանից մեկնել են 1920-ական թվականներին, և ահա այսօր նրանք կրկին եկել են մեր Հայրենիքը: Եվ կան նաև շատերը, որոնք առաջին անգամն են լինում Հայաստանում: Մենք կարծում ենք, որ նրանց աչքի առաջ հառնել է մի նոր երկիր, նոր գույնով, նոր հասկացողությամբ, նոր մտածողությամբ: Մենք չափազանց ուրախ ենք, որ նրանք կարողանում են տեսնել մեր ժողովրդի մեծ աշխատանքի մեծ պտուղները, մեր լուսավոր քաղաքները, մեր լայն պողոտաները, մեր Հայրենիքի շեն գյուղերն ու

շտերը, և ուրախանում են, որպես հայ ժողովրդի մի մասնիկը, որը պատմական տխուր վատաբերի բերումով գտնվում է հետու, այց միշտ Հայրենիքի հետ: Մենք համոզվածք, որ այդ կապերը, եղբայրական կապեր, հետագայում ավելի կընդլայնվեն, հետագայում ավելի մեծ շահերով մենք կկարողանք շփվել իրար հետ, գալ իրար տուն, իրար լջունել, իրար հետ խոսել:

Ավարտելով իմ հակիրճ խոսքը, ես կցանանայի Ձեզ մաղթել կատարյալ հաջողություն եր բոլոր այն ծրագրերին, որ Դուք արեն նշել եք, ինչքան ինձ հայտնի է: Ես կցանանայի, որ այդ մեծ ծրագրերի իրականացան համար միշտ լինեիք քաջաոռոջ, ուրախ բամադրության մեջ, և կարողանայիք Ձեր ղրոր նպատակները իրականացնել, որն ուսխացնում է մեզ բոլորիս և հայ ժողովրդին, յստեղ և արտասահմանում:

Ցանկանում եմ Ձեզ, Վեհափա՛ն, կատարալ հաջողություն»:

Պր. Ս. Գասպարյանի ելույթն ընդունվում բոլոր ներկաների ցնծագին ծափահարություններով:

**Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Ա.ՋԱՊԱՀՅԱՆԻ ԽՈՍՔԸ**

Ապա ելույթ է ունենում Կիլիկյան Աթոռի րինապահ միաբանության և ժողովրդի պետ մենապատիվ Տ. Խաղ աբեղյակոպոս Աապանյանը.

«Վեհափա՛ն Տեր.

Հանուն Կիլիկիո Աթոռի օրինապահ ու հատարիմ միաբանության և ժողովրդյան, որ ապրի ի Լիբանան, ի Սուրիա և ի Կիպրոս, ս երախտագիտական խորին զգացումներով շնորհավորեմ այսօրվան Սրբալույս Մեռոնի ռնությունը և Ձեր գահակալության 7-րդ արևոդարձը, որոնք մեր սրտերն ու հոգիները եցուցին սրբազան ապրումներով և խոհեով:

Ես վստահ եմ, որ մեր ժողովուրդը այսօր մեզի հետ կուրախանա և կբաժնե մեր զգաումները:

Հպարտ ենք Ձեզմով, Վեհափա՛ն Տեր, և մխիթարված, որ ասօր Ձեր գահակալության րբերուն առավել ևս կպայծառանա, կկաղմաերպվի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որպես րեղորոն մը հույսի, լույսի և ազգային-եկեղեյական կյանքի:

Վեհափա՛ն Տեր, Ձեզ կմաղթեմ ես ալ երկար և երջանիկ տարիներ, որ գլուխ բերեք Ձեր բոլոր եկեղեցուշեն ծրագրերը, որոնք Ձեր մտքին մեջ են և Ձեր սեղանին վրա են: Կեցցե՛ մեր շինարար Հայրապետը»:



Գերագույն Հոգևոր Խորհրդի նպիրած հայրապետական ասան Նորին Սուրբ Օծուրյան (Նախագիծ՝ ճարտարագետ Բ. Արզումանյանի, գործ՝ Ժիրայր Զուլյան և Կաբապետ Մեսրոպյան ակերիչներին)

S. ՍԵՐՈՎՔԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Հանուն Երուսաղեմի հայոց Պատրիարքության և Նորին Ամենապատվություն S. Եղիշե սրբազան պատրիարքի, Սրբոց Հակոբյանց միաբանության և հանուն Արևմտյան Եվրոպայի հայության, գերաշնորհ S. Սերովքե եպիսկոպոս Մանուկյանը իր ելույթում ասում է.

«Վեհափա՛ն Տեր.

Հանուն Երուսաղեմի ամենապատիվ պատրիարք S. Եղիշե արքեպիսկոպոսի, Սրբոց Հակոբյանց միաբանության, ինչպես նաև Ֆրանսայի և Արևմտյան Եվրոպայի հայ ժողովուրդին, այս պատմական և հանդիսավոր օրվան առթիվ, սրտագինս կշնորհավորենք Ձերդ Վեհափառության գահակալության յոթներորդ տարեդարձը և կմաղթենք Ձեզի երկար և երջանիկ տարիներ, որպեսզի հայ ժողովուրդը բխտ ունենա երկա՛ր, երկա՛ր տարիներ վայելելու Ձերդ Սրբության հովանավորությունը և առաջնորդությունը:

Յոթը տարիներ ոչինչ են պատմության ընթացքին համար, սակայն ամբողջ հայ ժողովուրդը կրնա վկայել, թե այս կարճ ժամանակին մեջ Դուք իրապես մեծամեծ գործեր կատարեցիք: Երկու համաշխարհային մեծ պատերազմներուն ընթացքին մեր ժողովուրդը և մասնավորաբար մեր Ս. Եկեղեցին շա՛տ, շա՛տ մեծ կորուստներ ունեցան:

Ակներև կերպով, մեր ազգային կյանքի, և մասնավորաբար եկեղեցական կյանքի նոր վերազարթնում մը սկսավ երկրորդ համաշխարհային պատերազմին հետո:

Վեհափա՛ն Տեր, աստվածային նախախնամությամբ մը Դուք եղաք այդ վերազարթնումի իմաստուն, բժախնդիր, գեղարվեստագետ և հեռատես ճարտարապետը: Ասոր համար, ամբողջ հայ ժողովուրդը և ամբողջ հայ եկեղեցականությունը երախտապարտ են Ձերդ Ս. Օծության և հոգևին կմասնակցին և կօժանդակին Ձեր ամեն մեկ աստվածահաճո և ազգանվեր գործունեությունը:

Այսպիսով, Վեհափա՛ն Տեր, Ձեր պատմությունը և Ձեր կյանքը անցած են մեր ազգային և եկեղեցական պատմության մեջ և Դուք դասված եք մեր երանաշնորհ և մասնավորաբար շինարար հայրապետներու շարքին:

Երբ կխոսիմ հանուն Ս. Երուսաղեմի և անոր գահակալին, անոր միաբանության, այս առթիվ սրտովին կփափագիմ, որ Ձեր անունը կապվի նաև համաշխարհային ուրիշ մեծ ձեռնարկի մը, ուրիշ մեծ գործի մը: Երուսաղեմը միջազգային սրբավայր մըն է, ու մասնավորաբար այս վերջին տարիներուն համաշխարհային հետաքրքրություն ստեղծված

է Ս. Հարության Տաճարի նորոգության խնդրը: Ս. Հարության տաճարը ամբողջ քրիստոնյա մարդկության կրոնական զգացումի հոգևոր ներշնչումի և մեր Տիրոջ կյանքին հետ է կապված: Եվ մեր Եկեղեցին դարերի ի վեջ Հռոմեական Կաթոլիկ և Հույն Օրթոդոքս Եկեղեցիներուն հետ հավասար իրավունքներ, առանձնաշնորհումներ և իրավասություններ ունի:

Ս. Հարության Տաճարը, Երուսաղեմի Սըրբոց Հակոբյանց վանքը իր բոլոր հաստատություններով, ամբողջական մասն է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցիին, զբխավորված Ս. Էջմիածնով և Ձերդ Վեհափառությամբ: Ս. Հակոբյանց միաբանությունը, անոր գահակալը և ինչպես նաև ամբողջ հայ ժողովուրդը, Վեհափա՛ն Տեր, կփափագին, որ Դուք, իբրև գլուխ և հաջորդը Ս. Լուսավորչի, հովանավորեք և քաջալերեք համազգային մեծ հանգանակություն մը, որպեսզի շուտով գոյանա այն գումարը, որ անհրաժեշտ է, որ մեր Եկեղեցին, միջազգային այդ սրբավայրերուն մեջ, կարենա պահել իր նախնիքներու հավատքը, իր նախնիքներու արյունով սրբագործված իրավունքները, որոնցմե կբխեն մեզ ազգային, ժողովրդական և կրոնական մեծ արժեքներ ամբողջ հայ ժողովուրդին համար:

Դարձյալ կկրկնեմ, որ Դուք Ձեր յոթնամյա գործունեության ընթացքին անցաք մեր ազգային պատմության գլխավոր և պատվավոր էջերուն մեջ: Կփափագինք, որ Ձեր քաջալերությունը և հովանավորությամբ, անցնիք նաև միջազգային կրոնական պատմության մեջ, հովանավորելով և քաջալերելով Ս. Հարության Տաճարի նորոգությունը:

Կրկին հայտնելով բոլոր անոնց, զորս անարժանաբար կներկայացնեմ հոս, սերը և հավատարմությունը հանդեպ Ձեր անձին և Ս. Էջմիածնին, և անոնց սրտագին բարեմաղթությունները և աղոթքները մեր Եկեղեցվոր պայծառության, Ս. Էջմիածնի հավերժության և Ձերդ Վեհափառության արևշատության համար, անոնց և իմ կողմե կխոնարհիմ ի համբույր Ձեր Ս. Աջույնս:

S. ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Հանուն Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության և Նորին Ամենապատվություն S. Շնորհք սրբազան արքեպիսկոպոսի և եկեղեցական մարմինների, գերաշնորհ S. Տիրան արքեպիսկոպոս Ներսայանը, շնորհավորելով Վեհափառ Հայրապետի գահակալության 7-րդ տարեդարձը, ասում է.

«Վեհափա՛ն Տեր.

Կփափագեի թարգմանը հանդիսանալ թուրքիո հայոց պատրիարքին՝ ամենապատիվ S.

նորհրդ սրբազանին և Թուրքիո ու Պոլսո եկե-
 եցական մարմիններուն և ամբողջ Թուր-
 իո հայ ժողովուրդին, այս բարեբաստիկ առ-
 իվի, որ Ձեր գահակալութեան յոթնամյա տա-
 րեկարան է, Ազգային-եկեղեցական ժողով-
 տրածներուն ավարտը կնշե և Սրբալույս Մեռո-
 ի օրհնութեան այս սուրբ թվականը կցուցնե:
 Ի ժբբախտաբար ոչ Պոլսո սրբազան պատրի-
 արք ամենապատիվ Տ. Շնորհք սրբազանը,
 ոչ ալ Պոլսո եկեղեցիին և հայ հավատացյալ
 ժողովուրդին կողմն պատգամավորներ կարո-
 շացան դալ, մասնակցելու այս նշանավոր
 հանդեսներուն:

Սակայն Ձերդ Վեհափառութիւնը շատ լավ
 ծանոթ է, թե ի՞նչ նվիրումով, ի՞նչ սիրով և
 ի՞նչ խորունկ մեծարանքով և հավատարմու-
 թյամբ ողջունեցին և շրջապատեցին Ձերդ
 Սրբութիւնը, երբոր Դուք շնորհք ըրիք Թուր-
 իո հայութեան այցելութիւն տալու անցեալ
 տարի: Ձերդ Վեհափառութիւնը լավ գիտե,
 թե Թուրքիո հայութիւնը ինչ սերտ կապերով
 կապված է Մայր Աթոռին և թե ինչքան հա-
 վատարիմ են իրենց նախնայց քրիստոնեա-
 կան հավատքին և իրենց նախահայրերու հին
 ավանդութեանց, կապրին նույն այդ ոգիով,
 որ այսօր կտիրե Ս. էջմիածնի մեջ ներկա
 եղող բոլոր հայերուն, բոլոր մեր ազգակիցնե-
 րուն և բոլոր մեր հոգևորականներուն և աշ-
 խարհականներուն սրտերուն մեջ: Եվ հակա-
 ռակ որ անոնցմե, այսինքն Թուրքիո հայերն
 այստեղ ներկայացուցիչներ զտնվեցան, այ-
 նուհանդերձ, Վեհափառ Տեք, Դուք գիտեք և
 ես վստահ եմ և կուզեմ հայտնել, թե ինչքան
 անոնք ներկա են այստեղ և կամանակցին
 հոգեկին այս հանդեսներուն՝ հոգեկան ուրա-
 խութեամբ և մխիթարութեամբ:

Ես երկու օրեն, եթե Տեք կամեցի, արդեն
 պիտի երթամ հաղորդելու ամենապատիվ Տ.
 Շնորհք պատրիարքին և ժողովուրդին՝ ինչ
 երջանկաբեր և մխիթարար գործ որ կատար-
 վեցավ այս օրերուն այս սուրբ կամարներուն
 տակ, և պիտի հաղորդեմ անոնց, որչափ կա-
 րելի է, նույն այն զգացումները, որոնցմով
 մեր սրտերը լեցված են այժմ և լեցվեցան
 անցնող քանի մը օրերու ընթացքին:

Հետևաբար, անոնց կողմն, որոնց ներկա-
 ցուցիչը կգտնվիմ այս պահուս, Ձերդ Վե-
 հափառութեան կամաղթեմ երկար տարիներ,
 որպեսզի Ձեր քաջ հովիւի գործունեութեամբ
 ավելի ևս վառեք մեր ժողովուրդի քրիստո-
 նեական ոգին և հայրենասիրութիւնը, և մեր
 Եկեղեցւո բարեկարգ կյանքը հետզհետե ավե-
 լի առաջ տանիք, ի փառս Աստուծո և հօգուտ
 մեր ժողովրդիս: Ամենա:

Այնուհետև Ամենայն Հայոց Հայրապետին
 խանդավառութեան և քրիստոնեական եղբայ-
 րութեան ջերմ սիրով ողջունում է Մոսկվայի



Թուրքիայի հայոց Պատրիարքութեան և հայ ժողովրդի
 նվիրած գորգը Վառժապետ Հայրապետին

և համայն ռուսաց Պատրիարք Նորին Սրբու-
 թիւն Ալեքսիի ներկայացուցիչ գերաշնորհ Տ.
 Բիմեն սրբազան միտրոպոլիտը, ծանրանա-
 լով ռուս և հայ եղբայրական ժողովուրդների,
 Ռուս Պրավոսլավ Եկեղեցու և Հայաստանայց
 Առաքելական Եկեղեցու միջև հաստատված
 փոխադարձ սիրո, հարաբերութիւնների և
 խաղաղութեան պաշտպանութեան գործում
 համագործակցութեան վրա, որոնք սրտագին
 ավանդութիւններ են դարձել լուսահոգի
 Գևորգ Զ և մանավանդ Վազգեն Ա Ամենայն
 Հայոց Կաթողիկոսների և Մոսկվայի և Հա-
 մայն Ռուսաստանի Նորին Սրբութիւն Ալեք-
 սի պատրիարքի օրով:

Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս
 Նորին Սրբութիւն Եփրեմ Բ-ի և Վրաց Եկե-
 ղեցու և ժողովրդի ջերմագին, եղբայրական
 ողջունների և խնդակցութեան մասին է խո-
 սում հոգեշնորհ Տ. Իլիա վարդապետը, ծան-
 րանալով հայ և վրաց ժողովուրդների դարա-
 վոր, անբակտելի բարեկամութեան և եղբայ-
 րութեան վրա:

Տ. ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Եգիպտոսի հայոց առաջնորդ գերազնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանն առամ է.

«Վեհափա՛ն Տեր.

Այն օրին իվեր, երբ այցելեցիք Եգիպտոս, Ձերդ Վեհափառության անունը կհիշվի ամենայն հարգանքով և երկյուղածությամբ, ամեն հայ ընտանիքն ներս: Ձեր բոլոր այցելած վայրերը կյանք տարիք Ձեզի հետ, հավատք տարիք Ձեզի հետ, ոգևորություն տարիք Ձեզի հետ: Ձեր այցելությանց վերջինը եղավ Կոստանդնուպոլիսը, ուր գացիք տխուր պարտականություն մը կատարելու՝ նախագահելու հանգուցյալ պատրիարքի թաղմանական արարողություններուն: Սակայն այդ տխուր պարտականությունը կատարելն վերջ, ուրախություն տարիք պոլսահայ ժողովուրդին, հավատք տարիք թուրքիո հայության և Ձեր այցելությունը ունեցավ իր պատմական նշանակությունը:

Դուք մեր հայրապետներուն մեջ պատմական դեմք մը եղաք, շենցուցիք, բարեկարգեցիք Ս. էջմիածինը իր հնօրյա վանքերով և սրբատեղիներով և մեր Եկեղեցվո ու մեր ժո-

ղովուրդի անունը բարձրացուցիք օտար շրջանակներու մեջ:

Ձեր գահակալության յոթը տարիները արդունագործեցիք և մեր ժողովուրդը իր երախտագիտական զգացումները կբերն Ձերդ Վեհափառության: Մեր հոս ներկայությունը Ձեր յոթնամյա գործունեության տարեդարձին առիթով և Ս. Մեռոնի օրհնությունը մեզի կերջանկացնեն: Ձեր գահակալությամբ և գործունեությամբ հպարտ ենք և ուրախ: Մեր երախտագիտությունը հայտնելով Ձերդ Ս. Օծություն, ի սրտե կմաղթենք, որ Տերը պարգևն Ձեզի շատ երկար տարիներ, որպեսզի Ձեր այս ոգևորյալ գործունեությամբ նոր լույս բերեք Ս. էջմիածնին և անոր հավատացող մեր պատվական ժողովուրդին:

Եգիպտահայության ներկայացուցիչներու, որոնք դժբախտաբար շկան այստեղ այսօր, ինչպես նաև Եգիպտոսի ժողովուրդին անունով, Ձեր Վեհափառության կներկայացնեն մեր հավատարմական զգացումները, մեր սերը, մեր համակրանքը, և կըսեն ամենուն կողմն. «Կեցցե՛ մեր արժանընտիր Հայրապետը, նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա շինարար Հայրապետը Ամենայն Հայոց»:

Այնուհետև նույնպիսի հարգալից արտահայտություններով և սրտագին բարեմաղթություններով Վեհափառ Հայրապետի գահակալության 7-րդ տարեդարձը շնորհավորում են Տ. Պապկ եպիսկոպոս Թումայանը (Լոնդոն), Տ. Բարգեն եպիսկոպոս Ապատյանը (Արգենտինա), Տ. Մյուռոն ծայրագույն վարդապետ Կրեկյանը (ԱՄՆ), պատգամավորներ պր. Աբրակ Մխիթարյանը (Բելգիա) և պր. Գեորգ Երևանյանը (Բեյրութ):

ՊՐ. ԱՇՈՏ ՊԱՏՄԱԿՐՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Հանրածանոթ երգահան և երաժշտագետ պր. Աշոտ Պատմագրյանը, որը որպես հյուր գտնվում էր Մայր Աթոռում, այս առթիվ խոսք է առնում և շնորհավորելով Վեհափառ Հայրապետի գահակալության 7-րդ տարեդարձը, ասում է.

«Շահ-Աբաս բռնակալը, 350 տարի առաջ, երբ բռնազաղթի ենթարկեց ամբողջ Արարատյան աշխարհից հսկա բազմություն դեպի Սպահան, որպեսզի կարողանա կտրել պարսկահայ ժողովուրդը էջմիածնից, կտրել ամեն կապ և ամեն հոգեկան հաղորդություն էջմիածնի հետ, հղացավ մի ահավոր ծրագիր, այն է՝ քանդել Ս. էջմիածնի Մայր Տաճարը և նրա ջարհերը փոխադրել Սպահան, այնտեղ նոր էջմիածին կառուցելու համար: Եվ եթե չլինեին ժամանակի հայրապետ Փիլիպոս կաթողիկոսի կորովի միջամտությունը և քաղաքական մարդոց իմաստուն ձեռնարկները,



Ռուսաց Ալեքսի Սրբազան պատրիարքի նվերը Ամենայն Հայոց Հայրապետին

Քերես այդ ահավոր վտանգը տեղի ունենար: Բռնազաղթած հայ ժողովուրդը գոհացավ երկու մեծ քարեր փոխադրելով էջմիածնից դեպի Նոր-Ջուղա, որոնք մինչև այսօր մնում են եկեղեցու դավթում և հանդիսանում են Ս. էջմիածնի խորհրդանիշը: Այդ սուրբ քարերի առջև Սպահանի ժողովուրդը ծնկի է գալիս և մոմ է վառում:

Այն, ինչ շկարողացան իրագործել բռնակալները, Շահ-Աբաս և իր հաջորդները, գտնվեցին ժամանակակից մեր կյանքում անհատներ, որոնք փորձեցին հրով ու սրով շկատարված ձեռնարկը խոսքով և դավադրությամբ իրագործել: Այսօր, իբրև թե պարսկահայ գաղութը կտրվել է էջմիածնից: Ուզում ենք Ձեզ վստահացնել, Վեհափառ Տե՛ր, որ ո՛չ մի նշանախեց անգամ չի փոխվել այդ նույն ժողովրդի հավատարմության զգացմունքներից: Այս փոքրիկ երկու գորգերը մի տարի առաջ ուղարկել է պարսկահայ գաղութը, որպես խորհրդանիշ, որ միշտ մնան Վեհափառությանը թիկունքին այդպես, և ասեն որ, Վեհափառ Տե՛ր, մենք Ձեր աջ և ձախ բազուկների վրա ենք կանգնած:

Պարսկահայ գաղութի անունից մաղթում եմ, որ Իուք մնաք միշտ Ձեր Գահի վրա, և Ձեր խոսքի հրով, Ձեր շինարար աշխատանքով և Ձեր անձի հմայքով շարունակեք մնալ այն ոսկե կամուրջը, որը ձգվել է Սփյուռքի և Հայաստանի և համայն հայության միջև: Հանդիսության վերջում ոտքի է կանգնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և հուզված, շնորհակալության և օրհնության խոսք է ասում.

«Մտքի անճուն գոհունակությամբ լսեցինք այն բոլոր խոսքերը և մաղբանքները, որոնք ներկայացվեցին Մեզ այս հանդիսավար օրվա առթիվ: Պարտք ենք գտնում Մեր գոհունակությունն ու շնորհակալությունը հայանել բոլոր խոսք առնողներին, Մեր սրբազան եղբայրներին, հատկապես ամենապատիվ Ս. Խաչ արքեպիսկոպոսին, որ խոսեց հաճուն Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի, միաբանության և ժողովրդի:

Մեր գոհունակության և շնորհակալության խոսքը գերապատիվ Ս. Տիրան արքեպիսկոպոսին, որ խոսեց հաճուն Կոստանդնուպոլսի ամենապատիվ պատրիարք Ս. Շնորհի արքեպիսկոպոսի, և գերապատիվ Ս. Սերովբե Եպիսկոպոսին, որ խոսեց հաճուն Երուսաղեմի Ս. Աթոռի, նրա գահակալ ամենապատիվ Ս. Նդիշե պատրիարքի, նրա միաբանության և Հորդանանի հայ ժողովրդի:

Մեր գեհատանքի և գոհունակության խոսքը կկամենայինք ուղղել մասնավոր կաբևորությամբ միտրոպոլիտ Բիմենին, որ հաճուն Նորին Սրբություն Ալեքսի Պատրիար-



Վիեննայից պր. Սարգիս Կարապետյանի նվիրած գորգը Վեհափառ Հայրապետին

քի՝ Պրավոսլավ Ռուս մեծ եկեղեցու Պետի, այնքան շեքմ խոսքեր արտասանեց և փառաբանեց Ս. էջմիածինը, մեր եկեղեցին և մեր ժողովուրդը:

Պիտի ցանկանայինք ի սրտե, որ Նորին Սրբազնությունը իր վերադարձին Մեր եղբայրական ողջույները տաներ մեր Սրբազան Նյուր-Ալեքսի Պատրիարքին:

Գոհունակությամբ ողջունեցինք ներկայությունը այստեղ Իլիա վարդապետի, որը ներկայացնում է մեր դրացի երկրի եկեղեցին և ժողովրդին: Նա եկել է այստեղ հաճուն Նորին Սրբություն Նիքեմ Բ Կաթողիկոսի և Վրաց եկեղեցու:

Մենք դրացի երկրներ ենք, դրացի ժողովուրդներ, միասին շուրջ 2 000 տարվա բարի



Սուրբ Մեսրոպ Մաշտոց
Նկարիչ Երվանդ Ջոշարի նվերը Վեհափառ
Հայրապետին

դրացիության պատմություն ունենք, և իրոք որ աշխարհի այս անկյան մեջ մենք ապրում ենք եղբայրորեն, ինչպես եղբայրորեն ապրել ենք երկար դարեր: Մենք ցանկանում ենք, որ հայր սուրբը վերադարձին Մեր եղբայրական ողջույնը տանի նաև նորին Սրբություն Եփրեմ Բ Կաթողիկոսին, Մեր լավագույն բարի մաղթանքներով, Կրացական Սկեղեցու ծաղկման և վրաց եղբայր ժողովրդի բարօրության, խաղաղության և երջանկության համար:

Սապայն Մենք նվիրական մի պարտականություն ևս ունենք, սիրելի ներկանե՛ր, պատգամավորնե՛ր և հյուրնե՛ր, այն է՝ Մեր սրտագին երախտագիտությունը հայտնել մեր հայրենի կառավարության հանդեպ, որի ներկայացուցիչը այստեղ, պր. Սարգիս Գասպարյան, խոսեց և դուր լսեցիք, ինչի՞նչ անկեղծ սեր կար իր խոսքերի մեջ դեպի Ս. էջմիածինը: Առաջին անգամ չէ, որ մեր հայրենի կառավարության ներկայացուցիչները այս ոգով են խոսում և ապացուցում, որ եթե ոչ փառափառական իմաստով, բայց բարոյական իմաստով Հայաստանի Կառավարությունը ամենայն հայոց կառավարություն է:

Նվ որովհետև այստեղ շատ հիշվեց մյուս խոսողների կողմից, ինչպես նաև ժողովի ըն-

թացում, յոթ տարվա ընթացում կատարված աշխատանքների մասին, Մենք խղճի պարտք ենք նկատում հայտնել և հայտարարել, որ այս բոլոր կառավարչին անպայման նախ և առաջ շնորհիվ մեր Սովետական Հայաստանի կառավարության և միութենական կենտրոնական կառավարության բարի վերաբերմունքի և աջակցության:

Աստի, քարգմանը հանդիսանալով Ձեր բոլորի զգացմունքների, հատկապես Սփյուռքի մեր հայության զգացմունքների, և ինչպես նաև անձամբ Մեր զգացմունքների, ուզում ենք մի անգամ ևս Մեր շնորհակալությունը և երախտագիտությունը հայտնել մեր սիրելի Սարգիս Գասպարյանին, խնդրելով իրենից, որ ինքն էլ իր հերթին Մեր այդ զգացմունքների քարգմանը հանդիսանա մեր հայրենի կառավարության մոտ:

Սիրելի ներկանե՛ր, Մենք մեծ ուրախությամբ ժողովի ընթացքին ստացանք նաև շնորհավորանքի և փաջալերանքի հետագիւր ոչ միայն Հայաստանի կառավարության անունով, այլ նաև Մոսկվայից ստացանք մի հետազար ՍՍՌՄ Մինիստրնե՛ի Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների խորհրդի կողմից, ինչ որ եղանակում է միութենական կառավարության կողմից:

Մենք կարծում ենք, որ դուր բոլորդ, այսինքն մեր Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորները ուրախ կլինեն, եթե մի հետագիւր էլ ուղղեինք Մեր և ժողովի անունից, մի անգամ ևս մեր գոհունակության, գնահատանքի և շնորհակալության խոսքը հայտնելու համար Սովետական Միության կառավարության:

(Այստեղ հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետը, ի լուր Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների և հյուրերի, կարդում է հետագրի պատճենը, բոլոր ներկաների ջերմ ծափահարությունների ներքո):

Այսպես անա, մեր հանդիսավոր արարողությունները և մեր այս հանդիսավոր հավաքումը իրենց վախճանին կաանին և Մենք հավատում ենք, որ Աստուծո օրհնությունը մեզ հետ է: Մենք հավատում ենք, որ այս օրհնությունների շնորհներով և մեր այսուհետև կատարելիք նիգեթով և մեր կազմակերպված աշխատանքով, մեր միացյալ աշխատանքով, որին պետք է մասնակցեն մեր Սցեղեցու բոլոր նվիրապետական Աթոռները, բոլոր թեմերը և մեր ժողովրդի բոլոր զավակները, ամեն մեկը իր տեղից և իր կերպով և իր շափով, մենք փայլ առ փայլ կառաջադիմենք իբրև Սկեղեցի և իբրև ժողովուրդ և իբրև Հայրենիք, և հետզհետե կհասնենք այն բարձունքներին, որոնց ձգտում են մեր սիրտն ու հոգին:

Հետևաբար, բոլոր աստվածային օրհնութիւններ լուսավորի մեր ճանապարհը և հաջողութիւն պարգևի մեր բոլոր եկեղեցաշէն, ազգանվեր և հայրենանվեր գործերին, այժմ և միշտ և հավիտյան: Ամեն:

«Օրհնեալք եղերուք ի շնորհաց Ս. Հոգւոյն, երթայք խաղաղութեամբ»:

Նոր Վեհարանի Գահասրահում Ամենայն Հայոց Հայրապետի գահակալութեան 7-րդ տարեդարձին նվիրված հանդիսութիւնը վերջանում է նորին Ս. Օծուկեան «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով: Վերջում բոլոր սերկասերը աջահամբույրով շնորհավորում են Վեհափառ Հայրապետի գահակալութեան տարեդարձը:

Ամենայն Հայոց Հայրապետը մի անգամ ևս ընդունում է Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի ներկայացուցիչներին անայլապէս հարգանքի և երախտագիտութեան սրտագին տուրքը, արեւաշատ կյանքի և բազմաբողովոն գահակալութեան սրտառու մաղթանքները:

Աջահամբույրից հետո բոլոր ներկաները հյուրասիրվում են կոնյակով, շոկոլատով և մրգերով:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 7-ին, կիրակի, երեկոյան ժամը 8-ին, Երևանի «Արմենիա» հյուրանոցի շքեղ ճաշասրահում, Գերագույն Հոգևոր Խորհուրդը և հանդիսութեանց կենտրոնական հանձնախումբը, Վեհափառ Հայրապետի գահակալութեան 7-րդ տարեդարձի բարեբաստիկ առիթով, կազմակերպում են պաշտոնական ընդունելութիւն, որին մասնակցում են Ազգային-կեղեցական ժողովի պատգամավորները, հյուրերը, ուխտավորներ և այլ պաշտոնական անձինք:

Հրավիրյալների թվում են Հայկական ՍՍԻ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը, նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը, Արտասահմանի հետ մշակութային կապի Հայկական ընկերութեան նախագահ տիկին Բ. Գրիգորյանը:

Հանդիսութեան ներկա է նաև ՍՍԻՄ Մինիստրների Սովետին առընթեր կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի ներկայացուցիչ Սոլովյովը:

Ժամը 8-ին դահլիճ է մտնում Վեհափառ Հայրապետը, շրջապատված բարձրաստիճան հոգևորականներով և պաշտոնական անձնավորութիւններով:

Պատվո սեղանի շուրջ տեղ են գրավում Վեհափառ Հայրապետը, պր. Ս. Գասպարյանը, ամենապատիւ Տ. Խաչ արքեպիսկոպոսը, գերաշնորհ Տ. Բիմեն միաբնակիցը, գերա-

շնորհ Տ. Սահակ, Տ. Տիրան, Տ. Մամբրե և Տ. Սերովբե սրբազանները:

Սեղանը օրհնում և ղեկավարում է Վեհափառ Հայրապետը:

Հայրենի երկրի բազմազան բարիքներով զարդարված սեղանների շուրջ ստեղծվում է հայկական ջերմ, սրտագին մթնոլորտ:

Նորին Ս. Օծուկեանը, հանդիսավոր իրադրութեան մեջ և խանդավառ մթնոլորտում, առաջին բաժակը բարձրացնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անասանութեան, հավերժութեան և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պայծառութեան կենացը:

Ամբողջ դահլիճով մեկ, հոտնկայս, հանդիսավոր և վեհ հնչում է «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը:

Վեհափառ Հայրապետը, ջերմ ծափերի մեջ, երկրորդ բաժակը առաջարկում է խմել, երախտագիտական ու շնորհակալութեան զգացմունքներով, հայրենի բարեխնամ կառավարութեան և նրա ներկայացուցիչներ պր. Ս. Գասպարյանի, տիկին Բ. Գրիգորյանի, պր. Սոլովյովի և պր. Ս. Հովհաննիսյանի կենացը: Թեսպուրիկայի ժողովրդական արտիստ Հ. Բադալյանը այս կենացը «ծաղկեցնում է» զուսան Աշոտի «Հայրենի լեռներ» հայրենասիրական երգով, խանդավառ ծափեր խելով ներկաներից:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը երրորդ բաժակը բարձրացնում է Ռուսական Պրավոսլավ մեծ Եկեղեցու պայծառութեան և նրա Գահակալ նորին Սրբութիւն Ալեքսի Պատրիարքի, Հայ և Ռուս Եկեղեցիների և ժողովուրդների հավերժական բարեկամութեան, ինչպես նաև Վրացական Ուղղափառ Եկեղեցու և նրա Պետ նորին Սրբութիւն Եփրեմ Բ Պատրիարք-Վաթողիկոսի, հայ և վրացական եղբայրական ժողովուրդների անքակտելի միասնութեան կենացը:

Ռուս, վրացի և հայ հոգևորականների խումբը ամբողջ դահլիճում թնդացնում է «Երկար տարիներ» բարեմաղթանքը, ուսերեն լեզվով, որը սովորաբար երգվում է նման կենացների առթիւ:

Թեսպուրիկայի ժողովրդական արտիստ Ա. Աղամյանը ապրումով արտասանում է Խ. Արովյանի «Վերք»-ից:

Վեհափառ Հայրապետը չորրորդ բաժակը առաջարկում է խմել Հայ Եկեղեցու նվիրապետական և առաջնորդական Աթոռների հաստատութեան, բովանդակ հայ հոգևորականութեան կենացը: Նորից թնդում է «Երկար տարիներ» հոգևոր մաղթանքը:

Վերջին քաղցր բաժակը Վեհափառ Հայրապետը առաջարկում է խմել բովանդակ հայ ժողովրդի և նրա արժանավոր զավակների մտավորականների, արվեստագետների,

գիտնականների և այլ ասպարեզների աչքի ընկնող մարդկանց կենացը, ի դեմս ՍՍԻՄ ժողովրդական նկարիչ և բոլորի կողմից սիրված և հարգված Վարպետի՝ Մարտիրոս Սարյանի:

Ամբողջ դահլիճով մեկ թնդում է ուրախ ծափերի որոտը: Բաժակ են բարձրացնում բոլորը ընդունելության ներկա բանաստեղծների, գրողների, հրապարակագիրների, արվեստագետների, ճարտարապետների կենացը:

Շնորհալի բանաստեղծուհի Սիրվա Կապուտիկյանը, խորին լուսվյան մեջ, հուզումով արտասանում է «եսոսք իմ որդուն»-ը, սրտագին ծափեր խլելով ներկաներից:

Վեհափառ Հայրապետի գահակալության 7-րդ տարեդարձին նվիրված ընդունելության ժամանակ շնորհավորական և հայրենասիրական ջերմ, սրտատուչ խոսքեր են ասում պր. Ս. Գասպարյանը, ճարտարապետ Լ. Իսրայելյանը, հասարակական գործիչ Շահանեսաթալին (ԱՄՆ), գրողներ պր. Ա. Մառուկյանը (Լիբանան), Կարապետ Փալատյանը (Ֆրանսիա), պր. Սարեն Մանվելյանը (ԱՄՆ), պր. Ստեփան Գարայանը (Հունաստան), պր. Գևորգ Երևանյանը (Լիբանան) և ուրիշներ:

Տիպիկ Ալթունյանը ընթերցում է Լիբանանի հայ կանանց ողջույնի և շնորհակալության խոսքը:

Կալիֆոռնիայի թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Քոբզով վարդապետ Մանուկյանը իր հայաստանյան տպավորությունները, խոհերն ու ապրումները խոսցնում է իր երգած Հովհաննես Քոստանյանի «Լուսավորչի կանթեղը» պոեմի մեջ, Շահան Պերպերյանի երաժշտությամբ:

Սեղանների շուրջը ժամերն անցնում են արագ, բայց հաճելի և բովանդակալից:

Վեհափառ Հայրապետի գահակալության 7-րդ տարեդարձի պատվին կազմակերպված ընդունելությունը վերջանում է գիշերվա ժամը 11.30-ին, Նորին Ս. Օծուկյան «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոյեմբերի 8-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 11-ին, պատգամավորները և հյուրերը այցելում են Երևանի Բժշկական ինստիտուտը և հանդիպում ունենում արտասահմանյան ուսանողների և հայրենաշարժ դասախոսների հետ:

Ժամը 2-ին պատգամավորները և հյուրերը այցելում են Երևանի Ճարտարապետների տունը, ծանոթանալու մայրաքաղաքի ճար-

տարապետական նոր կառույցներին և յոթնամյակի հեռանկարներին:

Երեկոյան ժամը 8-ին պատգամավորների մի խումբը ներկա է լինում Շիրվանզադեի «Քաոս»-ի ներկայացման, Գ. Սունդուկյանի անվան թատրոնի արտիստների կատարմամբ:

Մի այլ խումբ նույն ժամին ներկա է լինում Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում դիրիժոր Օհան Դուրյանի ղեկավարած Երևանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգին:

Սիմֆոնիկ համերգին ներկա է լինում նաև Վեհափառ Հայրապետը իր շքախմբով:

Հոկտեմբերի 9-ին, երեքշաբթի, առավոտյան ժամը 10—2, Վեհափառ Հայրապետը Վեհարանում բարեհաճում է ընդունել թեմակալ առաջնորդներին և պատգամավորական առանձին խմբերի և զրուցել նրանց հետ թեմերի ազգային-եկեղեցական կյանքի մասին:

Պատգամավորների այլ խմբեր հետմիջօրեի ժամը 2-ին այցելում են Բյուրականի աստղադիտարանը:

Հոկտեմբերի 10-ին, չորեքշաբթի, Վեհափառ Հայրապետը առավոտյան ժամերին բարեհաճում է ընդունել թեմերի ներկայացուցիչներին:

Ժամը 10—2 պատգամավորների մի խումբը այցելում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ-Մատենադարանը, Պատմական թանգարանը և Պատկերասրահը:

Երեկոյան ժամը 8.30-ին, բոլոր պատգամավորներն ու հյուրերը ներկա են լինում Հայֆիլհարմոնիայի համերգային փոքր դահլիճում Պարի պետական անսամբլի ելույթին:

Հոկտեմբերի 11-ին, հինգշաբթի, ժամը 11—1, պատգամավորներն ու հյուրերը այցելում են Հայպետհրատ, ծանոթանում գրողների, երաժիշտների հրատարակություններին և հրատարակչական հեռուկարներին:

Երեկոյան ժամը 7.30-ին, պատգամավորներն ու հյուրերը ներկա են լինում Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի ներկայացմանը:

Հոկտեմբերի 12-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 12—2-ին, պատգամավորները այցելում են Երևանի ժամացույցի գործարանը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐ. Ա. ՔՈՉԻՆՅԱՆԻ ՄՈՏ

Հոկտեմբերի 12-ին, ուրբաթ, երեկոյան ժամը 6-ին, Երևանում, Կառավարական տանը, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ պր. Ա. Քոչինյանը ընդունում է

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորներին ու հյուրերին:

Վեհափառ Հայրապետն ու պատգամավորները ժամը 6-ին արդեն տեղ էին գրավել ընդունելության շքեղ դահլիճում:

Ներս է մտնում Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ Ա. Քոչինյանը և ընդունվում ջերմ ու սրտագին ծափահարություններով:

Մինիստրների Սովետի նախագահին ընկերակցում է Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, ողջունելով Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի պր. նախագահին, շնորհակալություն և երախտագիտություն է հայտնում հայրենի բարեխնամ կառավարության՝ էջմիածնում Ազգային-եկեղեցական ժողովի գումարման և անցկացման առթիվ Հայաստանի կառավարության ընձեռած դյուրությունների համար:

Այնուհետև նորին Ս. Օծուխյունն ասում է, որ Ազգային-եկեղեցական ժողովը հաջողությամբ ավարտել է իր աշխատանքները և բոլոր պատգամավորների սրտերը լցված են անսահման սիրով և երախտագիտությամբ դեպի մեր վերածնված Մայր Հայրենիքը և նրա հարազատ կառավարությունը:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ պր. Անտոն Քոչինյանը ջերմորեն ողջունում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և բոլոր պատգամավորներին:

Տեղի է ունենում ջերմ, մտքմական զրույց սրտագին և հայրենասիրական մթնոլորտում, որին մասնակցում են գերաշնորհ Ս. Մամբե արքեպիսկոպոս Սիրունյանը (Նզդիպոս), գերաշնորհ Ս. Գեել եպիսկոպոս Ճեբեյանը (Լիբանան), գերաշնորհ Ս. Պսակ եպիսկոպոս Քումայանը (Անգլիա), հոգեշնորհ Ս. Տիրայր վարդապետ Մարտիկյանը (Ռումինիա), կոմպոզիտոր պր. Աշոտ Պատմագրյանը (Իրան), «Հարթոնք» թերթի խմբագիր պր. Գեքամ Անարունյանը (Լիբանան), պր. Տիգրան Պոյանյանը (ԱՄՆ), պր. Կարապետ Փոլատյանը (Ֆրանսիա), պր. Նրվանդ Քյումպայանը (Սիրիա) և ուրիշներ:

Ելույթ ունեցողները խանդավառ կերպով խոսում են հայ ժողովրդի պատմական նվաճումների, Հայաստանի կառավարության հայրենանվեր աշխատանքների, Սփյուռքից կատարվող նոր հայրենադարձության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի զլխավորությամբ և օրհնությամբ Սփյուռքի հայ եկեղեցիների կատարած ազգապահպան մեծ գործի մասին:

Զրույցի ընթացքում խոսք առնելով, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախա-

գահ պր. Ա. Քոչինյանը պատմում է Հայաստանի տնտեսության, գիտության և մշակութային զարգացման հետագա հեռանկարների մասին, որոնք ազգային հպարտության քաղցր զգացմունքներով լցնում են պատգամավորների սրտերը:

Ընդունելության վերջում պատգամավորները հրաժեշտ են առնում Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ պր. Ա. Քոչինյանից անմոռանալի տպավորություններով:

Երեկոյան ժամը 7.30-ին, բոլոր պատգամավորներն ու հյուրերը ներկա են լինում Վիլյամ Մարոյանի «Իմ սիրտը լեռներում է» ներկայացմանը, Գ. Սունդուկյանի անվան պետական թատրոնի արտիստների կատարմամբ:

ՀԱՆԻՄՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՕՇԱԿԱՆԻ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հոկտեմբերի 13-ին, շաբաթ, «Տօն Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց Մեսրոպբայ, Նզիշէի, Մովսիսի Քերթովին, Դաւթի անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացուն և Ներսիսի Կլայեցուն»:

Մայր Աթոռի միաբանությունը, Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորներն ու հյուրերը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը ուխտի են գնում Օշական, Ս. Մեսրոպ Մաշտոցի խնկելի գերեզմանին:

Ժամը 11-ին սկսվում է հանդիսավոր սուրբ պատարագը: Օրվա մեծ տոնի առթիվ պատարագում է Արևմտյան Եվրոպայի հայոց Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ գերաշնորհ Ս. Սեռովբե եպիսկոպոս Մանուկյանը:

Ժամը 12-ին ժամանում է Վեհափառ Հայրապետը և եկեղեցական թափորով առաջնորդվում եկեղեցի:

Սուրբ պատարագի ավարտին, պատարագիչ սրբազանը քարոզում է Ս. Թարգմանիչ վարդապետների մշակութային մեծ գործի ազգային-եկեղեցական նշանակության մասին:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հոգեհանգիստ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու նորոգության բարերարներ Թորգոմ և Հայկ Ղազարոսյան եղբայրների ծնողների և Ղազարոսյան ու Շալվարճյան գերդաստանների համայն ննջեցելոց հիշատակին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանությունը, պատգամավորներն ու հյուրերը իջնում են Ս. Մեսրոպ Մաշտոցի

դամբարանը՝ իրենց ուխտն ու երկրպագությունը կատարելու:

Ժամը 2-ին Վեհափառ Հայրապետը վերադառնում է Մայր Աթոռ:

Ապա բոլոր պատգամավորներն ու հյուրերը այցելում են Օշականի գինու գործարանը:

Մեկուկուս ժամը 8-ին, Գ. Սունդուկյանի անվան թատրոնի արտիստները ներկայացնում են Շիրվանզադեի «Նամուս»-ը, որին ներկա են լինում բոլոր պատգամավորներն ու հյուրերը:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 14-ն է, կիրակի:

Ազգային-եկեղեցական ժողովի գումարման առթիվ կատարված հանդիսությունների վերջինն էր եպիսկոպոսական ձեռնադրությունը:

Հոկտեմբերի 13-ին, շաբաթ, երեկոյան ժամերգությունից հետո, Իջման Ս. Սեղանի առջև կատարվում է նորընծաների՝ հոգեշնորհի Ս. Թորգոս վարդապետ Մանուկյանի (Կալիֆոռնիայի հայոց թեմի առաջնորդ), հոգեշնորհի Ս. Պարգև վարդապետ Գևորգյանի (Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ), հոգեշնորհի Ս. Մաշտոց վարդապետ Թաթևրյանի (Շիրակի թեմի առաջնորդ), հոգեշնորհի Ս. Հուսիկ վարդապետ Սանթրույանի (Բաքվի թեմի հայոց առաջնորդ), արևորուփին և ուխտագրութիւն ըստ սահմանի Հայաստանեայց Եկեղեցւոյ», Հողևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Ս. Հույկուղուն արքեպիսկոպոս Աբրահամյանի հսկողությամբ:

Կիրակի, առավոտյան ժամը 10-ին, Մայր Տաճարի զանգերի օրհնյալ զողանջը ավետում է հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագի սկիզբը:

Նոր Վեհարանից, զգեստավորված և ամպհովանու տակ, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Մայր Տաճար, սուրբ պատարագ մատուցելու և եպիսկոպոսական ձեռնադրություն կատարելու:

Մայր Տաճարի երկու դասերում տեղ են գրավել պատգամավորներ, հյուրեր և ուխտավորներ:

Սկսվում է սուրբ պատարագը, Իջման Ս. Սեղանի առջ:

Սեղանին սպասարկում են եպիսկոպոսներ, վարդապետներ և սարկավազների երգեցիկ խումբը:

Սուրբ պատարագը շարունակվում է Ս. Ստեփանոսի սեղանի առաջ, ուր Վեհափառ Հայրապետը կատարում է նորընծաների եպիսկոպոսական ձեռնադրության խորհրդի առաջին մասը, առընթերակաությամբ գերաշնորհ Ս. Հայկազուն արքեպիսկոպոս Ար-

աճամյանի և գերաշնորհ Ս. Պսակ եպիսկոպոս Թումայանի:

Արարողապետ խարտավիլակի պաշտոնը կատարում է գերաշնորհ Ս. Մամբե արքեպիսկոպոս Սիրունյանը:

Վեհափառ Հայրապետի աղոթքով և օրհնությունամբ շնորհվում են մինչև յոթը աստիճանները:

Սուրբ պատարագը շարունակվում է մինչև Ավագ Սեղանի առաջ ճաշու գրքի ընթերցումը:

Վեհափառ Հայրապետը Ավագ Սեղանի բեմի վրա նստում է Իր հայրապետական Աթոռի վրա, շրջապատված շորս նորընծաներով: Նորին Ս. Օծությունը կարդում է ձեռնադրության մեծ աղոթքը:

Ապա նվիրյալները, ծնկադիր, դեմքերը դեպի ժողովուրդը դարձրած, ձեռքերը վեր բարձրացրած, հրաժարվում են աշխարհի ունայնություններից ու պատրանքներից:

Մայր Տաճարում թնդում է կոշման գեղեցիկ և սրտառուչ շարականը՝ «Աստուածային և երկնային շնորհ», մինչ նորընծաները դառնում են դեպի Վեհափառ Հայրապետը և շարվում Աթոռի շուրջ, լսելու մեծ աղոթքը, որը նրանց թելադրում է ճշմարտությամբ, հեզությամբ, ժուժկալությամբ ապրել և օրինակ լինել հավատացյալներին:

Այնուհետև սուրբ պատարագը շարունակվում է մինչև «Ողջոյն»:

Գերաշնորհ Ս. Հայկազուն արքեպիսկոպոսը հանդիսավորությամբ բերում և Վեհափառ Հայրապետին է մատուցում Սրբալույս Մեռոնի աղավինին:

Վեհափառ Հայրապետը մեռոնաթափ աղավինով տյառնագրում է և քաղցրածայն երգում «Առաքելոյ աղանոյ» շարականը: Մեռոնի լույս կաթիլները թափվում են մեռոնամանի մեջ:

Նորընծաները, եպիսկոպոսական լրիվ զգեստավորման մեջ, կանգնել են Ավագ Սեղանի աջ կողմում:

Օծման խորհրդավոր պահն է: «Օժրնեսցի, օծցի և սրբեսցի ճակատ...», լսվում է Վեհափառ Հայրապետի հուզումից թրթռացող ձայնը, մինչ հայրապետական բուժ մատը օծում է նորընծաների ճակատն ու ձեռքի բուժ մատը:

Այնուհետև, համապատասխան աղոթքներով, նորած եպիսկոպոսներին տրվում են եպիսկոպոսական զավազան և մատանի:

Կարդացվում է վերջին Ավետարանը, որից հետո, Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով, ավարտվում է եպիսկոպոսական օծման հանդիսությունը:

Վեհափառ Հայրապետը մեկ առ մեկ համբուրում է եպիսկոպոսների մեռոնագրոյմ



Նորապսակ չորս եպիսկոպոսները

ճակատը, օրհնում և տալիս հայրապետական իր հորդորներն ու պատգամը:

Վեհափառ Հայրապետի հուզիչ մաղթանքներից հետո, պատարագը շարունակվում է:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է նոր Վեհաբան, ընդունելու շնորհավորություններ:

Ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է իրեն սեղանակից դարձնել նորընծա եպիսկոպոսներին:

Կիրակի, երեկոյան ժամը 7.30-ին, պատգամավորներն ու հյուրերը ներկա են լինում Պետական օպերայում Ա. Խաչատրյանի «Ապարտակ» բալետին:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՐԵՐԻ ՄԵԿՆՈՒՄԸ

Ազգային-եկեղեցական ժողովի գումարման և անցկացման օրերի հանդիսություններն անցնում էին հաճելի, հետաքրքիր և բովանդակալից, հայրենասիրական, եկեղեցասիրական խոր ապրումներով և անմոռանալի տպավորություններով լեցուն, բայց արագորեն, հրազանման:

Մոտենում էր հրաժեշտի պահը: Հոկտեմբերի 15—16-ը նշանակվել էին պատգամավորների և հյուրերի հրաժեշտի և մեկնման օրեր:

Պատգամավորները խումբ-խումբ այցելում են նորից Մայր Տաճար, իրենց ուխտը կատարում, վերջին համբույրը դրոշմում Իջման Ս. Սեղանին և աղոթքներ մրմնջելով բարձրանում վեհարան, ստանալու նաև նորին Ս. Օծուխյան հայրապետական վերջին օրհնությունը:

«Վերջին ժամն է, օրհնե՛, Հայր»: Հոկտեմբերի 15-ին, երկուշաբթի օրը, պատգամավորները վերջին անգամ Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում ներկա են լինում Հայկական պետական երգչախմբի համերգին, ղեկավարությամբ Լ. Չեքիջյանի:

Ազգային-եկեղեցական ժողովի օրերին, բոլոր այն պահերին, երբ պատգամավորներն ու հյուրերը պաշտոնական արարողություններից ազատ էին, ամեն հնարավորությամբ ունեցան իրենց ազատ ժամանակն անցկացնելու շահեկան և հետաքրքրական այցելություններով և ուխտագնացությամբ դեպի մեր բազմադարյան Հայրենիքի հնամյա ու նվիրական վանքերն ու եկեղեցիները, բնության հիասքանչ գեղեցկությունները, հայրենի տեսարժան քաղաքներն ու գյուղերը, մեր ուսումնական ու մշակութային հիմնարկներն ու հաստատությունները: Նրանք կարոտակեզ շրթներով ծնրադիր համբուրում էին մեր սուրբ վանքերի մամուլապատ քարերը, հիանում Ս. Գեղարդի վանքի զարմանալի վիմափոր տաճարներով, զմայլվում սիրելի Սեանով, մշտաժպիտ Արագածով և «պանդուխտ» Արարատով... Անսահման հպարտությամբ և երջանկությամբ ու հուզումներով էր համակվում նրանց հոգին Հայրենիքի շքեղ վերելքի, Երևանի սրբնթաց բարգավաճման, ժողովրդի օրավուր բարեփոխվող առօրյային ականատես լինելով: Մասնավորապես նրանց հոգեկան խորին հրճվանք էր պատճառում Հայրենիքի հարուստ մշակութային կյանքը: Ո՞ր ճշմարիտ հայր, մանավանդ տարագիր պանդուխտ հայր, իրեն անհունորեն երջանիկ շպիտի զգա ի տես գիտական, ուսումնական և մշակութային բազմաթիվ այն հաստատությունների և նրանց մեջ կատարվող ստեղծագործական ու մեղվաջան աշխատանքի և այն վիթխարի նվաճումների, որոնք մեր փոքրիկ երկրին և մեր լավագույն մարդկանց համաշխարհային նոր ճանաչում ու փառք են բերում: Այցելելով Գիտությունների ակադեմիան, Պետական համալսարանը, Բժշկական և այլ ինստիտուտներ, Հանրային գրադարանը և մանավանդ Պետական մատենադարանը, թանգարանները, նրանց սիրտը լցվում էր խանդավառ զգացմունքներով և պայծառ լավատեսությամբ դեպի մեր տոհմիկ գիտության, գեղարվեստի և մշակույթի լուսաշող ապագան:

Պատգամավորներն ու հյուրերը ներկա եղան նաև օպերային և թատերական ներկայացումների, զանազան համերգների և այլուցին զեղարվեստական խոր հաճույք՝ լավագույնս զնահատելով իրենց տեսածներն ու լսածները:

Պատգամավորներն ու հյուրերը զանազան առիթներով սիրալիր հանդիպումներ ունեցան Հայրենիքի անվանի գիտնականների, արվեստագետների ու գրողների հետ: Այս հանդիպումները երջանկությամբ համակեցին նրանց հոգիները:

Հարգարժան պատգամավորները, հյուրերն ու ուխտավորները ներկա եղան Մայր Աթոռում կատարված բոլոր եկեղեցական ու հոբելյանական արարողություններին, բարձր գոհունակությամբ ակնատես եղան և հաստատեցին Մայր Աթոռում ձեռք բերված նվաճումները շինարարական, վարչական-կազմակերպչական, ուսումնական, հոգևոր և բարոյական ասպարեզներում, նորին վեհափառության հոգեհանդ ջանասիրության, մշտաբերուն հսկողության շնորհիվ: Բոլորն էլ այցելեցին Հոգևոր ձեմարան, ծանոթացան դասախոսական կազմի և ուսանողության հետ, դիտեցին ննջարանները, ճաշարանը, հանգամանորեն հետաքրքրվեցին ձեմարանի ուսանողական և դաստիարակչական կյանքով, նրանք վարքով և կենցաղով: Ս. էջմիածնի Հոգևոր ձեմարանը պատվարժան պատգամավորների, հյուրերի և ուխտավորների վրա թողել է լավագույն տպավորություններ և այնտեղ տարածված աշխատանքը արժանացել է բոլորի զնահատանքին և քաջալերության:

Պատգամավորներն ու հյուրերը ծանոթացան նաև Մայր Աթոռի միաբանների հետ և նրանց կյանքին: Բոլորն էլ միահամուռ հաստատեցին նրանց եռանդուն աշխատասիրությունը, հավատարմությունն ու անձնվիրությունը հանուն Մայր Աթոռի վերաշինության և Հայաստանյայց եկեղեցու հաստատության:

Պատգամավորները մեծ գոհունակությամբ այցելեցին նաև Մայր Աթոռի տպարանը, ուր դիրեկտոր Խայիկ Սամվելյանը բացատրություններ տվեց Մայր Աթոռի հրատարակությունների և տպարանի հետագա աշխատանքների մասին:

Պատգամավորները այցելեցին նույնպես Մայր Աթոռի տնտեսական բաժնի գրասենյակները, զրույց ունեցան բաժնի վարիչների և աշխատակիցների հետ, այցելեցին Մայր Աթոռի արհեստանոցները, պահեստները, իրենց գոհունակությունն ու ուրախությունը հայտնեցին տիրող կարգ ու կանոնի, մաքրության, աշխատանքների կանոնավորության համար:

Պատգամավորները եղան նաև Ամենայն ալոց Հայրապետության պաշտոնաթերթի «Էջմիածին» ամսագրի խմբագրատանը և Մայր Աթոռի դիվանատանը:


Պատգամավորների և հյուրերի ամենալավագույն տպավորությունների և հուզերի ուն աղանձներն հանդիսացան վերածնված Մայր Հայրենիքը իր պատմական բազմապիսի նվաճումներով և Մայր Տաճարը իր Իջման սուրբ և աստվածակառույց Սեղանով և Ամենայն ալոց աստվածարյալ Հայրապետը՝ Իր սզգանվեր գործունեությամբ, Իր շինարարական տաղանդով, Իր անձի վեհափառ հմայքով և ազնվական ժպիտով:

Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը և այդ առթիվ կազմակերպված բոլոր հանդիսությունները անցան խանդավառ և սրտառուչ իրադրության մեջ:

1962 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 17-ը խոշոր իրադարձությունների օրեր հանդիսացան մեր ազգային-եկեղեցական կյանքում:

Բովանդակ հայ ժողովրդի սրտագին մաղթանքն այն է, որ երկա՛ր, երկա՛ր տարիներ վեհափառ Հայրապետի սուրբ ձեռքերում միշտ ծաղկած մնա «գաւազան իշխանութեան մերոյ Հայրապետին, զի օրհնեսցուք զՔեզ, Տէր, այժմ և յաւիտեան»:





**ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ**

Հոկտեմբերի 9-ին, երկուշաբթի, Ամենայն
Հայոց Վեհափառ Հայրապետի հրավերով,
Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Եկեղե-
ցիների Համաշխարհային Խորհրդի պատվի-
րակոթյունը, ներկա լինելու Ազգային-եկե-

ղեցական ժողովի առթիվ կազմակերպված
եկեղեցական հանդիսություններին:

Պատգամավորությանը գլխավորում էր Ե-
կեղեցիների Համաշխարհային Խորհրդի Էկու-
մենիկ գործողությանց բաժնի տնօրեն, Հնդիկ



Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Էկումենիկ գործողությանց բաժնի տնօրեն Հայր Պուլ Վիգելին
(կենտրոնում) Մայր Աթոռում Ս. Հայկազուն (ձախից), Ս. Ջգոն և Ս. Ասողիկ օրբազանների հետ

Մալաբար Եկեղեցու քահանա Հայր Պոլ Վիգեզին:

Պատգամավորության կազմում էին Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Միջեկեղեցական և տարագիրների նպաստի բաժնի ղեկավար Մ. Ս. Քինկը, Միջազգային հարցերի հանձնաժողովի քարտուղար Ֆրեդերիկ Մեկերդը և Տեղեկատու բաժնի վարիչ Ջոն Թեյլորը:

Հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, Երևանի օդանավակայանում հյուրերին դիմավորեցին հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը և հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողոսյանը:

Հյուրերին Վեհաբանում ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Նորին Ս. Օծուխյան և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի պատվիրակների միջև տեղի ունեցավ ջերմ զրույց, մտերմական մթնոլորտում:

Այնուհետև հյուրերն այցելեցին Մայր Տաճար, Ս. Հռիփսիմե, Զվարթնոց և Երևանի տեսարժան վայրերը:


Հաջորդ օրերին հյուրերն այցելեցին Գառնի և Ս. Գեղարդի վանքը:

Հոկտեմբերի 14-ին պատվիրակները ներկա եղան Մայր Տաճարում եպիսկոպոսական ձեռնադրության:

Երեկոյան ժամը 4-ին, Վեհաբանում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը բարեհաճեց հյուրերի պատվին կազմակերպել ընդունելություն, որն անցավ սրտազին մըթնոլորտում: Ընդունելության ընթացքում փոխանակվեցին ողջույնի ջերմ խոսքեր և ճաներ:

Հոկտեմբերի 15-ին, երկուշաբթի, հյուրերը, հրաժեշտ առնելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից, մեկնեցին անմոռանալի տպավորություններով:





ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ



Գերաշնորհ Տ. Թորգոմ Եպիսկոպոս Մանուկյանը, ավագանի անունով Ավետիք, ծնվել է 1919 թվականի փետրվար ամսի 16-ին Բաղդադում, արհեստավորի ընտանիքում: Հայրը Հովհաննես, դիլիջանցի է, իսկ մայրը՝ Նարգիզ՝ վանեցի:

1931 թվականին ուսումնատենչ պատանին, ավարտելով Բաղդադի հայոց Սրբոց Թարգմանչաց վարժարանը, ուղևորվում է Երուսաղեմ, աշակերտելու Սրբոց Հակոբյանց վանքի ժառանգավորաց վարժարանին, որի դասարանական բաժնի ընթացքն ավարտելով հաջողությամբ, 1936 թվականին սարկավագ է ձեռնադրվում հոգելույս Տ. Թորգոմ պատրիարք Գուշակյանից:

1939 թվականին ավարտելով Ընծայարանի լսարանական բաժինը, կուսակրոն քահանա է ձեռնադրվում հոգելույս Տ. Մեսրոպ պատրիարք Նշանյանից:

Այնուհետև երիտասարդ և խոստումնալից հոգևորականի առաջ բացվում է գործունեության լայն և պատասխանատու ասպարեզ: Նա ձեռնհասորեն վարում է Երուսաղեմում ժառանգավորաց վարժարանի փոխ-տեսչի, Ս. Աթոռի տպարանի տեսչի, «Սիրոն» ամսագրի խմբագրական մարմնի անդամակցության և Սրբոց Թարգմանչաց վարժարանում ուսուցչական պաշտոնները, մինչև 1944 թվականը:

1946—1948 թվականներին, ԱՄՆ-ի Ֆիլադելֆիա, Ռիչմոնդ, Վիրջինիա և Վաշինգտոն քաղաքներում կատարում է հոգևոր հովվի պաշտոն:

1948—1950 թվականներին հետևում է Ֆիլադելֆիայի Տեմբլ համալսարանի դասընթացներին, միաժամանակ գործուն և ղեկավար մասնակցություն ունենալով ԱՄՆ-ի Հայ Եկեղեցու երիտասարդական կազմակերպություններում: Այդ տարիներին, երիտասարդական ուժերով կազմում է «Թորգոմյան երգչախումբ»-ը, հայ եկեղեցական երաժրշտությունը ծանոթացնելու համար ամերիկացիներին:

1955 թվականին Թորգոմ վարդապետը վերադառնում է Ս. Աթոռ՝ Երուսաղեմ, ուր նշա-

նակվում է ժառանգավորաց վարժարանի և Ընծայարանի տեսուչ և դիվանապետ, պաշտոններ, որոնք նա վարում է արդյունավորությամբ, մինչև 1960 թվականը: Նույն տարիներին անդամակցում է նաև վանքի Տնօրեն ժողովին և ընտրվում է Միաբանական ժողովի առաջին ատենապետ:

Երուսաղեմում հրատարակում է «Հայ ուսուցիչ» և «Խմբի հետ» աշխատությունները:

1960 թվականին վերադառնում է ԱՄՆ, իր ուսումը շարունակելու Քեյմբրիջի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում:


Նույն և հաջորդ տարիներին հրատարակում է «Ամուսնության օրհնությունները» (հայ հարսանեկան երգեր եվրոպական ձայնանի-


շերով) և «Սարկավագ» անունով երկու ձայնասկավառակներ:

1962 թվականի դարնանը ընտրվում է թեմակալ առաջնորդ Կալիֆոռնիայի թեմի:

1962 թվականի հոկտեմբերի 14-ին եպիսկոպոս է ձեռնադրվում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից:

Գերաշնորհ Տ. Թորգոմ եպիսկոպոս Մանուկյանը պատրաստված և հավատավոր հոգևորական է: Սրբազանը գտնվում է իր ստեղծագործական ուժերի ծաղկման և հասունության շրջանում: Ազգը և Եկեղեցին նրանից սպասում են նորանոր արդյունքներ: Սրբազանը կարդարացնի այդ ակնկալությունը:





ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ



Գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանը, ավագանի անունով Քաջիկ, ծնվել է 1925 թվականի դեկտեմբերի 25-ին, Հայկական ՍՍՌ-ի Եղեգնաձորի շրջանի Եղեգիս գյուղում, գյուղացու ընտանիքում: Մնողները՝ Հմայակ և Աստղիկ, եղել են միջակ տնտեսատերեր և զբաղվել են հողագործությամբ:

Քաջիկը մինչև 8-րդ դասարանը սովորել է Եղեգիս գյուղում, այնուհետև տեղափոխվել է Երևան և ավարտել է տասնամյա ուսումը: 1945 թվականին Քաջիկն ընդունվել է Ս. էջմիածնի Հոգևոր Ճեմարանը և 1950 թվականին այն ավարտել հաջողությամբ: 1950—1953 թվականներին, լուսահոգի Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի կարգադրությամբ, սովորել է Մոսկվայի Ռուսական Հոգևոր Ակադեմիայում, Զագորսկի վանքում: 1953—1954 թվականներին Մոսկվայում, պրոֆ. Հ. Կուսիկյանի ղեկավարությամբ, զբաղվել է հայագիտությամբ և պատմագիտությամբ: 1948 թվականին ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1954 թվականին՝ կուսակրոն քահանա, ձեռամբ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի: 1956 թվականին ստացել է վարդապետական աստիճան Վազգեն Ա Ամինայն Հայոց Վեհափառ Հայրապետից: 1956 թվականի օգոստոսի 1-ին նշանակվել է Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ և այս պաշտոնի մեջ էլ այժմ գտնվում է: 1956-ին և 1961-ին ուղեկցել է Վեհափառ Հայրապետին իբրև զավագանակիր, դեպի Միջին-Արևելք և Թուրքիա հայրապետական ճանապարհորդությունների առթիվ: Գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանը Մայր Աթոռի երիտասարդ և խոստումնայինց միաբաններից է: Սրբազանը պատմա-բանասիրական հոգվածներով միշտ իր աշխատակցությունն է բերել «էջմիածին» ամսագրին: Վստահ ենք, որ Տ. Պարգև եպիսկոպոսը կարդարացնի Վեհափառ Հայրապետի վստահությունը իր գործունեությամբ և իր բոլորանվեր ծառայությամբ, որպես երիտասարդ ուժ Վեհափառ Հայրապետի կողքին:

ԳԵՐԱՇՆՈՐԸ Տ. ՄԱՇՏՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹԱՋԻՐՅԱՆ

Գերաշնորհ Տ. Մաշտոց եպիսկոպոս Թաշիրյանը, ավագանի անունով Հովհաննես, ծնվել է 1895 թվականի դեկտեմբերին Կեսարիա քաղաքի (Թուրքիա) Կարմիր գյուղում, ծառայողների ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է ծխական դպրոցում և 1912—1915 թվականներին աշակերտել է Կեսարիայի Ս. Կարապետ վանքի հոգևոր դպրոցին:

1915—1920 թվականներին կրել է ծանր զրկանքներ գաղթականության օրերին և 1920 թվականին հաստատվել է Փարիզում, ուր հետևել է իրավաբանական և պատմադիտական դասընթացներին:

Այնուհետև, մինչև 1947 թվականը, Փարիզում և կիբանանում աշխատել է որպես հաշվապահ և դատապաշտպան:

1947 թվականին ներգաղթել է Մայր Հայրենիք կիբանանից և մինչև 1955 թվականը աշխատել է իր մասնագիտության գծով մի շարք հիմնարկներում:


1955 թվականի սեպտեմբերին առել է հոգևորական սրբմ և դարձել է Մայր Աթոռի միաբան:

1955 թվականի հոկտեմբերին, Աղգային-եկեղեցական ժողովում, ընտրվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վերստուգիչ հանձնաժողովի անդամ:


Այնուհետև, 1956—1960 թվականներին, եղել է Մայր Աթոռի միաբանական սեղանատան մատակարար:

1959 թվականի հոկտեմբերին ստացել է վարդապետական աստիճան և 1960 թվականին նշանակվել է Շիրակի թեմի առաջնորդ:

1962 թվականի հոկտեմբերի 14-ին եպիսկոպոս է ձեռնադրվել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ձեռքով:



Գերաշնորհ Տ. Մաշտոց եպիսկոպոս Թաշիրյանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նվիրված, աշխատասեր և պարտաճանաչ միաբաններից է և յուրովսանն ու խղճի մտքը ծառայում է Մայր Աթոռին և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն:



104

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀՈՒՍԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆԹՈՒՐՅԱՆ



Գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը, ավագանի անունով Ազատ, ծնվել է 1920 թվականին Սեբաստիա քաղաքում (Թուրքիա), հայ գյուղացու ընտանիքում։
 Հինգ տարեկան հասակից որբացել է և մինչև իր պատանեկության տարիները մնա-

ցել է դանիացի օրիորդ Յոգոբսոնի «Թռչնոց բույն» որբանոցում, Զիրեյլում (Լիբանան)։

1935 թվականին ավարտել է Զիրեյլի դանիական որբանոցի ուսումնական շրջանը և բույն թվականին տեղափոխվել Երուսաղեմի քերմանական որբանոցի արհեստա-ուսումնական կուրսը, որի ընթացքն ավարտել է 1938 թվականին։

1939—1945 թվականներին աշխատել է Երուսաղեմում որպես ուսուցիչ և գրասենյակային ծառայող։

1947 թվականին ներգաղթել է Մայր Հայրենիք և մինչև 1953 թվականն աշխատել է մի շարք հիմնարկներում, իր մասնագիտության գծով։

1953 թվականին ընդունվել է Հոգևոր ձեմարան, որի դասընթացն ավարտել է 1955 թվականին և ձեռնադրվել սարկավագ, իր կյանքն ընդմիշտ կապելով Մայր Աթոռի հոգևոր ծառայության հետ։

1956 թվականի փետրվարին կուսակրոն բահանա է ձեռնադրվել և նշանակվել Մայր Աթոռի եկեղեցական արվեստի պահարանի վերակացու, պաշտոն, որը վարել է մինչև 1961 թվականը, երբ նշանակվել է Բաքվի թեմի առաջնորդ։

1959 թվականի հոկտեմբերին ստացել է մասնավոր վարդապետական գավազանի իշխանություն։

1962 թվականի հոկտեմբերի 14-ին ձեռնադրվել է եպիսկոպոս, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ձեռամբ։

Գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոսը հավատավոր, կարգապահ, համեստ և նվիրված հոգևորական է, որը յուրովսանն ծառայում է Մայր Աթոռին և Հայաստանյայց եկեղեցուն։



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Սեպտեմբերի 23-ին, կիրակի, Մայր Տաճարում քահանայական իր անդրանիկ պատարագը մատուցեց հոգեշնորհ Տ. Արսեն արքեպիսկոպոստը և քարոզեց «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» բնաբանով: Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Սեպտեմբերի 30-ին, կիրակի, «Տօն վարագայ Ս. Խաչի»: Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց Ֆրեզնոյի հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Տերվիշյանը:

* * *

Հոկտեմբերի 15-ին, երկուշաբթի, Մայր Տաճարում եպիսկոպոսական իր անդրանիկ սուրբ պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Թորգոմ եպիսկոպոս Մանուկյանը:

* * *

Հոկտեմբերի 17-ին, չորեքշաբթի, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահութեան ներքո, Վեհարանում, երեկոյան ժամը 6-ին, գումարվեց նորընտիր Գերագույն Հոգևոր Խորհրդի առաջին նիստը, որին մասնակցում էին բոլոր անդամները:

Նիստում Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ ընտրվեց գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, ատենադպիր՝ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Արրահամյանը:

* * *

Հոկտեմբերի 21-ին, կիրակի, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը և քարոզեց

«Երանի խաղաղարարաց, զի նոցա է արքայութիւն երկնից» բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հոկտեմբերի 28-ին, կիրակի, «Գիւտ խաչ»: Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը և քարոզեց «Քրիստոս Աստուած մեր, վասն սուրբ խաչի քո պատուկանի, զխաղաղութիւն քո տուր մեզ, Տէր» բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Նոյեմբերի 4-ին, կիրակի, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողոսյանը «Աստուած խօսեցաւ ի բարձանց, լուարուք բնակիչք երկրի» բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Նոյեմբերի 4-ին, կիրակի, հետմիջօրեի ժամը 3-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսարանում, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց իրեն սեղանակից դարձնել Մայր Աթոռի ամբողջ միաբանությանը, Գերագույն Հոգևոր Խորհրդին և Վերստուգիչ հանձնաժողովի անդամներին, Մայր Աթոռի պաշտոնեության և աշխատավորության ներկայացուցիչներին, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմին, ուսանողության և Մայր Տաճարի երգեցիկ խմբի անդամներին, Ազգային-եկեղեցական ժողովի կազմակերպված և հաջող անցկացման առթիվ:

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը:

Այնուհետև սեղանների շուրջ ստեղծվում է ուրախ, ընտանեկան մթնոլորտ:

Ճաշկերույթի ընթացքում բաժակաճառե-րով հանդես են գալիս Վեհափառ Հայրապետը, գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Հայկազուն արքեպիսկոպոստները, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ ղոկտ.-պրոֆ. Արարատ Ղարիբյանը, ճարտարապետ Միքայել Մազմանյանը, Հոգևոր Ճեմարանի գրաբարի դասախոս Սամվել Անթոսյանը, հայկական խազագրության դասախոս Վարչամ Փարսազանյանը և Մայր Աթոռի գնորդ Վաչագան Հովհաննիսյանը:

Սեղանը իբրև թամաղա վարում է «էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիտյանը:

Ճաշկերույթի ընթացքում գործադրության է դրվում գեղարվեստական ճոխ հայտագիր՝ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանի ղեկավարությամբ: Հայտագրին մենբրգերով իրենց մասնակցությունն են բերում հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը («Կիլիկիա»), հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողապալյանը («Ամեն սագի»), հոգեշնորհ Տ. Արսեն արքեպիսկոպոստը («Ընտրեալը»), սայր Տաճարի երգեցիկ խմբի շնորհալի մենակատարուհի օրիորդ Սվետլանա Զաքարյանը («Ավե Մարիա», «Բուխուրիկ»), պր. Ա. Ավագյանը («Ալագյազ»), պր. Լ. Հասրաբյանը («Կոռնկ»), Սիլվա Վարդանյանը («Վայրի ծաղիկ»): Հոգևոր Ճեմարանի սաները և երգեցիկ խումբը կատարում են մի շարք խմբերգեր և արտասանություններ:

Ճաշկերույթը փակվում է Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքերով և խմբովին երգված Տերունական աղոթքով:

* * *

Նոյեմբերի 10-ին, շաբաթ, երեկոյան ժամը 7-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, կատարվեց 1962—1963 ուսումնական

տարվա հերթական դասախոսությունների և գրական-գեղարվեստական երեկույթների բացումը:

Առաջին դասախոսությունը կարդաց ի լուր ուսանողության և միաբանության Վեհափառ Հայրապետը:

Դասախոսության նյութն էր «Սոկրատ որպես իմաստասեր և բարոյախոս»:

Դասախոսությունը լսվեց մեծ հետաքրքրությամբ:

Վերջում Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոստը բերահամյանը, հանուն ուսանողության և միաբանության, աջահամբույրով շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին շահեկան դասախոսության համար:

* * *

Նոյեմբերի 11-ին, կիրակի, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Արսեն արքեպիսկոպոստը և քարոզեց «Հաւատքը քո կեցուցին զքեզ» բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Նոյեմբերի 16-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցով մեկնեց Մոսկվա:

Վեհափառ Հայրապետին օդանավակայանում ճանապարհեցին Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը:

Վեհափառ Հայրապետին ճանապարհեց նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը:

Վեհափառ Հայրապետին որպես դավազանակիր ուղեկցում էր հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողապալյանը:



ՅՈՒՅԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ*

- Ք. 214բ. — Վասն մանկանց եթէ գրաւու պատճառաւ զմիմեանս սպանանեն: Վասն երիտասարդաց գրաւուց: Վասն գինարբուաց և նոցին վնասուց: Վասն շնացողաց և այլոց չարագործաց: Վասն կուսից որ շիցէ խօսեալ:
- Ք. 215ա. — Վասն բամբասողաց զկանայս եթէ ոչ էր կոյս: Վասն գաւառաց և գիւղից:
- Ք. 215բ. — Վասն որ իրք գտանեն: Վասն կռուողաց որ զիրար մորուք փետտեն: Վասն հորոյ ցորենոյ: Վասն շինականաց որ աւել դատին իշխանաց: Վասն սուտ երիցանց և կամ կամաւ երիցութիւն:
- Ք. 216ա. — Վասն որ զքահանայս անարգեն: Վասն դատաւորաց: Վասն եպիսկոպոսաց և ընչից եկեղեցւոյ:
- Ք. 216բ. — Վասն դատաստանաց իշխելոյ եպիսկոպոսն ի վերայ եկեղեցականաց: Վասն եպիսկոպոսաց և քահանայից որ զպէտս ժառանգաւորացն ոչ տացեն: Վասն ժառանգաւորաց և ի կուի հարկանողաց:
- Ք. 217ա. — Վասն երկրորդ ձեռնադրելոց: Վասն գողոց եկեղեցւոյ: Վասն եպիսկոպոսաց ամբաստանելոց: Վասն վկայից եպիսկոպոսաց: Վասն եպիսկոպոսաց շձեռնադրել զոք յիրոց առանց կամաց եկեղեցականաց:
- Ք. 217բ. — Վասն եպիսկոպոսին որ արկանէ զանձն իւր յերկրաւոր հոգս: Վասն զծառայս երէց օրհնեն կամ սարկաւազ: Վասն անարգողաց զթագաւորս և զիշխանս:

- Վասն որ տղայ անցուցանեն կանայք: Վասն գողոց և սպանչականաց նոցին:
- Ք. 218ա. — Վասն որ առուական: Վասն ծառայից ազատել ըստ օրինացն: Վասն աղախնեայց: Վասն այլազգի ծառայից և աղախնեայց:
- Ք. 218բ. — Որ հարկանէ զհայր կամ զմայր: Վասն մարդագողաց: Վասն բամբասողաց զհայր կամ զմայր: Վասն կագողաց: Վասն ծառայից և աղախնեայց սպանանելոց ի տէրանց: Վասն յղի կանայս հարկանելոյ արանց ի կռուելն:
- Ք. 219ա. — Վասն հարուածոց: Վասն ծառայից և աղախնեայց հարուածոց ի տէրանց: Վասն թէ հարկանէ եզն զայր կամ զկին:
- Ք. 219բ. — Վասն թէ հարկանէ ցուլն զցուլ: Վասն ջրհորոյ թէ անկանիցի ի կենդանեաց ի ներքս: Վասն թէ անկանիցի այր կամ կին ի հոր կամ ի ջրհոր: Վասն թէ հարկանէ ցուլ ի սրբոց կամ յանսրբոց կենդանեաց և սպանանիցէ: Վասն թէ գրաստ հարկանեն իրերաց կամ սպանանեն կամ վնասեն:
- Ք. 220ա. — Վասն գրաստի թէ հարկանեն զոք աղախնեայց: Վասն գողոց արշառոց և նմանեաց նոցին: Վասն որ զտունս պատահեն: Վասն գողոց եկեղեցւոյ:
- Ք. 220բ. — Վասն որ զանդաստանս կերիցեն: Վասն հրդեհից: Վասն աւանդից: Վասն պահեստից:
- Ք. 221ա. — Վասն անօթ առողաց: Վասն զկոյս խօսեալ խարուղաց: Վասն փոխոց:

* Եարունակված «էշմիածին» ամսագրի 1960 թվականի Մ Ն Ի-ից, Է-ից, Բ-ից, 1961 թվականի Մ Ռ Բ-ից, Գ-ից, Զ-ից, Բ-ից, ԺԲ-ից և 1962 թվականի Մ Ը-ից և Բ-ից:

- Ք. 221բ. — Վասն գրաւից:
Վասն այրեցողացն:
Վասն տնկահատաց:
- Ք. 222ա. — Վասն աւանդից և զողորմութեան և վասն ասելոյ ինչ զընկերին և գտանելոյ զկորուստ ինչ:
Վասն որ եկեղեցո արգիլեն և շտան:
Վասն յիշոցնատուաց:
- Ք. 222բ. — Վասն որ զանասունս սպանանեն:
Վասն վաճառողաց զերկիր և գնողաց:
- Ք. 223ա. — Վասն վաճառողաց և գնողաց:
Վասն քահանայից որ ծախեն և գնեն զտուն:
Վասն շրաղացաց:
Վասն որ անասուն գնեն և ծախեն:
Վասն որ եզն ծախեն:
Վասն որ կովեր ծախեն:
Վասն որ զմեղու ծախեն:
- Ք. 223բ. — Վասն որ կարաս ծախեն և այլ անօթ:
Վասն որ այգի և դրախտ կապալեն:
Վասն որ կամին զհայրենիս բաժանել ի վերայ որդոց:
- Ք. 224բ. — Վասն բաժանման ուստերաց և դատերաց:
- Ք. 225ա. — Վասն բաժանման կանանց զիրս որդւոցն:
- Ք. 225բ. — Վասն թէ որպէս բաժանեն զամենայն ինչսն:
- Ք. 226ա. — Վասն որ զքահանայս և զդատաւորս արհամարհէ:
Վասն պտղոց քահանայից և ժողովրդոց:
Վասն սահմանաց թէ որպէս սինօռն:
- Ք. 226բ. — Վասն որ սուտ վկայութիւն տայ:
Վասն որ գտցի սպանած ի դաշտս:
Վասն գերելոց կանանց յայլազգիս:
- Ք. 227ա. — Վասն հարանց անդրանկացուցանելոյ զորդիս:
Վասն անզգամ որդոց:
Վասն մահապարտաց մեռելոց:
- Ք. 227բ. — Վասն կորստէից:
Վասն յարուցանելոյ զանկեալ շորքոտանիս:
Վասն հանդերձից կանանց:
Վասն բունոյ թռչնոց:
- Ք. 228ա. — Վասն նորաշէն տանց:
Վասն ծառայից փախուցելոց:
Վասն մտանողաց ի յայգի ընկերաց:
Վասն մտանելոյ ի հունձս:
Վասն արձակելոյ զկանայս:
- Ք. 228բ. — Վասն առողաց նորոգ կանայս զմտանել ի պատերազմ:
Վասն գրաւողաց զերկանս:
Վասն պարտուց և նորին գրաւուց:
Վասն վարձկանաց ամենայնի:
- Ք. 229ա. — Վասն ոչ մեռանել հարց և որդւոց ընդ միմեանս:
Վասն խոտորողաց զիրաւունս:
Վասն գրաւու այրւոյն:
Վասն արժանաւորաց զանից:
Վասն կռուողաց և կնոջն թափողի:
Վասն դիակողոպտից:
Վասն ակամայ սպաննութեանց:
- Ք. 229բ. — Վասն հիմնարկութեան եկեղեցոյ:
Վասն ձեռնադրութեան եպիսկոպոսաց:
Վասն որ ոք ի կարգէ և յաղօթից մերժեալ իցեն:
Վասն ձեռնադրութեան կաթողիկոսաց:
- Ք. 230ա. — Վասն եպիսկոպոսաց և քահանայից որ զայլոյ վիճակ և զժողովուրդ յափշտակեն:
Վասն անկարգապէս եկեղեցականաց:
- Ք. 230բ. — Վասն որ խօսեալ աղջկունս յափշտակեն:
Վասն մսակերութեան ուխտականաց:
Վասն եկեղեցական ընչից:
Վասն որ ստէ զխոստացեալն կուտութիւն:
- Ք. 231ա. — Վասն յղի կանայս մկրտելոյ:
Վասն արձակելոյ զկին պոռնիկ:
Վասն արձակելոյ զկին ատելութեամբ:
- Ք. 231բ. — Վասն սարկաւազաց արձակելոյ զկանայս շնացեալս:
Վասն քահանայից պղծութեան:
Վասն ժամանակի ձեռնադրելոյ:

Վասն որք ի հարկէ ի մկրտութիւն, կամ յապաշխարութիւն գայցեն ըստ որում օրինակի իցէ:

Ք. 232ա. — Վասն գաւառի երիցանց: Վասն բորեպիսկոպոսաց: Վասն պտղոց եկեղեցւոյ: Վասն որ թողուն զորդիս:

Ք. 232բ. — Վասն որդոցն որ թողին զծնօղս իւրեանց: Վասն կերողաց զաւագ հինգշարթի:

Վասն եպիսկոպոսաց հնազանդել կաթողիկոսին: Ք. 233ա. — Վասն եպիսկոպոսաց շճեռնադրել յայլոց վիճակի:

Վասն որք յեպիսկոպոսէ լուծանին:

Վասն ամբաստանեալ եպիսկոպոսաց:

Ք. 233բ. — Վասն ոչ նորաձեւել զհին սովորութիւնս եկեղեցւոյ: Վասն ոչ տալ յայլ եկեղեցի զսրբութիւնն:

Վասն որք ընդ այլազգիս խառնին խնամութեամբ:

Վասն եպիսկոպոսաց որք զայլոց եկեղեցեաց առեալ զիւրեանցն զարդարեն:

Վասն որ ի միտս ոչ իցէ և երթիցէ:

Ք. 234ա. — Վասն այսահար կնոջ: Վասն անարեաց:

Վասն հաշմեալ կնոջն: Վասն անասնապղծաց:

Ք. 234բ. — Վասն քահանայից սպանութեան: Վասն այսահարաց և խելաթափաց սպանութեանց:

Վասն ամուսնեան կանանց: Վասն քահանայից և այլոց ակամայ սպանութեանց:

Ք. 235ա. — Վասն ի պատերազմի սպանողաց:

Վասն որդւոց բաժանման:

Վասն ներքինեաց և մարմնազեղծից:

Վասն որ ուտէ ի տեղոյ:

Վասն հրդեհից:

Վասն յափշտակող արուեստականաց:

Վասն բաժանման ժառանգութեան յուստերս և ի զրստերս:

Ք. 235բ. — Վասն թէ որոց ժամանակաց ի ժառանգս համարելի է զծնունդ:

Ք. 236ա. — Վասն հաշմելոյ զաւակաց: Վասն կտակաց:

Ք. 236բ. — Վասն թէ որպէ՛ս արժան է մեռելոցն առնել:

Ք. 237ա. — Վասն վաճառաց նենգութեան: Վասն սուտ վկայիցն:

Վասն կուսանի և երկակի:

Վասն խօսեցեալ կանանց:

Ք. 237բ. — Վասն ախտաժէտաց արանց և կանանց որք ի ցաւ ինչ վիճակէին:

Վասն ուրկաց, բորոտաց, կաղաց, կուրաց, խլից, համերց, ամուսնացելոց և ոչ:

Ք. 238ա. — Վասն այլազգ խօսեցեալ կանանց:

Վասն տղայոց պսակաց:

Վասն որ միոյ մօր կաթամբք սնեալ իցեն:

Վասն փոխողաց զսահմանս:

Ք. 238բ. — Վասն կնահանից:

Վասն կանանց ամլոց:

Ք. 239ա. — Վասն կանանց որք թողուն զարսն:

Վասն առևանգաց:

Ք. 239բ. — Վասն աւագ երիցանց:

Վասն քահանայից և մտից ժողովրդեանն:

Վասն սպասաւորելոյ:

Ք. 240ա. — Վասն վանաց ժողովրդեան և եկեղեցւոյ:

Վասն յիշատակի ննջեցելոց:

Վասն բանադրելոց:

Ք. 240բ. — Վասն փակողաց զեկեղեցիս: Վասն գերելոց արանց և կանանց:

Ք. 241ա. — Վասն եկեղեցւոյ ժառանգաւորաց:

Վասն տանց քահանայից:

Ք. 241բ. — Վասն վանաց:

Վասն տկարանոցաց:

Ք. 242ա. — Վասն իշավանաց:

Վասն ամուսնութեան և քանիօնութեան ազգականաց:

Ք. 243ա. — Վասն թէ ըստ օրինաց և ըստ կանոնաց որպէս զուգին, և թէ որոց ներելի է, և զորս բաժանելի:

Ք. 244ա. — Վասն նաւաց բեկելոց ի ծովու:

Ք. 244բ. — Վասն խաբբայից:

Վասն զիւլից նորապէս շինողաց:

Վասն հաստատութեան համօրէն վաճառոց:

Վասն զինչս բաժանելոյ եղբարցն:

- Ք. 245ա.— Վասն որպէս ծառէ անկելոյ և կախելոց, և յեկեղեցոյ անկելոց, կամ քարիւ եկեղեցոյ մեռելոց:
Վասն գողոց ի փայտ հանելոյ:
Վասն սպաննելոց ի կենդանեաց:
- Ք. 245բ.— Վասն զմարդ ի ճանապարհ, և յալլ գործ առաքողաց, և վնասելոց սպանմամբ:
Վասն արբեցութեանց:
Վասն կարգաց եկեղեցոյ և տան թագաւորի:
- Ք. 250ա.— Վասն թէ ոք զոք որ չիցէ իւր ի գործ առաքիցէ:
Վասն վարձկանաց:
Վասն հակառակ եկեղեցի շինողաց:
- Ք. 250բ.— Վասն արքայորդոց:
Վասն արքայորդոց թագաւորի, և որ ընդ նովա են:
- Ք. 251ա.— Վասն վնասելոց զկենդանիս ի հանել զնոսա ի վնասէ կամ ոչ:
Վասն պէս պէս վնասուց:
- Ք. 251բ.— Վասն կամայ և ակամայ սպաննութեանց:
- Ք. 252ա.— Վասն վնասողաց ջրով:
Վասն բժշկաց:
- Ք. 252բ.— Վասն հարկողաց և բռնադատողաց զոր ի գործ ինչ յորմէ վնասք մահու լինի:
Վասն այգէգործաց մշակաց, ընկերաւոր մասնատրաց հարակաշաց, և վարձկանաց:
Վասն հովուաց և անդէորդաց:
- Ք. 253ա.— Վասն նուիրաց յեկեղեցի հող կամ ջուր, և կամ այգի, կամ ալլ ինչ այնպիսի:
Վասն վաճառողաց:
- Ք. 253բ.— Վասն բնաւից արուեստականաց խարդախողաց:
Վասն վարձկանաց վնասողաց ի գործիս:
Վասն դատաստանաց դատաստանի:
- Ք. 254ա.— Վասն ի ջրաղացս աղանաւորաց:
Վասն զերիվարս կամ զայլ ինչ շորքոտանիս ի գործ կամ ի ջուր, կամ առ ժամայն արօտի, ի ձեռն այլոց առաքաց, և վնասելոց:

- Ք. 254բ.— Վասն անուանեալ հողադրամաց:
Վասն սահմանաց:
- Ք. 255ա.— Վասն սահմանաց այսահարանանոց:
Վասն զանկատարն ընդ կատարելոյ զուգել ամուսնութեամբ:
- Ք. 255բ.— Վասն ուխտից:
Վասն որ յաւարէ վառածաց:
- Ք. թ. 256ա—256բ.— Ցանկ գրգոյս:
- Ք. թ. 257ա—265ա.— Նոր շարադրեալ ցանկս ի Մատթէոս գրագրէ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Ք. 2ա.— Առաջարանութիւն Մատենիս:
Վարդապետութիւն առաքելոցն զկնի վերանալոյն Քրիստոսի առ Հայր ի յերկինս, որպէս և շնորհաց նոցա առնել զնըշանս, և զբժշկութիւնս, և որպէս ընկալան առաքելքն զպարգևս Հոգւոյն Սրբոյ, զկարգ և զկանոնս, և զվարդապետութիւնս եկեղեցւոյ սրբոյ, և որպէս խրատեալ Պետրոս ի ճըշմարիտ վարդապետէն ուսուցանէր զԵօթանասնեկին Եօթն անգամ զմեղացն թողութիւնս Եւ յոր կողմ որ շոգան իւրաքանչիւրքն ի նոցանէ, և թէ զիա՞րդ բաժանեալ վիճակեցին զաշխարս ամենայն ի ձեռն Հոգւոյն Սրբոյ, և կամ յումմէ ընկալան բաւառք հոռոմոց զձեռնադրութիւն քահանայութեան: Յամին երեք հարիւր երրորդի իններրորդի յիշխանութեան յունաց, և թագաւորութեան Տիբերիայ կայսեր Հոռոմոց, որ օր շորս էր Մարգաց ամսոյն, յաւուր միաշարքաթոշ Պենտէկոստէից, ի ամին իսկ ի յայմ արուր եկն աշակերտքն ի նազարէթ Գալիլիացոց, ուր աւետիաց Գարրիէլ հրեշտակապետն Սուրբ Կուսին Մարիամու զլըղութիւն Տեառն: Եկն ի լեառն ձիթենեաց և Տէրն Քրիստոս աներևոյթ տեսիւմբ ի մէջ նոցա, առ ի զօրացուցանել զնոսա, և շնորհել զքահանայութեան ձեռնադրութիւն, և անդէն ի ժամուն մեծի առաւօտուն կիրակէի ամբարձեալ զձեռն իւր Տէրն եղ ի վերայ գրլխոյ մետասան աշակերտացն իւրոց շնորհելով նոցա զաստիճան քահանայութեան, և իբրև ընկալան նոքա զպարգևս մեծի երիցութեան, պատուէր առեալ ի կենարարէն նոյնպէս ձեռնադրել յօժումն քահանայութեան զհրեշտակապետ զաշակերտքս իւրեանց, զի և նոքա եղիցին քարոզք բանի Աւետարանի Տեառն, և սպասաւորք սեղանոյն ընթահարական եկեղեցոյ սրբոյ, և մկրտել զամենայն հեթանոս յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն Սրբոյ: Եւ յետ բանիցս այսոցիկ յանկարծակի եկն ամպ լուսաւոր, և կայաւ զնա, և վերացաւ յերկինս: Եւ արժանի եղեն առաքելքն տեսանելոյ

լալըստեան ամպոյն, և վերացման Աստու-
որդոյն, և նստելոյն ընդ աջմէ շօր իւրոյ, և
գոհանային ցրնծալից ուրախութեամբ, և փա-
ռաւորէին զԱստուած, որպէս և ինքն իսկ
ասէր, թէ ևս առաւել ուրախութիւն լիցի յոր-
ժամ առաքեցից զմխիթարիչ Սուրբ Հոգին, և
նորա ցրնծալից բերկրութեամբ գոհանային,
զի ընկալան զաջ քահանայութեան իբրև
զՄովսէս, և զԱհարօն: Եւ ի լեռնէն Ձիթենեաց
եկեալ իջին նորա, և ելին ի վերնատունն ուր
վանքն իսկ էին: Ուր և կերան զՉատիկն սուրբ
ի միասին, և ի նմին տեղոջ եղև հարցմունք
աշակերտացն, թէ ո՞վ իցէ որ մատնելոցն է
զնա հրէից, և ևս ի նմին տեղոջ եղեն վիճ-
մունք և հարցմունք զմիմեանս հոգալ և խոր-
հուրդ ածել, թէ որպէս քարոզեցեն զԱւետա-
րանն Տեառն արքայութեան ընդ ամենայն եր-
կիր: Եւ զոր օրինակ ի վերնատունն յայտնեաց
Տէրն աշակերտացն զխորհուրդ սուրբ մարմ-
նոյ, և արեան իւրոյ ի փրկութիւն (թ. 2թ)
ընդունելով ի թագաւորեալ լուսոյն յափտե-
նից, սոյնպէս և անդ արարին զխորհուրդ
և զսկիզբն քարոզելոյ զԱւետարանն արքա-
յութեան ընդ ամենայն տիեզերս: Եւ մինչ-
դեռ յայսմ մարտման էին աշակերտք
Տեառն, և ածէին զմտաւ, թէ զիարդ քա-
րոզեցեն զԱւետարանն Քրիստոսի յաշ-
տարհս հեթանոսաց հեռաւորս և յօտարա-
ձայնս զոր ոչ գիտեն զլեզուս նոցա, և
ասէին այսպէս, եթէ զօրութիւն սքանչե-
ւեացն, և զնշանս, և զբրժրչկութիւնս զոր
տեսաք, ի Տէր յուսացեալ եմք, և ի սուրբ
անուն նորա, զի յառնէ ի ձեռս մեր առա-
ջի ազգաց օտարաց: Բայց զոր ոչ գիտեմք
զլեզուս նոցա, զիարդ կարեն նորա լսել
մեզ զորս ոչ գիտեն զլեզուս մեր եթէ ո՞յր
անուամբ անենք զնշանս և զբրժրչկու-
թիւնս, և կամ ո՞վ իմացուցանէ նոցա, թէ
անուամբն Քրիստոսի անենք զայսպիսի
նշանս, և զմեծամեծ զօրութիւնս: Եւ մինչ-
դեռ յայսմ խորհրդի էին առաքեալքն, յոսն
եկաց Սիմօն Պետրոս և ասաց. Եղբարք, ոչ
է մեզ գիտել զայս, թէ որպէս քարոզես-
ցուք զԱւետարանն Քրիստոսի յաշխարհի,
այլ հաւատամք ի հոգաբարձութիւն նորա
վասն մեր, զի խոստացաւ մեզ, թէ յոր-
ժամ ելանեմ ես առ հայր իմ, առաքեմ առ
ձեզ զհոգին մխիթարութեան, նա ուսուցէ,
և յիշեցուցէ ձեզ զամենայն ինչ զոր ար-
ժան իցէ ձեզ իմանալ և գործել և ուսու-
ցանել: Եւ մինչդեռ Սիմօն Պետրոս խօսէր
զայս ընդ առաքեալսն, և յիշեցուցանէր նո-
ցա զխոստմունս Տեառն, յանկարծակի հրն-
չիւն բարբառոյ լսելի լինէր նոցա, և զհոտ
անուշութեան բուրէր նոցա, և ի մէջ բար-
բառոյն, և ի մէջ նորա նշան հոտոյն
անուշութեան, որ ամենեկին անընդելական

էր յայսմ աշխարհի, և լեզուք հրեղէնք իջին
առ նոսա ի Հոգոյն Սրբոյ յերկնից, և հան-
գեան ի վերայ նոցա յայտնապէս, և ըստ լե-
զուին զոր ընկալան իւրաքանչիւրքն ի նոցա-
նէ այնպէս պատրաստեցին զանձինս իւ-
րեանց, զի երթիցեն յաշխարհայն որ խօսես-
ցին զլեզուս նոցա, և մինչ էին ի միասին գու-
նութեամբն առաքելական նովին պարզեօք
որ տուաւ նոցա շնորհք Հոգոյն Սրբոյ, և
յայնմ աւուր եղին կանոնս և կարգս, և օրէնս
ընթհանրական եկեղեցոյ սրբոյ, որք միա-
բան աւետարանեցին զԱւետարանն, ճշմա-
րիտ քարոզութեամբ, և արդար ուսուցմամբ,
և հաւատարիմ վարդապետութեամբն իւ-
րեանց:

Թ. 10ա.— Գիրք կանոնաց սրբոց հայրա-
պետաց, և Ընթհանրական Տեառն ներսէսի, և
Դատաստանագիրք: Հաւաքեցեալ ի յայսմ
գրի, օրինակեցմամբ ի Պալատու Սուրբ Հրեշ-
տակապետ Եկեղեցոյ ՌՁԵ (1636) թուին
Արիստակէս իրիցու ձեռամբն գրեցեալ գրքէն,
ի թուին ՌՄԺԶ (1767), հոկտեմբեր ևս ժՁ,
արդեամբք և ի վայելումն Զմառացի մահտե-
սի Յարութիւնի որդի վայելումն տացէ: Ամէն:

Թ. 199բ.— Արդ, որք ընթեռնուք սիրով
սրտի, յիշման արէք զմեզ արժանի: Նախ
զգրգոյս օրինակն գրօղ զԱրիստակէս երէցն,
որ ՃԼԱ (131) տարի յառաջ քաղաքիս գրեալ
էր, և յետոյ Մատթէոսն նուաստ գրագիրս:

Թ. 206բ.— . . . յաղագս զմեզ և զստացօղ
սորա Զրմառացի մահտեսի Յարութիւնի որ-
դի մահտեսի Խաչատուրն յիշելոյ ի բարին, և
զուր յիշեալ լիցիք առ Քրիստոս Տէրն համայ-
նից ի մէնջ, ամէն:

Թ. 255բ.— Աւարտումն գրոյս թուին հա-
յոց ՌՄԺԶ հոկ. տասնակից:

Թ. 256բ.— Ուրեմն ով ընթերցօղք խընդ-
րեմ ի ձէնջ միով Հայր մերի յիշել զհանգու-
ցեալ Տէր Արիստակէս երէցն որ զսոյն գրը-
քոյս գաղափարն գրեալ էր և եղեալ ի Սուրբ
Հրեշտակապետի եկեղեցին, ի թուին Հայոց
ՌՁԵ (1636), որ և նուաստ ծառայս ձեր ի
նմանէ օրինակեցի և գրեցի թուին ՌՄԺԶ:

Եւս առաւել զհեղինակսն իմ, նախ զԳէորդ
զպիրն Կեսարացի որ ի Վէզիրիան մեծ շար-
ժին յանկարծ փոխեցաւ, և բազմաշխատ հո-
գևոր հայրն իմ զմխիթի տիրացու Մանուէլն,
հուսկ յետոյ զտխմար և զանպիտան նուաստ
Մատթէոս գրագիրս, և զուր յիշեալ լիցիք ի
յամենայն սրբոց նորա, ամէն:

Թ. 257ա.— Նոր շարագրեալ ցանկս ի
Մատթէոս գրագրէ է:

Թ. 265ա.— Թուին Փրկչին ՌՁԿէ նոյեմբե-
րի ժԵ, ի վայելումն Զմառացի մահտեսի Յա-
րութեան, մահտեսի Խաչատուրի:
(Շարունակելի)